15365

ԴՐ. ՉԱԼԽՈՒՇԵԱՆ

ՄԱՐԱԲԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՕԳՏԻՆ

ՄՏՔԵՐ
ԽՈՀԵՐ
ԴԷՄՔԵՐ

ԹԻՖԼԻՍ
Էլէկտր. տպարան «Է Պ Օ Խ Ա», Մուշկեյսկի № 8.
1914

891.99
Չ-15

891.99
Գ-15
կտ. 1966

Գր. Չալխուշեան

ՄԱՐԱԲԱՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՕԳՏԻՆ

ՄՏՔԵՐ ԽՈՀԵՐ ԴԷՄՔԵՐ

ԹԻՖԼԻՍ
էլէկտր. տպարան «Է Պ Օ Խ Ա», Մուզէյսկի № 8.
1914

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
78277-ու
1428-87

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
Նուէր Ի. Ռ. ԱՆԱՆԵԱՆԻՆ	Ա
Հրապարակախօսութիւնը իմ քաւարանն է	Բ
Մարարանեը	Դ
Ինչպէս ես դառայ հայ գրող (մի մեծ մարդու մեծ յիշատակին... փոքր նուէր)	1
Ջուր, ջուր... Ջրհեղեղ... (մանրանկար)	10
Շնորհաւոր Նոր-Տարի (1910)	13
Շնորհաւոր Նոր-Տարի (1914)	15
«Բալական մեռելներ»	20
Ի՞նչ անենք	22
Կնունք են՞ թաղում	25
Օ՜, երբ կը բացվի արշալոյսը	29
Արի սիրեմ, գնա մեռիր	33
Զայն տուր, հայ ազգ	40
Ն. Սաթունեանի արձագանքը	44
Մենք չենք յուսահատվել և երբէք չենք յուսահատվի	46
Մեղանում բոլոր բանը ընդհակառակ	50
Եւ սակայն կը պտտի	52
Համերաշխութիւն... Համերաշխութիւն (Նուիրում եմ... սատախօսներին եւ մեղ բամբասողներին)	56
Կինը սեփականութիւն չէ	60
Կանանց և ծաղիկներին Աստուած ստեղծեց ժպիտով («Մշակի» Յոբելեանական Կանանց Մասնաժողովին նուէր)	62
Գամառ-Քաթիպայի արձանի բացումը	66
Միքայէլ Նալբանդեանի արձանի բացումը	72
Գամառ-Քաթիպայի մահվան քսաներորդ տարեդարձը	74
«Հացի կտոր Զէյթունցուն» ժողովածուից քաղված	80
Անէ՞ծք թէ օրհնութիւն	83
Կաթողիկոսը մեռաւ, կեցցէ կաթողիկոսը	90
Ամենայն Հայոց Կաթողիկոսը	96
«Մշակի» ծանօթութիւնը	96
Լևոն Վարազեանի և Մարիամ Խատիսեանի կարծիքները	98
Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանապարհորդութիւնը	99
Գաստդուլով ազգի տունը չի շինվի, սիրելիներ	102
Եկատերինօդարի երկսեռ դպրոցի 50-ամեակը	105
Մոռանում ենք հայերէն գրել	108
Իմ հառը «Մշակի» յոբելեանին	112
42 րուբլի 50 կոպ.	114
Օգնեցէք	116
Օգնութիւն զէյթունցիներին	118
Հացի կտոր զէյթունցուն	120
Մենք դիմում ենք հայ մանուկներին	123
Դպրոցական ֆոնդ	126
Հայի հասունութեան քննութիւնը շարունակվելու է մի տարի	129
Ո՞ւր են մեր աղաները և ո՞վ պիտի լինի մեր աղաների աղան	132
Կար-Միրները դպրոցական ֆոնդի առաջ	135

Համազգային յոբելեան (Նուէր բոլոր հայերին) . . . 141
Մեծամիտ Թիֆլիսի անհամ վէճերը . . . 143
Տպագրութեան և տառերի գիւտի յոբելեանը . . . 145
Դպրոցական ֆոնդ (Նուէր բոլոր հայերին) . . . 146
Բենիկ հայր-սուրբի բաց նամակը . . . 148
Ես ամաչում եմ, հայր Բենիկ (Նուէր բոլոր հայերին) . . . 149
Թող խեղճ գիւղացիները լինեն մեզ համար օրինակ . . . 152
Ի՞նչ է մտածում Մոսկվան . . . 154
Լուռ է Բագուն . . . 157
Ուրմիայի հայերի հոգևոր հովուի նամակը . . . 161
Գէորգ Քանանեանի և Իզմիրեանի հայրենիքում . . . 162
Զորսը մի կոպէկ, չորսը մի կոպէկ.. (մանրանկար) . . . 166
Ի՞նչ է նայում, ի՞նչ է մտածում Նոր-Նախիջևանցին . . . 168
Համակրելի գործ և զարմանալի գործիչներ . . . 170
Գոռնկութեամբ և մասամբ նորին . . . 173
Գառն է բերում . . . 175
Մտքի խակութիւն թէ՞ խելքի սնանկութիւն . . . 177
Վերջապէս . . . 180
Բարեգործութիւնից փախչողներ . . . 182
Հերթը ձերն է, Ալեքսանդր Աֆանասևիչ . . . 186
Ալեքսանդր Աֆանասևիչի տեղը խօսեց պ. Կուսիկեանը . . . 189
Փոքր ինչ համեստութիւն, պարոններ . . . 194
Կուսիկեանները քարոզում են համբերութիւն . . . 201
Ֆրիդրիխ հերաուս . . . 204
Ալ. Մելիք-Ազարեանի բաց նամակը . . . 208
Իմ պատասխանը Ալ. Մելիք-Ազարեանին . . . 209
Հ. Երամեանի կարծիքը . . . 210
Մի փունջ Աբէլեան-Արմէնեան խմբին . . . 212
Խեղճ ծիծեռնակներ, հայ ծիծեռնակներ . . . 214
Մխիթարեանների յոբելեանը . . . 217
Վասիլիյ Նեմիրովիչ-Դանչենկօ և Պիէր Լոտի . . . 219
Նեմիրովիչ-Դանչենկոյի նամակը . . . 224
Մի համբոյր, միայն մի ջերմ համբոյր . . . 225
Հաւատում ենք, Գաբրիէլ-ջան, հաւատում ենք . . . 227
Իմ պսակը Սիմէօն Զաւարեանի գերեզմանի վրա . . . 229
Մի պսակ անթառամ Ալեքսանդր Քալանթարի ճակատին . . . 231
Մնաս բարեաւ, բարեկամ (Գրիգոր Խալաթեանի յիշատակին) . . . 233
Հայ վարդապետի սիրոյ երգը . . . 235
Մի աստղ էլ մարեց (Կ. Խատիսեան) . . . 237
Մի կորուստ էլ (Վահան Քիրլեան) . . . 239
Մի յոբելեան ես և գուցէ ամենահամակրելին (Նոր-Նախիջևանի Բ. Ընկերութիւն) . . . 241
Մի պսակ թարմ գերեզմանի վրա (Ալեքսանդր Մանթաշեան) . . . 243
Իսահակ Ալաճալեան . . . 215
Համեստ գործիչներ (Կարապետ Խօջայեան) . . . 248
Գեղեցիկ օրինակ (Մանուկ Պօպով) . . . 250
Հայր Խ. Զարիֆեանի յոբելեանը . . . 252
Հ. Զարիֆեանի մահը . . . 255
Մեր տաղանդները (Անդրէաս Տէր-Մարուքեան) . . . 257
Գեղեցիկ օրինակներ (Յովհաննէս Խաթրանեան) . . . 259
Սա՞ր թէ մուկ, մո՞ւկ թէ սար... (Նուէր Էջմիածնի միաբանութեան) . . . 261
Ահա պտուղ... ահա պտուղնե՛ր . . . 265
Հայ ուսանողութեան մութ գիշերը և լոյս ցերեկը . . . 268
Զոփլուկին Կռիւը . . . 273
Պէտք չեն այլևս արտասուքներ . . . 276

ՆՈՒԷՐ Ի. Ռ. ԱՆԱՆԵԱՆԻՆ

Այս աշխատանքը, որի բոլոր արդիւնքը գործադրվելու է մարաբաների ազատութեան գործի օգտին, որդիական սիրով նուիրում եմ իմ մայրիկիս՝

ԻՍԿՈՒՀԻ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ԱՆԱՆԵԱՆԻՆ,

որը արիւնով ինձ բոլորովին օտար է, բայց մտքով, սրտով, հոգով այնքան մօտ, որ վաղուց նա դառել է ինձ համար իսկական մայր։

Տկարութեանս ժամանակ, դժբաղդութեան դառն րոպէներին, երբ վհատութիւնը սև ամպի նման պատել է և տիրել իմ հոգուս և ծանր սեղմել իմ սիրտը, ԻՍԿՈՒՀԻ ԱՆԱՆԵԱՆԻՆ, իմ մայրիկիս, շարունակ ես տեսել եմ կողքիս՝ իբրև մի բարի հրեշտակ. իր մայրական սիրով նա կարողացել է միշտ ինձ խրախուսել, մխիթարել և հանգստացել։

Սօչի, 7 ապրիլի 1914

Ծանօթութիւն.—Այս աշխատանքս իսկապէս ժողովածու է իմ՝ վերջին տարիների գլխաւորապէս «Մշակում» և մասամբ «Լոյս» շաբաթաթերթում և «Հացի կառք Զէյթունցուն» ժողովածուի մէջ տպված յօդուածներիս։ Հին յօդուածներիցս արտատպում եմ այն, ինչ որ ընկել է ձեռքս. Մնացեալը կորել է։

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԻՄ ՔԱՒԱՐԱՆՆ Է

Հրապարակախօսութիւնը իմ քաւարանն է։

Իբրեւ մարդ, իբրեւ փաստաբան, իբրեւ հասարակական գործիչ ես գուցէ արել եմ եւ անում եմ շատ յանցանքներ, մեղքեր, սխալներ, բայց հէնց որ գրիչս առնում եմ ձեռքս, կարծես ես արդէն քաւում եմ իմ բոլոր կամայ ակամայ մեղքերս. եւ զարմանալի բան. այն սեւ թանաքը, որ գրչի ծայրով ս. Մեսրոպի գեղեցիկ տառերն է նկարում եւ հիւսում մէկը միւսի ետեւից,—լուանում է, մաքրում, սրբում իմ սիրտը եւ հոգին։

Եւ ես բաղդաւորութիւն եմ ունեցել գրիչս վերցնել ձեռքս միայն այն ժամանակ, երբ սիրտս զգացել է կարիք բացվելու, խօսելու, երբ ե ր գ ե լ է իմ հոգին, երգել այն գեղեցիկ, նուրբ, հիասքանչ մեղեդիները, որ գրիչս այնքան թոյլ եւ անզօր է միշտ եղել արտագրելու եւ նկարագրելու, մեղեդիներ՝ որ նոյնչափ նման են իմ գրածներին, որչափ նման է գեղեցիկ, անուշ եւ ոսկի երազը՝ ծանր կեանքի կոշտ իրականութեան։

Գրիչս ինձ համար եղել է միշտ սուրբ, գրելը՝ սրբութիւն։

Գրել եմ այն, ինչ որ զգացել եմ սրտիս խորքերում, եւ գրածս ստորագրել եմ միշտ։

Եթէ իմ կնքահայրը եղել է Գր. Արծրունին, եթէ իննսունական տարիներից ես գրում եմ «Մշակում», սկզբից իբրեւ լրատու, յետոյ իբր թղթակից, այժմ իբրեւ աշխատակից ես խուսափել եմ միշտ պատկանելու որեւիցէ կուսակցութեան։

Որովհետեւ ճանաչել եմ միայն մի կուսակցութիւն՝

Հ ա յ կ ա կ ա ն...

Դ ր ա ն հետեւել եմ անխոնջ, անդուլ, անդադար եւ գործել եմ յանուն նրա այնչափ, որչափ եւ ինչպէս ըմբռնել է, հասկացել իմ խելքը եւ թելադրել ու պահանջել իմ խիղճը։

Ահա ինչու բոլոր կուսակցութիւնների պատկանող գործիչները անխտիր երբ աշխատում են շինել, կանգնել մեր, ափսոս, միշտ կիսաւեր օջախը, ինձ սիրելի են, համակրելի, իմ բարեկամներն են, ընկերները։

Ես ճանաչում եմ իրական քաղաքականութիւն, որը հաշուի է առնում ժամանակ եւ հանգամանք։

Ներկայ հանգամանքներում հայութիւնից դուրս մեզ չը կայ փրկութիւն։

Ներկայ հանգամանքներում հայրենասիրութիւնը ինքնապաշտպանութեան հարց է։

Ես հաւատում եմ իմ ազգիս։

Նրա ապագային։

Նրա վերածնութեան։

Հաւատում եմ ջերմ, խորը։

Ինձ չէ վհատեցնում, որը ազգը կորել է արատի, խաւարի, տգիտութեան մէջ։

Քանի որ այդ ազգը պահած ունի իր մէջ իր քանքարը, իր հանճարը, իր համակրելի առանձնայատկութիւնները, քանի որ այդ ազգը կարող է կուլտուրական մի ույժ լինել, մեր՝ գործիչներիս ճիգը եւ աշխատանքը—մաքրել եւ բուժել արատը, քշել խաւարը, տարածել լոյս եւ գիտութիւն, տալ ույժ, հոգի եւ կեանք մաշված, տանջված ազգին եւ զարգացնել նրա տաղանդը—ապարդիւն չէ մնալու, այլ պսակվելու է աջողութեամբ։

Ահա սթափվում են երկար, ծանր քնից վեց վիլայէթները, մեր աւեռեալ երկիրը, վիլայէթներ, որ այնքան կարօտ են լուսաւորութեան, գիտութեան եւ, որ գլխաւորն է, նիւթական միջոցների՝ տնտեսական կեանքին զարկ տալու համար, որպէսզի առաջն առնվի ազգակործան գաղթականութեան։

Ո՛րչափ մեծ եւ ծանր կռիւ է մեր առաջ, որ ծանօթ չէ եւրոպացիներին։

Այդ կռւին պէտք են բոլորիս ույժերը, ամբողջ ժողովրդի գործունէութիւնը։

Պէտք է մեծ աշխատանք. պէտք է հաւատ դէպի այդ աշխատանքը։

Միայն խելացի, ազնիւ, մաքուր, անբիծ հայրենասիրութիւնը կարող է ներշնչել մեզ այդպիսի հաւատ։

Խ ե լ ա ց ի ազգասէրը պիտի ուսումնասիրէ միջավայրը, հարեւան ազգերը, նրանց անցեալը, ներկան, նրանց գրականութիւնը, կուլտուրան՝ նրանց հետ մրցելու համար։

Ա զ ն ի ւ ազգասէրը պիտի աշխատէ առաջ տանելու ազգային կուլտուրան, պիտի խուսափէ այլասերումից, չըմոռանալով հանդերձ որ բոլոր ազգերը եղբայրներ են, ուրեմն յարգանքով, սիրով, համբերողութեամբ նա վերաբերվելու է դէպի բոլոր ազգերը։

Երբ նա յագեցնէ մեր ազգի քաղցը եւ ծարաւը, այն ժամանակ նա կը շտապէ օգնելու եւ օտարներին։

Ո՛չ երբէք առաջ։

Հայրենասիրութիւնը, այո՛, ինքնապաշտպանութեան հարց է այժմ։

Այդ ինքնապաշտպանութեան համար մեզ պէտք են՝ լ ե զ ո ւ նախ եւ առաջ, յետոյ եկեղեցի։

Այդպէս են ըմբռնել Աբովեան, Րաֆֆի, Գամառ-Քաթիպա։

Այդպէս ըմբռնում ենք է մենք։

Սօչի, 8 ապրիլ

ՄԱՐԱԲԱՆԵՐ...

Թիւրքիայի ծանր մթնոլորտում XX դարում, այժմ, երբ՝ շնորհիւ Ռուսաց Կայսեր կառավարութեան բարձր հովանաւորութեան՝ վերջապէս ընդունված է մի համեստ ծրագիր, Թիւրքիահայ մեր եղբայրների կացութիւնը բարւոքելու համար, այդ մեր եղբայրների մի բաւականաչափ մասը շարունակում է վարել... ծանր, ամօթալի, սոսկալի գրաստական կեանք:

Դրանք մարաբաներն են:

Մարաբա՝ նշանակում է ճորտ, ստրուկ, «եսիր»:

Հայերի մի մասը ջարդերի ժամանակ իրանց անձերը փրկելու համար՝ անձնատուր եղան Թիւրքերին, քիւրդերին, դարձան նրանց ճորտերը, ստրուկները, մ ա ր ա բ ա ն ե ր ը...

Քիւրդերը և Թիւրքերը «հովանաւորեցին», «հոգում են» նրանց ծախսերը, դառնալով նրանց պարտատէրները, իշխանները, խսկական աղաները:

Զրկված մարդկային ոլեիցէ իրաւունքներից, մարաբաները պիտի ծառայեն իբրև իրաւազուրկ ճորտեր, իբրև չորքոտանիներ Թիւրքերի, քիւրդերի արտերը վարելու համար՝ մինչև որ հատուցանեն իրանց պարտքը, որ գնալով շատանում է, հեռացնելով և անհարին նոյն իսկ դարձնելով սպասված ազատութեան րոպէն:

Մարաբայութիւնը մեր հայերի համար մի սոսկալի ամօթ է, մի ծանր յանցանք, մի մեծ և անքաւելի մեղք:

Կարելի չէ հանգիստ ապրել, ուտել, խմել, քնել, երբ մեր ազգի մի մասը ճորտեր են, ստրուկներ, մարաբաներ...

Թող այս իմ աշխատանքի միակ արժէքը լինի այն, որ նրա բոլոր արդիւնքը լինելին յատկացվելու է մարաբաների ազատութեան մեծ, սուրբ և ամենակարևոր գործի օգտին:

Հայրեր, մայրեր, եղբայրներ, քոյրեր, ծերեր, հասակաւորներ, երիտասարդներ, մանուկներ. ձեզ եմ դիմում, ձեզ բոլորիդ անխտիր. յիշեցէք մարաբաներին, որ զուրկ են մարդկութեան բոլոր իրաւունքներից, որ մեզ պէս հայեր լինելով գրաստ են դարձած. ծառայեցէք մարաբայութեան վերացման վսեմ գործին, դարձրէք նրանց ձեզ պէս ազատ մարդիկ և մի մոռանաք, որ մարաբայութիւնը մեր բոլոր հայերիս համար, ուրեմն և ձեր համար սոսկալի ամօթ է, մի ծանր յանցանք, մի մեծ և անքաւելի մեղք...

Թիֆլիս, 7 մայիսի

ԻՆՉՊԷՍ ԵՍ ԴԱՐՁԱՅ ՀԱՅ ԳՐՈՂ

(Մի մեծ մարդու մեծ յիշատակին... փոքր նուէր)

I

Երևի իմ մօրեղբայրը ծանր յանցանք և մեծ մեղք էր գործել, ամուսնանալով իմ հարսնացուիս մօրաքրոջ վրա:

—Մօրեղբայրդ քեզ երեք աստիճան ազգական, հարսնացուդ մօրեղբօրդ կնոջը երեք աստիճան ազգական. երեք և երեք՝ կը լինի վեց. մէկը կորաւ, մնաց հինգ. դուք հինգ աստիճան խնամիներ էք, անհաւատ էք, մենք իրաւունք չունենք պսակելու, —ասում էին ինձ մեր տեղի քահանաները:

Քսանևչորս տարեկան էի, պսակվել էի ուզում, և ինձ խնամութեան աստիճանների մասին էին խօսում և անհաւատ դարձնում...

Երեք և երեք՝ վեց. մէկը կորաւ...

Զարմանալի բան. մեր հոգևորականների համար այդպիսի դէպքերում միշտ մէկը կորչվում է: Ինչու, մինչև այժմ չեմ հասկացել, թէև կարդացել եմ Բաստամեանին, ուսումնասիրել եմ հարցը առանձնապէս և անգամ համալսարանում գիտական շարադրութիւն եմ գրել անհաւատութեան մասին:

Երեք և երեք՝ կը լինի վեց. մէկը կորաւ, մնաց հինգ:

Եւ հինգերորդ աստիճան խնամութիւնը անբաղդութեան դուռը ջր՛ո արեց և բացեց առաջս:

Դիցուք ճանապարհ կար, կարելի էր ում հարկն է, որքան հարկն է՝ տալ, և մէկը, փոխանակ անփառք ու անշուք կորչելու, յաղթանակով կաւելանար, և երեք և երեք կը լինէր եօթը, և ինձ կը պսակէին:

Բայց կաշառել, գնել պսակը, փողով պսակվել, դա ամօթ էր ինձ համար: Զզուանքով և արհամարհանքով մերժեցի:

Մակարը արդէն հաստատվել էր կաթողիկոս և գնում էր Էջմիածին: Ռափայէլ Պատկանեանը ամեն օր գալիս էր մեր

տուն, տաքանում էր ինձանից առելի, գրում էր ժողովրդի բերնից աղերսագրեր և շաբաթը մի անգամ տալիս էր վեհափառին։ Նոր կաթողիկոսը, որը հակառակ ժողովրդի կամքին բարձրացաւ ս. Լուսաւորչի աթոռը, փոխանակ սովորական շնորհաւորական հեռագիրների՝ ստանում էր Գամառ-Քաթիպայից անթիւ, երկար, սպառնալի հեռագիրներ, թէ պէտք է իսկոյն ևեթ թոյլատրել պսակը, եթէ ոչ տաղանդաւոր մի հայ երիտասարդ ուրիշ դաւանութեան ծոցը պիտի մտնի, և այլն, և այլն։

Վերջը իմացայ, որ վեհափառը սաստիկ նեղացել էր և զայրացել մեր բանաստեղծի վրա։

Թեմական հոգևոր ատեանը թոյլատրելը համարել էր իր իրաւունքից վեր. այն էլ աւելացնենք, որ երեք և երեք՝ դարձել էին արդէն... չորս, կորցրել էին երկուսը, երևի մինը Նախիջևանում, միւսը ճանապարհին կամ Բիշինեվ։ Յոյս չը կայ, որ թոյլատրէր և սինոդը։ Ինձ թւում էր, որ մօրեղբայրս չար ժամին էր պսակվել հարսնացուիս մօրաքրոջ հետ...

1886 թւի յունվարն էր։ Ցուրտ օր էր, քամին փչում էր, ձիւնը ծածկել էր ամեն ինչ, նոյնիսկ դժուար էր շրջել փողոցներում։ Գամառ-Քաթիպան եկաւ իմ մօտ։ Նա որոշել էր, որ ես և հարսնացուս անձամբ և անմիջապէս պիտի երթանք Էջմիածին։ Նա տուեց ինձ նամակներ Գրիգոր Արծրունուն, Պետրոս Սիմէօնեանին, Գաբրիէլ Սունդուկեանին, Բագրատ Նաւասարդեանին և Արգար Յովհաննիսեանին։ Գամառ-Քաթիպայի ծրագրածը սա էր. Պետրոս Սիմէօնեանը պիտի միջնորդէր Մակարի առաջ. և եթէ չաջողվէր այդ, Գրիգոր Արծրունին պիտի խնդրէր այտնի բողոքական, եթէ չեմ սխալվում, հայր Ամիրխանեանին, որ սա պսակէ մեզ։

Համբուրվեցինք բանաստեղծի հետ։ Դրի գրպանս նամակները և ուղևորվեցի Թիֆլիս։

II

Բաղդը երբեմն ժպտում է մեզ անբաղդութեան ջղրու և շնորհիւ անբաղդութեան։ Եթէ մեր հոգևորականները թեարանութիւնը փոքր ինչ ուսումնասիրած լինէին և երեք ու երեք վեց լինէր նրանց համար ու չը դառնար չորս, ես կը պսակվէի Նոր-Նախիջևան, ինչպէս բոլոր նոր-նախիջևանցիները, և երբէք չէի ծանօթանայ Գրիգոր Արծրունու, Գաբրիէլ Սունդուկեանի,

Պետրոս Սիմէօնեանի և Բ. Նաւասարդեանի հետ։ Ես չէի տեսնի Թիֆլիսը, Էջմիածինը։

Ի՞նչ կարժէ անբաղդութիւնը, եթէ նրա ետևից ժպտում է բաղդը արեգակի նման։

26—27 ձիգ տարիներ անցան, գնացին, բայց Գրիգոր Արծրունին կենդանի կանգնած է իմ առաջ, կարծես ես տեսնում եմ նրան, կարծես ես լսում եմ նրա ձայնը...

Թիֆլիսի նեղ անկիւններից մէկում ես դժուարութեամբ գտայ խմբագրատունը և երբ տեսայ ու կարդացի չորս տառեր, որ միասին ինձ համար մանկութիւնից խորհրդաւոր և թանգ գին էին թաքցնում իրանց մէջ—Մշակ խօսքը, սիրտս ուժգին խփեց։ Ես մտայ հարսնացուիս հետ։ Մութ նախասենեակում կարճահասակ, սապատողն, երեսի խոշոր գծերով մի մարդ արագ մտաւ, կանգնեց մեր առաջ և թունդ անախորժ ձայնով հարցրեց, թէ ու՞մ ենք ուզում, ինչ ենք ուզում։

Երևի բոլոր մեր բաղդախնդիրները բաղխում էին «Մշակի» խմբագրատան դուռը՝ մերթ խնդրելով, մերթ պահանջելով ողորմութիւն, և այդ բաղդախնդիրներից ձանձրացած պիտի լինէր խմբագիրը։ Ժամը ընդունելութեան ժամ չէր, եկել էինք երկու հոգի և զուգէ նման էինք այդպիսի անկոչ ու անհամ հիւրերի՝ մեր ճանապարհորդական շորերով...

—Մենք ցանկանում ենք տեսնել Գրիգոր Արծրունուն,—պատասխանեցի ես։

—Ես եմ Գրիգոր Արծրունին։

Վստահութեամբ ես պարզեցի նրան Գամառ-Քաթիպայի նամակը։

Հէնց որ Գ. Արծրունին լսեց Գամառ-Քաթիպայի անունը, փոխանակ ուրախանալու և մեզ գրկախառն ընդունելու, ինչպէս մենք սպասում էինք, նա փոխվեց, գունատվեց, մէկ էլ տեսնես՝ աչքերը պէնսնէի ետևից վառվեցին, կրակվեցին. նա ոչինչ չասաց և «Մարի, Մարի» կանչելով՝ ուղղակի փախաւ մեզանից։

Մնացինք երկուսս շուարած, ապշած, կանգնած՝ մութ նախասենեակում, չը հասկանալով թէ ինչ է նշանակում այդ բոլորը։ Չէ՞ որ Գրիգոր Արծրունին Գամառ-Քաթիպայի սիրելին և մտերիմն է։ Նա պիտի տանէ մեզ հայր Ամիրխանեանին։ Սակայն լսվում են ձայները, ձայները ամրանում են, դառնում են աղաղակներ։ Աղաղակողը Գ. Արծրունին է. ես ճանաչում եմ արդէն նրա ձայնը։ Կանացի մեղմ, հանդարտ ձայն է լսվում։ Նրանց խօսածը գերմաներէն է։ Գ. Արծրունին տաքա-

նում է հրաբուղխի նման, զայրացած խօսում է Գամառ-Քաթիպայի անունը տալով. կինը հանգստացնում է, խաղաղեցնում: Տէր Աստուած, այդ ի՞նչ է նշանակում և ո՞րչափ ժամանակ մենք պիտի մնանք այսպէս ապշած, շուարած կանգնած՝ մութ նախասենեակում: Ի՞նչ հանելուկ է սա: Լաւ չէ՞ լինի բոլորովին հեռանալ:

Վերջապէս: Գուցէ անցել են տասն րոպէներ, ինձ տասն ժամեր երևացին:

Գալիս են Գրիգոր Արծրունին և հետը մի կին՝ ոչ գեղեցիկ, բայց խելօք, ազնիւ դէմքով: Դա Մարիա Կարամանօվեան է: Մեզ խնդրում են ներս, նստեցնում, ողջունում, խօսում: Ես նայում եմ Գր. Արծրունու երեսին. նրա աչքերը այժմ բարի են, կարեկցող, բայց այդ աչքերի մէջ կայ մի զարմանալի դրոշմ. տանջանք, տառապանք խորը, խորը թագնված են նրանց մէջ. և երբ երեսը ինձ ժպտում է, կարծես աչքերը առանց արտասուքի լաց են լինում: Ինչու՞ տխուր են այդ աչքերը և ինչու՞ լալիս են առանց արտասուքի...

Մեր վիճակը նրան շատ է հետաքրքրում: Նա բաւական է և հաւանում է, որ մենք անտես ենք անում հասարակական կարծիքը և երկու երիտասարդներ ձեռք-ձեռքի բռնած, առանց ազգականների, գալիս ենք մենակ, անցնելով սարեր, ձորեր և զանազան արգելքներ: Ամիրխանեանի մասին նա խօսել անգամ չի ուզում: Մենք պիտի պսակվենք լուսաւորչական եկեղեցում, և նա տանում է մեզ շտապով առաջնորդին՝ արքեպիսկոպոս Արիստակէսին: Նա ասում է սրբազանին.

—Ահա իմ բարեկամը և նրա սիրելին. դուք պիտի անէք նրա համար ամեն բան, ինչ որ միայն յանուն մեր բարեկամութեան ինձ համար կարող էիք անել:

Ես յարգանքով նայում եմ Գր. Երեմէիչի երեսին, նայում եմ և զարմանում, թէ ինչպէս այդ մարդը մի քանի ժամվայ մէջ կարողացաւ ինձ սիրել, ինչպիսի հաւատով, յոյսով, յարգանքով նա խօսում է իմ մասին. կարծես վաղեմի բարեկամը լինեմ:

Սրբազանը մխիթարում է: Մակար կաթողիկոսը կը թոյլատրէ անշուշտ. բաւական է, եթէ Պետրոս Սիմէօնեանը գրէ սրբազան Ներսէսին երկու տող, երեք և երեք,—ծիծաղում է սրբազանը,—նորից վեց կը մնան և ոչ երկուսն ու ոչ մէկը կը կորցվեն: Ծիծաղում է և Գրիգոր Երեմէիչը, իսկ աչքերը տխուր են, այնպէ՜ս տխուր: Եւ երբ չորս ձիեր թռցնում են թռչունների նման իմ կառքը դէպի Էջմիածին, ես չեմ կարող մոռա-

նալ այդ աչքերը: Ես դառնում եմ ընկերոջս և ասում.

—Գիտե՞ս ո՛վ է ամենաազնիւ մարդը Թիֆլիսում. Գրիգոր Արծրունին, այո՛, Գրիգոր Արծրունին:

III

Ես վերադարձայ Էջմիածնից Թիֆլիս:

Հանելուկը պարզվեց:

Գրիգոր Երեմէիչը, Մարիա Կարամանօվեան և Գամառ-Քաթիպան միասին նստած՝ պարտէզում խօսում էին: Առաւօտը բանաստեղծը գնալու էր Էջմիածին, Անի: Խօսելու բաներ այնքա՜ն շատ կային: Ամեն կողմից նորից խաբուսիկ յոյսերը զեփիւռի նման քաղցր թափանցում էին ազնիւ հայ սրտերը, մաշում, հալեցնում, տանջում նրանց և արիւնը քամում: Վերջապէս քանդված Հայաստանում մտցվելու էր ինքնավարութիւնը: Գարնան տաք գիշեր էր, գարնան վառ յոյսեր էին: Երկու մեծ հայեր—մէկը հրապարակախօս, միւսը բանաստեղծ—բանում էին իրար իրանց այրված սրտերը և սրտերի իղձերը՝ մարգարիտներ և գոհարներ... Բայց ահա կարմրում է, ամաչելով գիշերից, և առաւօտը: Պէտք է բաժանվել: Գամառ-Քաթիպան կէս ծիծաղելով, կէս լուրջ՝ առաջարկում է.

—Գիտես, Գրիգոր Երեմէիչ, տուր ինձ 3000 ր., և ես քեզ Էջմիածնից բերեմ ապահարզան:

—Երեք կոպէկ չեմ տայ,—ծիծաղում է Գրիգոր Երեմէիչը:

Երեք օրից յետոյ «Մեղու Հայաստանի» լրագրում տպվում է լուր, թէ Գրիգոր Արծրունին ուղարկել է Ռափայէլ Պատկանեանին Էջմիածին 3,000 րուբլով ապահարզան ձեռք բերելու համար:

Ռափայէլը «Մեղուն» չը կարդացած, անհոգ, անփոյթ, Անիից վերադարձին, ձեռքը բռնած պայուսակներ՝ մտնում է «Մշակի» խմբագրատուն...

—Դո՛ւրս, դո՛ւրս, դո՛ւրս,—գոռում է զայրացած Գրիգոր Երեմէիչը և առանց որևիցէ բացատրութեան վռնդում է բանաստեղծին:

Բանից դուրս է գալիս, որ ինձ էլ Գրիգոր Երեմէիչը պիտի վռնդէր, եթէ Մարիա Կարամանօվեան նրան չը հանգըստացնէր և չը համոզէր, որ յամենայն դէպս ես մեղաւոր չեմ:

Բաղդաւոր եմ, որ ինձ աջողվեց նորից մտերմացնել այդ երկու մեծ մարդկանց. և երբ ես կոչ էի արել հայ հասարա-

բակութեան՝ բանաստեղծի նիւթականը ապահովացնելու համար, «Մշակը» ինձ օգնեց և քանիցս ես ստացայ Գրիգոր Երեմէիչից խոշոր գումարներ այդ նպատակով և սիրալիր ողջոյններ տկարացած Ռաֆայէլին...

IV

—Սիրելի բարեկամ,—ասում էր ինձ Գր. Արծրունին յուզված, ցաւած՝ սրտի խորքերից,—մարդ պիտի լինի նախ և առաջ անկեղծ, պարզ: Երբ ես մենակ եմ ճեմում փողոցներում, բոլորը շտապում են գլխարկները հանել, բարևել. բայց երբ կնոջս հետ ձեռք-ձեռքի տուած մենք ման ենք գալիս, մեր մօտիկները, մեր բարեկամները մեզ չեն ճանաչում, ուրիշ կողմ են դարձնում գլուխները, որովհետև մենք պսակված չենք, թէև սիրում ենք իրար: Միւս օրը նորից ես մենակ եմ ման գալիս, ինձ սիրով նկատում են, բարևում: Բայց այժմ ես արդէն նրանց չեմ ճանաչում, չեմ նկատում, չեմ ընդունում և նրանց բարևներին չեմ պատասխանում: Ինչու՞ պատասխանեմ: Կեղծումներ, կեղծումներ...

Եւ ես իսկոյն նկատեցի նրա աչքերի մէջ այն գրոշմը, նկատեցի մի մութ, ծանր տառապանք, որ խորը մտել էր, թագնվել և պահվել նրա սիրուն և վառվռուն աչքերի մէջ...

Ինչպէս նա տանջվում էր այդ կեղծաւորութիւնից և այդ կեղծաւորներից՝ փոքր մարդերից, որոնք գործում էին միասին մի մեծ մարդու կեանքը, սիրտը, հոգին մաշելու համար...

Գրիգոր Արծրունին աշխատում էր չը նկատել այդ փոքր մարդկանց: Նա դարձեալ գլուխը բարձր պահելով համարձակ մտնում էր փողոց, բայց ստոր և անարգ հայհոյանքները նրա սիրած կնոջ վրա և փսփսալը վիրաւորում էին նրան, էգուց, այսօր ասեղի նման ծակում սիրտը և յուզում: Նրա ազնիւ սրտի վէրքի ցաւը բարձրանում էր կոկորդը և մտնում նրա խելօք, գեղեցիկ աչքերի մէջ և այնտեղ մնում, ինչպէս հողմից բարձրացած ալիքը գալիս է ծովի ափը հանգստանալու...

Փոքր մարդիկ նման են ճանճերին: Ճանճը ոչ մի բանի պիտանի չէ, բայց կարող է ձանձրացնել և վհատեցնել նոյնիսկ առիւծին...

V

Քանի օրվայ մէջ մենք կարծես արդէն վաղեմի բարեկամներ էինք. բանում էինք իրար մեր սրտերը. և հէնց մեր ծանօթութեան համարեա առաջին օրից նա սկսեց ինձ համոզել, որ գրեմ հայերէն և աշխատակցեմ «Մշակին»: Նա իմացել էր Գամառ-Քաթիպայից, որ ես Լազարեան ճեմարանի եօթերորդ դասարանից աշխատում եմ ռուս լրագիրներում, գրել եմ փոքր վէպիկներ, թղթակցել եմ մի ամսաթերթի: Ես վիճում էի, առարկելով որ ես աւելի օգտաւէտ կը լինեմ իբրև ռուս հրապարակախօս:

—Ոչ, ոչ,—պնդում էր իրանը «Մշակի» խմբագիրը,—դուք պիտի գրէք հայերէն, միայն հայերէն:

Հայերէ՞ն: Բայց ես գիտէ՞մ հայերէնը:

Լազարեան ճեմարանում սովորեցնում էին գրաբարը, ուշադրութիւններս դարձնում մանաւանդ զանազան անմիտ ձևերի վրա, օրինակ՝ փոխանակ «գնացել» ասելու, պէտք էր գրել՝ «ի չու արարեալ, խաղացեալ գնացեալ»:

Մի խրթին չինարէն էր, էլի...

—Չը գիտեմ հայերէն գրել,—խոստովանեցի ես:

—Ոչինչ,—քաջալերում է Գրիգոր Երեմէիչը,—ես էլ չը գիտէի, ես էլ սովորեցի, դուք էլ կը սովորէք: Սկզբից դուք կը գրէք մանր լուրեր, միայն լուրեր. մի աշխատէք լուսաբանել. մեզ պէտք են լուրեր, փաստեր: Դուք կը տաք մեզ հում նիւթեր ձեր տեղի առօրեայ կեանքից: Յետոյ փոքր առ փոքր կը թղթակցէք, կը գրէք նամակներ: Դուք պիտի լինէք մեր աշխատակիցը անպատճառ:

Մի վաղ առաւօտ ընկնելու էի ճանապարհ: Թէև տկար՝ Գրիգոր Արծրունին եկել էր ինձ բարի ճանապարհ մաղթելու: Նրա վերջին խօսքերն էին՝

—Դուք պիտի աշխատակցէք «Մշակին». սպասում եմ:

—Լաւ,—պատասխանեցի ես և դարձայ հայ գրող. կարելի չէր Գրիգոր Արծրունուն մերժել:

Մէկ տարուց յետոյ ես ծանր հիւանդացայ: Իմացաւ Գրիգոր Արծրունին և նամակով համոզեց ինձ գնալ Հելվետիա և այնտեղ գտնել առողջութիւն, ինչպէս ինքը գտել էր մի ժամանակ:

«Մեր կեանքի մէջ կայ մի ինչ-որ նմանութիւն»,—գրում էր նա ինձ սիրով:

Երբ ես վերադարձայ Հելվետիայից՝ կազդուրված, առողջացած, ես շարունակեցի աշխատակցել «Մշակին» և մինչև այժմ չեմ դադարել։

Խաղաղ քնիր ուրեմն, իմ սիրելի, յարգելի, պաշտելի, թանգագին բարեկամ։ Մենք էլ արդէն ծերանում ենք, իջնում վար մեր կեանքի բլուրից և շուտով գուցէ գանք հանգստանալու քո կողքին։ Դու բաւական պիտի մնաս ինձանից. ես լսեցի քո խօսքը. ես աշխատակցեցի և աշխատակցում եմ «Մշակին» մինչև օրս, և ամեն անգամ երբ գրիչս առնում եմ ձեռքս իբրև հլու աշակերտ, ես յիշում եմ քո խօսքերը, որ դու ինձ քանիցս ասել ես յուզված, ցաւած սրտիդ խորքերից՝ թէ «մարդս պիտի լինի անկեղծ»...

Մենք կարող ենք սխալվել։ Ո՞վ չի սխալվում։ Սխալը յանցանք չէ, ներելի է։ Պէտք է միայն լինել, մնալ անկեղծ, միշտ անկեղծ, և երբ գրիչը մեր ձեռքն ենք առնում, մենք պիտի նմանենք սուրբ տաճարի վեհ սպասաւորին՝ խաչը ձեռքը, խորանի առաջ կանգնած։ Սուրբ է խորանը, սուրբ է մամուլը։ Պէտք է անկաշառ, անկեղծ սիրով ծառայել նրան։ Ես միշտ յիշում եմ քո խօսքերը կեղծաւորների մասին և յիշելիս տեսնում եմ միևնոյն ժամանակ քո աչքերը, քո սիրուն, խելօք, վառվռուն աչքերը, որոնց մէջ ես կարդում էի այնքան սէր դէպի մեզ և այնքան դառը կսկիծ, տառապանք և սուգ՝ ցաւած սրտիդ պղտոր փրփուրը, այն աչքերը, որ գիտէին լալ առանց արտասուքի, անգամ այն ժամանակ՝ երբ ժպտում էր երեսդ։

Խաղաղ քնիր. քո օրինակը ի զուր չանցաւ։ Դու դարձար մեզ համար դրօշակ ազնուութեան և լուսաւորութեան և հայ հրապարակախօսութեան համար եղար այն աստղը, որին նայելով նաւաստին անսահման ծովում գտնում է իր ճանապարհը և փրկում իր նաւը։ Վաղուց արդէն քո ասածը դարձել է մեզ համար լաւագոյն գաղափարների պատգամ։

Խաղաղ քնիր, բարեկամ, ազգը քեզ հետ է, քո սիրած և պաշտած ազգը։

VI

Ուրեմն իմ մօրեղբայրը յանցանք չի գործել՝ իմ կնոջ մօրաքրոջ հետ ամուսնանալիս։ Սկսում եմ հաւատալ, որ մեր հոգևորականները դիտմամբ երեք և երեք չորս դարձրին՝ ինձ Թիֆլիս, Էջմիածին ուղարկելու, որպէսզի Գրիգոր Արծրունու և

Գար. Սունդուկեանցի քաղցր բարեկամութիւնը վայելեմ։ Եւ նմանեցի ես այն գեղեցիկ աւանդութեան հովւին, որ գնացել էր վաղ առաւօտ դաշտը ոչխարների հօտը արածացնելու և փոխանակ ոչխարների՝ յանկարծ գտել էր մի թագաւորութիւն և վերադարձել էր քաղաք թագաւոր։

Ազնիւ մամուլը՝ գեղեցիկ թագաւորութիւն է, իսկ գրիչը՝ մի թագ հասկացողի և գնահատողի համար։

Ես ցած եմ խոնարհում գլուխս Գրիգոր Արծրունու յիշատակի առաջ և յայտնում երախտագիտութեանս բոլոր զգացմունքները, որ ինձ ներշնչեց միտք և համոզմունք հայ գրող լինելու։

ՋՈՒՐ, ՋՈՒՐ... ՋՐՀԵՂԵՂ...

(Մանրանկար)

I

Մանկական ոսկի օրերս անդարձ անցած, գնացած՝ կենդանանում են իմ առաջ... Ես փոքր երեխայ եմ, կանգնած փոքր գետի ափին և նայում եմ ջրաղացին... Պտտում է խոշոր, հրէշաւոր թևը աղմուկով, բարկացած դէն գցելով ջուրը, որ անդադար թափվում է նրա վրա և թափվում...

—Արի՛, մտի՛ր ներս,—հրաւիրում է ինձ ջաղացպանը,—ես քեզ ցոյց կը տամ, թէ ինչպէս է ցորենը ալիւր դառնում։

Ես չեմ գնում։ Այդ թևը այնպէս շուտ է պտտում, այնքան աղմուկ հանում և այնպէս խոշոր է, հրէշաւոր։ Ես սպասում եմ, որ ջուրը դադարի, թևը կանգնէ, որ գնամ, տեսնեմ, թէ ինչպէս մուգ ցորենը դառնում է սպիտակ ալիւր...

Իսկ ջուրը չի դադարում թափվելուց. նա գալիս է և գընում արագ, զօրեղ, և թևը կարծես սատանայի թև է. նա սարսափեցնում է ինձ...

II

Եթէ ասեմ, որ ես չափահաս եմ, սուտ կը լինեմ։ Վաղուց արդէն սպիտակել են բեխերս։ Հոգուս եռանդին արձագանք չի տալիս տկար մարմինս։ Մեծ են ցանկութիւններս, բայց կարողութիւնս՝ չափաւոր, և ես զգում եմ, որ ձմեռը արդէն կանգնած է տանս շեմքին, բախում է դուռս, սպասում է, որ մտնի ներս, ողջունէ, գրկէ ինձ պինդ, փաթաթվի վզիս... Այժմս դարձեալ իմ առաջս կանգնած է մի ջրաղաց մեծ, հրէշաւոր թևով։ Տասնեակ ջաղացպաններ հրաւիրում են ինձ ներս։

Այնտեղ ցորեն չը կայ, այնտեղ ալիւր չեն աղում...

Այդ ջրաղացը մեր անվերջ, անհամ վէճերն են...

Ջուր, ջուր, որ գալիս է, գնում անվերջ, անդադար, աղմուկով, բարկացած...

Կատարեալ ջրհեղեղ...

III

Զաւարեանը քաղցած է մեռել թէ՞ կուշտ, ահա ինչի՛ վրա են այժմ վիճում շատ, վիճում են տաք, անվերջ...

Քաղցած... կուշտ...

Ես զարմացած նայում եմ երկու բանակներին և հարցնում եմ. ո՞ւր էիք դուք առաջ։ Ինչո՞ւ այն ժամանակ լուռ էիք և համր։ Ինչո՞ւ սկսում էք խօսել, վիճել, տաքանալ, երբ ամեն բան անցել է, գնացել և վերջացել, երբ ուշ է, հնար չը կայ, ճար չը կայ... Ապա ինչո՞ւ դուք չէք տեսնում այժմ մեր մէջ մնացած, դեռ կենդանի Զաւարեաններին, որոնց դուք ճանաչում էք, լաւ գիտէք։ Նրանք թափառում են անօթի Ռուսաստան, Թիւրքիա, Պարսկաստան, Հելվետիա, աշխարհիս ամեն անկիւններում, այդ հայ տառապեալ, քաղցած տաղանդները, որ չունեն հաց վաղը ուտելու և մի բարձ՝ յոգնած գլուխները խոնարհելու և հանգստացնելու...

Թքում են իրար երեսին ջաղացպանները՝

Քաղցած մեռաւ, անիրաւներ...

Կուշտ մեռաւ, սրիկաներ...

Քաղցած... կուշտ... անիրաւներ... սրիկաներ...

Խեղճ ջաղացպաններ...

IV

Իսկ մայլ ջրաղացը պտոյտ է տալիս իր հրէշաւոր թևը, որ կարծես սատանայի թև լինի...

Ցորեն չի մնացել վաղուց, որ աղայ. ալիւր չենք տեսնում...

Միայն ջուր... ջուր... կատարեալ ջրհեղեղ։

Եթէ այդ զօրեղ թևը, որը ուտում է ու մաշում լոկ ինքն իրան, ցորեն աղար, մեզ ալիւր տար, ինչքա՜ն հայ տաղանդներ մենք սնուցած, մեծացրած, կշտացրած, պահպանած կը լինէինք։

Վէճեր... անէծքներ... հայհոյանքներ...

V

Զաղացպաններ, կանգնեցէք և կանգնեցրէք ձեր Ջրաղացի անիծեալ, հրէշաւոր այդ սատանայի Թևը։ Նա այնպէս շուտ է պտտում, որ իմ գլուխս էլ է պտոյտ գալիս... Սարսափը նորից տիրում է իմ սրտին, ինչպէս մանկական օրերիս... Ես զգում եմ, որ այդ ծանր, հրէշաւոր Թևը պտտում է մեր Թշուառ ազգի Թոյլ գլխի վրա, յոգնեցնում է նրան, Թուլացնում, յիմարացնում... Ցորեն է ուզել ազգը ձեզ, որ ալիւր աղաք, նրա զաւակներին կերակրէք... Իսկ դուք ցորենը աւաղ էք դարձնում... Ցորեն արդէն չէ մնացել, ալիւր էլ չը կայ... իսկ ձեր Ջրաղացի Թևը պտտում է, պտտում ազգի գլխին, Թշուառ ազգի գլխին և տալիս է նրան՝

Ջուր... ջուր...

Կատարեալ Ջրհեղեղ...

1914

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ-ՏԱՐԻ

Շնորհաւոր Նոր-Տարի...

Նոր բաղդ, նոր կեանք...

Նոր բաղդ... Վերջապէս մի բաղդ, որևիցէ բաղդ, որովհետև մենք այնքան Թշուառ ենք. և նոր կեանք, որովհետև հինը այնքան անբարոյական է եղել...

Հին տարին եղել է մեզ համար ծանր, չար, լի փորձանքներով և յուսահատելի ամեն կողմից։

Ի՞նչ կը տայ Նոր-Տարին։

Մեր հին վէրքերը, ցաւերը, դարդերը աւելի՞ խոր կը ցաւեն ու կը զգացվեն, Թէ՞ կը բուժվեն, կը մոռացվեն...

Հոգ չէ։ Կեցցէ՛ Նոր-Տարին։ Հաւատանք, Թէև հաւատը մեզ երբէք փրկած չէ, և յուսանք, Թէև յոյներս երբէք իրագործված չեն։

Ի՛նչ փոյԹ յուսահատվել, կոչել, լալ. խօ Նոր-Տարին կարող չէ մեր տունը քանդել, որովհետև այդ տունը վաղուց արդէն... խարխուլ, քանդված է և փչացած...

Հանեցէք ձեր նոր զգեստները, բերէք ամենաԹանգ գինին և լցրէք բաժակները... Կեցցէ Նոր-Տարին։

Եւ իբրև յուսակտուր Թուղթ խաղացող՝ դնենք սեղանի վրա մեր գրպանի վերջին կոպէկը. դուցէ աջողվի։

Ոչ։ Հրաշքների դարը անցել է, գնացել։ Մենք չենք հաւատում ոչ մի հրաշքի։ Պահեցէք ձեր նոր զգեստները, Թողէք ամենաԹանգ գինին և բաժակները մի լցրէք... Տարին կանցնի, կերԹայ, Նոր-Տարի կը գայ և դարձեալ կանցնի, հին կը դառնայ, իսկ մենք հայերս միևնոյնը կը մնանք...

Միևնոյնը կը մնանք մինչ այն րօպէն, երբ կը համոզվենք, որ հին տարին չէր մեղաւոր, այլ մեր հին բարքերը...

Միայն այն ժամանակ, երբ կը տեսնենք բոլորս, որ մեր կեանքն անբարոյական է, ապականված, երբ կը հասկանանք, որ մենք ինքնաճանաչուԹիւն չունենք և ոչ իսկական հայ ոգի, հայ սիրտ, երբ մենք վերջապէս կը սիրենք մեր եղբայր-հային,

ձեռք կը տանք իրար և կը սկսենք նոր կեանք, քաղաքական կեանք, միայն այն ժամանակ մենք կը փրկվենք, մեր տունը կը շինվի և մենք ուրիշ ազնիւ ազգերի շարքը կը մտնենք համարձակ, և այն ժամանակ կեցցէ՛, կեցցէ՛ Նոր-Տարին...

Կը գա՞յ արդեօք այդ ժամանակը, կը հարցնէք ինձանից։

Չը գիտեմ։ Մարգարէ չեմ։ Բայց գիտեմ, որ դա կախված է ինձանից, ձեզանից, մեզանից, բոլորից։

Ահա ձեզ մի փորձ։

Եկաւ Նոր-Տարի։ Ի՞նչ պիտի զգան զէյթունցիները։ Տասը հազար որբե՛ր. դա առակ չէ, հէքեաթ չէ, դա ծանր իրողութիւն է, որ պիտի մեզ ճնշէր, եթէ մենք քաղաքական մարդիկ լինէինք...

Սովը մի կողմից, ցուրտը միւս կողմից։ Նրանց սպասում է անողոք մահը. եթէ մենք լռիկ նայենք նրանց աղէտին և չը տանք արձագանք նրանց հառաչին, հառաչին դէպի մեզ, նրանց հեռաւոր եղբայրները...

Եթէ այսօր, հա՛յ եղբայրներ, դուք ձեր գրպանից չը հանէք ձեր լուման՝ զէյթունցիներին փրկելու համար, ես կասեմ ձեզ, որ երբէք մեր տունը չի շինվի, երբէք մենք ազնիւ ազգերի շարքը չենք մտնի։

Այդ գուշակելու համար պէտք չէ մարգարէ լինել։

Թո՛ղ մեր այս կոչը լինի գէթ մի կաթիլ Թոյն մեր ինքնահաւան յիմարների ամենաթանգ գինու բաժակի մէջ...

Եւ եթէ մեր կոչը կը մնայ ձայն բարբառոյ յանապատի, Թո՛ղ կորչի Նոր-Տարին, ինչպէս և հինը։

Թո՛ղ մեր հին վէրքերը, ցաւերը աւելի խորը զգացվին, ցնւեն... և... կորչի՛ Նոր-Տարին...

1910

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ-ՏԱՐԻ

(Ապրենք, գործենք և հաւատանք)

I

Շնորհաւոր Նոր-Տարի, նոր կեանք, նոր եռանդ և նոր հաւատ։

Շնորհաւոր Նոր-Տարի...

Թո՛ղ նա բերէ մեզ նոր կեանք, որովհետև հինը կեանք էլ չէր, այլ մի մեռելութիւն, որի մէջ մենք թմրել էինք և քարացել մեր բոլոր զգացմունքներովը. Թո՛ղ նա մեզ ներշնչէ եռանդ փոխանակ այն անգործութեան, որից տաղտկացել ենք, յոգնել և կորել. վերջապէս Թո՛ղ նա տայ մեզ հաւատ, որի տեղը բռնել են այժմ թերահաւատութիւն, կասկածոտութիւն և տարակուսանք, հաւատ դէպի մեր ազգը, մեր ոյժերը, մեր ուղին, հաւատ, որ շարժում է սարեր, գլորում է ամեն մի խոչընդոտ և տանում է դէպի երջանկութեան դռները։

Շնորհաւոր Նոր-Տարի և... նոր խելք հնի տեղ, որ ընկճըված է, մաշված, սպառված...

Հին խելքը...

Մենք այնքան վախենում էինք՝ չիցէ մեզ յիմար ճանաչեն օտարները, մենք այնչափ յաւակնութիւն ունենք կուլտուրական ազգ յիշվելու, մենք այնքան արագ վազում ենք բոլոր նորութիւնների պոչերի ետևից և ողջ կեանքներս ձիգ ենք թափում, աշխատում ձեռք բերել մի վկայական... իմաստութեան վկայական, որպէսզի աշխարհը իմանայ, որ մենք մեծ խելքի տէր ենք, և... մեռնում ենք այնքան... յիմար... իբրև հասարակ յիմարներ...

Այդ վկայականի խաթրու մենք անում ենք այնչափ յիմարութիւններ։

Յիմարութիւններ, որոնցից գլխաւորը և վտանգաւորը մեր թերահաւատութիւնն է։ Մենք ոչինչ չենք խոստովանում և ոչ մի բանի չենք հաւատում։ Ազգը տգէտ է և տգէտ պիտի մնայ...

ապագայ չունենք… մեր գործունէութիւնը ապարդիւն է… եռանդը աւելորդ բան է, ողջ մեռ է, ոչ մի բան դուրս չի գայ… մենք կորած ենք… չարժէ կռուել… մենք բոլոր աշխարհի քաղաքացիներ ենք… Ահա ինչեր ենք ասում, մտածում և քարոզում։

Կասկածել, տարակուսել, երերալ, գուշակել ամենավատթար բաներ, որպէսզի… որպէսզի ոչ մի բան չանենք և չը գործենք…

Չը գործել երէկ, այսօր և վաղը, երբէք չը գործել, միշտ նիրհել, միշտ քնել, միշտ երազել, փախչել և խուսափել գործից իբրև սատանայից, որովհետև… միևնոյն է… բան դուրս չի գայ… աւելորդ աշխատանք է… ահա մեր ողորմելի դաւանանքը անցեալ տարւայ, անցեալ տարիների, տասնեակ, քսան, երեսուն տարիների շռայլ վատնած, կորցրած ժամանակի, երբ կարելի էր այնքան բան անել… Ի՜նչ մեծ կորուստ, ի՜նչ մեծ կորուստ մեր ազգի համար…

II

Շնորհաւոր Նոր-Տարի, նոր կեանք, նոր եռանդ և նոր հաւատ… մանաւանդ հաւատ փոխանակ թերահաւատութեան, որ հասել է ոսկրներիս՝ խոնաւութեան և ցրտի նման։

Այդ թերահաւատութեան արգասիքն են մեր անգործութիւնը, անշարժութիւնը և մեռելութիւնը։

Մնում է միայն մեր մնապարծութիւնը, որ ստիպում է մեզ վազել ձեռք բերելու իմաստութեան վկայականը։

Ծնված խելօք, օժտված բնական տաղանդով, ներկայ մեր մթնոլորտում հայը այնքան աշխատում է խելօք երևալ, որ նա լոկ յիմարութիւններ է անում, յիմար ապրելով, յիմար նիրհելով և յիմար մեռնելով…

Այդ յիմարութիւններից ամենայիմարը այն է, որ մենք ժխտում ենք ազգասիրութիւն, ծաղրում ենք նրան, աշխատում ենք լինել, ձևանալ կօսմօպօլիտ, ամենավերջին հայհոյանքը համարելով «իսկական հայ» անունը, բոլորովին մոռանալով մեր հանգամանքները, որ չեն ներում հեռուից անգամ համեմատել իսկական հային իսկական ռուսի հետ, չը հասկանալով անգամ այդպիսի համեմատութեան ոչնչութիւնը և ապիկարութիւնը…

Դա չէ՞ պատճառը, որ այժմ պատահում է, որ հայ տաղանդը իրան ողջ աշխարհի զաւակ և քաղաքացի համարելով՝ վախենում է ծառայել հայութեան գործին, իսկ հայ հարուստը

չէ մտածում հայի վրա և տալիս է իր գումարներն անխտիր բոլոր ազգերին, մինչդեռ օտարազգիների մէջ մեզ՝ հայերիս գթացող, հոգացող և խնամող չը կայ…

Ազգասիրութիւնը ներկայ հանգամանքներում մեզ համար ինքնապաշտպանութեան հարց է։ Եթէ այդ հանգամանքները անցնեն, գնան, վերջանան, ազգասիրութիւնը աւելորդ կը լինի. իսկ այժմ նա մեզ անհրաժեշտ է, հասկանո՞ւմ էք, անհրաժեշտ…

Մենք անպաշտպան ենք, առանց տէր ու տիրականի, իբրև մի երեխայ։ Ի՞նչ կասէք, եթէ մայրը իր ստինքը քաշէ իր երեխայի բերնից և տայ օտար երեխային։ Ի՞նչ կասէք, եթէ հայրը՝ թողած իր քաղցած զաւակներին՝ տանէ հացը տայ օտարին։

Կա՞ն արդեօք այդպիսի մայրեր, հայրեր։ Ցոյց տուէք նրանց։ Ո՞ւր են։

Եթէ մայրը և հայրը կարող են կշտացնել իրանց զաւակներին, թո՛ղ տան սնունդ ու կերակրեն նաև օտարներին, մենք ոչինչ չունենք։ Իսկ եթէ նրանք այնքան հարուստ չեն և քաշում են սնունդը իրանց երեխաների բերնից և տալիս են օտարներին, նրանք գողանում են, այո՛, գողանում են։

Այդպէս է գրված աստուածային գրքի մէջ, որ խօսում է «Իսրայէլի տան» մասին։

Այդ են ասում և մարդկային խիղճը, արդարութիւնը և օրէնքը։

Մեր ազգը ծծկեր երեխայի դրութեան մէջ է գտնվում՝ համեմատած ուրիշ երջանիկ և զօրեղ ազգերի հետ։

Տեսէք նրան՝ խաւարի մէջ, տգէտ, անգրագէտ, զոհ հազարումէկ նախապաշարմունքների և արատների, որոնք պտուղ են նրա թշուառ կացութեան, ստրկութեան լծի տակ Թիւրքիայում և Պարսկաստանում՝ քաղցած, ծարաւ, կարօտ օգնութեան, գլուխը բաց, բոբիկ, միայն ցնցոտիներ ուսերին, որոնք չեն ծածկում նրա մերկութիւնը և չեն պաշտպանում ցրտից և խոնաւից. նա կանգնած է մեր առաջ և դողալով կարկառում է իր ձեռքերը, խնդրում է, սպասում է, սառը քրտինքը աշխատաւոր ճակատին, աղի արտասուքը յոգնած աչքերին, լուռ՝ այդ մեծ-համրը… Եւ ես կասեմ. այն հայ տաղանդը, այն հայ հարուստը, որ չէ տեսնում այդ խեղճ թշուառին, չէ հասկանում այդ խորհրդաւոր լռութիւնը, չէ մտածում նրա վերածնութեան վրա և իր տաղանդն ու գոյքը չէ ծառայեցնում նրան՝ այդ մեծ-համրին, այլ տալիս է օտարին, կարծես իբրև մի մայր, որ ստին-

Гос. Библиотека … Арм.ССР

քը քաշում է իր երեխայի բերնից և տալիս օտարին, այդպիսին գողանում է, այո, գողանում է ազգից, իր հարազատ ազգից... Մեր արհամարհանքը, մեր ատելութիւնը այդպիսի տաղանդներին և այդպիսի հարուստներին... Թող կորչեն նրանք մեզանից. առանց նրանց էլ մենք կը քաշենք մեր լուծը...

III

Շնորհաւոր Նոր-Տարի, նոր կեանք, նոր եռանդ, նոր հաւատ...

Հին տարին մենք անց կացրինք վատ, ինչպէս առհասարակ մինչև այժմ անց կացրել ենք հին տարիները. յունվարի 1-ից սխալ քայլելով՝ խելօքներ ենք ձևացրել մեզ և յիմարներ ենք դուրս եկել։ Հին տարին կեանք չէր, այլ ճահճացած, զազրելի մեռելութիւն, որի մէջ մենք թմրած էինք դարեր մեր բոլոր զգացմունքներովը, մեր ճահիճը գեղեցիկ աշխարհ երազելով, դատարկ ցնորքները գաղափարներ ընդունելով և երկրպագելով միայն մի կուռքի՝ մեր եսին, մեր եսին...

Եռա՜նդ... Երբ եղել է այդ եռանդը մեզանում և մի՞թէ կարելի է մեռելութեան ճահճում ծլեցնել և մեծացնել այդպիսի մի թանգագին, քնքոյշ բոյս։ Դատարկ մեծախօսներ, մենք ասել ենք և կրկնել զանազան պատգամներ, օտար կեանքից մեզ փչած և իրար խաբելով, նստած տաք տեղերից մենք մրսել ենք ազգի շահերի համար, ազգի շահերի, որ մենք հասկացել էլ չենք և ոչ ծառայել։ Սուտ խօսքեր միայն, մեծ, դատարկ խօսքեր միայն, այն՝ ինչ որ Համլէտը ասում է և որ Պետրոս Ադամեանը սքանչելիօրէն շեշտում էր՝

Բառեր, բառեր, բառեր, բառեր...

Փոխանակ գործի և եռանդի...

Եւ միշտ մենք աշխատել ենք բոլորին համոզել, որ մենք ոչինչ չենք ընդունում, ոչինչ չենք խոստովանում, ոչ ոքին չենք երկրպագում և ամեն ինչ ժխտում ենք, հերքում, ոտքերի տակ տրորում...

Խելօքի համբաւի ետևից ընկած՝ մենք ապրում ենք յիմար, գործում ենք անմիտ, մեռնում ենք ախմախ և տալիս ենք յիմարութեան անչափ, անսահման զոհեր...

Մեռելութիւն, անգործութիւն, թերահաւատութիւն—ահա այն երեք հրէշները, որոնք իշխում էին և թագաւորում մեր մտքերին և մեր սրտերին անցեալ տարի։

Թող կորչեն, չքանան, անհետանան այդ հին տարու հետ նրա երեք հրէշները, և թող Նոր-Տարին, մեր մանուկ կտրիճը բերէ իր հետ՝ կեանք, եռանդ և հաւատ։

Առանց հաւատի չը կայ եռանդ։

Առանց եռանդի չը կայ կեանք։

Իմաստութեան վկայականը մեզ հարկաւոր չէ. նա տանում է մեզ ծուռ ու մութ և սխալ ճանապարհներով։

Նա ծածկում է մեր աչքերից մեծ-համրին, մեր ազգը, որ միշտ դարեր սպասում է, որ զաւակները կը վազեն կը գան օգնութեան, սպասում է սառը քրտինքը աշխատաւոր ճակատին, աղի արտասուքը յոգնած աչքերին։

Մեզ նախ պէտք է հաւատալ նրան, մեր ազգին, նրա կենսունակութեանը, նրա ապագային և պէտք է մեզ ապրել ազգի հետ, ապրել ազգի համար։

Մեր կեանքը միտք կունենայ, մեր գործերը եռանդով կը պսակվեն և մեր հաւատը կը գլորէ ամեն բան, սարեր, խոչընդոտներ, արգելքներ և կը յաղթէ ամեն բանի։

Կեցցէ այդպիսի Տարին և թող դա լինի ներկայ Նոր-Տարին։

Նոր-Տարին, մանուկ կտրիճը, որ բերում է իր հետ կեանք, եռանդ և հաւատ։

Կեանք՝ գեղեցիկ և գիտակցօրէն ապրելու։

Եռանդ՝ իմաստուն գործելու։

Հաւատ՝ բոլոր արգելքները շպրտելու ու յաղթելու։

Կեցցէ այդպիսի Տարին և թող դա լինի ներկայ Նոր-Տարին։

Շնորհաւոր Նոր-Տարի...

1914

«ՔԱԼԱԿԱՆ ՄԵՌԵԼՆԵՐ»

Քրիստոս յարեաւ ի մեռելոց...

Գրելով այս խօսքերը, որ տասն ինը դար աւանդաբար մեր պապերն ասել են միմեանց, ես ակամայ յիշում եմ այն մեռելներին, որոնց մասին մեր բանաստեղծ Գամար-Քաթիպան գրել է մի փոքր, բայց զգացված պատկեր՝ «Քալական մեռելներ»։ Եւ ճշմարիտն ասած, եթէ լաւ նայես շուրջդ, որչա՜փ կան մեզանում «քալական» մեռելներ, որ մեռել են դեռ աշխարհ չեկած, որ ոչ մի կապ չունենալով կեանքի հետ՝ անտարբեր, սառն են նայում առօրեայ չարին և բարիին, միայն պաշտելով իրանց թանգագին եսը։ Նրանք ապրում են լոկ անուշ ուտելու, անուշ խմելու և անուշ քնելու համար։ Օրօրոցից սովոր են ստին և ամբողջ կեանքները ստում են, կեղծում։ Սուտն է նրանց նպատակը, սուտն է նրանց կուռքը։ Անուս թէ համալսարանաւարտ, նրանք գնում են միայն մի ճանապարհով, որի վրա չը կայ ոչ փուշ, ոչ տատասկ. գնում են խաղաղ, պարզերես, ոչ ոքի դէմ չը մաքառելով, ատելով ազնիւ մաքառումը։ Օժիտ, կուշտ հաց—ահա նրանց երազները...

Այդպիսի «քալական մեռելների» համար չէ «Քրիստոս յարեաւը», և նրանք երբէք չեն զարթնի անդորր քնից, որ մահից ծանր է և խոր։ Բայց քսաներորդ դարի շեմքին ժամանակ է մտածելու և քալական մեռելների մասին, մանաւանդ համալսարանաւարտ։ Կոպիտ, անուս, յիմար ամբոխի փոքրոգութիւնը և ոչնչութիւնը հասկանալի են շատ և մասամբ իսկ ներելի։ Բայց արի տես, որ մեզանում նոյն փոքրոգութիւնը, նոյն ոչնչութիւնը չէ խնայում և բարձր ինտելլիգենտ դասակարգը։ Ինտելլիգենտը մոռանում է, որ ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում։ Հազիւ հազ համալսարանը աւարտած, նա չէ շտապում գիւղը օգնելու փոքր եղբայրներին, որ կորած են խաւարի մէջ, որ կարօտ են նրա օգնութեան. նա շտապում է քաղաք, իր քէֆի վրա միայն մտածելով. և որովհետև այն աստուածային կրակը, որի անունը տաղանդ է, չէ վառված նրա

սրտում, իսկ քաղաքային կեանքի պայմանները ծանր են, նրա պահանջները մեծ, նա ստորանում է, խոնարհվում է, փորաքարշ սողում հարուստի, ուժեղի առաջ, մոռանալով ամօթը, վաճառելով խիղճը։ Այն ազնիւ, սուրբ գաղափարը, որը երբեմն նրա միայն Աստուածն էր, նա ցեխի հետ է հաւասարում, ցեխի մէջ աշխատում տրորել, կոխել, խեղդել, որպէս զի նա չը բարձրացնէ իր գլուխը, որպէս զի չը խօսէ, չը բողոքէ, չը կանչէ նման այն քարերին, որոնց մասին այնպէս գեղեցիկ գրում է Աւետարանը։

Բայց չէ՞ որ գաղափարը անմահ է. նրան կարելի չէ կեղտոտել, մրոտել, խեղդել։ «Քալական մեռելների» յաղթութիւնը ժամանակաւոր է, գաղափարը նոյն գեղեցկութեամբ, նոյն փայլով և աւելի ուժեղ կը կանգնի մեր առաջ և նա կը տանի մեզ առաջ, եթէ մենք չենք համարձակում նրան հետևել։ Ուրեմն չը վհատենք երբէք, մեր շուրջը տեսնելով անտարբեր, սառնասիրտ «քալական մեռելներ», և հաւատանք միշտ, որ եթէ նրանք չեն սթափվի, զարթնի ծանր քնից, գոնէ նրանք վերջ ի վերջոյ կերթան, կը հանգստանան իրանց տեղը՝ գերեզմանոցում, որովհետև նրանց համար չէ ոչ «Քրիստոս յարեաւը» և ոչ էլ աշխարհի լայն ասպարէզը։

Աշխարհը մշակների և մաքառողների համար է. եթէ մինն ընկճված լալիս է, միւսը պիտի փարատէ նրա վիշտը և սրբէ եղբօր արտասուքները։ Իսկ նա, որ ինքը չէ լալիս, չը գիտէ լալ և չէ էլ սրբում և չը գիտէ սրբել ուրիշի արտասուքները. նա, որի սիրտը չեն այրում եղբօր աղի արտասուքները,—նա իրաւունք չունի ապրելու, նա աւելորդ է այս աշխարհում, նա «քալական մեռել» է, որի տեղը՝ քաղաքից դուրս, խաղաղ գերեզմանոցն է...

1896

Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

«Ուր աքլորները շատ են, այնտեղ երբեք չէ լուսանում»
(Յունական առած)

Դժուար, կաւելացնեմ, չար ժամանակ ձեռնարկեցինք մեր ժողովածուն։

Առաջին յօդուածներն արդէն շարվել, տպվել էին, երբ հասաւ մեզ Ադանայի սոսկալի դէպքերի գոյժը։

Անտիօքում, Մէրսինում, Ադանայի շրջաններում և այլ տեղերում միաժամանակ պատրաստվել և սարքվել են անհելի հայկական ջարդեր, կոտորածներ...

Հայկական սարափները կրկնվեցին...

Երկրորդ և, հաւատանք, վերջին անգամ կարմիր սուլթանը կոտորում էր հայերին։

Առաջին անգամ նա կոտորեց հարիւր հազարաւոր հայեր, որովհետև մենք այնչափ սիրել էինք Ռուսաստանը, իբրև աւետեաց երկիր, այնչափ օգնել էինք նրա զօրքերին և այնչափ ծառայել էինք նրա շահերին...

Կարմիր սուլթանը մեզ էր համարում իր պարտութեան պատճառը և Բերլինի վեհաժողովից յետոյ, որ մեզ տուեց 61-դ յօդուածը, նա երդվեց մեզ պատժելու, իբր իր ըմբոստ, անհաւատարիմ հպատակներին։

Եւրոպան, չը պահանջելով 61-դ յօդուածի գործադրութիւնը, դարձրեց նրան մի կատարեալ անէծք մեզ համար, և երբ սկսվեցին հայկական սարսափները, մնաց իբրև լուռ հանդիսատես։

Միայն Մեծ Գլադստօնը բողոքեց, և այդ բողոքը՝ նրա կարապի ամենագեղեցիկ երգը՝ մնաց ձայն բարբառոյ յանապատի...

Վերջապէս վրա հասան անցեալ տարվայ յուլիսեան դէպքերը։

Թիւրքիան ստացաւ սահմանադրութիւն, կազմակերպվեց։

Մի օրվայ մէջ մենք մոռացանք մեր դարաւոր չարչարանքները, հալածանքները։

Մոռացանք մեր սրտի ամենախոր, անբուժելի ցաւերը և վէրքերը։

Մենք շտապեցինք հայրենիք, և «կորչի Թիւրքիան» աղաղակը, որ կրկնում էինք անդադար, յանկարծ փոխվեց ուրիշ անսպասելի աղաղակի—«կեցցէ Թիւրքիան»։

Կեցցէ Թիւրքիան...

Ահա եկաւ և այս գարունը, սեւ գարունը...

Նորից հայկական սարսափներ...

Կարմիր սուլթանը այժմ վրէժխնդիր էր իր նոր պարտութեան համար։

Այն ժամանակ մենք օգնել էինք ռուսներին, այժմ երիտասարդ-Թիւրքերին։

Սուլթանը մեզ էր կարծում յանցաւոր, որ շնորհեց սահմանադրութիւն օսմանեան պետութեան բազմաչարչար ազգերին, որոնք հեծեծում էին նրա լուծի տակ։

Սահմանադրութիւնը սրբվել էր հայկական արիւնով, պէտք էր խեղդել սահմանադրութիւնը նոյն հայկական արիւնի մէջ։

Սուլթանը հրամայեց քանդել մեր տները և ոչնչացնել մեր ազգը։

25—30 հազար հայեր դարձան ողջակէզ սահմանադրութեան խորանի առաջ։

Ընդունելի եղաւ Աստուծուն այդ մեծ զոհը, սահմանադրութիւնը փրկվեց, իսկ կարմիր սուլթանը զսպվեց...

Վաղ չէ՞ արդեօք կանչել—«կեցցէ Թիւրքիան»...

Փոքր ինչ սպասենք, խոհեմութեամբ նայենք մեր շուրջը։

Այնքա՜ն սխալներ մենք արել ենք անցեալում, այնքա՜ն մոլորվել ենք և յոգնել, այո, յոգնել. ոչ սիրտ, ոչ հոգի, ոչ ուժ, ոչինչ, ոչինչ կարծես չէ մնացել։

Մաշվել ենք, քանդվել։

Իսկ ժամանակը քանի գնում՝ դժուարանում է, չարանում...

Հացակարօտ Զէյթունի հարցը չքանում է մեր առաջ։

Զէ՞ որ այժմ կարօտ է ոչ թէ միայն զէյթունցին, այլ և բոլոր հայ ժողովուրդը, և ոչ թէ միայն հացի, այլ և ազատ, ապահով կեանքի, խաղաղ աշխատանքի և զարգացման...

Ի՞նչ անենք։

Ո՞ւմ ապաւինենք։

Ասացէք, խնդրեմ, ի՞նչ են անում մրջիւնները և մեղու-

ները, երբ յանկարծ թշնամին քանդում է նրանց բոյները և տների տակ տրորում նրանց աշխատանքը:

Բայց, վարկեան չը կորցրած, նրանք նորից նոյն տոկունութեամբ, նոյն սիրով, նոյն ոյժերով սկսում են իրանց աշխատանքը և բոյները նորից շինում:

Մենք էլ սկսենք շինել մեր աւերված, քանդված, ապականված օջախները և տները: Ժողովենք հայ որբերին: Լինենք նրանց համար իսկական հայրեր և մայրեր և չը յուսահատված սկսենք նորից անվեհեր, անվախ մեր աշխատանքը:

Աշխատանք և լուսաւորութիւն… Դրանք կը սփոփեն մեր սրտերը և կը բուժեն մեր վէրքերը:

Դեռ ոչինչ, որ մենք սխալվել ենք: Պէտք է հասկանալ սխալը ուրիշ անգամ չը սխալվելու համար:

Ուրեմն չը շտապենք աղաղակել—«կեցցէ Թիւրքիան»…

«Կեցցէ»-ներով, «կորչի»-ներով օրերս անցան, «կեցցէ»-ներով, «կորչի»-ներով շատ սխալվեցինք, «կեցցէ»-ներով, «կորչի»-ներով տներս քանդվեցին, և մենք՝ ոչխարներս՝ առիւծներ, վագրեր, գայլեր ձևացանք ու ձևանում ենք և միշտ պարտվում, միշտ անխնայ հալածվում և կոտորվում. «կեցցէ»-ների և «կորչի»-ների պատճառով այսօր մառյլ ամպերը պատել են հայի երկինքը. ցերեկը նա չէ տեսնում արեգակը, գիշերը՝ լուսինն ու աստղերը…

Իսկ ժամանակը դառնում է այնքա՜ն դժուար և, կասելացնեմ, չար…

Մեր այժմվայ անչափ անբաղդութիւնը թող լինի վերջապէս մեզ համար մի պատմական դաս…

Մինչև այսօր մենք ինտելիգենտներս ազգային շահերի առաջ սխալվել ենք և մեղանչել:

Մեզ պէտք է նորից սկսել, նորից շինել, նորից աշխատել…

Մեծ աշխատանք և մեծ լուսաւորութիւն—ահա ինչը կը փրկէ մեզ անշուշտ: Եւ այդ աշխատանքին, այդ լուսաւորութեան ծառայելու համար ոչ մի ճիգ, ոչ մի միջոց մի՛ խնայէք, հայեր…

Եւ եթէ ջերմ ցանկանում էք, որ վերջապէս մեր արևն էլ ծագի, լուսանայ, յիշեցէք յունական առածը՝ «ուր աքլորները շատ են, այնտեղ երբէք չի լուսանում…»:

1910

ԿՆՈՒՆՔ ԹԵ՞ ԹԱՂՈՒՄ

I

Կնունք, թէ թաղում…

Որոտում են թնդանօթները, թափվում է արիւն, և բալկանեան պատերազմի առաջին օրից յայտնի լսվում են ականջիս զանգակների ձայներ, երբեմն զիլ, համարձակ, երբեմն մեղմ, երկչոտ. նրանք տարօրինակ յուզում են իմ սիրտը, հոգին, ուրախացնելով, տրտմեցնելով միաժամանակ…

Կնո՞ւնք է դա, թէ թաղո՞ւմ…

Արբեցած հազար ու մէկ յոյսերով, ես երազում եմ, թէ հասել է մեզ համար էլ վերջապէս կնունքի օրը: Դարերով սպասած գեղեցիկ հրեշտակ-մանուկը ծնվել է: Դա ազատութի՜ւնն է: Թիւրքիարնակ մեր եղբայրների հալածանքներին և տառապանքներին վերջ է դրվելու: Նրանց իրաւունքը ճանաչվում են: Նրանք էլ մարդ են մարդկանց պէս, նրանք էլ մտնում են այսօր ազգերի ցուցակը:

Զանգակների ղօղանջիւնները շարունակվում են անդադար, այնքան ախորժելի, այնքան զուարթ կերպով, յիշեցնելով մեզ գեղեցիկ մայրենի մեղեդին… Կնո՛ւնք է, մեր կնունքը, որ աւետում են այսօր զանգերը: Մոռացված, ատված հայն էլ ահա կենդանանում է Թիւրքիայում, ոտի կանգնում և դուրս գալիս իր աւերակներից, կոտորածներից, ապրելու համար: Նա ստանում է մի կտոր հող Անատոլիայում, թէ Կիլիկիայում, չը գիտեմ, լաւ չեմ յիշում. ոչինչ, մեզ այնքան քիչ պէտք է ազատ շունչ քաշելու համար, մի կտոր, մի փոքր կտոր հող միայն, գթառատ Եւրոպա…

Բայց ինչո՞ւ լռեցին յանկարծ զանգերը:

Ո՛չ, զանգերը լսվում են, բայց բիրտ և կոշտ, ինձ զարթեցնելով իմ խորը քնից. բաւական է երազել, իրականութիւնը դառն է։ Կնունք կայ, բայց սլաւօնների և յոյների համար. մեզ համար մնացել է թաղում, թաղումներ... Հրեշտակ-մանուկը մերը չէ, օտարինն է։ Մեզ մնացել է մեր հաւատարիմ, մեր չար, մեր սրիկայ պառաւը՝ ստրկութիւնը։ Նա գրկել է մեզ սիրով, սեղմում է ամուր և խեղդում, խեղդում... Բաղդը մեզ համար միշտ խորթ մայր է եղել, խաբել է, մոռացել է և անցել է մօտերից, մեզ հեգնօրէն տալով տղայական խաղալիք՝ Բերլինի վաթսունմէկերորդ յօդուածը, որ քանդեց մեր օջախը և կատարվեց Գամսա-Բանթիպայի գուշակութիւնը՝ սլաւօնների ձեռքերից ընկած շղթաները առմիշտ կապեցին մեր ոտքերը... Թիւրքը դարեր շարունակ մեզ համար եղել է մի պոռնիկ, երկչոտ, արբեցող էրիկ։ Կարիճները նրան հալածում են, ծեծում հրապարակում, ապտակում, թքում երեսին։ Էրիկը գալիս է տուն և ծեծում է... իր կնոջ... Այդ անբաղդ խեղճ կնոջ դերը խաղացել ենք, խաղում ենք մենք, մենք՝ հայերս։

Տների աւերակներ, հրդեհների մոխիր, բանտերի զնդան, անվերջ հալածանք և կոտորածներ—ահա մեր կարճ պատմութիւնը։

Այժմ, երբ սլաւօնները, յոյները ծեծում են Թիւրքին և համարձակ թքում նրա երեսին, երբ մեծամիտ Թիւրքը փախչում է պատերազմի դաշտերից, վախեցէք, խեղճ հայեր, պոռնիկ, երկչոտ, արբեցող էրիկը տուն է դառնում իր վրէժը կնոջից առնելու... Այդպէս եղել է միշտ, այդպէս էլ կը լինի այժմ...

Եւ խայտառակ, անարգ փոքրոգութիւնը օձի նման սողում է առաջս և փսփսում ականջներիս՝ չը կայ մեզ համար կնունք. այլ թաղում, անվերջ, անհամար թաղումներ...

Թաղումնե՜ր...

II

Հեռագիրները ստացվում են Բալկանեան թերակղզուց մէկը միւսի ետևից, անսպասելի, անհաւատալի, ուրախ հեռագիրներ։ Դեռ երէկվայ մեր ստրուկ ընկերները՝ սլաւօնները և յոյները՝ քշում են իրանց առաջից հպարտ, գոռոզ, ամբարտաւան Թիւրքերին, որ գայլեր էին և ոչխարներ են դարձել հեզ,

խոնարհ, հլու... Թիւրքերի բերդերը ընկնում են, Թիւրքերը փախչում են, թողած զէնք, մթերք, դրօշակներ, փոքրոգութեամբ դողալով այն կեանքի համար, որ խլում էին, խլում են մեզանից անողոք, անգութ, անամօթ՝ դարեր շարունակ, չը խնայելով հասակ, սեռ...

Ուրեմն Թիւրքի քաջութիւնը և հերոսութիւնը յիմար աւանդութի՞ւն է, որ պէտք է ծաղրել, մոռանալ։

Ուրեմն Թիւրքը քաջ է, որովհետև զինված է, և հայը երկչոտ, որովհետև անզէ՞ն է։

Ուրեմն կարելի է ջարդել Թիւրքին, քշել մինչև Պօլիս և գուցէ նոյնիսկ Պօլիսը գրաւել...

Շտապեցէք տալ կնունքի զանգակը։

Երկնքից իջնում է մանուկ հրեշտակը՝ ազատութիւնը, Աւետարանի մէջ աւետված փեսան։

Այրված, մաշված, ստրկացած սրտերում այսօր պիտի զարթնեն առիւծներ և վերջ տան մեր դարաւոր չարչարանքներին և ամենօրեայ արտասուքներին։

Լաւ է մի անգամ մեռնել, քան թէ քարշ տալ դարեր ստրկութեան լուծը, նմանելով անբան անասուններին, կորցնելով մարդկութեան պատկերը և բարքերը... Հարիւր-հազարներ չարչարված, ապականված և մորթված հայ նահատակները պնդում են այդ՝ հայի արիւնոտ պատմութեան էջերից...

Զանգերի ձայները լսվում են զիլ, համարձակ, ներդաշնակ... Թաղման զանգեր չե՛ն։ Ո՛չ։ Մեզ բաւ են արդէն թաղումներ։ Այնքան լացել ենք, այնքան կոտորվել ենք, այնքան փչացել և նահատակվել... Ժամանակ է արդէն և շունչ քաշել, ժամանակ է ապրել։ Մեր անվերջ թափած արիւնով մենք ստացել ենք իրաւունք ապրելու...

Կնունքի զանգակ է։

Կնունքի զանգակը կեանքի զանգակն է։

Կեանքը երկնքի ամենամեծ պարգևն է։ Լսո՞ւմ էք. ահա նա կանչում է մեզ, նա սպասում է մեզ, հմայիչ ժպիտը գեղեցիկ երեսին։

Թող արբեցող, երկչոտ, պոռնիկ էրիկը դառնայ տուն. նա այժմ չի գտնի այնտեղ բոլոր բանը տանող, բոլոր բանը մոռացող, միշտ համբերող կնոջը՝ հլու, խոնարհ, հպատակ հային...

Մեր այրված, մեր մաշված, մեր ստրկացած սրտերում զարթել են արդէն առիւծներ, որ վերջ տան մեր դարաւոր չարչարանքներին և ամենօրեայ արտասուքներին...

Սրբենք աչքերս, էլ չը լանք. լաւ է մի անգամ մեռնել... Չէ՞:

Կնունք թէ՞ թաղում...

Կնունք, գեղեցիկ մանուկ-հրեշտակի գեղեցիկ կնունք, աւերված, քանդված, բայց միշտ գեղեցիկ մեզանից թիւրքերի խլած հայրենիքի, որ մեր չար թշնամիները նորից մկրտեցին, Անատոլիա անուն տալով. կնունք:

Տղերք, տուէք կնունքի զանգակը համարձակ...

Գալիս է մեր հրեշտակ փեսան...

Կնունք է, կնունք այսօր մեր տանը...

1913

Օ՜, ԵՐԲ ԿԸ ԲԱՑՎԻ ԱՐՇԱԼՈՅՍԸ

(Նուէր Դ-ր. Զաւեանի յիշատակին)

—

> *«—Պապէ, ղո՞ր կերթաս, քուրդն էլ—ման Բօշօն տարաւ, գոռաց Թումօն...*
>
> *—Թորգ, լաօ, թորգ, ասաց Ղվրօն, Բաշօն մեր չի, քրդուն ի, թորգ տանի, քի մեռնիմ, մեր տուն լէ մերը չի, մեր արտ լէ մերը չի, մեր աբուն լէ մերը չի, խայը բանըմ չունի, զըմէն լէ քրդուն ի, էնոր արունը թանգ ի»:*
>
> *(Ա. Ահարոնեան. «Պատկերներ», եր. 307)*

Մեր առաջ դրած է մեր տաղանդաւոր վիպագրող Աւ. Ահարոնեանի «Պատկերները», տ. Վաւվառէ Բանանեանի գեղեցիկ հրատարակութիւնը:

Պատկերներից շատերը մեզ ծանօթ են, բայց տարբեր է տպաւորութիւնը, երբ կարդում էք բոլոր պատկերները մինը միւսի ետեւից ծայրէ ի ծայր. կարծես պատկերներ չեն նկարած, այլ ամփոփ պատմութիւն է մեր թիւրքահպատակ եղբայրակիցների:

Այդ պատմութիւնը մի ողբ է:

Մեր ընկեր պ. Տ. Յ. «Մշակի» մատենագրութեան բաժնում իրաւ էր նկատել, որ պ. Ահարոնեանը երգում է: Բայց մռայլ, սգաւոր, տխուր են նրա քնարի ձայները: Եւ պ. Ահարոնեանի տաղանդը հէնց նրանումն է, որ նա երգում է, մնալով ռէալիստ: Եթէ նրա յուզված մտքերը սաւառնում են բարձրը, բարձր, ձիւնով ծածկված սարերի գագաթներին և կամ նոյն իսկ երկինք, նրա ոտքերը հաստատ են հողի վրա դրած: Նրա պատկերները վառ երեւակայութեան արգասիք չեն, մտացածին չեն: Ձեր առաջը անողոք իրականութիւն է, ձեր առաջ ինքը կեանքն է նկարված իր հազար ու մէկ գարդերով:

Եւ մանրանկարները՝ «Հարսանները», «Աքաղաղը», «Պուտ

-ըմ կա՛թ», «Փշուր-ըմ խա՛ց», «Բաշօն» մեր աղքատ գրականութեան ամենախոշոր գրուածքներից պէտք է համարել։

Առանց արտասուքի, անվրդով, անտարբեր «Պատկերները» կը կարդայ միայն նա, որի սիրտը արդէն մեռած, սառած է։ Եթէ «Պատկերները» մեր թիւրքահպատակ եղբայրակիցների ամփոփ պատմութիւնն է, փորձենք երևակայել մեզ նրանց ողջ կեանքը իբրև մի օր։ Այդ փորձը ծանր է։ Մենք կը տեսնենք, որ կարճ և դաժան է նրանց առաւօտը, զարհուրելի և անգութ՝ նրանց ցերեկը և յուսակտուր, անմխիթար՝ նրանց երեկոն և գիշերը...

Նրանց առաւօտը...

Մարտօն, Յովակը, ռէս Պէտօն, Ղզրօն, բոլորը աշխատում են, արիւնով, քրտինքով պարարտացնելով իրանց հողը։ Ողորմած երկինքը ժպտում է նրանց, բայց լեռներից քաղցած շների պէս ցած են իջնում վայրենի քիւրդերը և պահանջում են իրանց սովորական բաժինը... Շէյխ Աւդին սերմացու է վերցնում, բէգերը 50 ձիաւորներով «հիւր» են գալիս։ Հանգիստ կարելի չէ ուրախանալ, զուարճանալ, ժպտալ։ Ահը միշտ տիրում է սրտերում։

Այնպէս չէ՞, դա երջանիկ առաւօտ չէ, դա կարճ և դաժան առաւօտ է։ Մարտօն, Յովակը, ռէս Պէտօն, Ղզրօն, բոլորը լաւ հասկանում են, որ «տուն», «արտ», «արուն» «ըլմէքն լէ քըրդուն են, խայը բան ըմ չունի...»։ Հայերի հարստութիւնը մի շէնք է աւազի վրա կանգնած, վաղ թէ ուշ այդ շէնքը փուլ պիտի գայ և իր տակը թաղէ խեղճերին։ Քամին կը փչէ և կը տանէ այդ շէնքը և այնպէս հեռու, որ մի քար չի մնայ իր տեղում, և հարուստ հայի գիւղերը կը դառնան ամայի անապատ։

Այդ իսկ եղաւ լոյս ցերեկը...

Նրանց ցերեկը...

Հաջում են, ոռնում են շները... Հրաման կա՛յ թալանել անպաշտպան հայերին... Այրվում են հայի գիւղերը... Բոցը լուսաւորում է քստմնելի տեսարաններ... Սպանում են, հարըստահարում, չեն խնայում ոչ ծեր, ոչ կին... օրօրոցներ ճվճվացող մանուկներով, օդի մէջ սոսկալի պտոյտներ գործելով, ընկնում են խրճիթների բոցերի մէջ... Ցորենի հորերի բերանները բանում են և քաշ են տալիս դէպի հորերը կանանց և երեխաներին... գլորւում են իրար վրա հրացանների կոթերով... զոհերը, մահվան սարսափից այլանդակված, աչքերը լայն բացած, աղաչում են, աւազակների ձեռքերը համբուրում... ի

զուր... շտապ շտապ հողը թափում են խեղճերի վրա... հողի շերտը հաստանում է և հաստանում... կենդանի մեռածները կրծոտում են իրար, ծամում, ոլորվում են հողի և արեան շաղախի մէջ...

Օ՜, ինչպէս երկար է այդ զարհուրելի և անգութ ցերեկը։ Ինչու՞ չէ շտապում երեկոն։ Ինչու՞ չէ գալիս գիշերը իր թանձր, մութ քօղը գցելու այն չարչարանքների և տառապանքների վրա, որ նոյն չափով քրիստոնեաները մինչև անգամ Ներոնի օրերով չը կրեցին...

Նրանց երեկոն և գիշերը...

Տխուր և ցուրտ օրեր... Քիւրդերի սրերից փախչողները թողնում են տուն, արտ, պապերի գերեզմանները։ Անտուն, անտէր թափառում են և մուրում... Նրանց ցնցոտիները կպել են նրանց վտիտ մարմիններին... Նրանց մէջ է և անուանի և հարուստ ռէս Պէտօն... Նա էլ մուրում է...

«Պուտ-ըմ կա՛թ», մահվան տագնապի մէջ աղաչում է մի անմեղ մանուկ...

«Պուտ-ըմ կա՛թ...»։ Կարծես խաչեցեալ Քրիստոսը բարձր Գողգոթայից ասում է «Ծարաւի եմ»...

«Փշուր-ըմ խա՛ց», բոռում են որբիկները...

Իսկ Մարտօն կամաց կամաց արնաքամ է լինում... Յովակը վէր է կենում, առնում է նրան իր մէջքին և գնում է իր գիւղը։ Յովակը չէ լալիս... «արտասուքը աւելորդ է և անօգուտ. գործ էր հարկաւոր՝ եղբօրը փրկելու համար»... Ճանապարհը երկար է... Յովակն ընկնում է, բայց կրկին վեր է կենում... «Նրան ոյժ էր տալիս այն յոյսը, թէ շուտով արշալոյսը կը ծագի, խաւարը կը չքանայ, ընկերը կը փրկվի, և նա գնում էր աչքերն անդադար արևելքին յառած։

«—«Օ՜, երբ կը բացվի արշալոյսը», մտածում էր նա»։

—

Օ՜, երբ կը բացվի արշալոյսը...

Նրանց արշալոյսը...

Լսվում է աքաղաղի զիլ ձայնը... Դա Մելիքենց աքաղաղն է... բայց լուռ և դատարկ է աքաղաղի շուրջը... Այսօր գիւղը չէ զարթնում։ Կեանք չը կայ, կեանքը դադարել է։ Մելիքենց աքաղաղը կանչում է նորից։ Ոչ ոք ոտքի չէ ելնում։ Քահանան չէ գնում աղօթելու։ Հովիւը չէ քշում հօտը։ Եկեղեցու զանգակները չեն ղօղանջում։

Ձայն չը կայ, լռել է գիւղը։ Նա քնել է, քնել է այնպէս, որ այլ ևս զարթնելու չէ։

Արշալոյսի կիսախաւարի մէջ գայլի երկու աչքերը փայլում են միայն, պաղ, սարսափելի աչքեր…

Իսկ գիւղի համար այլ ևս արշալոյս չը կայ, բոլորը մթին է…

Մի՞թէ այս է լինելու նրանց արշալոյսը…

Գ. Ահարոնեանի նկարագրած թշուառութիւնները մի ծանր ժառանգութիւն են թողնում մեզ։ Պէտք է ճանաչենք մեր պարտքը, մտածենք ամէնքս և ամեն օր՝ ինչպէս բարւոքել խեղճերի վիճակը։ Մենք, Յովակի նման համոզվելով որ արտասուքը աւելորդ է, անօգուտ, գործ է հարկաւոր, պէտք է աշխատենք ապահովացնել գաղթականներին, պատսպարել մանաւանդ որբերին։

ԱՐԻ՛ ՍԻՐԵՄ, ԳՆԱ՛ ՄԵՌԻՐ

—

Մեր թաղումները փայլուն յօբելեաններ են, իսկ յօբելեանները՝ աղքատ թաղումներ։ Յիշեցէք Բաղդասար Դօլուխանեանի թաղումը.. և աշխատեցէք նոյն եռանդով… Ե՞րբ հայ տաղանդը կարող է կշտանալ։ Գնա՛ մեռիր, արի սիրեմ։ Մի՞թէ Զաւարեանը միայն ողբերի էր արժանի։ Իմ արիւնը նրանից կարմիր չէ։ Արի՛ սիրեմ, գնա՛ մեռիր։ Ֆօնդերը տեղում են անձրեւի և կարկուտի նման, իսկ հաւաքվում են կոպէկներ։ Յուսահատ սիրահարներ ցուցամոլութեան։ Նախ դպրոցական ֆօնդ, յետոյ ֆօնդեր…

I

Մեծ թաղումների շաբաթ…

Թաղեցինք Քալանթարին, թաղեցինք Խատիսեանին, թաղեցինք Զաւարեանին։

Շքեղ, փարթամ, հարուստ և փայլուն թաղումներ, օտարների աչքերը ապշեցնող և շլացնող։

Եւ հազարաւոր ցաւակցական հեռագիրներ ամեն մի անկիւնից, ուր բաղդի թէ անբաղդութեան բերմամբ ապրում է, շնչում է հայը։

Գեղեցիկ, զգածված քարոզներ, ճառեր, նամակներ և անվերջ, աղի ծով արտասուքներ։

Ամենքը իմացան, հասկացան, որ Քալանթարը, Խատիսեանը և Զաւարեանը մեր մռայլ կեանքի սուկ խաւարում մի-մի լուսատու աստղեր էին փայլուն, աղքատ, մութ հայի երկինքը շքեղ լուսաւորող։ Բայց ինչո՞ւ միայն թաղման ժամանակ այդ իմացանք և հասկացանք։ Ո՞ւր էինք մենք առաջ, երբ Քալանթարը, Խատիսեանը և Զաւարեանը մեր մէջ էին ապրում, առողջ, լի կեանքով, կարօտ մեր սիրոյն և ուշադրութեանը։ Ինչո՞ւ մենք չէինք թեթևացնում նրանց կրած լուծը։ Ինչո՞ւ չէինք երկրպագում նրանց գաղափարներին և չէինք հետևում նրանց։ Ինչո՞ւ…

Հայերս ի բնէ տաղանդաւոր գերեզմանափորներ ենք։ Մենք թաղելու ճաշակ և հանճար ունենք։ Մեր թաղումները

դառնում են փայլուն յոբելեաններ, իսկ մեր յոբելեանները մնում աղքատ թաղումներ…

Մի ազնիւ, բարի, ինձ սիրող ու յարգող պարոն ինձ գրում էր Բագուից. «Մշակն արժանի է վարձոյ իւրոյ. ձեր ջանքը ի զուր չի կորչի, այժմէն իսկ մեր բագուեցիք ձեզ անուանում են «երկրորդ Բաղդասար Դօլուխանեան». յիշեցէք նրա թաղումը… և աշխատեցէք նոյն եռանդով…»:

Այդպէս էլ գրված էր ամենասուրբ պարզութեամբ՝ «յիշեցէք նրա թաղումը…»:

Պէտք էր յիշել այդ թաղումը՝ «եռանդով աշխատելու». շքեղ, փառաւոր թաղումը. դա ազգի միակ վարձատրութիւնն է մեր բոլոր տաղանդների համար:

Չը գիտենք ողջունել, բարևել մեր տաղանդներին. մենք ամուր պահում ենք նրանց համար միայն մեր վերջին ողջոյնը, որ իրանց օրով նրանք չը տեսնեն մեր յարգանքը, սէրը, որ իրանց օրով չուրախանան…

Գնա՛ մեռիր, արի սիրեմ…

Սկզբից մեռիր, յետոյ կը սիրեմ, կողբամ, կարտասվեմ, անվերջ աղի, ծով արտասուքներով…

Միքայէլ Նալբանդեանցին այնպիսի հոծ բազմութեամբ և այնպիսի շքեղութեամբ թաղեցին Նոր-Նախիջևանում, որ Պետերբուրգից ուղարկված էր մի սենատոր քննելու այդ «գործը», և հին մագիստրատում կայ և այժմ մի այդպիսի «գործ»:

Յիշո՞ւմ էք Գր. Արծրունու շքեղ թաղումը:

Ինչպիսի՜ յորդառատ արտասուքներ թափեցինք Գամառ-Քաթիպայի թաղմանը:

Կարօտութեան մէջ մեռան և Միքայէլ Նալբանդեանը, և Գրիգոր Արծրունին, և Գամառ-Քաթիպան…

Պէտք էր մեզ համար նրանց մահը, որ մենք նրանց հասկանայինք, իմանայինք, գնահատէինք…

Ուրեմն կայ վերջապէս մի գեղեցիկ օր, երբ և հայ տաղանդը կարող է կշտանալ, մոռանալ իր տառապանքները, իր կարօտը, նոյնիսկ ձեռք բերել հարստութիւն. բայց ափսոս, դա գեղեցիկ օր չէ, դա սգի, լացի, թաղման օրն է, երբ մենք կարօտ չենք արդէն հացի և կարողութեան, երբ մենք կուշտ ենք ամեն բանից…

Եթէ հայ տաղանդները սկզբից մեռնէին, յետոյ ծնվէին…

Եթէ կարելի լինէր նախ թաղում, յետոյ կնունք…

Ո՜րչափ մենք բաղդաւոր պիտի լինէինք…

II

Գնա՛ մեռիր, արի սիրեմ…

Սկզբից մեռիր, յետոյ կը սիրեմ, կողբամ և կարտասվեմ անվերջ աղի՛, ծով արտասուքներով…

Ինչո՞ւ հակառակը չէ՝ արի սիրեմ, գնա մեռիր…

Թող այդ հակառակը յաղթէ:

Արի՛ սիրեմ, գնա մեռիր…

Արի՛ քեզ սիրեմ, հայ տաղանդ, արի քեզ սփոփեմ, մխիթարեմ, քեզ կշտացնեմ, ապահովեցնեմ, հայ տաղանդ. աշխատէ խաղաղ, անվրդով, չը մտածելով անգամ՝ որ վաղը փողոցում կը մնաս զաւակներիդ հետ քաղցած, ծարաւ. արի սիրեմ քեզ, հայ տաղանդ, հերկէ հայ երկիրը, մեր մայր երկիրը և ուրախացրու հայ սրտերը. յետո՛յ. յետոյ ոչինչ, գնա՛ և մեռիր…

Բայց մենք տաղանդաւոր գերեզմանափորներ ենք. մենք թաղելու ճաշակ և հանճար ունենք: Չէ՞ որ մեր թաղումները դառնում են փայլուն յոբելեաններ, իսկ յոբելեանները մնում են աղքատ թաղումներ, և… մէկիկ-մէկիկ մենք կը թաղենք մեր բոլոր տաղա՛նդաւոր գործիչներին, գրողներին, կը կատարենք շքեղ, փարթամ, հարուստ, փա՛յլուն, օտարների աչքերը ապշեցնող և շլացնող թաղումներ, կը հանենք հրապարակ մեր սրտի կսկիծը, ցաւը, մեր անվերջ աղի, ծով արտասուքները, և ողջ աշխարհը միայն մահից յետոյ կիմանայ, որ մեռնողը ազնիւ էր, շիտակ, տաղանդաւոր և… կարօտ… կարօտ մեր սիրոյն և օգնութեանը:

«Գնա՛ մեռիր, արի սիրեմ»-ը մի փարիսեցիութիւն է, մի կեղծ սուտ, որով մենք ապրել ենք առաջ, ապրում ենք այժմ և այլևս չը պիտի ապրենք:

Մի՞թէ փառաւոր թաղումը պիտի լինի միակ վարձատրութիւն հայ տաղանդների համար:

«Յիշեցէք նրա թաղումը… և աշխատեցէք նոյն եռանդով»:

Նոյն եռանդով… թաղվելու համար, թէկուզ փառաւոր…

Ի՞նչ օգուտ մեռնողին սուգ, արտասուք և թաղում ամենահարուստ, ամենափառաւոր…

Տեսէք ահա ողջ աշխարհը ողբում է Զաւարեանին:

Բայց մի՞թէ Զաւարեանը միայն ողբերի էր արժան և կարօտ:

Լսեցէք՝ ինչ է գրում նրա մասին մի տաղանդաւոր հայ գրող. «Անմահ Սիմէօնի մահը կայծակի պէս ազդեց վրաս. շա՜տ

քիչ կան այդպիսի մեծ հոգիներ, և կարծէք թէ մահն էլ այդպիսի երկնային հոգիների ետևից է ընկած. սակայն նա զոհ գնաց իր մաքրութեան և ազնուութեան, իր ասկետական կէս-կուշտ, կէս-քաղցած կեանքին. ափսոս, հազար ափսոս...»:

«Կէս-կուշտ, կէս-քաղցած կեանքին»... լսո՞ւմ էք, բարեկամներ, որ այնքան լալիս էք այժմ. գիտէի՞ք այդ՝ արդեօք թէ ոչ. ինչո՞ւ լռել էիք, ինչո՞ւ չէիք օգնում և ինչո՞ւ այժմ հարայհրոց էք հանում...

Չեմ հաւատում ձեր արտասուքներին. դուք սուտ էք, բոլորդ սուտ: Եւ ահա լսեցէք դարձեալ, ստախօսներ, թէ ինչպէս է շարունակում իր նամակը մեր տաղանդաւոր գրողը. «Սիմօնի մահից յետոյ ոչ մի բան աչքիս չի երևայ. իմ արիւնը նրանից կարմիր չէ: Նա ապրում էր 80 ֆրանկով, իսկ հիմա ամեն կողմից վայնասուն է բարձրացել՝ թէ մեռաւ: Մնում է, որ Ռոստոմն էլ մեռնի, որ պատկերը լրիւ լինի»:

Այսպէս ահա ամսական ութսուն ֆրանկով (29 ր. 60 կ.)* ապրում էր կէս-կուշտ, կէս-քաղցած Զաւարեանը. այն Զաւարեանը, որ անձնական թշնամիներ էլ չունէր. այն Զաւարեանը, որ մտածում էր բոլորիս մասին և որի մասին ոչ ոք մեզանից չէր մտածում, չէր հոգում. այն Զաւարեանը, որին մենք ողբում ենք այժմ:

Բայց քանի՞ գրօշ կարժէ մեր ողբը, մեր ցաւակցութիւնը, մեր արտասուքները, մեր հեռագիրները, մեր նամակները, եթէ Զաւարեանը ամսական 29 ր. 60 կ.-ով ապրում էր կէս-կուշտ, կէս-քաղցած...

Այսքան էլ փարիսեցիութի՜ւն...

Ինչո՞ւ անպատճառ պէտք է մեռնել, որ մենք սիրենք, և ինչո՞ւ կեանքի և կրօնքի բոլոր ծէսերից մենք միայն սիրել ենք և ընդունում մէկը՝ թաղումը:

Կարծես թաղելո՛վ մենք հանգստանում ենք, ազատվելով մեր տաղանդներից, որոնք մեր անմաքուր խղճերի ուժեղ խայթոցներ են:

Կարծես թաղելով, մենք հրճվում ենք, ուրախանում:

Տեսա՞ք ինչ հեռագիրներ, ինչ խօսքեր... փառաւոր թաղում, ամեն բան կարգով և կարգին և կարծես մենք նայում ենք մեր վրա հայելու մէջ, նայում ենք և զմայլվում. հը՜, գեղեցիկ ենք մենք, չէ՞, մենք՝ յուղարկաւորներս. ո՞ւր է պատկերահանը... փառաւոր թաղում...

Եւ հանգիստ սրտով, մաքուր խղճով մենք սպասում ենք մէկ ուրիշ տաղանդաւորի մահին, որ գործում է եռանդով, որ

պարտական է վերջապէս գործել եռանդով. չէ՞ որ նա պիտի յիշէ փառաւոր թաղումներ...

«Գնա՛ մեռիր, արի սիրեմ»-ը եղել է միշտ մի անէծք հայերիս համար:

«Գնա՛ մեռիր, արի սիրեմ»-ը թո՛ղ լինի այսուհետև մեր հրաժարիմքը ի սատանայէ...

III

Մոռանանք «գնա մեռիր, արի՛ սիրեմ»-ը:

Ասենք՝ արի սիրեմ, գնա մեռիր:

Ասենք մեր տաղանդներին. դուք ապրելու իրաւունք ունէք, դուք պէտք է ապրէք:

Սկսենք նոր կեանք, նոր նշանաբանով՝ արի սիրեմ, գնա՛ մեռիր...

Ապացուցենք, որ մենք գիտենք ոչ միայն թաղել, ապացուցենք, որ մեզ համար տաղանդի կեանքը վեր է քան թէ նրա մահը, որ աւելի լաւ է նրան կերակրել, քան թէ թաղել փառաւոր:

Թող խաղաղ հանգչեն գերեզմաններում մեռեալները, մեր մեծ վաստակաւորները և մշակները: Մենք նրանց չը վարձատրեցինք, գիտցանք միայն թաղել:

Տանք միջոցներ ապրելու կենդանիներին, նրանց արիւնն էլ կարմիր է...

Չը կրկնենք մեր սխալները...

IV

Այդ սխալներից մէկն էլ ֆօնդերն են...

Բալանթարի ֆօնդ:

Զաւարեանի ֆօնդ:

Խատիսեանի ֆօնդ:

Ֆօնդերը տեղացին անձրևի, կարկուտի նման, իսկ հաւաքվում են կոպէկներ:

Ֆօնդը մնայուն է, միայն տոկոսը պէտք է ծախսվի: Իսկ մենք հանգանակել ենք միայն... տոկոսներ մի տարվայ համար և անուանում ենք ֆօնդ, ֆօնդեր:

Աւելի խելացի և աւելի համեստ կը լինէր բոլոր գումար-

ները յատկացնել դպրոցական ֆոնդին յայտնի նպատակով, որպէսզի Քալանթարի, Խատիսեանի և Զաւարեանի անուան դպրոցներ բացվէին։ Դա կը լինէր իրագործելի, բայց դա կը լինէր համեստ։ Եւ ահա մենք մի ընդհանուր ազգային ֆոնդ չը կազմած՝ նոր ֆոնդեր ենք կազմում ու իրար աչքը շլացնում և իրար խաբում, մոռացած բոլորովին որևիցէ համեստութիւն…

Դա արգասիք է մեր յուսահատ սիրահարութեան ցոյցերի և ցուցամոլութեան։

Ի՞նչ ֆոնդ։ Մի՞ ֆոնդ։ Մենք կը կազմենք երեք, չորս, տասը ֆոնդեր…

Մէկը ուղարկում է խմբագրատուն տասը րուբլի և խնդրում է այս-ինչ ֆոնդ ստեղծել, մէկ էլ տեսար՝ տասը տարուց յետոյ կը տան ձեզ մի հարց, թէ ի՞նչ եղաւ այս-ինչ գումարը։ Գումարը՞։ Ի՞նչ գումար։ Թշուառ կոպէկներ…

Մեզանում 10 րուբլով աշխատում են անմահութիւն ձեռք բերել։

Դուք նախ և առաջ մի դպրոցական ֆոնդ իրագործեցէք, յետոյ կերազէք ուրիշ ֆոնդեր կազմել։

Դպրոցական ֆոնդը մի մեծ գործ է. մի՛ մանրացնէք նրան։

Նա արդէն սուրբ է և նուիրական մեզ համար։

Յատկացրէք բոլոր ձեր ժողոված գումարները դպրոցական ֆոնդին, և ազգը կը խոնարհի ձեր արդար վճռի առաջ։

Մի՞թէ Քալանթարի, Խատիսեանի, Զաւարեանի գեղեցիկ երազը չէր, տեսնել մի օր ամեն մի հային գրագէտ, ուսեալ, զարգացած, խելօք, որչափ կարելի է՝ շուտ։

Միայն դպրոցը կիրագործէ նրանց երազը, այն դպրոցը, որի դռները կը լինեն բաց բոլոր հայերիս համար, անխտիր, հարուստ թէ աղքատ։

Առանձին ֆոնդեր ստեղծելով դուք կը յետաձգէք այդ բարի նպատակը և կը դժուարացնէք նրա իրագործումը օր առաջ։

Թաղումներ փառաւոր, երեք-չորս ֆոնդեր — դրանք ցոյցեր են։

Զարթնենք մեր երազներից։ Բաւ են մեզ ցոյցեր, վնասակար են այդ ցոյցերը։

Եկէք բոլորս ձեռք-ձեռքի բռնած երդվենք այսուհետև չը մոռանալ երբէք այն բոլոր մեծ և փոքր Քալանթարներին, Զաւարեաններին, Խատիսեաններին, որ ապրում են, աշխատում,

գործում մեր մէջ, մեզ հետ, մեզ համար, որ կարօտ են մեր ուշադրութեան, մեր գնահատման, մեր օգնութեան, և ասենք նրանց ամեն մէկին առանձին-առանձին, ասենք յարգանքով, կարեկցութեամբ և սիրով

Արի՛ սիրեմ, գնա մեռիր…

Արի սիրեմ, հայ տաղանդ, յետո՜յ… յետոյ ոչինչ, գնա և մեռիր, հայ հողը հերկած…

1913

ՁԱՅՆ ՏՈՒՐ, ՀԱՅ ԱԶԳ…

Կայ արձագանք և կան արձագանքներ…

Սէր, յարգանք, անկեղծ, սուրբ խօսքեր գտնում են տեղ քնքոյշ սրտերում։ Դուք ասում էք՝ օգնեցէք թոյլերին, հիւանդներին, չքաւորներին, օգնեցէք մեր տաղանդներին, մեր մշակներին, մեր վաստակաւորներին, թեթևացրէք դառն վիշտը մեր բազմաչարչար ազգի, սփռեցէք ամեն տեղ լոյսի շողեր, հալածեցէք խաւարը և սուտը։ Եւ յանկարծ ամեն կողմից դուք ստանում էք պատասխաններ ձեր յուզիչ կոչին։ Ձեռքեր, ինչքա՜ն ձեռքեր, բարի, գթառատ, հովանաւորող ձեռքեր պարզվում են ձեզ և կարճ ժամանակում այնքան արտասուքներ սրբվում, չորացվում, այնքան դարդեր թեթևացվում, այնքան վէրքեր բուժվում…

Ո՜հ, սուրբ արձագանք, դու նման ես հրեշտակի ժպտին, դու տաքացնում ես մեզ և ուրախացնում։

Արժէ գործել քեզ համար։

Արժէ ապրել քեզ համար։

Օրհնված լինես, օրհնված մնաս…

Բայց կայ մի ուրիշ արձագանք, անընակ, վայրի անապատների, բարձր, բիրտ սարերի, ամայի, խիտ անտառների, անսահման, անեզր ծովերի արձագանք…

Նա քեզ չէ պատասխանում, այլ հարցիդ տալիս է հարց, կրկնելով միևնոյն հարցը, կարծես ծաղրելով քեզ, քո աշխատանքը, քո հաւատը և քո յոյսերը, որ փշրվում են այդ արձագանքից և ցրվում քամու նման։

Սրանից տասը տարի առաջ՝ մի ամառ ես ապրում էի հեռաւոր Տիրոլում, գեղեցիկ Բերխտեսգադէնում։

Այնտեղ կայ մի փոքր ծովակ, Քէնիգզէէ, ընկած բարձր սարերում։ Մութ է և մռայլ նրա տեսարանը և ջուրը այնքան կապոյտ։ Նա ունի մի հրաշք, հրաշալի առանձնայատկութիւն. դա նրա արձագանքն է, որ կրկնվում է երեք անգամ։ Փոքր նաւ նստած, սարերի մէջ՝ ես կանչեցի բարձրաձայն հայերէն—ո՛չ. և յանկարծ երեք անգամ ես լսեցի՝ ո՛չ, ո՛չ, ո՛չ, կարծես մէկը երեսիս զարկեց, գլխիս մուրճով խփեց, այնքան անախորժ էր սարերի և ծովակի չարագուշակ արձագանքը։

Դա արձագանք չէր, դևերի ծիծաղ էր, որը սիրտս խոցեց և երկար ժամանակ դեռ լսվում էր ականջներիս այդ «ո՛չ»-ը։ Ես լսում եմ նրան և այսօր, երբ տեսնում եմ հայ իրականութիւնը…

Ո՛չ, ո՛չ, ո՛չ…

Յուզված, որ Սիմէօն Զաւարեանի նման մի հազուագիւտ երևոյթ մեզանում՝ մեռաւ քաղցից, ես դիմեցի հայ հասարակութեան և ասացի՝ արիք սիրենք մեր տաղանդներին, սփոփենք նրանց, ապահովենք, որ նրանք հերկեն հայ անդաստանը և փոխանակ կրկնելու «գնա մեռիր, արի սիրեմ», հաւատանք միայն մի բանի՝ «արի սիրեմ, գնա մեռիր»…

Եւ ի՞նչ արձագանք եմ ստանում ես բոլոր կողմերից…

Ո՛չ, ո՛չ, ո՛չ…

«Յարգելի բարեկամս,—գրում է ինձ Ժընևից մի հայ բանաստեղծ,—չը նեղանաք, որ ասեմ, թէ ձեր անկեղծ ճիչը ոչ մի արդիւնք չէ բերելու իսկապէս տառապող, կորած, մոլորված անհատների համար. այդպիսի կոչերից կօգտվեն նրանք, որոնք օգտվել են միշտ… իսկ Սիմէօնի աչքերը կը մնան ստուերի մէջ, միշտ փոշու տակ թաղված…»։

Սխալվում է Ժընեվ թափառող բարեկամս թէ՞ ոչ։

Եւ ինչո՞ւ նա իմ կոչը անուանում է… ճիչ։

Եւ մինչդեռ ես սպասում եմ յամառ արձագանք իմ կոչին, ինձ բերում են հեռագիր Երևանից՝ «Յայտնի հայ գրականագէտ և ուսուցիչ Գրիգոր Բալասանեանը տառապում է քաղցից, մի՛ թողէք խորտակվի հայ տաղանդի կեանքը, հակառակ դէպքում հասարակական խղճի առաջ պատասխանատու կը լինէք»։

Մի՞թէ Երևանում հայ մնացած չէ, որ մեզ են դիմում քաղցից մի հայ գրող և ուսուցիչ փրկելու համար։

Տալիս է… արձագանք և Բագուն։

«Հինաւուրց շիտակ յայտնի հրապարակախօս Ս. Սպանդարեանին հայ գործիչները և նրա հետ էլ հայ հասարակութիւնը «գնա՛ մեռի՛ր» վիճակի մէջն են գցել, և ահա երեք տարի է գերի է Պարիզ, ծերացած… Չէ՞ր հնար լինի ձեր կողմից նախաձեռնող լինէիք պ. Սպանդարեանին գերութիւնից ազատելու իր ծերութեան օրերում… Նրան հարկաւոր է հազար րուբլի»։

Երեւում է՝ Բագւում մնացած չէ մի հազար րուբլի, մեզ են դիմում…

Տալիս է… արձագանք և Թիֆլիսը, որը 150,000 հայ ժողովուրդ ունի։

Թիֆլիսի բարեկամս ինձ գրում է, որ Երուանդ Լալայեանը կարօտ է մի նպաստի, որպէսզի աւարտէ Վասպուրականի 2000 հայ ձեռագիրների կազմած ցուցակի տպագրութիւնը։ Այդ երկը կարեւորութիւն ունի Հայոց Պատմութեան համար։ Բաւական է յիշել, որ Վիէննայի Մխիթարեանները իրանց աբբահայր Արսէն արքեպ. Այտընեանի 50-ամեայ յոբելեանին հ. Տաշեանի կազմած 500 ձեռագիրների ցուցակը արժան համարեցին մատուցանել, որի տպագրութեան. համար Վիէննայի Գիտութեանց Կայսերական Ճեմարանը չը զլացաւ նպաստել։ Ե. Լալայեանի ցուցակն էլ միևնոյն ձևով, միևնոյն մեթօդով է կազմված։

Եւ դուք կարծում էք՝ Թիֆլիսում կա՞յ մի հարուստ, կա՞յ մի հաստատութիւն, որ նպաստէ. ոչ. դիմում են մեզ։

Ինչո՞ւ։

Իսկ դպրոցական ֆօնդը, որ դեռ չէ կազմված, որ սպասում է գալ հայ աշխարհ՝ մեր. մանուկներին այլասերութիւնից և կորուստից փրկելու համար…

Ձա՛յն տուր, հա՛յ ազգ։

Մինչ ե՞րբ 100,000 հայ մանուկներ պիտի մնան անուս, տգէտ, մատնված օտարութեան և կորստի։

Մինչ ե՞րբ դպրոցական ֆօնդին սպասենք, ինչպէս Մեսիային հրէաները…

Մինչ ե՞րբ տառապող, կորած, մոլորված մեր տաղանդները նաւին ընկած ձկի պէս պիտի թլպտեն և Սիմէօնի պէսները մնան միշտ սուսերի մէջ, միշտ փոշու տակ թաղված…

Ինչո՞ւ քաղցից մեռնեն գրագէտները և ուսուցիչները՝ Գրիգոր Բալասանեանի պէս։

Ինչո՞ւ Սպանդարեանները ծերութեան վերջին օրերը գերի մնան օտար երկիր…

Ինչո՞ւ Լալայեանների աշխատանքները լոյս չը տեսնեն։

Ինչո՞ւ։ Մինչ ե՞րբ։

Ձա՛յն տուր, հա՛յ ազգ։

Պարզէ ձեռքերդ, բարի, գթառատ, հովանաւորող ձեռքերդ… Այնքան արտասուքներ կը սրբվեն, կը չորանան, այնքան դարդեր կը թեթեւանան, այնքան վէրքեր կը բուժվեն…

Ձա՛յն տուր, հա՛յ ազգ։

Ես սպասում եմ քո արձագանքիդ, այն սուրբ արձագանքիդ, որ նման է հրեշտակի ժպտին, որը տաքացնում է, ուրախացնում է։

Որի համար կարժէ գործել։

Որի համար կարժէ ապրել։ Օրհնվա՛ծ արձագանքիդ…

Իսկ եթէ ո՞չ։ Եթէ Ժընեվի բարեկամս չէ սխալվում, եթէ իմ կոչը կոչ էլ չէ, այլ մի… ճիչ…

Եթէ Թիֆլիսը, Բագուն, Երևանը և ուրիշ տեղերը դառել են հայ մտքի, խելքի, խղճի միայն գերեզմանոցներ և հրեշտակի ժպտի տեղ ինձ սպասում են դևի ծիծաղը և նրա մերկացած սուր ատամները…

Եթէ յանկարծ փոխանակ սիրուն արձագանքի, որը ազգը պիտի փրկէ, ես լսեմ՝ ո՛չ, այն չարագուշակ «ո՛չ»-ը, որ լսվեց ականջիս հեռաւոր Տիրօլում, գեղեցիկ Բերխտեսգադէնի մօտ, մութ, մռայլ այնքան կապոյտ Քէնեկզէէ ծովակում, որ զարկեց երեսիս և մուրճի պէս խփեց գլխիս…

Բոլոր մեր գեղեցիկ յոյսերը, բոլոր մեր երազած ցնորքները, մեր տենչերը, մեր մտորումները և յոյզերը պիտի փշրվեն, ցրվեն, ինչպէս այդ կարմրած, դեղնած, սևացած, չորացած տերևները, որ բաժանել է ծառից ցուրտը և միշտ տանում է քամին հեռո՜ւ, հեռո՜ւ…

Չարժէր գործել, չարժէր ծնվել և չարժէր ապրել…

Ինչո՞ւ հայ հրապարակախօսին տրված չէ հրեղէն գրիչ, որ սառած, քարացած հայ սրտերում կարողանայ այրել սիրոյ և պարտաճանաչութեան խօսքեր…

Ձա՛յն տուր, հայ ազգ։

1913

Ն. ՍԱԹՈՒՆԵԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

«ՋԱՅՆ ՏՈՒՐ, ՀԱՅ ԱԶԳ...»

Այս վերնագիրն է կրում իմ յարգելի բարեկամ Դր. Զալխուշեանի վերջին ֆէլիէտօնը «Մշակի» № 276-ում։ Անշուշտ հայ ընթերցողը նկատած կը լինի, որ Դր. Զալխուշեանը, այս բազմաշխատ հայ գործիչը հիւսիսում, հայրենիքից դուրս, վերջին ժամանակները անդադար կրկնում է, որ հայ ազգը վերջապէս պէտք է արթնանայ, սթափվի և վերածնութեան մասին մտածէ. նա անազին ճիգ թափեց կովկասահայերին ցնցելու համար դպրոցական ֆօնդի առիթով, բայց... աւա՜ղ, այն, ինչ որ ինքն արաւ, երևում է, իսկ ինչ որ գրչով ուզեց անել, մնաց նրա ուժգին, առողջ, խելացի ձայնը «ձայն բարբառոյ յանապատի»։

Մի քանի անուն է հրապարակի վրա, որոնք իսկապէս նպաստեցին քիչ շատ՝ դպրոցական ֆօնդին, գոնէ պատկառելի կերպարանք տալու համար՝ այդ կարևոր գործում։

Այդ անունների ցանկը չնչին է, աննշան՝ իրան կուլտուրական ազգ անուանող հայերիս համար—մի Դր. Զալխուշեան, մի Զաւէն և Բաբգէն վարդապետ և էլի մի երկու-երեք անձ և ուրիշ ոչ ոք։

Սիրելի բարեկամ պ. Զալխուշեան, արդեօք չէ՞ք յուսահատվել դուք. արդեօք էլի յոյս էք տածում, որ մեր հարուստ Թիֆլիսը, Բագուն երբևիցէ կը ցնցվեն և գոնէ որոշ չափով կը նպաստեն ազգային կուլտուրական հիմնարկութիւններին։

Արդեօք խրատական չէ՞, որ Բագուից, Երևանից և Թիֆլիսից ձեզ են դիմում մի Ղալայեանի, մի Բալասանեանի, մի Սպանդարեանի օգնութեան համար։

Մի՞թէ դուք նախատինք չէք կարդալու այն հայերին, որոնք անշուշտ աւելի հարուստ են դրամով, քան մի Նոր-Նախիջևան, բայց և այնպէս օգնութեան ձեռք են մեկնում դէպի հիւսիս։ Մի՞թէ դուք չէք շպրտի նրանց երեսին ձեռնոցը, որ այդ «հոգով աղքատները» պէտք է վերջապէս վերջ տան մուրացկանութեան և մտածեն իրանց դարմանի մասին տանը և ոչ փողոցում կամ աւելի ճիշդ՝ անազին տարածութեան վրա ձեռք մեկնելու։

Նոր-Նախիջևանը ունի իր կարիքները. Թող նա իր հաստատութիւնների զարգացման և ապահովութեան մասին մտածէ, թող Արմաւիրը, Եկատերինօդարը, Վլադիկավկազը նմանապէս մտածեն իրանց ազգային հաստատութիւնները, դպրոցները ապահովելու մասին. Թող Թօրոսեան ժառանգների օրինակները մեզանում վարակիչ լինեն, իսկ Կովկասը, որը համարվում է հարստութեան անսպառ աղբիւր, ինքը թող հոգայ իր կարիքները։

Թող չօգտվեն ձեր ազգասիրական գործունէութիւնից, չօգտվեն ձեր բուռն ցանկութիւնից՝ հայ ազգին օգտակար դառակ լինելու և չը շահագործեն. Թող ինքնօգնութիւնը զարգանայ նրանց մէջ։ Մի՞թէ Երևանը, որ համարվում է հայաշատ նահանգի կենտրօն, չէր կարող մի շաբաթվայ մէջ օգնել, քաղցից փրկել հայ ուսուցչին, որ դիմումն է անում հիւսիս. մի՞թէ Երևանի հիւրանոցները, Երևանի կլուբները չեն կլանում անազին գումարներ, որ մի աղքատ, հալ ու մաշ ուսուցչի օգնելու համար 2000 վերստ հեռաւորութեան վրա ձեռք չը մեկնէին կօպէկներ, մանէթներ ստանալու համար։

Մի՞թէ Թիֆլիսը չէ հասկանում Ղալայեանի աշխատութեան կարևորութիւնը, որ 1000 րուբլու համար էլի Դր. Զալխուշեանը պէտք է մտածէ և գտնէ։ Կամ Ղալայեանի աշխատութիւնը կօպէկ չարժէ՞ հայաշատ, հայ կուլտուրական ինտելիգենցիա ունեցող և հայ գիրը գիտցող Թիֆլիսեցիներին։ Կամ իսկապէս նա՝ կովկասահայ ինտելիգենցիան գրօշ չարժէ՞ և միայն ուտել-խմելով է տարված, և ժամանակ չունի՞ ինչ-որ հայ գրական գործի մասին մտածելու. իսկ մեզ, հիւսիսայիններիս համար, անշուշտ ամենևին հետաքրքրութիւն չէ կարող ներկայացնել Ղալայեանի աշխատութիւնը։

Մի՞թէ Խատիսեանին չէին նեղացնում իր մաքուր գործունէութեան ժամանակ. մի՞թէ Զաւարեանը քմծիծաղ չէր շարժում. մի՞թէ Քալանթարը չէր քարկոծվում։ Նրանք մեռան, իսկ մենք լալկան կանանց նման «մոխիր ցանեցինք» գլխներիս։

Մի՞թէ այժմ պակաս են հալածվում՝ օր ու գիշեր միայն ազգի համար աշխատող գրչի և այլ մշակները, ծերունի թէ երիտասարդ։

Այս բոլորը ի՞նչ է ցոյց տալիս, ինչի՞ հետևանքն է, այս հարցին տուէք պատասխան, սիրելի պ. Զալխուշեան։ Սպասում ենք։

Նիկ. Սաթունեան

Եկատերինօդար

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՅՈՒՍԱՀԱՏՎԵԼ ԵՒ ԵՐԲԵՔ ՉԵՆՔ ՅՈՒՍԱՀԱՏՎԻ

Իմ ընկեր Նիկ. Սաթունեանը իմ «Զայն տուր, հայ ազգ» բանասիրականին նուիրում է քանի մի կրակոտ տողեր։ Դժուար է, նոյն իսկ անկարելի է հերքել, որ Թիֆլիսի, Բագուի և Երևանի մուրացկանութիւնը անցնում է այժմ ամեն մի չափ, որ Կովկասը բթացել է, չորացել է, ապառաժ քար է դարձած հայ հոգու, խելքի և մտաւոր աշխատանքի համար, որ նա անտարբեր է դէպի հայի կարիքը։ Հարուածեցէք, հարուածեցէք, ինչքան կարող էք, ինչքան ներում է ձեզ ձեր տաղանդը, հարուածեցէք և Թիֆլիսը, և Բագուն, և Երևանը։ Ես չեմ նրանց պաշտպանողը, հարուածեցէք և մտրակեցէք։

Միայն...

Միայն ձեր հարուածները և ձեր մտրակները չիջնեն մեր դժբաղդ ազգի գլխին, ուսերին, մէջքին։ Եթէ Թիֆլիսը, Բագուն և Երևանը յիմարացել են, շեղվել են շիտակ ճանապարհից, չը յիմարանանք մենք ու չը շեղվենք մեր ճանապարհից և չը կորցնենք մեր գլուխները։

Պէտք էր մեծ և դառն յուսահատութիւն, որպէսզի պ. Սաթունեանի պէս մի ազնիւ մարդ այսօր դաւանէր, թէ Նոր-Նախիջևանը, Եկատերինօդարը, Վլադիկավկազը ունեն իրանց կարիքները և թող իրանց զարգացման և պահպանութեան մասին մտածեն, ձեռք քաշելով Կովկասից...

Ոչ, եղբայր Սաթունեան, ձեր ասածը մի աղանդ է, որ պէտք է հերքել և հարուածել այնչափ ուժեղ, որչափ արժանի են հարուածների և մտրակների և կովկասցիներն իրանց սառն անտարբերութեամբ դէպի մեր եղկելի վիճակը։

Ձեր դաւանանքը աղանդ է ցաւալի և վտանգաւոր, աւելի վտանգաւոր, քան թէ կովկասցիների սխալը։

Ազգը մի ամբողջութիւն է. մի մարմին և մի հոգի։ Կան հայեր, չը կան բագուեցիներ, եկատերինօդարցիներ, Նոր-Նախիջևանցիներ. կան հայեր, միայն հայեր։ Յանուն կրօնի չէ

կարելի նրանց բաժանել, իսկ ի՞նչ մնաց յանուն քաղաքների...

Իսկապէս ասած, ի՞նչ է ձեր Եկատերինօդարը, մեր Նոր-Նախիջևանը, Արմաւիրը և Վլադիկավկազը։

Գաղութներ, գաղութներ, որ դուցէ մի 50 տարուց յետոյ՝ հայութեան գերեզմանոցներ դառնան, ինչպէս Բիշինևը, Գրիգորիոպոլիսը, Թէոդոսիան և այլն։

Կասեմ աւելին՝ և՛ Բագուն, Թիֆլիսը և Երևանը վաղ թէ ուշ, դուցէ մի հարիւր, երկու հարիւր տարուց յետոյ կը դառնան նոյնպէս հայութեան գերեզմանոցներ, թէև այդպէս չեն մտածում սնապարծ բագուեցիները և Թիֆլիսեցիները։

Հայի ապագան այստեղերը չէ, հեռու է, և մենք միշտ աչքներս յառած ենք դէպի չարչարվող, տանջվող վեց վիլայէթները, մեր աւետեաց երկիրը։ Այնտեղ կը բացվի մեր արևը, այնտեղ մենք կը մնանք ազգ, կը շատանանք, կը բազմանանք և մի օր—ես հաւատում եմ այդ օրին, որովհետև զգում եմ նրան սրտիս խորքերում—մենք կը մտնենք զարգացած ազգերի կարգը, իբրև կուլտուրական մի տարր։ Այդ օրը մենք, եղբայր Սաթունեան, չենք տեսնի. այդ օրը չեն տեսնի և իմ ու ձեր զաւակները, դուցէ և թոռները... Ինչ փոյթ, մեզ համար չէ մեր արածը և մեր քաշածը, ազգի համար է, մեր ազգի, որ այնքան չարչարվել է, այնքան խաչվել է, որ արժանի է մեր սիրուն և հոգսերին։ Բայց քանի որ լուսադէմը դեռ հեռու է, քանի որ մութ գիշեր է մեր շուրջը, մենք պէտք է պատրաստենք հայ մշակներ և խնայենք հայ տաղանդը... Թէև անտարբեր են և սառնասիրտ՝ Թիֆլիսը, Բագուն, Երևանը, թէև նրանք յիմարացել են և ցեխի մէջ են ընկած, ստոր, ցած, բայց թոյլ չը տանք ընկճվել մեր տաղանդներին։ Զարթեցնենք և քաջալերենք։ Նրանք մեր ժրաջան մշակներն են. Նրանք թիֆլիսեցիներ չեն, բագուեցիներ չեն և ոչ երևանցիներ. Նրանք հայեր են, հայեր՝ սրտերով, գործերով...

Ո՞վ է մեզ վիրաւորում, ո՞վ է մեզ բարկացնում։

Կուշտ Թիֆլիսը, կուշտ Բագուն, կուշտ Երևանը, որ մեզ չեն կարդում, չը գիտեն, չեն ճանաչում, ինչպէս չեն կարդացել, չը գիտեն և չեն ճանաչում իրանց տաղանդներին...

Մեղաւո՞ր են այդ տաղանդները, որ ծնվել են Կովկասում...

Գիտէ՞նք արդեօք մենք էլ գնահատել մեր Գամառ-Քաթիպային, մեր Միք. Նալբանդեանին...

Չը տուի՞ն ինձ կովկասցիները դրամ՝ առաջինին ապահովացնելու համար և երկուսի արձանները կանգնեցնելու համար...

Ոչ, եղբայր, դուք սխալվում էք. ձեր դաւանանքը աղանդ

է. հայութիւնը մի ամբողջութիւն է. Երևան, Թիֆլիս, Բագու՝ դրանք քաղաքներ են, պայմանաւոր երևոյթներ ազգութեան տեսակէտից...

Ո՞ւմ է հետաքրքրում, որ Գամառ-Քաթիպան Նոր-Նախիջևանցի էր, իսկ Գաբրիէլ Սունդուկեանը Թիֆլիսեցի։ Նրանք մերն են, հայեր են, ու այսքանը բաւական է...

Եւ բոլոր հայ գրողները, վաստակաւորները, գործիչները մերն են. Նրանք այն մշակներն են, որոնց ջանքերով մեր վեց վիլայէթների լուսաղէմը կը մօտենայ, խաւարը կը չքանայ և արեգակը կը ծագի...

Ապահովեցէք ձեր տեղական հաստատութիւնները, բայց այդ ձեր աշխատանքը թող երբէք պատրուակ չը լինի փակել աչքներդ և չը տեսնել հայ իրականութիւնը և կղզիանալ նրանից, իբրև տեղացիներ, և նայել մնացեալ հայերի վրա իբրև մուրացկան «դրսեցիների» վրա։ Դա կը լինի մի վտանգաւոր և անամօթ սխալ. և մտրակելով Թիֆլիսը, Բագուն և Երևանը, մտածելով միայն և միայն ձեր հաստատութիւնների մասին՝ դուք ուրացած կը լինէք հայութիւնը, այն ամբողջութիւնը, որից դուրս, եղբայր Սաթունեան, ոչ մեզ և ոչ ձեզ չը կայ և լինելու չէ փրկութիւն...

Մտրակեցէք անհատներին, հարուստներին, անտարբերներին, մեր թշնամիներին, բայց մի թքէք ազգի հալալ ճակատին և մի խփէք նրա գլխին։

Առանց ձեզ էլ նա հոգեվարք է, ծանր է շնչում, հեւում է. կարօտ է ձեր խելքին, ձեր հոգսին, ձեր օգնութեանը, այլ ոչ սառնասիրտ անտարբերութեան և մտրակներին...

«Մենք էլ ունենք հաստատութիւններ, մենք էլ ունենք մեր կարիքները, թող Կովկասը ինքը հոգայ իր մասին» ասելը այժմ, երբ կուշտ Կովկասը այնքան սառեցել է, որ կարծես ժխտում է իր հայ լինելը, ծանր յանցանք է և վտանգաւոր աղանդ ազգի գոյութեան տեսակէտից։

Զգուշացէք։

Ուրիշների սառութիւնը մեզ իրաւունք չէ տալիս սառնանալու...

Նայենք հեռուն, նայենք արդար, բարձրանանք մտքով և հոգով, որ բարձրացնենք և կովկասցիներին։

Եւ մենք կը բարձրացնենք նրանց, մեր օրինակը և աշխատանքը ապարդիւն չեն։

Ահա ինչու Նիկ. Սաթունեանի հարցին՝ «Սիրելի բարեկամ պ. Զալխուշեան, արդեօք չէ՞ք յուսահատվել դեռ ևս. արդեօք էլի յոյս էք տածում, որ մեր հարուստ Թիֆլիսը, Բագուն երբևիցէ կը ցնցվեն և գոնէ որոշ չափով կը նպաստեն ազգային-կուլտուրական հիմնարկութիւններին»։

Ես պատասխանում եմ խղճիս ձայնովը—ոչ, ոչ և դարձեալ ոչ։

Մենք չենք յուսահատվել և երբէք չենք յուսահատվի։

1913

ՄԵԶԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ԲԱՆԸ ԸՆԴՀԱԿԱՌԱԿ

Հին ժամանակներ…

Հեռու մեզանից Յունաստանում…

Եօթը քաղաքներ վիճում էին իրար հետ, վիճում էին, թէ որը նրանցից պատիւ ունի Հոմերոսի ծննդավայրը լինելու… Վիճում էին, թէ արդեօք որ քաղաքի պատերի մէջ պիտի կանգնի նրա արձանը… Զմիւռնիա, Ռոդոս, Սալամին, Քիոս, Արգոս և Աթէնք աննկուն կանգնած չէին զիջում իրար, և եօթը քաղաքներ իրանց պատերում կանգնեցրին պաշտած բանաստեղծի արձանները…

Եւ մէկի տեղ Յունաստանը ունեցաւ եօթը արձաններ…

Դա հին ժամանակներումն էր, հեռու Յունաստանում…

Իսկ մեզանու՞մ, մեր ժամանակնե՞րը…

Վիճում էին իրար հետ… երկու քաղաքներ՝ մեր մտաւոր կենտրոնը, իմա Բագուն, և մեր երբեմնի մայրաքաղաք Երևանը։

Վէճը Խաչատուր Աբովեանի արձանի մասին է…

Աբովեանը մեր աշխարհիկ գրականութեան Հոմերոսն է, մեր նոր գրականութեան հայրը։

Բագուի Կուլտուրական Միութիւնը նախաձեռնողն է եղած իրականացնել ընդհանուրի ցանկութիւնը և կանգնեցնել նրա արձանը նրա ծննդավայրում՝ Երևանում…

Մեր արդէն յայտնի քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանը պատրաստել է արձանը, որը շատ աջող է… Մեծ ազգասէրը կանգնած է մտախոհ. նրա դէմքը գեղեցիկ է, ազնիւ. մի փոքր տղայ նստած կարդում է նրա Ողբսաքը՝ «Վէրք Հայաստանին»… Փոքր ինչ վերև կանգնած է մի աղջիկ… Դաշտերից, վայրերից նա քաղել է, հաւաքել-բերել ծաղիկներ և փունջ արած տալիս է պաշտած ուսուցչին։ Բանաստեղծ-ուսուցիչը կարծես չէ տեսնում նրան, մտքերը հեռու են, մթնոլորտը խաւար, իսկ ազգը թմրած, քնած, ինչպէս այսօր…

Երևան քաղաքը տուել է մի գեղեցիկ տեղ, մի փոքր հրապարակ. դա առաջին անգամն է, որ մի քաղաքի հրապարակում պիտի կանգնի հայ գրողի և գործչի արձանը…

Իսկ բազմաշատ մեր քաղաքները վիճում են, թէ արդեօք ով պիտի վճարէ ծախքը…

Արձանը պատրաստ պահվում է Պարիզում Տէր-Մարուքեանի արհեստանոցում…

Երևանի հրապարակում տեղը պատրաստ է արդէն։

Մնում է արձանը կանգնեցնել…

Չը կայ փող…

Երևանը, որ տուել է կեանք Աբովեանին, Երևանը, որը այնքան սիրել էր Աբովեանը և իր երգերով անմահացրել, ոչինչ չէ տալիս։

—Բագուն սկսել է, Բագուն թող վերջացնի,—ահա ինչ է ասում Երևանը…

Իսկ Բագո՞ւն։

Պատահում է, որ աղքատը երբեմն ունենում է մի հարուստ ազգական։

Եւ այդ հարուստ ազգականը դառնում է նրա համար մի կատարեալ պատուհաս։ Որին էլ չը դիմէ, որից չը խնդրէ, պատասխանում են միատեսակ. դիմէ՛ք քո ազգականից…

Դիմէ՛ք քո ազգականից…

Եւ Բագուն վաղուց մեր աղքատ ազգի հարուստ ազգականն է դարձած…

Երկու հազար տուել է Պետերբուրգի հոգաբարձութիւնը։

Համարեա տասը տարվայ միջոցին ժողովվել է միայն… 6500 ր.։

Պակասում է ութը հազար…։

Տեղը արդէն պատով բռնած, արձանը բոլորովին պատրաստ, իսկ մենք բոլորս, որոնց այնպէս բուռն սիրով ջերմ սիրում էր անմահ Աբովեանը, վիճում ենք, թէ ով պիտի հոգայ ծախքը, և փախչում ենք ծախքերից…

Եւ մեզանում բոլոր բանը ընդհակառակ…

Յունաստանում եօթը քաղաքներ վիճեցին և… եօթը արձաններ կանգնեցրին։

Մեզանում մենք միայն գիտենք վիճել և պատրաստ մի հատ արձանը չենք կարող դնել…

Եթէ մեր վէճերը փող արժէին….

Ամենահարուստ ազգը կը լինէինք…

—

Յ. Գ.—Ուղարկում եմ խմբագրութեանդ իմ լումաս—20 ր.—որ խնդրեմ հասցնել Բագուի Կուլտուրական Միութեան։ Ցանկալի էր, որ գոնէ այս տարի վերջապէս իրագործվէր Աբովեանի արձանի բացումը։

1914

ԷՒ ՍԱԿԱՅՆ ԿԸ ՊՏՏԻ...

(E pursi muove)

Մի ծիծեռնակը գարուն չի բերի հետը։

Մի ծիծեռնակը գարուն անգամ չի գուշակի։

Բայց ձմրան դաժան ցրտին, զօրեղ քամուն հաճելի է տեսնել ծիծեռնակ և երազել կանաչ գարուն։ Տեսնել ծիծեռնակի սև աչերը, փոքր կտուցը, նախշուն թևերը և երկար պոչը, որ փոքր մանուկները համարում են Քրիստոսի պատառաքաղը... Մի՞թէ չը գիտէք, որ խորհրդաւոր ընթրիքին ծիծեռնակը դարձել էր Քրիստոսի պատառաքաղը... Այդպէս էին համոզում ինձ ծերերը իմ մանկութեան օրերին։

Տես, ասում էին նրանք՝ դառնալով ճնճղուկին, նա շտապել է տանել այն գամերը, որոնցով գամել են խաչին Քրիստոսին։

Մանուկ բարեպաշտներ, մենք ատելով ատում էինք խեղճ ճնճղուկներին, որովհետև նրանք տարել են խաչի գամերը Գողգոթա, և սիրում էինք ծիծեռնակներին, որ Քրիստոսի պատառաքաղներ էին դարձել...

Մենք ոչնչացնում էինք ճնճղուկների բոյները, քարեր էինք նրանց նետում և միշտ զմայլած, սիրով նայում էինք ծիծեռնակներին, որ առանց վախի թռչում էին մեր շուրջը։

Ահա այսօր էլ պատուհանիս պատշգամբին կանգնել է մի սիրուն ծիծեռնակ սև աչքերով, փոքր կտուցով, նախշուն թևերով և Քրիստոսի պատառաքաղ-պոչով։

Նա բերած չէ ինձ գարուն և գարուն էլ չէ գուշակում։

Բայց նա այնքան սիրուն է, նա այնքան ուրախացնում է իմ սիրտը...

Նա թռել, եկել է ինձ մօտ հեռուից, շատ հեռուից, խաւար, խուլ Պարսկաստանի խաւար, խուլ Ուրմիայից, ուր հայութիւնը խարխափում է խաւարի մէջ, կարօտ լուսաւորութեան ջերմ շողերին։

Այնտեղ քահանաները այնպէս տգէտ են, որ չեն հասկանում իրանց կարդացածը։

«Նաւակատիս» կարդում են... «Նաւահանգիստ»։

«Հեռաստանէ»... «Հրէաստանն է»...

«Համարձակ»... «Համաձայն»։

«Տնօրէնութիւն»... «Անօրէնութիւն» և այլն։ Զարժէ շարունակել։ Այնպէս չէ՞։ Կոյր է ժողովուրդը, կոյր են նրա հովիւները. ինչպէս հովւեն, առաջնորդեն, փրկեն տգիտութիւնից և խաւարից իրանց հօտը...

Այնտեղ հայերը ապրում են խառն ասորիների հետ։ Որ գիւղում մեծամասնութիւն կազմում են հայերը, գործածական լեզուն հայերէնն է. որ գիւղում մեծամասնութիւն կազմում են ասորիները, գործածական լեզուն ասորերէնն է, իսկ հայերէնը մոռացվում է։

Հայերէնը մոռացվում է և հայերը այլասերվում են...

Գեղեցիկ ծիծեռնակը ինձ համար բոլորովին անծանօթ, բայց իմ «կենաց աղօթարար» Խ. վ. Ղազարեանի նամակն է։

«Ձեր Ուրմիոյ մասին գրած բանասիրականը—«Լուռ է Բագուն»—կարդում եմ ես. մեր վաճառականներին աւելի շուտ ազդած է, քան Բագուի և Թիֆլիսի կրեսոսներին, որոնք նման այն ճարպիկ օձերին, որպէս զի թռչնների ձեռք չընկնեն, իրանց պոչերը ականջների ծակերի մէջ մտցնում են («զի մի լուիցեն զձայն թռչնի ճարտարի»)»։ Ղազարեան հայր-սուրբը Ծննդեան առաւօտ եկեղեցում խօսում է մանուկ սերունդի կրթութեան մասին, և պ. պ. Շահգալդեանը, Մանասէրեանը, Աւագեանը և Աւթանդիլեանները իսկոյն ստորագրում են տեղն ու տեղը 7000 րուբլի՝ դպրոցի յատուկ սեփական շէնք շինելու համար։ Խոշոր առևտրական տներ խոստանում են մեծ-մեծ գումարներ տալ և... «թուրք բարձր պաշտօնեաները նոյնիսկ խնդրում են, որ թոյլ տան նրանց մասնակցել նուիրաբերութեան»։

Հայր-սուրբը կարդալով «Լուռ է Բագուն»՝ իսկոյն ձեռնարկում է սուրբ գործին։ Քսան օրվայ ընթացքում նա շրջում է վիճակի տասը հայ գիւղեր, յորդորում է, համոզում է բանալ դպրոցներ՝ հայ մանուկներ կրթելու համար։ Չէ՞ որ լուսաւորութիւնը այն միակ ուժեղ զէնքն է, որ կը փրկէ մեզ ամեն մի վտանգից։

Նա կարողանում է բանալ երեք դպրոցներ Ռահուա, Գեարդիրաթ և Իսալու գիւղերում։ Երեք դպրոցներ — երեք Լապտերներ՝ մանր աղայոց կեանքի ճանապարհները լուսաւորող։

Ահա ինչ կարողացել է անել մի վարդապետ իր եռանդով և խօսքով։ Ահա ինչ կարող է անել մի հայ վարդապետ քանի օրվայ մէջ։

Ես կարդում եմ, նորից կարդում հայր-սուրբի զգածված տողերը, որոնք կամաց-կամաց խառնվում են իրար, բառերը կարծես կենդանանում, մի-մի ելնում են նամակից, բարձրանում, թռչում և պտտում գլխիս, ծիծեռնակներ, անթիւ, անհամար ծիծեռնակներ դարձած փոքր կտուցներով, սև աչքերով, նախշուն թևերով և Քրիստոսի պատառաքաղ-պոչերով, թռչում և երգում մի դուրեկան, քնքոյշ մեղեդի, որ շշմեցնում է, արբեցնում ինձ և առատ արտասուքներով լցնում աչքերս։

Ո՞ւր եմ ես լսել այդ մեղեդին։ Ինչո՞ւ նա այնքան ինձ յուզում է, ոգևորում։ Ի՞նչ կախարդական ոյժ կայ այդ երեք խօսքերի մէջ, որ երգի ամբողջ բովանդակութիւնն է՝

E pursi muove...

Եւ սակայն կը պտտի։

Կը պտտի, երգում են սիրուն ծիծեռնակները երկնքում... Ոչ, ծիծեռնակներ չեն երգողները։ Դա սիրտս է, սիրտս բաղխում է՝ կը պտտի, կը պտտի, միայն փոքր ինչ ճիգ, փոքր ինչ աշխատանք, անձնուէր, սուրբ աշխատանք...

Երէկ մի կաթիլ, այսօր մի կաթիլ, վաղը մի կաթիլ, ջրի կաթիլներ և կաթիլներ, որ ընկնում են մէկը միւսի ետևից անդադար, անհամար, անվերջ, ապառաժ քարի վրա, կակղացնում, փափկացնում քարը, որը կարծես զարմացած վերջապէս բանում է իր ծոցը, ընդունում իր գիրկն այդ կաթիլները, յետոյ փշրվում, տապալվում, բանալով մեր առաջ լայն հարթ ճանապարհ...

Իսկ և իսկ այդպէս են և հայ քարացած մտքերը, հայ քարացած սրտերը։

Նրանք էլ անհամբեր սպասում են իրանց կաթիլներին։

Նրանց կոշտ կեղևներն էլ կը կակղեն, կը փափկեն այդ կաթիլներից։ Հայ սրտերը, հայ մտքերը կը բանան մեզ համար իրանց գիրկը, կընդունեն սկզբից գուցէ բարկացած, յետոյ սիրով մեր պատգամները—կաթիլները, և ամեն մի կաթիլ մի-մի թանգագին մարգարիտ կը դառնայ։

Մի-մի թանգագին մարգարիտ մեր այժմեան խոպանացած կեանքի համար, որին դեռ տիրում է մութ խաւարը սուգը...

Այդ օրը, բարեկամներ, հեռու է մեզանից, շատ հեռու։

Մենք, այժմեայ հրապարակախօսներս և գործիչներս, նրա լուսադէմը չենք տեսնի։

Բայց այդ օրը կը գայ, անպատճառ կը գայ, ինչպէս այս գիշերից յետոյ վաղվայ լոյս առաւօտը։

Երէկ կաթիլ, այսօր կաթիլ, վաղը կաթիլ, կաթիլներ, միշտ կաթիլներ. դա մի հզօր, անպարտելի ոյժ է, որի առաջ ոչ մի արգելք՝ արգելք չէ, որը ամեն բան կը յաղթէ, որին ամեն բան կը հպատակէ, կը հնազանդէ։

Մի՞թէ այդպէս չեն փշրվում, տապալվում ապառաժ քարեր, բանալով մարդկութեան առաջ լայն և հարթ ճանապարհ, մինչ այդ անյայտ։

Այդպէս էլ կը փշրվեն և կը տապալվեն այն հաստ, կոշտ, ամուր քար-կեղևները, որ դեռ առ այժմ ծածկում են, փակում հայ մտքերը, հայ սրտերը կարծես մի մռայլ բանտի մութ կապարէ կամար...

E pursi muove.

Եւ սակայն կը պտտի... կը պտտի... շարունակենք մեր գործը, շարունակենք տեղալ մեր մտքերի, համոզմունքների, սրտերի խորքերից պատգամներ, կաթիլներ, որ օր առաջ այդ հաստ, կոշտ, ամուր քար-կեղևները փշրվեն, տապալվեն, որ հայ միտքը ազատվի կապանքներից, հայ սրտերը վերջապէս վարդերի նման անուշահոտ և գեղեցիկ բացվեն, խօսեն...

Որ մեր ազգի վերածնութեան գեղեցիկ գործի մէջ՝ և իմ, և ձեր, և բոլորիս բարի, ազնիւ կաթիլները անպակաս լինեն...

Ի՞նչ փոյթ, որ այդ վերածնութեան օրը մեր ոսկորներն էլ չեն մնալու, անուններս էլ կը մոռացվեն...

Թող այդ ոսկորները պարարտեն սուրբ հայ հողը, իսկ անունների ետևից թող վազեն եսամոլ սնափառները...

Եւ սակայն...

Կը պտտի... կը պտտի...

1914

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ... ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

(Նուիրում եմ... ստախօսներին և մեզ բամբասողներին)

I

Ազգերի համերաշխութեան գործը մեզ հրապարակախօսներիս համար վաղուց արդէն դարձել է մի սիզիփեան աշխատանք։ Հազար ու մէկ չարչարանքներով և զրկանքներով տանում ես մի մեծ քարի ծանրութիւն սարի գագաթը, մէկ էլ տեսար գլորվեց անիծեալը։ Նորից իջիր վայր, նորից դիր ուսերիդ վրա, բարձրացրու, տղա, աշխատիր, քրտնիր, որ... քարը նորից գլորվի և գլորվի...

Անիծեալ սիզիփեան աշխատանք...

Այդ աշխատանքը ապարդիւն է մեզ համար, բայց մենք պիտի շարունակենք, տանենք ամեն բան, անգամ զրկանք, որ մի պայծառ օր, գուցէ հարիւր տարիներից յետոյ, մեր ժառանգները բաղդաւորութիւն ունենան վայելելու ոչ կեղծ, այլ մաքուր սէրը և յարգանքը հարևան ազգերի...

Հաւատում ենք մենք այդ պայծառ օրին և համերաշխութեան սուրբ և վսեմ գաղափարին, և ահա ինչու մենք լծվում ենք այդ անիծեալ սիզիփեան աշխատանքին, որ նա վերջապէս գոնէ մեր թոռների համար դառնայ օրհնեալ աշխատանք...

Խնճոյքների մէջ գինու բաժակները ձեռներիս, մենք բոլորս տաքացած խօսում ենք փոքր, թշուառ ազգերի համերաշխութեան մասին. բաւական է որ միւս օրը քաղաքային վարչութեան անդամի կամ ձայնաւորների ընտրութիւն լինի և թեկնածուները հայեր լինեն, որ իսկոյն մոռացվեն համերաշխութեան քաղցր խօսքերը և սկսեն հայհոյել մեզ հայերիս... Այդպէս եղել է միշտ...

Ընտրութիւնները կանցնեն, կերթան և կը մոռացվեն...

Նորից կը սկսվեն համերաշխութեան գեղեցիկ և սուրբ խօսքեր, բայց մինչև նոր դէպք...

Դէպքը այժմ պօլիտեխնիկումի շինութեան տեղի հարցն է...

Ծարաւ բարձր ուսման, Թիֆլիսը վաղուց սպասում էր անհամբեր պօլիտեխնիկումի բացման։ Շնորհիւ փոխարքայի՝ Թիֆլիսի փայփայած իղձը այսօր ստանում է կենդանութիւն, և մօտ է այն օրը, երբ պօլիտեխնիկումի դռները լայն կը բացվեն հայերիս և մեզ սիրելի վրացիների, թաթարների և ռուսների առաջ։

Ի՞նչ է նշանակում այժմվայ այդ իրարանցումը և ինչու են նորից սկսում հայհոյել մեզ հայերիս...

Նաւթլո՞ւղ թէ՞ Սաբուրթալօ...

Կարծես Համլէտի «լինել թէ չը՛ լինելը» դարձել է վրացի եղբայրներիս համար...

Եւ որչա՜փ պժգութիւն, թշնամական զգացումների գրգռում հայերի համար։

Ի՞նչ գաղափարական հարց կայ այստեղ վրացիների համար։

Եթէ մի բարձր կրթական հաստատութեան շուտափոյթ հիմնարկութիւնը և բացումը հնարաւոր է աւելի Նաւթլուղում, քան թէ Սաբուրթալօյում, մի՞թէ բոլոր գաղափարական վրացիները աշխատելու չէին, որ Նաւթլուղումն էլ բացվի դպրոցը...

Երևակայեցէք մի րօպէ, որ կոմս-փոխարքան բարեհաճէր ընտրել Սաբուրթալօն, մի՞թէ մենք հայերս կը բարձրացնէինք այդ անամօթ, անսահման վայնասունը և կը սկսէինք հայհոյել մեր վրացի եղբայրներին։ Ինչու մենք հայերս միշտ պիտի հնազանդենք, զիջենք։ Ինչու սիզիփեան աշխատանքը միայն մեզ է վիճակված։ Ինչու համերաշխութեան ծանր բեռը միայն մեր ուսերը պիտի ճկէ և ինչու համերաշխութեան փշերը մեզ պիտի մնան, իսկ ծաղիկները և բուրմունքը՝ օտարներին։ Ինչու։

II

Յանուն համերաշխութեան մենք պահանջում ենք հաւասարութիւն։

Իսկ եթէ մեր վրացի եղբայրները մինչև այժմ համերաշխութեան գաղափարը այնպէս են ըմբռնել, որ հայը միայն պիտի հնազանդէ, միշտ պիտի զիջէ, նրանք սխալվում են չարաչար և սխալվում հէնց նրա համար, որ իրանք հայերը պատճառ են եղել, որ այդպիսի կարծիքը մի հիմք ունենայ...

Եթէ մեր հռչակված գաղափարական երիտասարդները սկսեցին քարոզել, որ հայ եկեղեցու հողերը պէտք է բաժանել

օտարներին, մեր հարուստ մեծատունները մօդա արին կտակել գումարներ և շինել դպրոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ օտարների համար թէ Նախիջևանում, թէ Մոսկվայում, թէ Կովկասում և ամեն տեղ:

Համերաշխութեան գաղափարը մեծ է, սուրբ և անմահ:

Խոնարհենք ցածր մեր գլուխները նրա առաջ և երկրպագենք նրան:

Երկրպագենք սակայն ազգի պատիւը և ազգի շահերը չը վաճառած, չը մատնած և չը մոռացած: Իբրև բոլոր ազգերի հաւասարներ...

III

Համերաշխութեան գաղափարը պահանջում է մեզանից, որ մենք ուսումնասիրենք մեր հարևան ազգերը, յարգանքով և սիրով վերաբերվենք դէպի նրանց աւանդութիւնները, սրբութիւնները, պատմութիւնը, լեզուն և կրօնը:

Համերաշխութեան գաղափարը պահանջում է, որ մենք՝ հարևան ազգերս ձեռք-ձեռքի բռնած ձգտենք երթալ առաջ, խաղաղ կուլտուրական ճանապարհով, իրար օգնելով, իրար թեթևացնելով ճանապարհի բոլոր դժուարութիւնները, խոչընդոտները, իբրև ընկերներ, եղբայրներ...

Բայց այդ համերաշխութեան հիմքը փոխադարձ յարգանքն է, փոխադարձ սէրը և փոխադարձ զիջողութիւնը:

Մենք հայ հրապարակախօսներս լաւ գիտենք, որ առ այժմ համերաշխութեան գործը սիզիփեան աշխատանք է:

Պէտք է նախ հաւասարութիւն: Կարելի չէ թոյլ տալ, որ մէկը միշտ զիջէ, հնազանդի, ծառայէ, միւսը միշտ պահանջէ և իշխէ...

Պէտք է յետոյ թէ հայ, թէ ռուս, թէ վրացի, թէ թուրք գործիչներս լծվենք միասին և միասին ուսերիս վրա դնենք և տանենք այդ շատ ծանր, բայց և գեղեցիկ ու սուրբ բեռը, սիրելով նրան, գգվելով և խնայելով, իբրև մի նուրբ, փխրուն բան...

Գուցէ մինչև սարի գագաթը չը տանենք: Գուցէ տանենք և գագաթից վայր գլորվի...

Ոչինչ: Չը թուլանանք փորձողութիւնից Շարունակենք:

Դարձեալ լծվենք, դարձեալ քաշենք, տանենք ամեն բան, ամեն անգամ զրկանք, որ մի պայծառ օր, գուցէ հարիւր տա-

րիներից յետոյ, մեր բոլոր հարևան ազգերի սերունդները բաղդաւորութիւն ունենան վայելելու փոխադարձ սէր և յարգանք...

Նաւթլուղի և Սաբուրթալօյի հարցը կը մոռացվի՝ ինչպէս շատ ուրիշ հրատապ հարցեր:

Աշխատենք մեղմացնել այդ կռիւը և չը նկատել այս օրվայ վայնասունը, չը լսել հայհոյանքը և բամբասանքը: Այնքան բամբասանքներ և հայհոյանքներ մենք լսել ենք, որ ընտելացել ենք արդէն. հայը մեղաւոր է արդէն, որ ծնվել է հայ...

Մենք համբերատար ենք, կը մոռանանք և այս անգամ ամեն բան:

Հոգ չէ, սկսենք:

Սկսենք նորից և նորից մեր աշխատանքը, սիզիփեան աշխատանքը: Ճանապարհը նեղ է, դաժան, փշոտ և տատասկոտ: Բեռը ծանր: Ճկվում են մեր ուսերը: Դժուար է քաշել:

Սև-հարիւրեակները սև ագռաւների նման պտտում են գլուխներիս և չարագուշակ կրկռում, և նրանց արձագանք են տալիս չարերը և ցածերը ձեռք ձեռքի բռնած յիմարների և անհասկացողների հետ: Իսկ սարի գագաթը դեռ այնքա՜ն հեռու է, չէ երևում, ամպերի մէջ է... Արևն էլ կարծես մթնացել է, չէ լուսաւորում: Ի՞նչ է սպասում մեզ: Կը տանե՞նք արդեօք բեռը մինչև գագաթ և նա այնտեղից կը գլորվի վայր թէ՞ նա ճանապարհին կը ջարդէ մեր ուսերը և կընկնի ձեռներիցս: Չը գիտեմ: Միայն չը յուսահատվենք: Երթանք, բարձրանանք, թանգագին, ծանր բեռը ուսներիս... առաջ... առաջ...

Տանենք, միշտ տանենք...

Այդ բեռը մերը չէ, բոլոր ազգերինն է:

Այդ բեռը մեզ համար էլ չէ... նա պէտք է բոլոր ազգերի երջանկութեան համար...

Չը խնայենք ուրեմն ջանքեր:

Ապագայ սերունդը կը հասկանայ, կը գնահատէ հայերիս ջանքերը և գլուխը կը խոնարհէ անկեղծ, շիտակ հրապարակախօսների վեհ յիշատակի առաջ, որ այնքան դաժան, ծանր աշխատանք և զրկանք կրեցինք յանուն ազգերի համերաշխութեան...

Առաջ... առաջ...

1913

ԿԻՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՉԷ

Դատաւորների առաջ կանգնած էին երկու հոգի, երկուսն էլ տխուր, գլխակոր, հալված, մաշված,—մէկը տղամարդ էր, իսկ միւսը մարդ չէր, միայն ուրուական, կնոջ ուրուական։

Դատաւորները մեղաւոր ճանաչեցին տղամարդուն։ Եւ մինչդեռ բոլորը յուզված լսում էին վճիռը, ես մտածում էի,—որչափ խեղճ, դժբաղդ ուրուականներ շրջում են, թափառում մեզանում և երբէք չեն էլ տեսնում դատարան։ Նրանց վիշտը, արտասուքները չեն ելած փողոց և հրապարակ. մենք նրանց համարել ենք երջանիկ, բաղդաւոր ամուսիններ, և սառը խոնաւ գերեզմանը առմիշտ խլել է մեզանից և ամուր է պահում նրանց գաղտնիքը... Նրանց գաղտնիքը, որ մեր գաղտնիքն է և որին ծնունդ է տուել մեր այն համոզմունքը, թէ կինը մեր սեփականութիւնն է։ Մեր սեղանը, մեր աթոռները, մեր բոլոր կահ-կարասիքը այն աստիճան սեփականութիւն չեն, ինչպէս կինը։

Նախանձը և կասկածը այրում են մեր փոքրոգի սրտերը։ Մենք պահանջում ենք, որ կինը մեզ պատկանի ամբողջ մարմնով, ողջ հոգով, անգամ երազներում, և մենք պահանջում ենք, որ նա, այդ թոյլ էակը, օրօրոցից սկսած միայն մեզ սիրէ, պաշտէ։

Նախանձը և կասկածը չը գիտեն չափ և սահման, չը գիտեն ինչ է ժամանակը։ Ներկան և ապագան չեն բաւական, մենք պահանջում ենք կնոջից և անցեալը, անցած տարիները, անցած ամիսները, անցած օրերը և անցած ժամերը,—մեզ պէտք են բոլորը։ Կնոջ բոլոր անուշ, քաղցր խօսքերը, կնոջ բոլոր ժպիտները մեզ, միայն մեզ պէտք է պատկանեն։ Կինը պէտք է լինի մեր սեփականութիւնը... Մենք, տղամարդիկս, մենք ջոկ բան ենք, մեզ համար չը կան պատեր, սահմաններ։ Մեր անցեալը կարող է լինել ցեխ, մեր ներկան—ցեխ, մեր ապագան—ցեխ։ Ո՞վ իրաւունք ունի մեզ դատել։ Կինն է միայն սեփականութիւն...

Ճշմարիտ է, որ մենք համբուրում ենք կնոջ ձեռները, կնոջ շորերը, անգամ հողը, որի վրա կանգնած է մեր սիրած, պաշտած կինը, և սակայն որչափ աւելի սիրով համբուրում ենք, այնչափ էլ աւելի պահանջում ենք, որ կինը լինի և միայ մեր սեփականութիւնը...

Ոհ, դա մեծ սխալ է, ծանր յանցանք է։

Կինը կարող է միայն մեր ընկերը լինել և, իբրև ընկեր, նա պէտք է լինի մեզ հաւասար ամեն կողմից։ Մի՛ համբուրեք կնոջ ձեռները, կնոջ շորերը, մի՛ համբուրեք հողը, որի վրա նա կանգնած է, մի՛ համբուրեք, որովհետև դուք նրան չէք սիրում, միայն ստոր կիրքը յուզում է ձեր կուրծքը և վառում է ձեր տաք արիւնը։ Այո, դուք չէք սիրում, որովհետև կինը կարող չէ լինել միևնոյն ժամանակ և կուռք և ստրուկ։ Թող չը լինի ձեզ համար կինը կուռք, թող լինի նա ձեր ընկերը և նա կը դադարի այնուհետև լինել ստրուկ։

Իմ խօսքս հայ մայրերին. նրանց ձեռներումն է մեր սերնդի դաստիարակութիւնը։ Թող ամեն մի մայր այսուհետև քարոզէ իր տանը, որ կինը կուռք չէ, բայց և ստրուկ էլ չէ և, իբրև ազատ մարդ, երբէք կարող չէ ուրիշի սեփականութիւնը դառնալ։

Եւ այն գեղեցիկ օրը, երբ մենք բոլորս կը համոզվենք, որ կինը սեփականութիւն չէ, որ նա կարող չէ լինել ոչ կուռք և ոչ ստրուկ, մեր ամուսնական կեանքը կը դառնայ երջանիկ, նախանձելի, և այդ գեղեցիկ օրը մենք էլ՝ տղամարդիկս կաշխատենք, որ մեր անցեալը և մանաւանդ ներկան և ապագան չը լինեն միայն ցեխ...

Աշխատեցէք, հայ մայրեր, սերմանել օր առաջ բարի սերմը. շտապեցէք համոզել ձեր սիրելի և նազելի զաւակներին, որ կինը մեր սեփականութիւնը չէ և երբէք չէ էլ կարող մեր սեփականութիւնը լինել...

1896

ԿԱՆԱՆՑ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻՆ ԱՍՏՈՒԱԾ ՍՏԵՂԾԵՑ ԺՊԻՏՈՎ

(«Մշակի» Յոբելեանական Կանանց Մասնաժողովին նուէր)

Կանանց և ծաղիկներին Աստուած ստեղծեց ժպիտով...

Աստուած նայեց դրախտին:

Կարկաչահոս աղբիւրները թաւալում էին ոսկի, մարգարիտ, ադամանդ: Բիւրաւոր գեղեցիկ թռչուններ թեթև օդի մէջ պարզում էին համարձակ թևերը, երգելով այն երգը, թէ ինչպէս Արարիչը ջուրը բաժանեց հողից: Կանաչ դաշտերում, վայրերում, անտառներում անասուններ և գազաններ, իրար խառնուած, խաղաղ հանգստանում էին. կարծես երկինքը օրհնելիս և նրանց մէջը ման էր գալիս Ադամը վայելչակազմ, յաղթանդամ, իսկական Աստուծոյ պատկերը...

Աստուած նայեց դրախտին:

Նայեց և ժպտաց: Մարդկային չէր այդ ժպիտը և նա չը մնաց: Արեգակի լոյսի պէս նա շքեղ ցոլաց, փայլեց ողջ աշխարհի վրա... Բարձր սարերի գագաթների վրա այդ ժպիտից հալվեց ձիւնը, սառոյցը, իսկ կանաչ դաշտերում, վայրերում և անտառներում հողի տակից դուրս եկան համեստ անթառամ ծաղիկը և մկնականջը, ամաչկոտ շուշանը և մանուշակը, անուշահոտ յակինթը, մեխակը և յափրուկը, սառնասիրտ աստղածաղիկը, կակաչը և դէորգինը և նրանց հետ բոլոր ծաղիկների անզուգական թագուհին՝ վարդը, գոյնզգոյն՝ կարմիր, սպիտակ, դեղին, անուշաբոյր հոտով, գոռոզ բարձրացնելով իր գլուխը և խանդով թագցնելով իր թփի մէջ անմահ սիրոյ երգչին՝ սոխակին...

Աստուած նորից նայեց դրախտին:

Նայեց և դարձեալ ժպտաց:

Այդ ժպիտը չը մնաց: Արեգակի լոյսից աւելի նա կրկին և աւելի շքեղ ցոլաց, փայլեց ողջ աշխարհի վրա, և այդ ժպտից յանկարծ ծաղիկների միջից բարձրացաւ և իր արքայական,

շքեղ և հպարտ գեղով զարմացած և հիացած Ադամի կողքին կանգնեց Եւան...

Կանանց և ծաղիկներին Աստուած ստեղծեց ժպիտով...

Եւ այդ ժպիտը չը մնաց: Նա ապրում է ծաղիկների անուշահոտ բուրմունքի մէջ և մեր կանանց համեստութեան և գեղեցկութեան մէջ...

Այդ ժպիտով մենք հպարտ ենք, այդ ժպիտով մենք ապրում ենք և ուրախանում, այդ ժպիտով մենք գործում ենք, կռւում ենք, մաքառում...

Մէկիս համար դա մայր է հոգացող, որ անքուն գիշերներ մեզ համար է շարունակ մտածում և երազում. սուրբ մտածումներ, սուրբ երազներ. միւսի համար դա հեզ քոյր է կամ աղջիկ հնազանդ, որ մոռանալով իր անձնական երջանկութիւնը նուիրվել է մեզ. ազնիւ սրտերի ազնիւ զոհաբերութիւն. շատերի համար դա սիրող կին է, ընկեր մտերիմ, որ մեր ձեռքը ամուր բռնած գնում է միասին, չը շեղվելով ճանապարհից և հաւատալով մեզ... Երջանիկ զոյգեր...

«Մշակի» 40-ամեակի նախօրեակին, երբ մենք բոլորս յիշում ենք մեր անմահ Գրիգոր Արծրունուն, երբ մենք հաւատացնում ենք, թէ յարգում ենք, սիրում ենք, պաշտում ենք նրան, այնպէս չէ՞, կը լինէր մեր կողմից թուլութիւն, գուցէ կեղծաւորութիւն, անգամ ցածութիւն, եթէ մենք մի րոպէ տատանվէինք, մի րոպէ ամաչէինք յիշելու այն բարի, ազնիւ կնոջ անունը, որը իր կեանքը միացրել էր Գր. Արծրունու կեանքի հետ սիրով, անսասան, ամփշտ...

Դա Մարիա Կարամանօֆեան է, յայտնի պ. Ադամալեանի աղջիկը:

Կարճ է նրա կեանքի պատմութիւնը: Բազմակողմանի զարգացած, հմուտ եւրօպական լեզուների, այն ժամանակվայ համար բաւականին բարձր ուսում ստացած, նա չը գտաւ ամուսնութեան մէջ իր երազած երջանկութիւնը: Նա բաժանվեց իր ամուսնուց, սիրեց Գր. Արծրունուն և ապահարզան ձեռք չը բերած՝ եկաւ Թիֆլիս և իբրև կին ապրեց նրա հետ:

Իբրև կին...

Բայց նա պսակված չէր, իսկ կնոջ տիտղոսը տալիս է չափաբերական մատեանի վկայութիւնը:

Չափաբերական մատեանը ինչ կեղծիք կուզէք կը ծածկէ: Փոխադարձ ատելութիւն, թշնամութիւն, նախանձ և ամէն տեսակ ցածութիւն, ստորութիւն...

Կին չէ նա, ով ձեզ սիրում է, որ ձեզ համար իր անձը

զոհն է, ով պատրաստ է ձեր երջանկութեան համար կրել ամեն տեսակ զրկանք և զոհ։ Ձեր կինը նա է, ով ձեզ խաբել է, յափշտակել, տնից փախել ուրիշի հետ, բայց որի անունը գրված է չափաբերական մատեանում։

Այն ժամանակվայ հասարակական կարծիքը աւելի խիստ էր և աւելի կեղծաւոր։ Անգամ մեր գիտակցական դասի համար չափաբերական մատեանից դուրս կնոջ համար չը կար փրկութիւն։ Տղամարդու համար բոլոր ճանապարհները լաւ են։ Նրանից ոչ ոք ոչինչ իրաւունք չունի պահանջելու։ Նա է տէրը և դատողը։ Իսկ կնոջ համար կայ չափաբերական մատեան։ Կնոջ պատիւը չափաբերական մատեանի վկայութիւնն է։

Սէր, սրտի, հոգու, մարմնի պահանջ, կնոջ մէջ ամեն ինչ թող լռէ։ Արտաքոյ չափաբերական մատեանի վկայութեան նա ստրուկ է, զուցէ մինչև այժմ, ստրուկ, մատնված մեր բուռն տենչերին և մեր արհամարհանքին...

Մեծ հրապարակախօսի թոյլ հակառակորդները իրանց ողորմելի առարկութիւնները հարստացնում էին բամբասանքներով...

Անտեղի, կոպիտ, տգեղ ակնարկներ, անամօթ, ժպիրհ հայեացքներ խորը վիրաւորում էին, տանջում, մաշում Գրիգոր Արծրունուն...

Մարիա Կարամանօվեան այդ բոլորը զգում էր և հեզ, խոնարհ տանում էր խաչը և բարձրանում էր ամուսնու հետ միասին իրանց երկուսի Գողգոթան... Ծիծաղ, ժպիտ՝ վաղուց նա մոռացել էր։ Զոհելով իր անձը իր սիրած մարդու համար, նա հանգստացնում էր միշտ կրակոտ Գրիգոր Արծրունուն, որ այնպէս շուտ տաքանում էր, մանաւանդ որ տեսնում էր վիրաւորանք մօտ բարեկամներից։

Ես յիշում եմ նրա կեանքում այնպիսի րոպէներ, երբ կարծես ողջ Թիֆլիսում մի մարդ մնացած չէր, որ անկեղծ բարեկամ լինէր։ Այդ դաժան, ծանր և դառն րոպէներին Մարիա Կարամանօվեան միշտ մտերիմ, սիրելի, օգտակար, քնքոյշ նեցուկ-ընկերն է մնացել մեծ հրապարակախօսի համար։

Նա հսկել է, խնամել է նրան իբրև դայեակ, իբրև մայր, իբրև կին...

Կի՜ն...

Մի՛ հաւատաք. առէք, նորից թերթեցէք ձեր չափաբերական մատեանը։ Գրիգոր Արծրունու կողքին դուք կը գտնէք նրա կնոջ՝ Մարիա Կարամանօվայի անունը։ Նրանք պսակված են, պսակված են փոխադարձ յարգանքով, սիրով, մտերմու-

թեամբ, հաւատարմութեամբ և հաւատով։ Թերթեցէք լաւ ձեր չափաբերական մատեանները. դուք կը տեսնէք, որ Մարիա Կարամանօվեան Գրիգոր Արծրունու կինն է, կինն է առաջի Աստուծոյ և մարդկան։

Կանանց և ծաղիկներին Աստուած ստեղծել է ժպիտով։

Մարած չէ այդ ժպիտը և ոչ մեռած։

Նա ապրում է ծաղիկների անուշահոտ բուրմունքի մէջ, նա ապրում է մեր կանանց համեստութեան և գեղեցկութեան մէջ...

Գրիգոր Արծրունու համար՝ դա Մարիա Կարամանօվեան էր. այո՛, նա է եղել նրա իսկական կինը։

Ի՞նչ։ Դուք չէ՞ք գտնում նրա անունը ձեր մատեանների մէջ։ Փակեցէ՛ք, փակեցէք ուրեմն ձեր ողորմելի չափաբերական մատեանը։ Նա ստում է, կեղծում այսօր։ Մեզ համար ճշմարտութիւնը պարզ է։ Անկարող է և անզօր բամբասանքի խայթը։ Մարիա Կարամանօվայի անունը մնում է մեզ համար մաքուր և սիրելի։

Մենք ընդունում ենք նրան իբրև Գրիգոր Արծրունու կնոջ, ինչքան էլ ստեն ձեր բոլոր մատեանները։

Նա կինն է մեծ հրապարակախօսի։

Որովհետև կանանց և ծաղիկներին Աստուած ստեղծեց ժպիտով։

Որովհետև Մարիա Կարամանօվեան Գր. Արծրունու կեանքի ժպիտն էր...

Յանուն այդ չարքաշ կնոջ, որ այնքան տանջվեց, քանդվեց հազարումէկ բամբասողներից և բամբասանքներից. յանուն Գր. Արծրունու, որ մաքառում էր ողջ կեանքը վեհ ու ազնիւ գաղափարների համար, այսօր եկէք մտածենք ուրիշ Մարիա Կարամանօվեանների մասին, մտածենք այն կեղծիքի մասին, որ կայ մեր չափաբերական մատեանների մէջ, աշխատենք թեթևացնելու ապահարզանը, որ շունչ տանք հազարումէկ խեղճերին...

1911

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱՅԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, սեպտեմբերի 23-ին, գեղեցիկ, տաք, ամառնային օր, երկինքը ժպտում է, ինչպէս այն օրը, երբ ինը տարի սրանից առաջ մենք թաղում էինք Գամառ-Քաթիպային: Սուրբ Խաչի բակը գեղեցիկ զարդարված է դրօշակներով և կանաչ զալարէ կամարներով: Կամարները բարձրանում են և արձանի վրա: Դեռ թաղումից մնացած 18 պսակները կախված են կամարներից: Արձանի պատուանդանի տակը երեք աստիճաններ են, ցածինը—մանրանկար, մնացած երկուսը տաշած սև լաբրադօրաքարեր: Երկու գեղեցիկ կարմիր հատաքարեր, որոնց վրա դարձեալ մի փոքր սև լաբրադօրաքար և այդ լաբրադօրաքարի վրա ամրացած կիսարձանը: Ընդամենը արձանը ունի բարձրութիւն 5 արշին և ծանրութիւն 500 պուդ: Արձանը շքեղ է և լաւ տպաւորութիւն է թողնում ամեն կողմից և մեծ պատիւ է բերում մեր երիտասարդ քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանին, որի տաղանդը, շնորհքը և ճաշակը աչքի են ընկնում իսկոյն, արժանի են մեր ուշադրութեան և կարօտ են գնահատութեան:

Վերևը փորագրված է $\frac{8\ \text{XI}\ 1830}{22\ \text{VIII}\ 1892}$

Եւ յետոյ հետևեալը.

Մի կարծէք որ ես սին փառքի համար
Իմ հառաչանքով լցրի... աշխարհ.
Այս հէգ ամբոխի ծափին ու գովքին
Կարօտ չէր բընաւ իմ հպարտ հոգին...
Այո, իմ քնարի տխուր ձայները
Ցընցեցին հայի հոգու լարերը,
Արիւն էլ ազնիւ սըրտէ քամեցին,
Կըտրիճի աչքէ քունը փախուցին:

Ստորին քարի վրա փորագրված է.

Մեղքըցիր քեզի ու քու զաւակիդ,
Պահպանէ հաւատ, լուզուն խեղճ ազգիդ,
Ու անկէ էտև չի ցաւիլ հոգիս,
Թէ որ տուն ինձի չի սիրես, ատիս...

Եփ որ շատ տարի կանցնեն ու կերթան
Ու օսկօսներուս իզն ալ չէ մնալու,
Հմյվախ, խեղճ հայեր, ձեր որդիք կուգան
Պապերուն մեղքը փողխ վրա լալու:

Երկրորդ երեսում դրված են հետևեալ երկու տողերը.

Բանաստեղծ, ինչ փոյթ, որ քու սըրտի մէջ
կան վըշտեր հազար,
Չէ՞ որ քու վըշտից պիտ՝ ծագի պտուգամ
քու ազգի համար:

Նաև մասում փորագրած է՝ Գա մա ռ
Քա թի պա,

կարծես երեք քարերի վրա, իրարից բաժանած, ակնարկութիւն գրականական ընկերութեան Գ. Քանանեանի, Մ. Թիմուրեանի և Ռ. Պատկանեանի: Ստորին լաբրադօրաքարի վրա դրված է քնար, ժապաւէնների վրա գրած Ռափայէլ Պատկանեան: Ծաղիկները պատրաստ չեն: Աստիճանների մօտ փռված է կարմիր մահուդ, որի վրա դրած են տասներկու պսակներ՝ շքեղ արծաթեայ—Մօսկվայի հասարակութիւնից, մետաղից և ծաղիկներից հետևեալ հաստատութիւններից.—«Մշակի» խմբագրութիւնից, Նոր-Նախիջևանի քաղաքային վարչութիւնից, արհեստաւորաց, Գօգոյեան, թեմական դպրոցներից, եկեղեցական հոգաբարձութիւնից, թատերասիրաց ընկերութիւնից, հայուհեաց ընկերութիւնից, բարեգործական ընկերութիւնից, Մօսկվայի ուսանողներից, Նոր-Նախիջևանի կանանցից և օրիորդներից: Պատարագիչը վանահայրն է, Վահան վարդապետը. Ներկայ են յաջորդ Մուշէ վարդապետ, քաղաքի բոլոր աչքի ընկնող քահանաները և երգեցիկ խումբը: Հոգեհանգիստը չը վերջացած, արձանի առաջ խօսում է Գր. Չալխուշեանը: Ահա նա ինչ ասաց.

«Որովհետև սկզբից մինչև այսօր յանձնաժողով եղած չէ և մենք ենք գործին գլուխ կանգնած, մեր վրա ծանրանում է պարտք տալ հաշիւ, մի կարծէք,—նիւթական, ոչ. նիւթական հաշիւ մենք տուել ենք և դեռ պիտի տանք մեր մամուլի միջոցով. ես խօսում եմ բարոյական հաշւի մասին:

«Գամառ-Քաթիպան թողել է հետևեալ կտակը.

Կեանքիս մէջ մի հատ սին փառք ունեցայ,
Սուրբ Էջմիածնում թաղվել ցանկացայ.
Սիրեկան իմ ազգ, թէ Աստուած սիրես,
Այս իմ մի հատիկ խղձըս կատարես:

«Խոնարհվելով այդ կամքի առաջ, մենք դիմեցինք ուր հարկն էր, գրով, անձամբ, բայց անկարող եղանք մեծ բանաստեղծի մի հատ վերջին խղձը կատարել... Այնու ամենայնիւ, թէ թաղման ժամանակ, թէ այժմ արձանը կանգնելիս, մենք աչքի

առաջ ունեցել ենք այդ հանգամանքը, և եթէ մի օր ստացվի թոյլտուութիւն, մարմինը կարելի կը լինի տեղափոխել և կատարել... Մեզ համար մի տեսակ մխիթարութիւն է, որ մենք ժամանակին կարողացանք թաղել նրան այստեղ։ Չէ՞ որ ս. Խաչն էլ ս. Էջմիածնի թէև հեռացած, բայց և անբաժանելի կտորն է. չէ՞ որ մեծ բանաստեղծի կողքին կանգնած է մեծ հրապարակախօսը։ Եւ մտնելով վանքի տաճարը և իջնելով եկեղեցու սանդուղքներից, մենք միշտ պիտի տեսնենք երկուսին, կողք կողքի կանգնած, տեսնենք և ճանաչենք մէկի քնարի հանճարը, միւսի սուր գրիչը, մէկի «Հիմի է՞լ լռենքը», միւսի «Հիմի է՞լ խօսենքը», մէկի «Հայկ ու Լևոնին մոռանանք, եղբարքը», միւսի «Հայկ ու Լևոնին յիշենք, եղբարքը»...

«Հասարակութեան և մամուլի առաջ մենք պատասխանատու ենք ամեն մի տողի, ամեն մի խօսքի համար, որ փորագրըված են արձանի վրա։ Մենք ցանկացել ենք, որ բանաստեղծը ինքը խօսէ իր արձանից, ի՞նչ էր, ինչո՞ւ էր նա երգում, ի՞նչ էր նրա վիճակը և ի՞նչ էր նա սպասում մեզանից... Կարօտ չէր սին փառքի մեծ բանաստեղծը և արհամարհում էր մեր գովքը և ծափը։ Եւ սակայն նա երգում էր, որովհետև աստուածային կրակը վառված էր նրա կրծքի մէջ և այրում էր։ Իսկապէս երգ էլ չէր նրա երգածը, այլ հառաչանք, ծանր հառաչանք հայ աշխարհի։ Քամելով «ազնիւ սրտէ արիւնը և փախցնելով կորիճի աչքէ քունը», հառաչանքը դառնում է պատգամ մեր ազգի համար։ Այդ պատգամն է—պահպանէ՛ հաւատդ և լեզուդ։ Բայց, ափսոս, դառն էր բանաստեղծի վիճակը։ Պատգամը ծագում էր նրա հազար ու հազար վշտերից և վշտերը ծանր էին և մաշում էին, քանդում նրա կուրծքը. փոխանակ սիրոյ և յարգանքի, տեսնելով շուրջը ատելութիւն և սառն անտարբերութիւն. Նա երազում էր, որ կը գայ նրա համար էլ վերջապէս մի օր, մի պայծառ օր. նրա ոսկորների հետքն էլ մնացած չեն լինի, հայերը պիտի վազեն, գան, չոքեն նրա գերեզմանի վրա, «պապերուն մեղքը փողի վրա լալու»։

«Մարգարէութիւնը կատարվեց։ Մենք վազել ենք, եկել, կանգնել նրա հողի վրա։ Բայց մենք չենք լալիս։ Այստեղ արտասուքի, լացի տեղ չէ. այստեղ ցոլում է անմահութեան քաղցր և թարմ ժպիտը։ Կանցնեն տարիներ, դարեր, կը մամռոտի արոյրէ կիսարձանը, կը մաշվի հատաքարէ պատուանդանը, ի՞նչ փոյթ, այդ քաղցր և թարմ ժպիտը կը մնայ կանգուն կապոյտ երկնքի նման։ Ուրեմն ցածր, ցածր խոնարհեցէք ձեր գլուխները մեծ անուան, հանճարի և յիշատակի առաջ։

Ռափայէլ Պատկանեանը մեռաւ, բայց Գամառ-Քաթիպան կարող չէր մեռնել, նա մնաց։

«Արժանապատիւ հայր, հայ ազգի բերանից, հայ ազգի անունից ես դիմում եմ ձեզ, ես յանձնում եմ ձեզ այս արձանը և, յանձնելով, սիրում եմ հաւատալ, որ այսուհետև թէ ձեր, թէ ձեր յաջորդների ամենավսեմ և ամենասիրելի պարտքերից մինը կը լինի հոգալ այս արձանի մասին»...

Մոսկվայի պատգամաւոր բանաստեղծ Ալ. Ծատուրեան կարդաց Մոսկվայի ուսանողների գեղեցիկ և զգացված ուղերձը։ Միւս պատգամաւոր երդուեալ հաւատարմատար Ստ. Մամիկոնեան, պարզելով ժողովրդին բանաստեղծի նշանակութիւնը, մատնանիշ արեց, որ պէտք է հետևել նրա օրինակին։ Արհեստաւորաց դպրոցի ուղերձից յետոյ Ալ. Ծատուրեանը կարդաց հետևեալ ոտանաւորը՝

Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնի՛դ է կարօտ
Մեր հոգին էրված, մեր սիրտը եարոտ...
Սև սուգ է պատել մեր կեանք ու օրին,
Սև թուխպ է կապել մեր սար ու ձորին.
Վա՜յ, սև գիշերն է մեր կեանքը մաշում,
Քո լոյս-երգերի կարօտն ենք քաշում
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնի՛դ ենք կարօտ,
Չե՞ս երգում էլ մեզ գարնան առաւօտ...
Մեր օրն ու արև մըթնել, սևացել,
Դըժոխքի դուռն է մեզ կեանքը բացել,
Բաղդն էլ մեզանից երես շուռ տուել,
Խեղճ հային կրակի բերանն է գցել.
Էրվում ենք անմեղ, սըրտներս եարոտ՝
Քո գեղ ու դարման երգին ենք կարօտ։
Սարէ-սար ընկած՝ մենք վա՜յ ենք կանչում,
Բաղդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում,
Քաղցած ենք, ծարա՛ւ, անտէ՛ր, խղճալի՛—
Հաց, ջուր ենք ուզում՝ մեզ թոյն են տալի.
Մեր ճամբէն դըժուար, մեր ճամբէն քարոտ.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ...
Լեզուով չի պատմվի հայի դարդ ու ցաւ,
Հայի արիւնով աշխարհ ներկվեցաւ.
Սիրտն է մըխկտում, սիրտն է սևանում,
Ոչով մեր ձէնին ականջ չի անում.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, երգի՛դ է կարօտ
Էս սև օրերին մեր սիրտը եարոտ...
Բլբո՛ւլ, դու մեզ հետ տանջվում ու լալիս,
Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս.
Դու ասում էիր—ա՜զգ իմ, մի՛ սգա,
«Յուսով եմ, վաղ ուշ գարունը պիտ՝ գայ»։

Բայց, ա՛խ, չը տեսանք գարուն վարդահոտ.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

Հոգեհանգիստը վերջացաւ։ Միքայէլ Նալբանդեանի վրա դրված էր մի շքեղ պսակ նոյնպէս Մոսկվայի հասարակութիւնից, և սկսվեց հոգեհանգիստը Նալբանդեանի գերեզմանի վրա։ Հասարակութիւնը մեծ էր։ Ոստիկանապետը, քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամները, հիւրերը բոլորը ժողովվեցին վանքի պատշգամբը ճաշելու։ Մօտաւորապէս 120 հոգի էին։

Ճաշին Թեմական դպրանոցի տեսուչը կարդաց Գր. Ջալալխուշեանի ստացած հետևեալ հեռագիրները.— Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսից, Աստրախանի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսից, Ղարաբաղի Թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանից, «Մշակի» խմբագրութիւնից, «Մուրճի» խմբագրութիւնից, Գաբ. Սունդուկեանից, Սմբատ Շահազիզեանից, Գէորգ Բարխուդարեանից, Պ. Պռօշեանից, Երևանի Թեմական դպրանոցի ուսուցչական խմբից, «Լումայի» խմբագրութիւնից, Շուշու հայոց հոգևոր դպրանոցի ուսուցչական խմբից, բժիշկ Նաւասարդեանից, Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնից, երդուեալ հաւատարմատար Տէրեանից, ուսուցչապետ Խալաթեանից, բանաստեղծի զաւակներից, Եալթայի հասարակութիւնից, Կարսի հասարակութիւնից և այլն։

Ճաշի ժամանակ խօսեցին Մուշէ վարդապետը, Գր. Ջալալխուշեանը, Ստ. Մամիկոնեանը, Եր. Շահազիզը և Վ. Բիրլեանը։ Թէ ճառերը, թէ հեռագիրները ժողովուրդը ընդունում էր բուռն ծափահարութեամբ։ Երկու պատգամաւորներից ջոկ Մոսկվայից եկել էին երեք երիտասարդ վաճառականներ։ Այս վերջիններից մինը, պ. Պօղոսեան, իմանալով որ Գր. Ջալալխուշեանի տրամադրութեան տակ գտնվող գումարը փոքր է, գիջելով ժողովրդի ցանկութեանը, յօժարութիւն յայտնեց նուիրել Էջմիածնի Թանգարանին Գամառ-Քաթիպայի արոյրէ կիսարձանը, որը կարժենայ մօտաւորապէս 400 րուբլի։ Առհասարակ պէտք է ասած, որ Մոսկվայի ներկայացուցիչները մեծ կենդանութիւն տուեցին հանդէսին։ Զարմանալի բան է, որ միւս քաղաքներից ոչ ոք չը կար։ Ստացանք միայն հեռագիրներ, այն էլ ոչ ամենից։ Օրինակի համար, ժողովրդի սրտին մեծ ցաւ էր, որ Գամառ-Քաթիպայի արձանի բացման օրը չը ստացանք կոնդակ։ Մեր բոլորիս ցանկութիւնն էր կոնդակով բանալ արձանը։ Մինչև վերջին րօպէն մենք սպասում էինք և հաւատում

էինք, որ կը ստանանք, մեր յոյսերը խաբուսիկ էին և կոնդակը չեկաւ։ Եւ սակայն Գամառ-Քաթիպան ողջ կեանքում Էջմիածնի ամենաջերմ պաշտպանն էր։ Յարգելով մեծ բանաստեղծի գաղափարները, պ. Ջալալխուշեանը թոյլտուութիւն խնդրեց Մոսկվայի պատգամաւորներից արծաթեայ պսակը ուղարկել Էջմիածնի Թանգարանը։ Այս պսակը կը յանձնվի պ. Տէր-Մարուքեանին, որը անձամբ կը հասցնէ նրան տեղ։ Հանդէսի գեղարուեստական մասին հսկում էր պ. Ղուկաս Ալաճալեանը, որը գեղեցիկ զարդարեց վանքի բակը։ Ճաշի ժամանակ կարգադրիչներ էին Եր. Շահազիզ և Վ. Բիրլեան և թէև բազմութիւնը մեծ էր, ամեն բան կարգին էր։

Ճաշից յետոյ դեռ երկար ժողովուրդը չէր հեռանում և, սեղանի շուրջը նստած, խօսում էր մեր առօրեայ չար ու բարիի մասին, ցաւելով որ, ինչպէս պ. Շահազիզն իր ճառի մէջ գեղեցիկ շեշտեց, մենք շուտ ենք մոռանում ամեն բան և շուտ ենք մոռանում և մեր բանաստեղծներին և նրանց գաղափարները։ Պ. Ջարբխչեան, ժողովրդի ցանկութեան համաձայն, գեղեցիկ կերպով կարդաց Գամառ-Քաթիպայի երկու ոտանաւորները, իսկ պ. Ծատուրեանը կրկնեց իր ոտանաւորը. ներկայ եղողները բուռն ծափահարում էին։

Հանդէսից յետոյ վերադառնալով ս. Խաչից քաղաք, մենք գտանք սեղանի վրա հետևեալ հեռագիրները,—արքեպիսկոպոս Սուքիասից, Ներսիսեան դպրոցի տեսչից և ուսուցիչներից, բանաստեղծի զաւակներից, Մոսկվայի ուսանողներից, Բալախանիի Русское нефте-промышленное ընկերութեան ծառայողներից, Աղստաֆայից, վարդապետ Գարեգին Յովսէփեանից, Երևանի երկրպագուների մի խմբից, պ. Թիմուրեանից, Էջմիածնի հոգևոր ակադեմիայից, Պետերբուրգի ուսանողութիւնից և հասարակութիւնից և նամակ Գէորգ Դոդոխեանից։

1901

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Անցեալ տարի, սեպտեմբերի 23-ին, կիրակի, մենք բացինք Գամառ-Քաթիպայի արձանը։

Այսօր, նոյնպէս սեպտեմբերի 22-ին, կիրակի, մենք բանում ենք Միքայէլ Նալբանդեանի արձանը նոյն ս. Խաչ վանքում։

Հրաւէրներ ցրված չեն, ներկայ են մօտաւորապէս 30 մարդ։ Հանդէսը համեստ է։ Օրը զարմանալի օր է, յիշեցնում է իրան Նալբանդեանի ալեկոծ կեանքը։ Ցուրտ, սաստիկ քամին փչում է, տանում է։ Ամպերը պատառ-պատառ փախչում են երկնքի կամարի վրա և սակայն արեգակը առատ թափում է իր փայլը։ Զարմանալի է և այն, որ հեռու մեզանից՝ Պարիզում այսօր թաղում են Էմիլ Զօլային։ Երկուսն էլ յայտնի գրողներ և գործիչներ։ Զօլան հարուստ երկրի բաղդաւոր զաւակ և Նալբանդեան՝ աղքատ երկրի աղքատ զաւակ։ Երբ Զօլան դուրս է գալիս հայրենիքի դաշտը բարութեան, ճշմարտութեան սերմերը սերմանելու, նա տեսնում է ամեն կողմից սէր, յարգանք, կարեկցութիւն և գործում է լուսաւոր երկրում լուսաւոր ազգի մէջ և մեռնում է պաշտված, հասկացված։ Խեղճ Նալբանդեանը գործում է ողջ կեանքը մութի, խաւարի մէջ, մաքառելով մութի, խաւարի հետ և մեռնում է չը հասկացված, ատված և մոռացված։

Եւ մինչդեռ վանահայր Վահան վարդապետը կարդում է Աւետարանը, ես մտաբերում եմ հպարտութեամբ, թէ ինչ է մեզ թողել իբր ժառանգութիւն 35 տարեկան Միքայէլ Նալբանդեանը և ինչ թողել է Ֆրանսիային մօտ 60 տարեկան հասակին հասած Զօլան։

1866-ին նա մեռաւ։ 36 տարուց յետոյ նա վերջապէս ունի իր արձանը, որը լաւ տպաւորութիւն է թողնում և պատիւ բերում մեր երիտասարդ քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանի տաղանդին։

Մոխրագոյն հատաքարից տաշած է գեղեցիկ կիսաբոլորակ fantaisie, որը իջնում է երկու կիսաբոլորակ աստիճաններով. հատաքարի միջից սկսվում է սիւն, որի վրա արդէն բարձրանում է մարմարեայ սիւն. վերջինիս վրա ամրացած է դափնեայ ճիւղ արոյրից շինած։ Սիւնը վերջանում է կիսարձանով և ունի իր վրա գրած հետևեալ խօսքերը՝ Միքայէլ Նալբանդեան. М. Л. Налбандіану. 27 X 1830—30 III 1866։

Կիսարձանը պատկերացնում է մեզ 25՝ տարեկան երիտասարդ Միքայէլին և առնված է նրա 1856 թւականի պատկերից, որը գտնվում է Գր. Սալթըքեանի մօտ. նմանութիւնը աչքի է ընկնում։ Ձեր առաջին մի եւրոպացի է. և դա բնորոշ է, որովհետև նա ողջ իր կեանքը մեզ՝ ասիացիներիս եւրոպականութիւն էր քարոզում։

Այժմ ս. Խաչ վանքում կողք կողքի են կանգնած Ռափայէլ Պատկանեանը և Միքայէլ Նալբանդեանը։

Մենք բացինք երկուսի արձաններն էլ։

Նրանց երկուսի երկերի լոյս ընծայելու հարցը որոշել է արդէն Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, որը հաւաքում է նիւթեր։

Բաւականանա՞նք։

Բաւականանա՞նք արդեօք կանգնելով արձաններ և հրատարակելով նրանց երկերը։

Ես կասեմ՝ ոչ։

Փոքր և խեղճ չը մնալու համար պէտք է միշտ յիշել, սիրել, յարգել մեծերին։

Եւ մենք կը ցանկանայինք մի կ ե ն դ ա ն ի արձանով անմահացնել այդ սիրելի անունները։

Ամենագեղեցիկ կենդանի արձանը կը լինի հեռու Պարսկաստանի խուլ անկիւններից մէկում մի դպրոց, տարրական կամ միջնակարգ, դա կախված կը լինի գումարից, այո, մի դպրոց բանալ յիշատակ Ռափայէլ Պատկանեանի և Միքայէլ Նալբանդեանի։

Ահա մեր պարտքը։ Երազ է նա դեռ։ Բայց որչափ սիրելի կը լինէր մեզ համար այդ երազը իրագործել և այդ մեծ պարտքը կատարել...

1902

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՄԱՀՎԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

I

Տարօրինակ ամառ է այս տարի՝ առանց արեգակի, առանց շոգերի. ցուրտ, խոնաւ, միշտ անձրև: Ես Նիւ-Պորտ-Բէնումն եմ (Nieu-Port-Bains), Բէլգիայի խուլ անկիւններից մէկում, ահա երեք շաբաթներ և ձանձրացած նայում եմ ծովին: Նա կատաղած է գազանի նման և մռնչում է օրն ի բուն: Ալիքները բարձրանում են, կուտակվում մէկը միւսի վրա, հասնում ափ և խփվում՝ դառնալով փրփուր՝ և նորից բարձրանում, նորից թափվում ափ, կարծես ցանկանալով ոչնչացնել նրան. իսկ քամին ոռնում է առաւօտից մինչև երեկոյ անդադար, անվերջ: Ես կարծում եմ, որ այս ամառ ես արեգակ այլ ևս չեմ տեսնի. ես կարծում եմ, որ անձրևը չի դադարի, քամին միշտ պիտի փչէ և ծովը խռով մնայ անդադար:

Անհիւրընկալ Բէլգիայում՝ Գերմանական ծովի ափին նստած, ես, այստեղի միակ հայս, մտածում եմ, թէ ինչո՞ւ է մռնչում այդպէս ծովը և ի՞նչ է նրա խռոված երգի իմաստը...

Եւ մինչդեռ քամին սաստկանում է, ծովը աւելի և աւելի խռովում, ես յիշում եմ, որ դա իսկական պատկերն է մեր հայ պատմութեան և մեր հայ իրականութեան: Հայկական կեանքը մի գիշեր է, մի մութ, մռայլ գիշեր, ուր լոյսի մի շող չը կայ ապագայ մեր ուղին լուսաւորելու համար: Քամի, ցուրտ, խոնաւ և անձրև, որի կաթիլները հասնում են մեր ոսկորներին... Այդ հայ գիշերին լսվել են շանթեր, տեսնվել են կայծեր, մի րոպէ լուսաւորելով մեր ուղին, բայց գիշերը նորից պատել է մեզ և ուղին կորցվել...

Այդպիսի շանթերից մէկը եղել է Գամառ-Քաթիպան, որի մահվան 20-րդ տարեդարձը լրանում է ներկայ օգոստ. 22-ին:

Ես զարմանալով կարդացի մի քննադատի կարծիքը, թէ Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւնը արուեստական է և նա շուտով կը մոռացվի: Ո՛րպիսի անհեթեթութիւն: Գամառ-Քաթիպան բանաստեղծ է «անհասանելի կամօքն Աստուծոյ», բանաստեղծ ոտերից մինչև գլուխ, ինչպէս Շէկսպիրի Լիրը արքայ էր ոտերից մինչև գլուխ:

Գամառ-Քաթիպան երբէք չի մոռացվի, քանի որ կենդանի կը մնայ հայ բարբառը:

Նա արուեստակա՞ն է:

Ինչո՞ւ:

Որովհետև նա քարոզում էր հայրենասիրութիւն: Դարձեալ անհեթեթութիւն, որովհետև դա քարոզ չէր, այլ երգ, համարձակ, ազատ, այրված-վառված սրտի արեան կաթիլներով գրված և մեզ աւանդված երգ...

Հայրենասիրութիւնը մի մտացածին բան չէր Գամառ-Քաթիպայի համար, այլ աւելի քան համոզմունք, մի հաւատ, մի դաւանութիւն...

Նա հաւատում էր հային, հայութեանը: Սրտի խորքերից նա ատելով ատում էր նրանց, որ իրանք լինելով վատ հայեր՝ իրանց վատութիւնը կարծես արդարացնում են, ասելով՝ հայերը այսպէս են, հայերը այնպէս են: Պէտք է հասկանալ, սիրել, հաւատալ. ահա ինչ էր պահանջում բանաստեղծը բոլորից:

Հասկանալ, սիրել, հաւատալ...

Ի՞նչ ենք մենք հասկանում խակապէս, կուրացած և յիմարացած, չը մարսած վարդապետութիւններ կուլ տալով: Մեր իրականութիւնը մենք դադարել ենք հասկանալ, աշխատում ենք ըմբռնել աշխարհի հոգսերը, ցաւերը և դարդերը...

Սիրո՞ւմ ենք արդեօք: Ո՞ւմ: Հային չարժէ սիրել, պէտք է սիրել աշխարհ: Ուրեմն ի՞նչ հաւատ մնաց մեզ. Թերահաւատութիւն: Եւ մինչդեռ ամենազարգացած երկիրներում՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և ամեն տեղ հայրենասիրութիւնը բարձրացնում է իր գլուխը, մեզանում համարվում է մի ամօթալի բան հայրենասէր լինելը:

Աշխարհը թւում է ինձ մի երեքյարկանի տուն: Ներքևի յարկում մենք ծնվել ենք, սնվել, մեծացել: Այստեղ է մեր օրօրոցը, մեր ծնողները, մեր զաւակները, մեր գերդաստանը: Մի բնական օրէնք է հոգալ, մտածել մեր մերձաւորների, սիրելիների համար: Բայց երանի նրան, ով օգուտ տալով իր գերդաստանին՝ դնում է ոտքը սանդուղի աստիճանների վրա երկրորդ յարկը բարձրանալու համար: Այստեղ է մեր ազգը, այն ազգը, որի հռչակի, փառքի, պատուի փայլը առատ ցոլում է մեր բոլորիս ճակատներից և որի ստորութեան, ցածութեան, արատի կեղտը կաթիլ-կաթիլ թափվում է մեր կարմրած թշե-

րից։ Բայց ես աւելի երանի կասեմ նրան, ով օգուտ տալով իր գերդաստանին, իր ազգին՝ բարձրանում է երրորդ յարկը։ Այնտեղ է համայն մարդկութիւնը, որի գաղափարների վսեմութեան առաջ չքանում է ազգային գաղափարը, ինչպէս լուսնի աղօտ լոյսը չքանում է արեգակի փայլի առաջ... Բայց վայ, հազար վայ նրան, ով արհամարհելով ազգը՝ ուղղակի շտապում է երրորդ յարկը. կարծելով ծառայել է մարդկութեան, նա ծառայում է միայն իր կրքերին, իր եսին. նա երբէք և ոչ ոքի չի ծառայի։ Այն բոլոր պարոնները, որոնք խօսում են յանուն համամարդկային գաղափարների, նրանք լոկ խօսում են և երբէք չեն գործում...

Գամառ-Քաթիպան պահանջում էր ծառայել մարդկութեանը՝ ծառայելով իր ազգին, որովհետև ազգն էլ մարդկութեան անդամ է։ Թթու, սուտ ազգասիրութիւն, շովինականութիւն չէր քարոզում Գամառ-Քաթիպան, այն սուտ ազգասիրութիւնը, որ մեզ քնեցնում է, արբեցնում, կուրացնում՝ գեղեցիկ, ոսկեզօծ քօղով ծածկելով մեր բոլոր պակասութիւնները և արատները։

«Օտարինը դու մի՛ ատիր, մի՛ էլ սիրիր կուրօրէն...»։

Գամառ-Քաթիպան սուր գրչով մերկացնում էր մեր ազգի բոլոր արատները։ Նա տեսնում էր լաւ, թէ ինչպէս մենք ցած ընկել ենք, թաղված կարծես թանձր կեղտի մէջ։ Բայց նա մեզ սիրում էր, նա մեզ հասկանում էր և նա երգում էր գեղեցիկ երգերը, արձակելով շանթեր, փայլակներ։ Նա քարոզում էր, որ լաւ է մի անգամ մեռնել, քան թէ քարշ տալ մի նողկալի կեանք։ Արժէ՞ ապրել մոռացված, արհամարհված, միշտ հլու ստրուկ... Եւ նա հաւատում էր, որ ազգը կապրի, կապրի՝ ինչպէս վայել է, արժան է...

Գեղեցիկ է վարդը, հոտաւէտ և հրապուրիչ. բայց կան ուրիշ ծաղիկներ՝ շուշան, նունուփար, մեխակ...

Թող հայն էլ լինի մի համեստ մեխակ, թող ապրի հայը... Ներկայ հանգամանքներում,—մտածում էր Գամար-Քաթիպան, —երբ մեր դասը կանգնած է մեր դժբաղդ, աղքատ ազգը, գլխաբաց, ոտաբոբիկ, ցնցոտիներով հազիւ ծածկված, բոլորից մոռացված, բոլորից ատված, մեր պարտականութիւնն է ամուր նստել տան երկրորդ յարկում և խնամել, հոգալ միայն մեր ազգի պիտոյքները։

Միայն...

Ամեն մի ծաղիկ ունի իր տեսքը, իր հոտը. ամեն մի ազգ էլ ունի իր առանձայատկութիւնները, իր տաղանդները, իր ձիրքերը։ Մեր պարտականութիւնն է մաքրել, սրբել ազգը բոլոր կեղտերից, արատներից աղտու քարոզներով, ծանր մտրակներով և ճոխացնել, զարգացնել նրա բոլոր տաղանդները, ձիրքերը...

Եթէ ազգերը գետեր են, իսկ մարդկութիւնը մի ծով, արդեօք մի օր գետերը պիտի չորանա՞ն հարստացնելով ծովը։ Չը գիտեմ։ Եթէ մենք աշխատենք բոլորս՝ ձեռք ձեռքի տուած, որ Արաքսի ջուրը դառնայ մաքուր, յստակ և կենսարար, մենք ուրախ, բաւական կը կանգնենք և չորացած Արաքսի ափերին և ժպիտով կասենք՝ «Արդ արձակեա, Տէր, զծառայս քո ի խաղաղութիւն»։

Նիւ-Պորտ Բէն (Բելգիա), 3 օգոստ.
1912

Ո

Ես փախայ անհիւրընկալ Բէլգիայից, եկայ Մօնտրէ (Montreux)։ Գեղեցիկ լեռներ, Ժընէվի գեղեցիկ լիճը և արեգակը, որ տաքացնում է բնութիւնը, հանգստացնում են ինձ, և ես ծանր մտածում եմ, թէ ինչո՞ւ կարելի չէ փախչել և իրականութիւնից այնպէս, ինչպէս ես փախայ անձրևից, խոնաւից և քամուց... Բայց մի՞թէ մեր իրականութեան մէջ էս եղած չեն գեղեցիկ րօպէներ, երբ արեգակը մեզ տաքացրել է, երկինքը ժպտացել... Մի՞թէ իսկապէս մեր իրականութիւնը մի ծանր, մութ և անվերջ գիշեր է։ Ոչ։ Պէտք է միայն միշտ աչքի առա՜ջ ունենալ Գամառ-Քաթիպայի պատուէրը՝

Հասկանալ, սիրել, հաւատալ...

Եթէ մենք հասկանանք մեր իրականութիւնը, սիրենք մեր ազգը սրտով, հոգով և հաւատանք նրան, մենք կունենանք մեր ապագան։ Ընդունեցէք, որ մեխակն էլ ծաղիկ է, մեր ազգն էլ մի մեխակ, թող ապրի մեր ազգը...

Բսան տարիներ անցան Գամառ-Քաթիպայի մահվանից յետոյ, բայց նրա կտակը մնաց անկատար։ Նա մի «սէն փառք» ունէր, «ցանկանում էր» «թաղվել Էջմիածնում»...

Գամառ-Քաթիպայի համար Էջմիածինը մի սուրբ, նուիրական բան էր։ Նա առանձին գաղափար ունէր կաթողիկոսութեան մասին։ Գամառ-Քաթիպան, որ սիրում էր իր ծննդավայր Նոր-Նախիջևանը, չէր զգում իրան կապված Նոր-Նախիջևանի հետ։ Նրա մտքերը, խոհերը հեռու էին, Արարատի պատուանդի մօտ Էջմիածինը։ Բայց նրա «սէն փառքը» «սիրելի ազգը» չը կարողացաւ կատարել...

Կաթողիկոսը Գամառ-Քաթիպայի համար ազգի պետն էր։ Սկզբունքով նա հակառակ էր, որ կաթողիկոսի անձը վէճերի, բանակռիւների առարկայ լինի։ Քանի որ ազգի միայն չնչին մասը կաթօլիկ է և բողոքական, Գամառ-Քաթիպան դժգոհ էր, որ շատ անգամ հայ կաթօլիկների և բողոքականների խաթրու մեր հրապարակախօսները նուաստացնում են մեր կաթողիկոսների նշանակութիւնը։ Իսկապէս դա մի խոշոր սխալ է և ծանր յանցանք, ասել թէ կաթողիկոսը միայն եկեղեցու պետն է, աւելի ոչինչ։ Մի՞թէ դրօշակը լաթ է և փայտի կտոր։

Կաթողիկոսը մեզ համար մի յայտնի դրօշակ է՝ ազգի ամբողջութեան, միութեան գաղափարի։ Նա մեր ընտրեալն է։ Նա մեր պետն է։ Կարելի է վիճել, որ նրա իրաւունքները մեծ չեն։ Բայց ջոկ բան է իրաւունք և ջոկ բան է հասկացողութիւն։

Ազգի հասկացողութեան տեսակէտից, կաթողիկոսը այն անհերքելի ոյժն է, որ միացնում է, ձուլում ամբողջ ազգը։ Թող ազգ ասելով ես անգամ միայն լուսաւորչականներ հասկանամ, ի՞նչ փոյթ, քանի որ ոչ-լուսաւորչականները չնչին տոկոս են կազմում։ Նկատեցէք, որ Գամառ-Քաթիպան երբէք հակառակ չէր մեր կաթօլիկ և բողոքական եղբայրներին. ընդհակառակը նա համարձակ քարոզում էր, որ ազգը հարկաւոր չէ բաժանել յանուն հաւատոյ («Ո՞վ է հայը»), բայց նա պահանջում էր, որ կաթողիկոսը ազգի պետը ճանաչվի... Երբ ազգի կամքին հակառակ ընտրվեց Մակար կաթողիկոսը, Գամառ-Քաթիպան առաջինը խոնարհվեց այդ ընտրութեան առաջ և առաջինը շնորհաւորեց նրա ընտրութիւնը... Բանաստեղծը չը սխալվեց։ Նա շատ հակառակ էր Խրիմեան Հայրիկի ընտրութեան, որին ի մօտոյ կը ճանաչէր, բայց երբ ընտրվեց Հայրիկը, բանաստեղծը՝ արդէն հիւանդ՝ դարձեալ հնազանդվեց, որպէսզի կաթողիկոսութեան գաղափարը չը տուժէ...

Քսան տարիներ անցան, որ Գամառ-Քաթիպան մեռաւ, բայց նրա երգերը չեն կորցրել իրանց հմայիչ ոյժը և թարմութիւնը։ Եղան յիմար փորձեր՝ մօտենալ նրան յայտնի վարդապետութիւնների չափերով և նսեմացնել նրա անունը, որովհետև նա չէ գրել մշակների մասին. բայց այդ փորձերը փորձեր մնացին։ Գամառ-Քաթիպան բարձր կանգնած է այսօր մեր առաջ, իսկական բանաստեղծ, բանաստեղծ «անհասանելի կամօքն Աստուծոյ», բանաստեղծ ոտերից մինչև գլուխ... Իր գերեզմանից այսօր ինչպէս առաջ, երբ կեանքով լի էր, նա կարծես մեզ ասում է, թէ մեխակն էլ ծաղիկ է, հայն էլ մի մեխակ, հաս-

կացէք հային՝ որ սիրէք, և սիրեցէք՝ որ հաւատաք...

Հասկանալ, սիրել, հաւատալ։

Ահա ի՞նչ է մեզ հարկաւոր, որ մեր մռայլ, մութ, անվերջ գիշերը, ուր կարծես լոյսի մի շող չը կայ ապագայ մեր ուղին լուսաւորելու համար, վերջանայ, լուսանայ և գայ գեղեցիկ, պայծառ, ցանկալի, ուրախալի ցերեկը, հայի ցերեկը...

Մ օ ն տ ր է

1912

«ՀԱՑԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ»

ԺՈՂՈՎԱԾՈՒԻՑ ԲԱՂՎԱԾ

Հազիւ հազ Գամառ-Քաթիպան փակել էր իր աչքերը: Դեռ նրա մարմինը սեղանի վրա չէր դրված, զաւակներից մինը վրդովված վազեց ինձ մօտ և յանձնեց ինձ «պահելու համար» նրա երկերը, բացատրելով որ նրան «տողները» եկել են և չը յարգելով հանգուցեալին՝ որոնում են այս-ինչ այն-ինչ գրուածքը՝ ոչնչացնելու համար: Իսկ Թիֆլիսում հէնց մահվան գոյժը ստանալով, «Արձագանքի» խմբագիրը իսկոյն սկսեց տպել այն «Աստառը», որը Գամառ-Քաթիպան արգելել էր տպել: Դա արդէն մէկ տեսակ քանքան էր հանգուցեալի գերեզմանի վրա:

Ռ. Պատկանեանի կենսագրութեան մեծ նիւթեր կը տան նրա նամակները, և առաջին տեղն են բռնում դրանց մէջ այն նամակները, որ գրված են Քերովբէ Պատկանեանին և Գէորգ Քանանեանին: Այդ նամակները մենք յանձնել ենք սրանից քանի տարի առաջ Լևոն Սարգսեանին, որպէս զի նա տպէր «Մուրճ» ամսաթերթում և յետոյ յանձնէր էջմիածնի Թանգարանին: Ամսաթերթը խափանվեց. ուր են նամակները, չը գիտենք:

—

Գամառ-Քաթիպան կնքեց մահկանացուն 22-ին օգոստոսի 1892 թ. իր ծննդավայրը՝ Նոր-Նախիջևան. գեղեցիկ, տաք, ամառնային օր: Ամառանոցից գալով քաղաք և անցնելով քաղաքային վարչութեան տան մօտից, ես նկատեցի շատ կառքեր կանգնած այդտեղ: Երևի պատահել էր մի բան, մի արտակարգ բան, և ես վազելով բարձրացայ սանդուղքի աստիճաններից: Վարչութեան դահլիճում ժողով է կազմված քաղաքագլխի՝ Մ. Ե. Պալապանեանի նախագահութեամբ: Գամառ-Քաթիպան մեռել է: Որոշվել է թաղել քաղաքային հաշւով քաղաքային գերեզմանոցում: Մենք բողոքում ենք և յայտնում ենք հանգուցեալի կտակի մասին՝

Կեանքիս մէջ մի հատ սին փառք ունեցայ,
Սուրբ էջմիածնում թաղվել ցանկացայ.
Սիրական իմ ազգ, թէ Աստուած սիրես,
Այս իմ մի հատիկ իղձըս կատարես:

Բայց այդ անկարելի էր. և մենք պահանջեցինք, որ թաղումը կայանայ Սուրբ Խաչ, մեծ հրապարակախօս Մ. Նալբանդեանի կողքին:

Ժողովում ինձ առարկում էին, թէ քաղաքային գերեզմանոցում աւելի պատուաւոր մարդիկ են թաղուած, քան թէ Գամառ-Քաթիպան, թէ Ս. Խաչ վանք թաղվելու համար պէտք է էջմիածնից թոյլտւութիւն: Ես պատասխանում էի ապագայ սերնդի անունից, պահանջում էի անաչառութիւն և ասում էի, թէ վարչութիւնը եթէ թաղէ մեծ բանաստեղծին քաղաքային գերեզմանոցում, մեծ յանցանք արած կը լինի ամբողջ հայութեան առաջ: Պալապանեանը համոզվեց: Ուղարկեցինք հեռագիր: Տեղապահը թոյլատրեց: Աւագ քահանան ս. Լուսաւորիչ եկեղեցում ասաց քարոզ. «Յիշատակենք, բայց չը յիշենք: Գամառ-Քաթիպան մեզ համար տասնեակ տարիներ Սիւլիւկն էր. նա պոկում էր մեր դիմակները, քսում էր մեր վրա մուր, քարկոծում էր, մտրակում էր մեր բարքերը, թունաւորում էր մեր հանգստութիւնը: Ի՞նչպէս մոռանայինք»: Ինչպէ՞ս մոռանար հայր քարոզիչը...

Բայց թաղումը հոյակապ, հարուստ և շքեղ էր: Կանաչ դալարէ կամարներ, գոյնզգոյն դրօշակներ, պսակնե՜ր, պսակնե՜ր անվերջ և խուռն, մեծ բազմութիւն:

Փառաւո՜ր թաղում...

Այո՛, մենք հայերս չը գիտենք գնահատել մեր ոյժերը, մեր հանճարները, բայց թաղել, թաղել փառաւոր, առաջնակարգ՝ մենք միշտ պատրաստ ենք:

Գնա՛ մեռիր, արի սիրեմ...

Սիրեմ դիակ... լոկ դիակ...

Խոնարհվելով Գամառ-Քաթիպայի կտակի առաջ, մենք դիմեցինք քանիցս, ուր հարկն էր, գրով, անձամբ, բայց անկարող եղանք մեծ բանաստեղծի մի հատ և վերջին իղձը կատարելու... Թէ թաղման ժամանակ, թէ արձանը կանգնելիս, մենք աչքի առաջ ունեցել ենք այդ հանգամանքը. և եթէ մի օր տացվի թոյլտւութիւն, մարմինը կարելի կը լինի տեղափոխել և կտակը կատարել:

Այժմ Ռ. Պատկանեանի և Մ. Նալբանդեանի վրայ մենք դրել ենք արձաններ, որ տաղանդաւոր քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանի աշխատութիւնն է։ Մենք յանձնեցինք Ս. Խաչ վանքի վանահայր արժանապատիւ Վահան վարդապետին մի գումար (500 ր. մօտ), որպէսզի նա հոգայ այդ երկու արձանների վրա։ Վանահայրը, որ վայելում է Նոր-Նախիջևանցոց սէրը և յարգանքը, համարում է իր ամենավսեմ պարտքերից մինը հոգալ նրանց վրա։ Ողջ ամառը գեղեցիկ ծաղիկներ զարդարում են վանքի այդ սիրեցեալ անկիւնը։

ԱՆԷ՞ԾՔ ԹԷ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

I

Անէ՞ծք է հարստութիւնը թէ՞ օրհնութիւն—դա կախված է միայն հարուստից։

Բայց մենք, արդեօք մենք իրաւունք ունե՞նք քննելու այդ հարցը, շօշափելու սրա նրա անունը։ Արդեօք չե՞նք շօշափած լինի ուրիշի պատիւը։

Եթէ հարստութիւնը նման է մի քանքարի և կարող է և երկինք մեզ բարձրացնել և միևնոյն ժամանակը կապել, կաշկանդել, լռել կարող չենք և իրաւունք չունենք լռելու։

Լռելը ամօթ է, մի յանցանք...

Մինչև որ մինը հարստանում է, նա գնում է, անցնում մի մեծ ճանապարհ, և այդ ճանապարհը լի է զոհերով...

Որչափ քրտինք, որչափ զրկանք, որչափ անէծք և որչափ արիւն՝ մինչև որ մէկը դիզում է իր միլիօնը։

Զոհերը չեն լռում։ Նրանք հայհոյում են մեզ, հայերիս, որովհետև հարուստը հայ է։ Նրա փողից, գանձից ոչ մի գրօշ օգուտ չը կայ մեր համար, բայց նրա կեղտը, նրա արատը խեղդում են մեզ, մրոտում են մեր անունը։

Պատիւը, անունը նոյնպէս հարստութիւն է և աւելի մեծ հարստութիւն, քան թէ փողը։

Հարուստ հայը վատնում է մեր ազգային հարստութիւնը՝ ազգի փառքը, պատիւը, անունը և ձեռք է բերում ահագին գումար, անիծեալ մամոնան, որ դարձեալ դառնում է՝ փոխանակ օրհնութեան՝ անչափ, անվերջ անէծք մեր գլխին...

Ասացէք, մի՞թէ մենք իրաւունք ունենք լռելու։

Ոչ։ Խօսենք համարձակ։ Ինչո՞ւ օտարը մեզ չէ սիրում, ինչո՞ւ նա ատում է...

Մեր հարուստների համար։

Եւ մեր հարուստների համար մի պարտք կայ մտածե-

լու մեր ազգի խեղճ, դժուար և թշուառ դրութեան մասին։

Միայն այս վերջին ժամանակներս մենք կարողացանք հրճուանօք, սիրով, յարգանքով արտասանել մի քանի յայտնի հարուստների անուններ, երբ տեսանք, որ նրանք հոգով հայեր են, մտածում են մեր համար, տանջվում են մեր հոգսերով և դարդերով…

Բայց դրանց թիւը այնչափ քիչ է, կարծես քանի մի կաթիլ անուշ ջուր ծովի անհամ և դառն ջրի մէջ, որից մեր ծարաւը սաստկանում է…

Մանթաշեանները սակաւաթիւ են…

Առհասարակ մեր հարուստները ծառայում են միայն անձնական կրքերին։ Նրանց համար փողը՝ կուռք է և կեանքի նպատակը՝ միայն անձնական եսը։ Նրանց համար ազգը գոյութիւն չունի, ուրիշի ցաւը, կարօտը, արտասուքը նրանք արհամարհում են…

Հարստութիւնը նրանց համար երկնքի օրհնութիւնը չէ, որ տարածէր շուրջը ուրախութիւն, բաւականութիւն, սէր, համակրանք…

Դա անէծք է, անէծք անվերջ, որովհետև ստորացնելով ազգի անունը, պատիւը, չը թեթեւացնելով ազգի թշուառութիւնը՝ նա տալիս է մնունդ մի նոր սերնդի առանց հայրենիքի, առանց ազգութեան, զուրկ որևիցէ գաղափարից…

Անողոք մահը սպասում է հարստին, ինչպէս և աղքատին։ Ահագին հարստութիւնը անցնում է մի կամ մի քանի երիտասարդների՝ նրա զաւակներին։

Ի՞նչ են տեսել այդ խեղճ զաւակները։ Ի՞նչ բարոյական կրթութիւն են ստացել նրանք…

Հայրերը մտածում են. «փողով մենք կապահովացնենք մեր զաւակներին»։

Բանից դուրս է գալիս, որ փողը մարդու չէ ապահովացնում։ Փաստը մենք տուինք անցեալ անգամ. 3 միլիօնի տէր երիտասարդը ինքն իրան սպանեց։

Նրան ապահովացրել էին միայն սովից, ապահովացրել էին նրան ճոխ կեանք վարելու միջոց…

Մոռացել էին մէկ բան՝ որ մարդը չորքոտանի չէ։ Առանց նպատակի, առանց գաղափարի մարդ կարող չէ, իրաւունք չունի ապրելու…

Այստեղ հարստութիւնը դարձաւ անէծք խեղճ երիտասարդի գլխին։ Այսպէս կը լինի նա միշտ անէծք և մնացեալ մեր հարուստների համար, եթէ նրանք մոռանան, որ փողը

միայն միջոց է ապրելու, այլ ոչ նպատակ, եթէ նրանք մոռանան որ այն ազգը, որի կարօտը և աղէտը անվերջ են, սպասում է և պահանջում է օգնութիւն…

Հարուստների մասին պէտք է խօսել համարձակ, և ամեն անգամ մեր պարտքն է ասել, թէ նրանց հարստութիւնը մեր ազգի համար մի անէծք է դարձել, թէ՞ օրհնութիւն… Եթէ անէծք է՝ մորակեցէք, մի խնայէք. եթէ օրհնութիւն է՝ յարգեցէք և խոնարհէք ձեր գլուխները նրա առաջ…

Եթէ հարուստները սիրում են իրանց զաւակները, թող կրթեն նրանց նախ և առաջ ազնիւ մարդ լինել…

Եւ երբ ապագայ սերունդը՝ մեր հարուստների զաւակները ազնիւ մարդիկ կը դառնան, նրանք կը յիշեն այն, ինչ որ ի զուր մենք յիշեցնում ենք այսօր…

Առ այժմ ասենք այսքան. մեղանում հարուստ լինել և ազնիւ լինել՝ կը նշանակէ լինել սպիտակ և սև, գիշեր և ցերեկ միևնոյն ժամանակ…

Ափսոս…

II

Հարստութիւնը մի մեծ ույժ է, որ ամեն ինչ կարող է շինել, անապատը դարձնել դրախտ և որ կարող է նոյնիսկ դրախտը դարձնել դժոխք և ամեն ինչ ոչնչացնել, տապալել, քանդել… Հարստութիւնը մի անէծք է և մի օրհնութիւն, դժբաղդաբար մեզ հայերիս համար շատ սակաւ օրհնութիւն և համարեա միշտ անէծք…

Եթէ հարուստի համար հարստութիւնը նպատակ է և ոչ գործիք, եթէ հարստութիւնը չէ լուսաւորում խաւարը, չէ տաքացնում ցրտից տառապեալներին, չէ կերակրում սովեալներին և չէ փրկում թշուառներին, նա անէծք է, անէծք է միշտ…

Ի՞նչ օգուտ զրպանով լինել հարուստ, իսկ խելքով, խղճով, սրտով, հոգով աղքատ, նոյնիսկ մնանկ…

Կարո՞ղ է մնանկը, աղքատը լինել հարուստ։

Ոչ երբէք…

Այդպիսի աղքատներից, այդպիսի մնանկներից էր և Նիկօլայ Թարասօվը, որը 3 միլիօնի ահագին հարստութիւն ունէր և այնքան խղճով, խելքով, սրտով և հոգով աղքատ էր և մնանկ, որ պնդում էր, թէ ինքը իրաւունք չունի օգնել խեղճերին, թեթեւացնել ցաւերը, դարդերը թշուառների, «որովհե-

տև եթէ մէկին օգնեմ, պէտք է օգնել և միւսներին...»:

Եւ ինչ լօգիկա և ինչ հոգեկան դատարկութիւն՝ մէկին որ օգնեմ, պէտք է օգնել և միւսներին. և որովհետև բոլորին օգնել չեմ կարող, ուրեմն ոչ ոքի պարտական չեմ օգնել...

Նիկօլայ Թարասօվը այդպէս անում էր: Ինքն ապրում էր ճոխ. նրա համար շաբաթը 7 կիրակի ունէր և ամեն մի կիրակին նման էր միւսին՝ միշտ զուարճութիւն, միշտ ուրախութիւն, միշտ ժպիտներ, ծաղիկներ... Նրա տանը կարելի էր տեսնել միշտ հարուստին, բաղդաւորին, առողջին: Միայն թըշուառը, միայն կարօտեալը, միայն հիւանդը և տառապեալը համարձակութիւն չունէին մօտենալ նրա պալատի շեմքին:

Նիկօլայ Թարասօվը ոչ ոքի չէր օգնում և դարձրել էր այդ՝ մի սկզբունք...

Ամեն տեսակ սկզբունքներ լինում են. լաւ, սխալ, վատ...

Դա մի փարիսեցիական անգութ սկզբունք էր...

Զարմանալի չէ՝ եթէ հարստութիւնը դարձաւ անէծք Նիկօլայ Թարասօվի համար:

Դեռ բոլորովին երիտասարդ, տարէն ստանալով զուտ արդիւնք 200,000 ռուբլի և ծախսելով իր հաճոյքների համար 20,000 ր., նա վաղ ձանձրացաւ բոլոր բանից և կեանքն էլ դարձաւ նրա համար մի դատարկ բաժակ, առանց մտքի, առանց իմաստի:

Այսօր ինչպէս երէկ, վաղը՝ ինչպէս այսօր, շարունակ շաբաթներ, ամիսներ, տարիներ միևնոյն հաճոյքները, միևնոյն զուարճութիւնները, կարծես շարունակ մի տօն, մի խնճոյք, մի հարսանիք...

Եւ ոչ մի գաղափար և ոչ մի ձգտում և ոչ մի նպատակ...

Նա ապրում էր, բայց կենդանի չէր: Դա մի կենդանի մեռեալ էր, մի դիակ...

Ի՞նչ զարմանք, որ պարոնը ինքն իրան սպանեց. բայց զարմանքը այն է, որ միայն երբ նա մեռաւ, սիրելիները, ծանօթները, բարեկամները իմացան, տեսան, որ նա դիակ է...

Սակայն որպիսի՜ երջանկութիւն սպասում էր նրան, եթէ միայն նա յիշէր իր ազգը, իր թշուառ, խեղճ ազգը, որի զաւակն էր նա:

Երևակայեցէք՝ միայն եթէ նա իր հարստութեան կէսը, «կէսի կէսը» տար ազգի ծանր վիճակը բարուքելու համար, եթէ նա ցանկանար հիմնել մի այլ Լազարեան ճեմարան...

Ինչպէ՜ս կեանքը խորհրդաւոր, հրապուրիչ, գեղեցիկ պիտի դառնար նրա համար...

Նրա հարստութիւնը պիտի դառնար մի օրհնութիւն, օրհնութիւն իրան համար և մեր, մեր բոլորիս համար...

Մենք նրան կը յարգէինք, կը սիրէինք, կը պաշտէինք...

Մենք նրա առաջ կերկրպագէինք, և նա յուզված, արտասուքը աչքերին, մեզ կասէր. հայի աղէտը ծով է, բոլորին օգնել չեմ կարող, բայց ես կը թեթևացնեմ տասնեակ հազար հայերի վիճակը և չեմ թողնի, որ հայերը մեռնեն սովից, տանջվեն խաւարից...

Բայց նա արհամարհեց և հարստութիւնը. այդ 3 միլիօնները դարձան անէծք նրա գլխին:

Այժմ նա դիակ է, ինչպէս և էր՝ երբ կեանքով լի էր, որովհետև նրա կեանքը երբէք կեանք եղած չէ, այլ մահ, և նրա հարստութիւնը մի մռայլ, խոնաւ գերեզման:

Ցաւում են կեղծ բարեկամները:

Իսկ ազգը: Նա Թարասօվներ շատ է տեսած և դեռ շատ պիտի տեսնէ. և ինչքան շուտ ասպարէզներից հեռանան թուլահոգի ինքնապաշտները, այնքան լաւ:

Կեանքը գնում է, շտապում, չէ սպասում. նա պատկանում է ուժեղներին:

Երանի՜ մեր հարուստները, ազնիւները, մեծատունները յիշէին մեր ազգը, չը մոռանային, եթէ ոչ նրանց համար էլ հարստութիւնը կը դառնայ նզովք և անէծք:

Աշխատեցէք միշտ, որ նա լինի, մնայ միայն օրհնութիւն, օրհնութիւն բոլորիս համար:

III

Եկեղեցու գաւթում, գլուխները ցածր խոնարհած, մեզ պարզում են ձեռքները աղքատները մանաւանդ տօներին: Պատրաստ խօսքերը բերներին, նրանք ժողովում են մեզանից մեր լումաները: Ինքնագոհ հարուստը բաժանում է մէկ-երկու-տասը ռուբլի և կարծես արդէն տեսնում է դրախտի դռները կիսաբաց...

Եկեղեցու գաւթի աղքատները չեն իսկական աղքատները:

Իսկական աղքատը չունի շրթունքին պատրաստ խօսք, աչքերին պատրաստ արտասուք: Նա չը գիտէ խնդրել, աղաչել. նա ամաչում է ձեռքերը պարզել: Սովը, ցուրտը, հիւանդութիւն և ամեն տեսակ չարիք գալիս են նրա գլխին: Նա մեռնում է սուս-փուս, մոռացված՝ բոլորից... որովհետև մենք սո-

վոր ենք տեսնել միայն պրոֆեսիոնալ աղքատներին, տոպրակը ուսին, փայտը ձեռին... Իսկական աղքատներին մենք չենք տեսնում, տեսնում են գուցէ սակաւները...

Բայց կայ մի ուրիշ աղքատ, մեծ աղքատ, որ չը գիտէ խնդրել, այլ գիտէ պահանջել, որովհետև նա իրաւունք ունի պահանջելու. դա մեր ազգն է, այո, մեր ազգն է, որ մեռնում է սովից, մրսում է ցրտից և որի արիւնը կաթիլ-կաթիլ հոսում է ամեն օր, հոսում է և սակայն կայ, մնում է դեռ արիւն՝ թուլացած երակների մէջ գուցէ միայն հոսելու համար...

Ժամանակ չէ՞ կանգնել, լուրջ նայել չորս կողմը և աշխատել, և հոգալ, որ դադարէ ազգի արիւնը հոսելուց:

Ժամանակ չէ՞ արդեօք ասել՝

—Բաւական է, որքան ժամանակ հարստութիւնը եղել է հայերիս համար անէծք: Թող լինի նա այժմ երկնքի օրհնութիւն: Թող հարուստը տեսնէ բաղդ սերնդէ սերունդ: Չէ՞ որ արտասահմանում հարստութիւնը երկնքի օրհնութիւնն է: Այնտեղ հարուստները միլիոններ մսխում են ազգի լուսաւորութեան, բարօրութեան համար: Նրանք մտածում են ազգի բաղդի վրա և իրանք բաղդաւոր են դառնում: Կեանքը ստանում է առանձին նշանակութիւն: Նրանք հասկանում են, որ հարստութիւնը մի զօրք է և ամեն մի ոսկին՝ մի զինւոր, մի քար...

Քարերից կարելի է շինել ճեմարան գիտութեան և մի բանտ, որի մէջ խեղդվում է ազատութիւնը մարդկութեան:

Զինւորները ապահովում են երկրի ազատութիւնը և ծառայում են նրա բարգաւաճման գործին. և զինւորները կարող են թալանել, սպանել, ամայացնել շէնքեր, քաղաքներ, երկիր...

Եւ ինչո՞ւ հայի հարստութիւնը մեզ համար պիտի լինի միայն բանտ, միայն հարստահարիչ զինւոր...

Որի՞ս մեղքն է:

Առէք մեր յայտնի համարեա բոլոր հարուստներին: Մեղուի նման աշխատելով, երբեմն չը խմելով, ամեն ինչ իրանց համար խնայելով, նրանք ձեռք են բերում հարստութիւն: Ըսկզբից կարծես հարստութիւնը նրանց համար օրհնէնք է: Զաւակները մեծանում են, ճոխ ապրում...

Զաւակները... քանի փոքր են՝ նրանք կոխում են մեր ոտների վրա, որ մեծացան՝ կոխում են սրտներիս վրա...

Հարուստների զաւակները կոխում են միայն սրտերի վրա... սիրելի, յարգելի հայրիկների սրտերի վրա... Եւ յանկարծ դուրս է գալիս, որ հարստութիւնը անէծք է:

Բայց ազգը: Նա մեր հայրը չէ՞, մայրը չէ՞, զաւակը չէ՞:

Այո, նա մեր հայրն է, մայրն է և զաւակը:

Եւ այն րօպէն, երբ մենք մոռանում ենք այդ ճշմարտութիւնը, օրհնութիւնը չքանում է, գնում և մնում է միայն անէծք, արդար անէծք, կաւելացնեմ՝ բարի անէծք...

Ինչո՞ւ մենք պիտի խնայենք հարուստներին, քանի որ նրանք մեզ չեն խնայում:

Նրանք մոռանում են ազգը, և Աստուած մոռանում է նրանց...

Վրէժը կը գայ, նա գալիս է. դա հարուստի զաւակն է, որ մեծանում է. և քանի նա մեծանում է, այնքան էլ շուտ մօտենում է վրէժի օրը:

Հարստութիւնը կը վատնվի, հարուստի անունը զզուանօք կարտասանվի և յետոյ կը մոռացվի բոլորովին:

Շատ է պատահում, որ հարուստի գերեզմանի վրա քար անգամ չեն ձգում հարուստ զաւակները: Բայց երբեմն նրանք շինում են մեհեաններ գերեզմանոցում, իսկ ազգին խնայում են կոպէկներ...

Եւ եթէ այդպէս պիտի շարունակվի, եթէ մեծ աղքատի՝ մեր ազգի պահանջը—հոգալ նրա պիտոյքները, տարածել լուսաւորութիւն, ազատել սովից, զրկանքներից—պիտի մնայ ձայն բարբառոյ յանապատի, և պիտի ծառայէ միայն մեր աղաների հաճոյքներին, պիտի վնասէ մեր բարի անուան, յիշատակին, թող ուրեմն անէծք, միայն անէծք մնայ մեզ համար այդ հարստութիւնը...

1911.

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵՌԱՒ, ԿԵՑՑԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ...

I

Կաթողիկոսը մեռաւ, կեցցէ Կաթողիկոսը—ահա ինչ պիտի լինի մեր նշանաբանը, ծրագիրը և ամեն մէկիս ցանկութիւնը և ձգտումը։

Քննադատենք անաչառ բոլոր թեկնածուների պակասութիւնները։

Բայց երբ թեկնածուն կաթողիկոս դարձաւ՝ կեցցէ կաթողիկոսը։

Կեցցէ կաթողիկոսը, որովհետև այնուհետև նա ազգի ընտրեալն է, ազգի պետն է և ոչ թէ այս-ինչ, այն-ինչ պատգամաւորների թեկնածուն։

Քննադատելով թեկնածուներին, մենք ցանկանում ենք ունենալ լաւ կաթողիկոս։ Քննադատելով կաթողիկոսին, մենք թաղում ենք մի բարձր գաղափար, որ պահպանում է ազգը կորստից։

Թերթեցէք մեր պարբերական լրագիրները, և չը կայ համար, որ կաթողիկոսի վրա չը գրվէր ամեն բան։ Կղերական թերթերը մէկ կողմից և ծայրայեղ թերթերը միւս կողմից իրանց չը սիրած կաթողիկոսի մասին գրում էին ամեն բան, երբեմն արձակ, անունը տալով, երբեմն քօղարկված։

Ինչու համար։ Ո՞ւմ պէտք էր այդ։ Ո՞ւմ օգուտ էր...

Հայրիկի մասին ինչքան գրվեցին անվայել բաներ։

Հայրիկը Հայրիկ մնաց։ Նրա քանքարը, նրա ժողովրդականութիւնը անմահացրին նրա անունը։

Հայրիկը չը տուժեց։ Տուժեց էջմիածինը։

Հայը չը սիրեց, օգտվեցին թշնամիները։

Ընտրեցինք վերջապէս Մատթէոս II-ին։

Օրմանեան, կը պոռային կղերականները։

Ես ոչինչ չունեմ սրբազանի դէմ։ Թող Օրմանեանը ընտրվէր կաթողիկոս, բայց ընտրվեց Իզմիրլեանը։

Ի՞նչ պէտք է անէին ազնիւ հակառակորդները։

Ազնիւ հակառակորդները պէտք է ասէին՝ մենք մաքառում էինք Իզմիրլեանի դէմ, բայց այժմ կեցցէ ազգի ընտրեալը—կեցցէ մեր վեհը, Մատթէոս II-ը. կղերականները առաջինները եղան, որ համարեա թունաւորեցին մեր սիրած կաթողիկոսի վերջին օրերը, այսպէս թէ այնպէս՝ կեցցէ Օրմանեան կը պոռային։

Ամօթ, հազար ամօթ...

Եւ ամեն անգամ, երբ ես կարդում էի և լսում էի այդ անվայել աղաղակները—ես տեսնում էի գերեզմանափորներ, իսկ թաղում էին հայ եկեղեցին։

Բաւական է. բաւական է, որովհետև և յիմարութիւնը պիտի չափ ունենայ։

Քննադատենք թեկնածուներին։

Բայց երբ կաթողիկոսը ընտրվեց՝ կեցցէ կաթողիկոսը։

Բոլորս մի կամք, մի ույժ, մի հոգի դառնանք և բոլորս ծնկաչոք խոնարհենք, ոչ անձի, այլ գաղափարի առաջ, որ մեզ կարող է փրկել, որովհետև պահպանել է մինչև այսօր։

Քննադատենք սինոդը, դիւանատունը, բայց վեհի մասին ոչ մի աննպաստ կարծիք, խօսք, ակնարկ...

Վեհը նոյն ինքն եկեղեցին է։

Վեհը վէճերի առարկան կարող չէ և լինելու չէ երբէք, երբէք... Կաթողիկոսը մեռաւ, ուրեմն կեցցէ կաթողիկոսը։

II

Նոր-Նախիջևանի քաղ. դուման դեկտեմբերի 14-ի արտակարգ նիստում հանդիսաւոր հոգեհանգստից յետոյ Վեհափառի մահվան առիթով, որին ներկայ էր և Ռոստովի քաղաքապետը, որոշեց՝ բաժանել աղքատներին 1,000 ռուբլի, ընտրել պատգամաւոր բժ. Միրզոյեանին, որի ճանապարհածախսը 300 ր. ընդունել քաղաքի հաշուով և 200 ր. արծաթեայ պսակ դնել դագաղի վրա...

Ողջունում ենք բոլոր սրտէ։

Նոր-Նախիջևանում ապրում են 8000 հայեր և Նոր-Նախիջևանը պարտաճանաչութեան օրինակ պիտի լինի մեր մնացեալ հայաբնակ քաղաքներին։

Այո՛, Մատթէոս II-ին՝ մեր Հայրապետին, որ այնքան իր կեանքում տանջվեց ազգի համար, մենք փառաւոր կը թաղենք։

Հարևան ազգերը կը տեսնեն շքեղ յուղարկաւորութիւն,

ցոյցեր, պսակներ և կը կարծեն, թէ մենք իրօք գիտենք գնահատել մեր ազգի մշակներին…

Երնէկ այդպէս լինէր։

Աշխատենք գնահատել կենդանիներին, և երբ ընտրութիւնը լինի և նոր կաթողիկոսը գայ-նստի Գրիգոր Լուսաւորչի գահը, սիրենք նրան, յարգենք նրան, պաշտենք նրան։

Կաթողիկոսը մեռաւ, կեցցէ կաթողիկոսը։

Յիշում եմ հանգուցեալին։ Բարի զգացմունքներով լի, յուզված, նա նայում էր շուրջը և որոնում էր օգնականներ…

—Ես չեմ ընդունում կուսակցութիւններ,—ասաց նա ինձ…

—Հայկականից ջոկ…

—Այդպէս, հայկականից ջոկ…

Այնքան սէր ես տեսայ նրա կրակոտ աչքերի մէջ…

Օգնականնե՜ր։ Ո՞ւր են։ Մեր կեանքը ամայի անապատ է։ Կուսակցութիւննե՜ր։ Կորչեն, չքանան բոլոր կուսակցութիւնները… հայկականից ջոկ…

Կեցցէ կաթողիկոսը, որի շուրջը յանուն ազգի գոյութեան մեզ պէտք է միանալ։

Կը գայ նոր կաթողիկոսը։ Նա էլ կամաց-կամաց կերթայ նոյն ճանապարհով և կը բարձրանայ իր Գողգոթան։

Որչա՜փ յոյսեր ունէինք վերածնութեան, երբ Թիւրքիան սթափվեց քնից և սուլթանը, կարմիր սուլթանը իջաւ գահից։

Խաբուսի՜կ յոյսեր. և ազգը նորից խաչվում է և Վեհը ազգի հետ…

Այո, ազնիւ, քանքարաւոր Վեհի համար Գրիգոր Լուսաւորչի գահը վաղուց Գողգոթայ է…

Բայց Գողգոթայից լոյս իջաւ աշխարհին, հալածեց խաւարը և ազատեց մարդկութիւնը մահից։ Գողգոթայից փայլում է անմահութիւնը և երջանկութիւնը մարդկան։

Հայկական Գողգոթան դեռ մութ է և խաւար։ Լոյս չէ երևում, նշոյլ չը կայ…

Մարում է հայկական կանթեղը, և հայերը չեն տեսնում, որ իւղ քիչ է մնացել, պլպլում է միայն…

Պլպլում։

Ուրեմն մի հանգցնէք այդ աղօտ լոյսը։ Բերէք՝ իւղը, լըցրէք, վառ, վառ պահեցէք. այդ կանթեղն է, որ ցոյց կը տայ մեր իսկական ճանապարհը…

Կաթողիկոսը մեռաւ, կեցցէ կաթողիկոսը. և թող այդ խօսքերը բևեռվեն մեր ուղեղների, մեր սրտերի մէջ։ Միաձայն, գործով, խօսքով, գրչով աշխատենք իրականացնելու այն փափագը, որ տաքացնում է ամեն մի ազնիւ սիրտ՝ տեսնել իր ազգը բաղդաւոր, երջանիկ, ապահով, հարուստ։

Թող մեր դժբաղդութիւնը, թող հալածանքները դառնան մի չար երազ, լոկ երազ…

Կեցցէ, կեցցէ կաթողիկոսը։

III

Օրը կիրակի։ Եղանակը խոնաւ, երկինքը ծածկված թանձր ամպերով, ցեխ։ Նոր-Նախիջևանի ս. Լուսաւորչի աւագ եկեղեցին լի է ժողովրդով։ Ասեղ ձգելու տեղ չը կայ։ Կաթողիկոսի մահվան առիթով կատարվում է հանդիսաւոր հոգեհանգիստ։ Երգեցիկ խումբը, շնորհալի հ. սարկաւագ Չէօրէքչեանի ղեկավարութեամբ, այսօր երգում է հրաշալի։ Յաջորդ հայր Մուշէն խօսում է հանգուցեալի մասին, որի նշանաբանները եղել են օրէնք և կարգապահութիւն և որի կեանքը եղել է աքսոր, տանջանք, ազգի շահերին ծառայելու համար։ Նկարագրում է նրա վերադարձը Պօլիս, յուզիչ ցոյցերը, բոլոր ազգերի և Թիւրքիայի ներկայացուցիչները նաւահանգստում… Պատրիարքի աթոռ… Ամենայն Հայոց Կաթողիկոս… Սուրբ Էջմիածին… գեղեցիկ ծրագիրներ և… և անողոք մահ…

Ես լսում եմ քարոզը, իսկ մտքերս հեռու են, շատ հեռու… Այսօր Էջմիածնում թաղում են մեր Վեհափառին։

Մինչև ե՞րբ պիտի թաղենք, միայն թաղենք, և ինչո՞ւ մեծ մարդու մահը լինելու չէ պատճառ մեր վերածնութեան…

Փոխանակ թեկնածուների մասին խօսելու, վիճելու, ստելու, լաւ չէ՞ր լինի նախ և առաջ յանուն այդ վերածնութեան կանխօրօք որոշել մեր բոլորիս վերաբերմունքը դէպի Էջմիածնի Աթոռը։

Կաթողիկոսը մեռաւ, կեցցէ կաթողիկոսը՝ ահա ինչ պիտի լինի մեր ծրագիրը։

Կաթողիկոսը իբրև հայր և ազգը իբրև զաւակ, բայց ոչ իբրև Նոյի երրորդ զաւակը…

Որչափ կարելի է բարձրացրէք Վեհի անունը, պատիւը և դուք բարձրացրած կը լինէք ազգի անունը և պատիւը…

Իսկ ամեն մէկը մեզանից միայն կտորն է այդ ազգի…

Լաւ ենք մենք՝ լաւ է ազգը, լաւ է ազգը՝ լաւ է կաթողիկոսը…

Մէկ մարդուն տրված չէ այնքան գիտութիւն, խելք, ի-

մասաութիւն և քանքար, որ միահեծան կառավարէ բոլոր ազգը...

Ահա ինչու համար մենք բոլորս պարտական ենք նրան օգնելու, աջակցելու, ծառայելու և դրանով միայն մենք օգնած, աջակցած, ծառայած կը լինենք մեր խեղճ և թշուառ ազգին...

Եւ այդ կողմից Էջմիածինը մի տեսակ անբերրի անապատ է մեր վեհափառների համար։

Ա՞զգը։

Հարուստ բուրժուազիան գիտէ միայն ընդունել և... թաղել։ Երիտասարդութի՞ւնը։ Վերջին ժամանակները այնքան շատացել են մեզանում մի տեսակ երիտասարդ... երեխաներ, որոնց ուղեղների մէջ փոխանակ մտաւոր պաշարների մտել են, նստել են, թաղվել են մի քանի բանաձևներ։ Այդ երիտասարդները աւելի հեռու են մեր ազգից, մեր եկեղեցուց, քան թէ լուսնից և աստղերից... Նրանցից օգուտ չը կայ մի գրօշի, վնաս՝ ինչքան կուզենաք...

Բարուք չէ՞ լսել մեր հոգևորականների մասին։

Մենք յիշում ենք այն ցոյցերը, որ տեղի ունեցան Պոլսում սրբազան Օրմանեանի դէմ, Էջմիածնում սրբազան Սուքիասի դէմ։

Մենք յիշում ենք և դատապարտում ենք։ Այդպիսի ցոյցերը զզուանքի են արժանի։ Պոլսում սրբազան Օրմանեանի դէմ «սոփա» վերցնողները, սոփաներով ծեծեցին և ազգային ժողովի անդամներին...

Սոփա բարձրացնողը սոփայից էլ կը կորչի։

Այո, ատելով ատում ենք այդ յիմարներին։ Անարժան է անգամ նրանց վրա խօսել։ Բայց... բայց եթէ մենք այդ ծանր դէպքերը լուսաբանելու, լուծելու լինենք, մենք (խօսքս վերոյիշեալ սրբազանների մասին չէ) կը տեսնենք ցաւօք սրտի մի բան՝ ազգը կորցնում է իր հաւատը դէպի իր հովիւները։

Տեղ տեղ հովիւները գայլեր են դարձած։

«Օրէնք և կարգապահութիւն»,—կը պնդէր հանգուցեալ կաթողիկոսը։

Իսկ մեր հոգևորականնե՞րը։ Մեծ մասամբ մեր հոգևորականները ընդունում են օրէնքն իբրև մտրակ՝ իրանց հակառակորդներին, թէև աւելի մեծ գլուխ բռնողներին տապալելու համար, իսկ կարգապահութիւն՝ երբէք։

Մեր հոգևորականները սիրում են ասել, պնդել, թէ մեր եկեղեցին ժողովրդական է։ Բայց շատ շատերը մեր հոգևորականներից տարօրինակ են հասկանում այդ գաղափարը և վնա-

սելով մեր եկեղեցու շահերին, նրանք չեն նկատում կամ չեն նկատելու, որ իրանք չեն ընդունում ժողովուրդ, ազգ, այլ միայն օրէնք իբրև մտրակ, ոչնչացնելով արմատով կարգապահութիւնը...

Այս-ինչ վարդապետը չէ հնազանդվում կաթողիկոսին, այս-ինչ եպիսկոպոսը յանդիմանում է Վեհին։ Էջմիածնի ս. Աթոռը դառնում է խաղալիք, ծաղրանք այդպիսի հոգևորականների համար, որ մոռացած իրանց բարձր և վսեմ կոչումը՝ ծառայում են միայն իրանց եսերին...

Դրանք հովիւներ չեն. դրանք գայլեր են. և որչափ շուտ հեռանան նրանք Էջմիածնից, այնքան էլ լաւ, եթէ ոչ ազգը կը կորցնի բոլորովին իր հաւատը...

Մենք պահանջում ենք և իրաւունք ունենք պահանջելու, որ մեր հոգևորականները Վեհի ընտրելուց յետոյ, թէև դա չը լինէր իրանց ցանկացածը, սիրածը, պաշտածը, խոնարհէին իրանց գլուխները ազգի ընտրութեան առաջ և ոչ միայն խօսքով, երեսանց, այլ անկեղծ սրտով, բաց հոգով կրկնէին՝ կեցցէ կաթողիկոսը...

Մենք պահանջում ենք և իրաւունք ունենք պահանջելու, որ մեր հոգևորականները իմանան և ընդունեն օրէնք յանուն արդարութեան, ճշմարտութեան, այլ ոչ անձնական թշնամութեան, և ընդունեն, ճանաչեն կարգապահութիւն յանուն ազգի բարձր շահերի։

Եթէ Վեհափառի ձեռքի մէջ չը կայ ոյժ պատժելու, հնազանդեցնելու, մի՞թէ բարոյական ոյժը ոչինչ չարժէ այն հոգևորականների աչքի առաջ, որ ամեն օր կարդում են եկեղեցում Սուրբ Գիրքը և խօսում են ամեն օր բարոյականութեան մասին...

Միանանք ուրեմն բոլորս, հարուստ և աղքատ, երիտասարդ և ծեր, աշխարհական և հոգևորական, Վեհի շուրջը։ Օգնենք նրան բոլորս որչափ կարող ենք, և ազգը կը շահվի, երջանիկ կը լինի...

Իսկ մենք միայն այդ ազգի կտորներն ենք...

Կաթողիկոսը մեռաւ, կեցցէ կաթողիկոսը...

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ*)

Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրում է ազգը։

Հաստատում է Կայսրը։

Կաթողիկոսի ընտրութեան եղանակը հնացած է, ընտրութեան ժամանակ եղած են ցաւալի դէպքեր։ Տրված էր բողոք։

Բողոքը թողնվել է առանց հետևանքի։ Ընտրութեան եղանակը փոխվելու է Դումայի միջոցով, իսկ այժմ մեզ համար բարեպատեհ ժամանակ չէ։ Ցաւալի դէպքերը պէտք է մոռանալ, որովհետև կարող չէ ազգը տուժել տասնեակ, նոյնիսկ հարիւր, նոյնիսկ հազար և հազարներ՝ անհիմն գործված սխալների շնորհիւ։ Պէտք է մոռանալ այս բոլոր ցաւալի դէպքերը։

Եղբայրներ ենք մենք, չէ՞։

Չը կայ այլևս Սուրէնեան մեզ համար։ Իր անցեալով, գործերով նա գնաց, անհետացաւ, մեռաւ։

Մեր առաջ կանգնած է Գէորգ V.

Այսօրվանից, միայն այսօրվանից կը սկսվի Նրա պատմութիւնը։

Այն, ինչ որ եղել է, անցել է, գնացել, անհետացել։ Կաթողիկոսը ինքը պիտի մոռանայ այդ անցեալը։ Նրա համար լինելու չեն սիրելիներ, ընտրեալներ և՝ գլխաւորը՝ «ընտրողներ»...

Գէորգ V Ամենայն Հայոց Կաթողիկոս է։

Պատգամաւորները կատարեցին իրանց պարտքը։

Դէմ առ դէմ կանգնած են այժմ՝ ազգը մի կողմից և Կաթողիկոսը միւս կողմից։ Բազմաչարչար, բազմակարօտ ազգը իր յոգնած աչքերը բարձրացնում է իր Հայրապետի վրա և սպասում է նրանից դարման եղած վէրքերին, ցաւերին, դարդերին... Ծով վէրքերին, ծով ցաւերին, ծով դարդերին...

**) Տպագրելով մեր բեղմնաւոր աշխատակցի ներկայ յօդուածը—թէև համաձայն չը լինելով նրա արտայայտած այն մտքի հետ, թէ հայ ազգը կաթողիկոսից է սպասում դարման իր ցաւերին, դարդերին—մենք մեր կողմից էլ կը մաղթէինք, որ նրա օպտիմիստ յոյսերը իրականանան և նոր Կաթողիկոսը արդարացնէր այդ յոյսերը և ի չիք դարձնէր մեր պեսսիմիզմը։*

«Մշակի» խմբ.

Գութ, կարեկցութիւն, անսպառ, անհուն սէր սպասում է ազգը իր Վեհից։

Գործ, եռանդ և կարողութիւն պահանջում է ազգը իր Վեհից։

Իսկ Վեհը։

Նա ազգի հոգևոր պետն է և ծառան։

Ոչ ազգականութիւն, ոչ խնամիութիւն, ոչ բարեկամութիւն...

Միայն ազգի շահերին, ազգի փրկութեանը, ազգի ծառայութեան գործին նա պիտի նուիրէ իրան ամեն օր, ամեն ժամ, ամեն րօպէ...

Սակայն մի բան նա իրաւունք ունի պահանջել ազգից՝

Հաւատ դէպի իր անձը։

Դուք կարող էիք չը հաւատալ սրբազան Սուրէնեանին։ Բայց դուք պիտի սիրէք, յարգէք և հաւատաք Գէորգ V-ին, որովհետև Սուրէնեանը երէկ մեռաւ մեզ համար, այսօր Գէորգ V-ն է մեր առաջ կանգնած։

Ես չը գիտեմ ինչ կը տայ մեզ Գէորգ V, բայց ես գիտեմ, որ Էջմիածնի Աթոռը ունի իր մէջ մի ոյժ, արտասովոր, գերբնական ոյժ՝ բարձրացնելու, գեղեցկացնելու և ազնուացնելու...

Մակար կաթողիկոսի պատմութիւնը մեր աչքի առաջ է։

Մոռանանք բոլորս մեր անձնականը, մեր ոխը, մեր կրքերը, մեր ի դերև ելած յոյսերը... Դէմ յանդիման կանգնած են այսօր ազգը և կաթողիկոսը, ազգը՝ կարօտ կաթողիկոսի եռանդին, կաթողիկոսը՝ կարօտ ազգի սիրոյն... Աշխատենք օգնել երկուսին։ Երկուսն էլ ունեն լուծեր քաշելու, տանելու, մեծ և ծանր լուծեր։ Թեթևացնենք, կանգնած կողք-կողքի, ձեռք տուած իրար, մէկ մարմին, մէկ հոգի դարձած...

Պէտք է վերջ դնել այն ազգակործան քաղաքականութեան, որին հետևում էր մեր հոգևորականութեան մի մասը Հայրիկի և Մատթէոս Բ.-ի օրերին՝ ձգտելով փչացնել կենդանի ծառի արմատները...

Կենդանի ծառը դուք չէք, հայր-սուրբեր. կենդանի ծառը՝ ձերը չէ, հայր-սուրբեր։

Կենդանի ծառը Էջմիածինն է։ Նա ազգինն է։ Եթէ դուք չէք ուզում, կամ չը գիտէք խնամել այդ ծառը, գէթ խնայե-

ցէք, մի՛ մօտենաք նրան, քաշվեցէք ձեր խուցերը...

Ազգը և Վեհը կանգնած են դէմ յանդիման։

Ազգը ցանկանում է իր Վեհին կարողութիւն, ոյժ, եռանդ գործելու ի փառս մեր եկեղեցու և մեզ բոլորիս համար։

Կեցցէ ուրեմն Ամենայն Հայոց Կաթողիկոսը*)։

---

*) «Մեր յայտնի հրապարակախօս Գր. Չալխուշեանը ասում է, որ պէտք է մօտենալ, շրջապատել կաթողիկոսին, սիրել, աջակցել նրան, որից ազգը սպասում է գութ, կարեկցութիւն, դարման ազգի ծով-վէրքերին, ցաւերին, գործերին... Ես միանում եմ «Մշակի» խմբագրութեան կարծիքին... Ազգը չը պիտի սպասէ կաթողիկոսից իր ցաւերին դարման, այլ ինքը պէտք է առաջադիմէ...»։

Լեոն Վարդեան

«...Օգուտ եմ քաղում դէպքից արտայայտելու իմ խորին համակրութիւնը այն գեղեցիկ յօդուածի համար, որ զետեղված էր ապրիլի 1-ի կիրակնօրեայ համարում, այն է՝ Գր. Չալխուշեանի «Ամենայն Հայոց Կաթողիկոսը» յօդուածը։

Մարիամ Խատիսեան

(«ՄՇԱԿ»)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Կիրակի ժամը 10$^{1}/_{2}$-ին Վեհափառը ժամանեց Ռօստով։ Մենք բաղդաւորութիւն ունեցանք ներկայանալ Նոր-Նախիջեւան և մինչև գնացքի Ռօստով կայարանում կանգնելը՝ մենք խօսեցինք մի քանի կարևոր հարցերի մասին։ Վեհափառը վրդովված էր «Нов. Вр.» լրագրի յօդուածի առիթով։ Յօդուածագիրը նրան վերագրում է այնպիսի խօսքեր և այնպիսի մտքեր, որ Վեհափառը երբէք ասած չէ և ասել էլ անկարող էր։ Պ. Եւանգուլեանը այդ մասին ուղարկել է հերքում Թիֆլիս Ս. Յարութիւնեանին։

—Իրաւունք էք տալիս ինձ, Վեհափառ, հեռագրել այդ մասին այսօր «Մշակին»,—ասացի ես։

—Խնդրեմ։

Եւ ես «Մշակին» հեռագրեցի։

Ռօստովի կայարանում պատահում է մի դէպք։ Նոր-Նախիջեւանի քաղաքագլուխ Մ. Գալապանեանը և վարչութեան անդամ Կ. Խադամեանը ցանկանում են, ինչպէս միշտ սովորութիւն է, գլխարկները վզներին դիմաւորել Վեհափառին։ Քաղաքապետի պաշտօնակատարը հրամայում է գլխարկները հանել։ Պ. Գալապանեանը հանում է և առաջարկում է և Խադամեանին հանել գլխարկը։

Յանկարծ գալիս է Ռօստովի քաղաքագլուխը, Դումայի աջակողմեան կուսակցութեան անդամ՝ Բիրեանովը։ Քաղաքապետի պաշտօնակատարը նոյն առաջարկութիւնը անում է և Բիրեանովին։

—Այստեղ ես Բիրեանով չեմ, այլ քաղաքագլուխ, և շղթաս չեմ հանի վզից, — պատասխանում է նա, իր պատիւը պաշտպանելով։

—Ուրեմն, պարոններ,— ասում է քաղաքապետի պաշտօնակատարը Գալապանեանին և Խադամեանին, — միակերպութեան համար, դուք ևս դրէք ձեր վզներին ձեր շղթաները։

Փողոցները լիքն են ժողովրդով, պատուհանները բաց, տեղ-տեղ երևում են գորգեր, դրօշակներ, կանաչեղէններից ժապաւէններ, լսվում է «կեցցէ» կոչը, և ամպհովանու տակ Գէորգ V գորգերի վրայով դիմում է ս. Լուսաւորիչ մայր եկեղեցին: Պատարագիչ աւ. ք. Զարիֆեանը դիմում է իր ողջոյնովը, հ. Չէօրէքչեանի խումբը այսօր երգում է, ինչպէս միշտ, գեղեցիկ, ներդաշնակ: Խօսում է Վեհափառը կարճ, բայց ազդու, բարեգործական հիմնարկութիւնների առիթով և ուրախ է, որ Նոր-Նախիջևանի գաղութը սրտով, հոգով հայ է մնացել: Ժամը երկուսին ակմբանոցում սկսվում է ընդունելութիւնը: Բոլոր տեղական հաստատութիւնները ուղարկել էին իրանց ներկայացուցիչներին: Երեկոյեան ժամը 6-ին քաղաքային վաճառականների ակմբանոցում տրվեց ճաշ ի պատիւ Կաթողիկոսի: Ճաշին քաղաքապետի պաշտօնակատարը առաջարկեց բաժակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը: Քաղաքիս սանուհի օր. Շ. Նուրբէկեանը հ. Չէօրէքչեանի խմբի հետ գեղեցիկ երգեց՝ «Տէր կեցո զՀայս»: Իմ կողմից արտասանվեց հետևեալ ճառը.

«Վեհափառ Տէր!

«Այն բաժակը, որ առաջարկեց Ձեր կենացը քաղաքապետի պաշտօնակատարը, ես բարձրացնում եմ Նոր-Նախիջևանի հայ-հասարակութեան բերնից: Վաղուց արդէն մի տեսակ աւանդութիւն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կայսեր տեսութիւնից յետոյ, մայրաքաղաքից վերադառնալով Էջմիածին, մտնի Կովկասի դուռը՝ Նոր-Նախիջևան և այստեղ հիւրասիրվի: Այսօր մենք բաղդաւորութիւն ունենք հիւրասիրել Ձեզ, Վեհափառ Տէր. Նոր-Նախիջևանի հասարակութիւնից խորին ակնածութեամբ ողջունելով Ձեզ, ես յայտնում եմ մեր յարգանքը և այդ յարգանքի հետ մեր սէրը: Հեռու հայրենական հողից, միշտ կարօտ հայրապետական օրհնութեան, Նոր-Նախիջևանը մինչև այժմ մնացել է կանգուն, չէ անհետացել, որովհետև նրա աչքերը միշտ դարձած են դէպ հարաւ: Դեռ մանկական բաղցր օրերից մենք միշտ երազել ենք և երազների մէջ տեսել ենք Էջմիածնի տաճարի գմբէթի խաչը, և նրա խորանի առաջ վառված կանթեղը. և այդ խաչն ու այդ կանթեղը անդադար պըլպլում են և ցոլում մեր՝ բազմակարօտ աչքերին, և կարծես մեր սրտերի խորքերում մենք ամուր պահած ունենք մի դիւթական բան, մի նշխարք, մի կտոր բարձր Մասիսի ճակատից, մի փոքր կտոր, որ մեզ կենդանացնում է, ապրեցնում և փչում մեր վրա հայ սիրտ, հայ հոգի... Հեռանալով այստեղից և բաղ-

մելով ս. Լուսաւորչի Գահը, Դուք, Վեհափառ, կը տանէք Ձեզ հետ խոր համոզմունք, որ մենք Ձեր իսկական զաւակներն ենք. Դուք կը տանէք մի խոր համոզմունք, որ Դուք՝ ազգի Պետը և մենք՝ ազգը ձուլված ենք միասին և կազմում ենք մի մարմին, մի հոգի և՝ կաւելացնեմ՝ մի կամք, մեր տառապեալ, բազմակարօտ, բոլորից մոռացված ժողովրդին ծառայելու համար: Իսկ մենք հեռուից սիրով կը նայենք Ձեր բոլոր քայլերին, լի յոյսերով և հաւատով, որ Դուք կը գործէք միայն ազգի համար և՝ որ գլխաւորն է՝ ազգի հետ»...

Վեհափառը յուզված է, աչքերը արտասուք:

«Պ. Գրիգոր Զալխուշեան,—սկսում է Նա,—ձեր խօսքերը ինձ յուզեցին: Դուք իսկական հայրենասէր էք, այն խելացի հայրենասէրը, որ հետևում է Աւետարանի խօսքերին՝ «Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»: Եթէ դուք անձամբ չը տեսնէիք Էջմիածինը, դուք չէիք կարող այդպէս գեղեցիկ զգալ և խօսել: Իսրայէլացոց վրա պարտք էր դրված տարին մի անգամ երթալ Երուսաղէմ և համբուրել Սողոմոնի տաճարի քարերը: Ո՞հ, եթէ մենք հայերս ևս զգայինք այդպիսի պարտականութիւն: Այս դահլիճի մէջ կան շատերը, որ չեն եղել Էջմիածին, չեն տեսել ս. Տաճարը: Բոլոր հայերը պարտական են այցելել Էջմիածինը. Նա մագնիս է, որ քաշում է իրան հային: Այո՛, դուք բոլորդ այստեղ բաղդաւոր էք: Ես տեսայ ձեր բարեգործական հաստատութիւնները, որ ծաղկում են, տեսայ ձեր դպրոցները: Դուք անգամ օգնում էք Նախիջևանից դուրս՝ սաներ պահելով, օգնելով և ճեմարանին. և այսօր, երբ տեսայ ձեր հաստատութիւնների բարւօք վիճակը, ես յիշեցի մեր ուրիշ դպրոցները, այստեղից հեռու, յիշեցի և լացի»...

Վեհափառը յուզված հեռանում է: Սկսում են կենացներ առաջնորդների, Էջմիածնի միաբանութեան, յիշում են պատգամաւորներին՝ պ. պ. Կուսիկեանին, Կոստանեանին, Մուշեղեանին և ուրիշներին, որ թողել են իրանց գործերը և եկել են Նախիջևան: Խմում են կենացը և տեղիս յանձնաժողովի անդամների՝ մանաւանդ Սալթիքեանի, Միրզօյեանի, Շահազիզի և Արքէլեանի, որ շատ էին աշխատել Կաթողիկոսի ընդունելութեան ժամանակ: Ժամը 9-ին ժողովուրդը ցրվեց, մնալով գոհ Վեհափառից:

Սկիզբը լաւ է և բարի...

Թող լինի լաւ և բարի և՛ շարունակութիւնը և՛ վերջը:

ԴԱՍԱԴՈՒԼՈՎ ԱԶԳԻ ՏՈՒՆԸ ՉԻ ՇԻՆՎԻ, ՍԻՐԵԼԻՆԵՐ

Մսավաճառների և… մեր ճեմարանի ուսանողների շաբաթ։

Գործադուլ և… դասադուլ…

Մսավաճառները ցանկանում են վաճառել միսը սակագնից բարձր գներով, քաղաքային վարչութիւնը արգելում է. և մսավաճառները պատժում են մեզ, փակելով իրանց խանութները, որպէսզի թողնեն մեզ առանց մսի… Ճեմարանի ուսանողները վճռել են… արձակել պաշտօնից Բագրատ սրբազանին և հրաւիրել Սիրական Տիգրանեանին…

Հակառակ դէպքում նրանք պատժում են մեզ… հրաժարվելով յաճախել պարապմունքներին…

Նրանք փակում են աչքները, խցում են ականջները, հեռանում են դասարաններից, որ չը տեսնեն ուսուցիչներին, չը կարդան գրքեր, չը լսեն դասեր, չը լուսաւորվեն…

Դասադուլ…

Լինում են և յիմար խօսքեր։

Դասադուլը ամենայիմար խօսքն է, որից աւելի անմիտը դեռ չէ եղել, չը կայ…

Հրաժարվել լոյսի շողերից, ճշմարտութիւնից, արդարութիւնից, սիրել խաւար և մութ, նախադասել գէշերը ցերեկին. հոգու մաքրութիւնը՝ կեղտին, և այդ բոլորը մատաղ հասակում, երբ դեռ կեանքի դժուար պայմանները չեն դրել իրանց ծանր դրոշմը մարդու հոգու վրա… դա անհասկանալի է, անհասկանալի։

Պատճառնե՞րը։

Եթէ ասէին՝ թող հեռանայ Բագրատ եպիսկոպոսը, ես կը մտածէի, թէ գուցէ սրբազանը մեղանչել է մատաղ սերնդի առաջ։

Բայց երբ պահանջում են, որ սրբազանը տեղը տայ Սիրական Տիգրանեանին, ինչքան էլ ես յարգէի, սիրէի Սիրական Տիգրանեանին, ես պիտի խոստովանեմ, որ ճեմարանի ուսանողները չափից, ամեն չափերից անցել են, կուրացել են։

Ասացէք, խնդրեմ, աշխարհի ո՞ր անկիւնում աշակերտին տրված է իրաւունք պահանջել, որ տեսուչը արձակվի և նրա տեղ նշանակվի այս-ինչ անձը։ Ո՞ր վարդապետութիւնը, թէև ամենադեմօկրատիկ, արտօնում է ուսանողներին իրաւունք՝ հրաւիրել, նշանակել ուսուցիչներ, տեսուչներ։

Ինչո՞ւ այդ անիծեալ անկիւնը պիտի մերը լինի և ինչո՞ւ այդ նոր յիմար վարդապետութիւնը մեր միմոսները առաջինները մեզանում պիտի քարոզեն համարձակ։

Ես յարգում եմ Սիրական Տիգրանեանին, ուստի համարձակվում եմ հայ ժողովրդի անունից դիմել նրան հարցով. գիտէ՞ նա այն աղմուկը, որ հանում են նրա անուան շուրջը. եթէ գիտէ, արդեօք հաւանո՞ւմ է այդ դասադուլը և ինչո՞ւ շիտակ չէ յայտնում մամուլի միջոցով, որ ինքը հրաժարվում է գալ էջմիածին իբր ճեմարանի տեսուչ այդպիսի պայմաններում ընտրված, հրաւիրված աշակերտներից…

Արդեօք ժխտո՞ւմ է Ս. Տիգրանեանը, որ միայն Վեհափառը կարող է հրաւիրել և արձակել տեսչին, և այն՝ ոչ ուրիշի սանլովը, մանաւանդ սաստովը և կամ՝ գլխաւորը՝ դասադուլովը կամ դասադուլերովը, այլ միայն իր խղճի և մտքի ազատ ձայնովը, իբր ազգի հլու ծառայ, ազգի շահերը միշտ, անդադար և անսասան աչքի առաջ ունենալով…

Այսօր աշակերտները պահանջում են իրանց տեսուչ Սիրական Տիգրանեանին։

Վաղը նրան չեն հաւանի և կը պահանջեն մի Տիգրան Սիրականեանի։

Ճեմարանը կրկէս չէ և ոչ աշակերտների խաղալիք։

Եթէ ազգը ծախսում է իր լուման, եթէ ազգը հազար ու մէկ չարչարանքներով գլուխ է բերել և պահում է ճեմարան, աշակերտները պէտք է սովորեն, իսկ չը ցանկացողները պէտք է անմիջապէս հեռանան և արձակվեն…

Մի վայրկեան կարելի չէ թոյլ տալ կարծելու ումեւիցէ, որ աշակերտները իրաւունք ունեն պատկանել այս-ինչ կամ այնինչ կուսակցութեան, պարապել քաղաքականութեան հարցերով, մոռանալ՝ որ եկել են սովորելու, հարստացնելու իրանց խելքը և միտքը և ոչ թէ հրամայելու, տնօրինելու և պահանջելու, դառնալու արկածախնդիր պարոնների և հոգեորականների շահերին ծառայելու…

Յիշո՞ւմ էք այն մանուկներին, որ ցանկանում էին մօտենալ Քրիստոսին։ Մանուկներին արգելում էին, չէին թողնում։ Տեսաւ Քրիստոս և ուրախացաւ։ Թողէք, որ գան ինձ մօտ. նը-

րանց համար է արքայութիւնը, ասաց Նա, և մանուկները շըրջապատեցին Նրան սիրով...

Այսօր մեր փարիսեցիները, բազգախնդիր և արկածախընդիր պարոններ և հոգևորականներ, սուտ վարդապետութիւններով լցնում են մեր ուսանողների գլուխները և արգելում են, որ նրանք մօտենան իրանց Քրիստոսին՝ լուսաւորութեան։

Ամեն մի ազնիւ հայի պարտքն է հանել այդ փարիսեցիների դիմակները, վռնտել նրանց խարազաններով, որ հեռանան, քաշվեն և չարգելեն մանուկներին սիրել, ընդունել և իւրացնել լուսաւորութեան բոլոր գեղեցիկ շողերը, որ մի օր այդ մանուկները՝ չափահասներ դարձած կարողանան ամենայն սըրբութեամբ տանել այդ շողերը, տալ և տարածել այն ազգի մէջ, որ կարօտ է նրանց, միշտ մութի, միշտ խաւարի մէջ խարխափած, միշտ սպասելով իր փրկիչներին...

Իսկ այդ ապագայ փրկիչները այսօր դաստգուլ են անում, խաղալիքներ դարձած զանազան պարոնների և հոգևորականների ձեռքերին...

Այդ պարոններին և հոգևորականներին, որ փորաքարշ սողում են օձերի նման ճեմարանի շուրջը, խառնում, պղտորում մեր մանուկների անփորձ սրտերը և կարծես եռեւից, թիկունքից մեր ազգին հարուածներ տալիս, մենք խնդրում ենք քաշվել իրանց անկիւնները և խուցերը և չարգելել, որ մեր մանուկները դառնան իրանց Քրիստոսին, որովհետև այդ մանուկների համար է երկնքի արքայութիւնը...

Այդ երկնքի արքայութիւնը ապագայ նրանց աշխարհիտասպարէզն է լայն, փշոտ, բայց գեղեցիկ, լուսաւոր և բեղմնաւոր, արդար և ճշմարիտ՝ ազգին ծառայելու մինչև վերջին շունչը, արեան վերջին կաթիլը։

Դասադուլով կարելի է ազգի տունը քանդել։

Դասադուլով ազգի տունը չի շինվի, սիրելիներ...

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ 50-ԱՄԵԱԿԸ

(Իմ նուէրը Եկատերինոդարի աղա-Բօղարսուքեաններին)

Ով ուզում է մեր անցեալի փառքը տեսնել, ըմբռնել և իմանալ, թող երթայ Անի, նայէ, ուսումնասիրէ նրա փայլուն աւերակները, որ կենդանի ապացոյցներ են մեր նախնիների շինարար տաղանդին։

Բայց ով ուզում է իմանալ, թէ որչափ մենք՝ նրանց ժառանգներս փոքրացել և մանրացել ենք, թող չերթայ Անի, այնքան հեռու, թող նա բաղխէ դուռը առաջին հայ դպրոցի։

Ես բաղխեցի դուռը Եկատերինոդարի երկսեռ ծխ. դպրոցի, որի 50-ամեակը անցաւ, բայց չը կատարվեց նոյեմբեր ամսին. բաղխեցի և մտայ, մտայ և զարմացայ, ոչ այնպէս, ինչպէս զարմանում է ռամիկը անցնելով պ. Մանթաշեանի ձիերի ախոռով, ընդունելով նրան մի եկեղեցի և խաչակնքելով երեսը. ես զարմացայ, ցաւած, դառնացած, յուզված, դժուարութեամբ զսպելով իմ արտասուքները։

Տեսայ Եկատերինոդարի հայ դպրոցը և հայ աղջիկներ ու տղաներ գունատ, դեղնած, մաշված, կարծես չը մեծացած՝ արդէն ծերացած...

Յիսուն տարի գոյութիւն ունի այդ դպրոց։

Յիսուն տարվայ մէջ այստեղ հայերը դիզել են այնքան հարստութիւններ։

Բաւական է յիշել Թորոսեաններին և Բօղարսուքեաններին, միլիօնատէրերին։

Նրանց զաւակները սովորել են և սովորում են արքունի դպրոցներում։ Նրանք պակաս չունեն. նրանց ժպտում է կեանքը, շոյում, փայփայում և օրօրում...

Երջանիկ մանուկներ, թող երջանիկ լինի կեանքը միշտ...

Իսկ աղքատ դասակարգի հայ մանուկները քաղցած են, ծարաւ են, մրսում են, դողում են, կորցնում առողջութիւն,

մանկական ուրախութիւն, մանկական ժպտի և իրանց աշնան կեանքից մտնում ձմեռ, չը տեսնելով ոչ գարուն, ոչ ամառ…

Եւ յիսուն տարվայ միջոցին Եկատերինօդարի աղաները և համալսարանականները խուլ մնացին այդ մանուկների գանգատներին, լացին, կոծին…

Քէֆով անցկացնելով իրանց օրերը, գեղեցիկ պալատներում ապրելով արքաների նման, հայ աղաները չեն մտնում հայ դպրոց և չեն նայում, թէ ինչ է այնտեղ կատարվում։

Երևակայեցէք մի կազարմա, մի ախոռ շինված 70 մարդու համար։

Իսկ այժմ աշակերտների թիւը հասնում է 176-ի, որոնցից 105-ը աղջիկներ են և 71-ը տղայ։ Նրանք հեռու տեղերից են եկած, Անդրկովկասից, Թիւրքիայի խուլ անկիւններից. դասարաններում չը կայ օդ. հասկանում էք, պարոնայք եկատերինօդարցի աղաներ և համալսարանականներ. չը կայ օդ. մանր երեխաները երբեմն ընկնում են ուժասպառ։ Ցուրտ է, 11 և ամենաշատը 12 աստիճան։ Փչում է ամեն կողմից, յատակը, պատերը, առաստաղը անմաքուր և շէնքը խարխուլ, մութ, անհիւրընկալ…

Հասկացէք, եկատերինօդարցի աղաներ և համալսարանականներ, որ դուք փոխանակ լուսաւորելու մի մատաղ սերունդ, պատրաստելու նրան վաղվայ կեանքի կուին, փոքր առ փոքր թունաւորում էք նրան և սպանում։ Տեսէք նրանց դեղնած, գունատ, տանջված երեսները. ինչպէ՜ս նրանք նիհար են, ինչպէ՜ս խեղճ են։ Նայեցէք նրանց արդար աչքերին, որոնց մէջ չը կայ երեխայական ուրախութիւն և երեխայական ժպիտ, այլ դառնութիւն, միայն դառնութիւն։ Դրանք ձեր անամօթ խամոլութեան զոհերն են։ Դրանք տկարանում են, հիւանդանում, մեռնում։

Դուք էլ ունէք զաւակներ։

Ձեր զաւակների ժպիտը այնքան թանգ է ձեզ համար։ Ի՞նչ զոհ պատրաստ չէք անելու նրանց առողջութեան համար։

Իսկ ազգի այս հարիւր եօթանասուն վեց մանուկները, որոնք յանձնված են ձեզ, որոնց դուք հայրերն էք, մի՞թէ դուք չէք ամաչում տեսնելով ձեր դպրոցը և մի՞թէ դուք չէք հասկանում, որ դուք մարդասպաններ էք։

Այո՛, մարդասպաններ…

Դուք սպանում էք մէկ-մէկ, մէկ-մէկ այդ մանուկներին, կամաց-կամաց, աննկատելի կերպով, թունաւորելով նրանց ձեր ախոռ-դպրոցի օդով. և ամեն օր անցնելով դպրոցի մօտով,

դուք չէք մտնում դպրոց, չէք տեսնում ձեր յանցանքը, ձեր մեղքը. դուք հանգիստ սրտով մտնում էք տուն՝ շոյելու, սիրելու ձեր զաւակներին…

Մի՞թէ այս խեղճերն էլ ձեր զաւակները չեն։

Մի՞թէ նրանք արժան չեն ձեր գութին, ձեր սիրոյն, ձեր խնամքին. օդ չը կայ. թող՝ ինչքան կուզէք և ցուրտ…

Մատաղ հասակում, երբ այնքան մարդու կազմը կարիք ունի մաքուր օդի, Եկատերինօդարի բարի, գթառատ, ազնիւ աղաները և համալսարանականները իրանց յանձնված մանուկներին պահում են ցուրտ սենեակներում, ուր օդ չը կայ, այլ կայ միայն թոյն…

Եթէ հոգաբարձութիւնը իսկոյն և եթ չը ձեռնարկի դպրոցի շէնքին, նա կը կատարէ, ոչ, նա կը շարունակէ իր մեծ, ծանր, աններելի, քստմնելի յանցանքը։

Այդ յանցանքի համար ձեզ չեն դատի։

Այդ յանցանքը ձեզ կը ներէ ձեր ապականված հասարակութիւնը։

Բայց ձեզ համար էլ կայ մի դատաւոր։

Դա ձեր խիղճն է։

Դուք աշխատում էք ձեր խիղճը խնայել, դրա համար դուք չէք մտնում ձեր դպրոցը, չէք նայում ձեզ յանձնված մանուկներին և չէք տեսնում նրանց աչքերը, մեծ, խոշոր, գեղեցիկ հայ աչքերը, որոնց մէջ վաղուց մեռել են մանկական ուրախութիւնը, մանկական ժպիտը, փայլը, որոնց մէջ այժմ ապրում է սոսկ դառնութիւն, միայն դառնութիւն։

Գնացէք, տեսէք նրանց, տեսէք և գթացէք, և թող ձեր խիղճը խօսէ ձեր տեղը։ Դուք էլ հօ ունէք զաւակներ… Յանուն ձեր բաղդաւոր և երջանիկ զաւակների գործեցէք։

Կէս դար դպրոց ունենալը դեռ պատիւ չէ։

Կայ դպրոց և կայ ախոռ։

Մինչև այժմ դուք ունեցել էք միայն ախոռ, որի մէջ անմտօրէն դուք պահում էք համարեա 200 մանուկներ։ Նրանք սննդի են կարօտ, այլ ոչ թոյնի։

Մի սպանէք և մի թունաւորէք ձեր ազգի զաւակներին…

ՄՈՌԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԵԼ...

Մայր-Աթոռի դիւանը քարոզում է... խաղաղութիւն։ Երևանի քսանեհինգ ուսուցիչները մոռացել են, որ Թուրքն էլ Թակում է Վարդանին, հայն էլ։ Հայր սուրբ Բենիկը լաւ է խօսում, բայց գրել մոռանում է փոքր ինչ։

Դրօշը դրօշ է և դրօշ պիտի մնայ։

I

Հայ ժողովուրդը մոռանում է հայերէն խօսել, հայագէտները մոռանում են հայերէն գրել։

Ահա ձեզ տխուր փաստեր...

Նորին Սուրբ Օծութիւն Վեհափառ Կաթողիկոսի դիւանը սեպտեմբերի 7-ի շրջաբերականում, դիմելով մեր հոգևոր թեմական դպրոցներին, գրում է՝

«Ի նկատի ունենալով վերջին տարիների փորձերը և մեր դպրոցների նպատակը և այդ կարգի բոլոր դիտողութիւններով գալ Մայր-Աթոռ խաղաղ և արդիւնաւէտ կերպ գործ կատարելու յօգուտ մեր հոգևոր թեմական դպրոցների կազմակերպութեան և կանօնաւոր կեանքի»։

«Խաղաղ... կերպ»... խաղաղ...

Ի՞նչ է նշանակում դա։

Երբ սրանից մի քանի ամիս առաջ մայրաքաղաքի հայատեաց լրագիրը մեր Վեհին վերագրեց այնպիսի մտքեր, թէ մեր հոգևորականութեան և ժողովրդի մի մասը խաղաղ չէ, մենք վրդովվեցինք, ցաւեցինք և ուրախ էինք կարդալ Վեհի հերքումը այդ մասին։

Այժմ դիւանը, դիմելով թեմական դպրոցների հոգաբարձուներին, շեշտում է՝ եկէք, մենք սպասում ենք, բայց, ի սէր Աստուծոյ, գործեցէք խաղաղ կերպով...

Գործեցէք... խաղաղ...

Մի՞թէ մենք ըմբոստ ենք։

Մի՞թէ մենք միշտ խաղաղասէրներ եղած չենք։

Գործեցէք... խաղաղ...

Գուցէ դա ակնարկութիւն է կենտրօնական ժողովի մասին։

Եթէ այո, դա անտեղի և անհիմն ակնարկութիւն է։

Այն, ինչ որ եղել է մեր կենտրօնական ժողովում, եղել է ամեն տեղ։ Խոհեմութիւնը պահանջում է մոռանալ այդպիսի դէպքեր, որոնք ժամանակաւոր բնաւորութիւն ունէին, որոնք անցան, ինչպէս հողմը անցնում է, գնում և անհետանում։

Հայերը միշտ խաղաղասէր են եղած։

Ըմբոստութիւնը հակառակ է հայի բնաւորութեանը, մտքին, սրտին, հոգուն...

Եթէ դիւանը դիմելով մեզ՝ շեշտում է, որ մենք խաղաղ լինենք, արդեօք ինչ կարծիք պիտի ունենան մեր մասին օտարները։

Օտարները կասեն. ինչ հրէշներ են հայերը, եթէ էջմիածնի դիւանը դիմելով թեմական դպրոցների հոգաբարձուներին, ընտրեալներին, խնդրում է լինել խաղաղասէր...

Երբ Նոր-Նախիջևանի հոգաբարձական ժողովում քարտուղարը կարդաց շրջաբերականը և հասաւ «խաղաղ» խօսքին, բոլոր ներկայ եղողները իրար երեսի նայեցինք, նայեցինք և ցաւեցինք, ցաւեցինք, որ դիւանը մոռանում է հայերէն մտածել և գրել...

II

Հայերէն մտածել, գործել, գրել մոռացել են և հայ ուսուցիչները, Երևանի այն քսանեհինգ ապուշները, որ քօղարկված հրապարակ ելան հայի դատը պաշտպանելու համար...

Թուրքը չէ հայի թշնամին և ոչ քիւրդը...

Մեզ վտանգը սպառնում է... էջմիածնից...

Հայի իրաւունքները խլել է, խլացնում է... էջմիածինը...

Ժողովրդի թշնամին էջմիածինն է... մենք բողոքում ենք... մենք չենք ճանաչում էջմիածինը... մենք ընդունում ենք Թիֆլիսի յանձնաժողովը...

Մենք... մենք...

Ովքե՞ր էք դուք, քսանեհինգ խեղճ հերոսներ, որ այսօր մոռացել էք այն, ինչ որ լաւ գիտէիք ձեր աշակերտական նըստարաններում, երբ ցաւած սրտերով տեսնելով մեր հազար ու մէկ թշուառութիւնները՝ մտածում էիք, թէ Թուրքն էլ Թակում է Վարդանին, հայն էլ Թակում է Վարդանին...

Այո, Վարդանին...

Ո՞վ է այդ Վարդանը, խեղճ ինքնակոչ ասպետներ...

Մենք ենք այդ Վարդանը, ժողովուրդը, խեղճ հայ ժողովուրդը, որի իրաւունքները իբր թէ դուք պաշտպանում էք, մինչդեռ դուք այդ իրաւունքները ոտնակոխ էք անում յանուն ձեր անձնական կրքերի, ճիգ թափելով տապալել այն, ինչ որ առանց ձեզ էլ մեր թշնամիները աշխատում են տապալել և ոչնչացնել...

Թող թակի քեզ Թուրքը, Վարդան. ոչինչ. Թուրքը երբ մեզ սիրել է, խղճացել է. դու կը տանես քո տառապանքդ, կը տանես անվեհեր սրտով. բայց ինչո՞ւ, ինչո՞ւ թակեն քեզ քսանևհինգ հայ ուսուցիչներ, Վարդան ջան...

Վաղ է մեռել անմահ Սերվանտեսը։ Ինչո՞ւ չը տեսնէիր մեր քսանևհինգ հայ Դօն-Քիշօտներին, որոնք իրանց գրիչները—սուրերը դարձնում են այսօր ոչ թէ ջրաղացքի դէմ, այլ էջմիածնի հին, մաշված, խարխուլ պատերի դէմ...

Աշխատեցէք, աշխատեցէք, քսանևհինգ հայ ուսուցիչներ, գուցէ ձեր աշխատանքը պսակվի և պատերը փշրվեն...

Ամաչեցէք գոնէ խօսել հայ ժողովրդի բերանից։ Միայն մեր ամենամեծ թշնամին կը գրէր և կը ստորագրէր ձեր գրածը...

Ժողովուրդը ձեզ պէս խելօքներ շատ է տեսել, համբերել և տարել...

Չէ՞ որ ժողովուրդը այն Վարդանն է, որին թակում է և ոխերիմ Թուրքը, և ձեզ պէս խելօք հայերը...

III

Այնքա՜ն սիրում եմ լսել հայր Բենիկի քարոզները։

Աստուածային կրակը վառ պահած սրտում, ոգևորված, միշտ յուզված՝ նա խօսում է այնպէս, որ կարծես երգում է մի գեղեցիկ երգ, և լսողը միայն մի բանից է վախենում, որ այդ երգը կը վերջանայ, հայր սուրբը կը դադարեցնէ իր խօսքը։ Լռում է հայր-սուրբը, իսկ երգը կարծես շարունակվում է։ Այժմս այդ երգը մեր մտքումն է, սրտերի խորքերում։

Մեր հայ հռետորների կարգում Բենիկ վարդապետը առաջին տեղերից մինում է փայլում իր տաղանդով։

Հիանալի է խօսում հայր Բենիկը։

Բայց արդեօք հայր Բենիկը գիտէ՞... գրել... գրել հայերէն, մտածելով հայերէն...

Անշուշտ գիտէ, թէև... թէև պահ մի մոռացել է...

«Մշակի» էջերում հայր սուրբը գրում է.

«Նիւթական միջոց չունէի և ինձ համար շատ ծանր օրեր էին վրա հասել։ Որովհետեւ ես Էջմիածնին անպէտք եմ եղել, ուստի Մայր Աթոռը կարևոր չը համարեց ինձ նպաստ տալ»։

Հայր սուրբը, որին ես ճանաչում եմ և բարձր գնահատում, կարդալով իր այս տողերը՝ պիտի խոստովանէ այժմ, որ միայն «ծանր օրերը» պատճառ են եղած այդպիսի ոճ բանեցնելու... հրապարակով, մամուլի միջոցով...

Թող այն 25 ուսուցիչները, Էջմիածին ասելով, հասկանան Էջմիածնի պատերը և կամ մի քանի միաբաններին. Էջմիածինը հայր Բենիկի համար՝ պիտի լինի, մնայ մի նուիրական, մի սուրբ գաղափար, մի գեղեցիկ դրօշ։

Փոյթ չէ, եթէ այդ դրօշի շուրջը ժողոված են գինուորներ, որոնք բարձր չեն կանգնած իրանց կոչման մէջ, դրօշը դրօշ է և դրօշ պիտի մնայ... Զանպատւենք նրան, չը ցածացնենք նրան...

Մենք զարմանում ենք և ցաւում, որ Էջմիածնի միաբանները չը կարողացան ըստ արժանւոյն գնահատել հայր Բենիկին և չօգնեցին նրան, երբ սև ու ծանր օրեր էին վրա հասել։ Մենք իրաւունք ունենք իմանալու, թէ ինչո՞ւ այդ միաբանները մնացին խուլ՝ հայր Բենիկի դիմումներին։

Իսկ եթէ Միլեաններ, Ղուկասեանններ, Խունունցներ, Վարագեաններ չը լինէին, մի՞թէ հայր Բենիկի պէս տաղանդաւոր հռետորը պիտի հիւանդ մնար մեր միաբանների անփութութեան պատճառով։

Տաղանդաւոր հոգևորականները սակաւ են մեզանում։

Պէտք է նրանց սիրել, յարգել, գնահատել...

Թող այդ կողմից Էջմիածնի միաբանները օրինակ ցոյց տան մեր ժողովրդին։ Թող նրանք ապացուցանեն, որ գիտեն տաղանդաւորներին ճանաչել...

Գուցէ միաբանները տաղանդաւորներին աւելորդ են համարում իրանց շրջանում...

ԻՄ ՃԱՌԸ

Արտասանած «Մշակի» յոբելեանական հանդէսին, մայիսի 26-ին Արքունական թատրոնում։

Նոր-Նախիջեւանը ուղարկեց ինձ ներկայ լինելու «Մշակի» 40-ամեայ յոբելեանին։

Նոր-Նախիջեւանը կարող չէր խուլ մնալ և չուղարկել ինձ։ Քառասուն ձիգ տարիներ «Մշակի» փայլուն սիւներից լսվել են գեղեցիկ խօսքեր, այն գեղեցիկ խօսքերը, որ այնքան նման են ցորենի գեղեցիկ հատիկներին։ Պատահում է, որ նրանցից շատերը ընկնում են ապառաժ քարերի վրա։ Արեգակը նրանց այրում է, ցուրտը չորացնում և քամին փչում, տանում, անհետացնում։ Բայց աշխարհը մեծ է, նա միայն ապառաժ քարերից չէ։ Կայ և պարարտ հող։ Բաղդաւոր հատիկները ընկնում են պարարտ հողի ծոցը, ընկնում, քնում, յետոյ զարթնում, նայում տաք արեգակին, կապոյտ երկնքին, նայում և ժպտում, ժպտում և կանաչում...

Այդպէս են և գեղեցիկ խօսքերը։ Շատ անգամ նրանք ընկնում են ապառաժ սրտերի վրա, չքանում, մոռացվում և յետ թռչում, ինչպէս յետ է թռչում գերեզման ձգած մի բուռն հողը՝ դագաղից։ Բայց աշխարհը մեծ է և մարդիկ միայն քարսրտեր և դագաղներ չեն։ Կան զգայուն սրտեր։ Գեղեցիկ խօսքերը զգայուն սրտերում աճում են, ճոխանում, դառնում գեղեցիկ պատգամներ և տանում դէպի գեղեցիկ գործեր...

Նոր-Նախիջեւանի հայ հասարակութիւնը յայտնում է իր երախտագիտական բուռն զգացմունքները «Մշակին» նրա 40-ամեայ գեղեցիկ քարոզների համար։ Այդ քարոզները զարթեցրել են հայ միտքը և հայ խիղճը։ Ցածր խոնարհելով գլուխը Գրիգոր Արծրունու մեծ յիշատակի առաջ, Նոր-Նախիջեւանը ողջունում է ձեզ, «Մշակի» այժմեան գործիչներիդ, ցանկանալով ձեզ ոչ անդորր խաղաղ կեանք և երջանկութիւն, ոչ, միայն կռիւ, միայն անդուլ, անխոնջ, անձնուէր, տուրք աշխատանք և

աննկուն կամք և կորովի կարողութիւն, վառվել կրակ անշէջ՝ լուսաւորելու մեր առաջ միայն մի ճանապարհ՝ դէպի բարին, ազնիւը, շիտակը և գեղեցիկը...

Նոր-Նախիջեւանի անունից ողջունում եմ և քեզ, սիրելի Թիֆլիս քաղաք, որ այնքան սերտ կապերով առ միշտ կապված ես Գրիգոր Արծրունու անուան հետ, որին այնքան սիրում էր Գամառ-Քաթիպան, որտեղ գործել է Րաֆֆին և որից դեռ կարծես երէկ՝ այնպէս սիրով, այնպէս ջերմ համբոյրով բաժանվեց ձեր և մեր պարծանքը, փառքը, Յօբելեանական Յանձնաժողովի պատուաւոր նախագահ՝ Համմալը։ Բոլորիդ, բոլորիդ Նոր-Նախիջեւանից սրտանց ողջոյններ։

---

42 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

42 ր. 50 կոպ…

Ի՞նչ է դա, հանա՞ք, ծա՞ղր թէ ամբողջ ազգային սնանկութիւն։

Երեք երկար ամիսներ «Մշակի» խմբագրատան մէջ մնո՞ւմ են մի քանի հարիւր օրինակներ «Հացի կտոր զէյթունցուն» ժողովածուից։ Բոլորս գիտենք բարձր, վսեմ նպատակը, բոլորս գիտենք և սակայն բարեգործ, կարեկից Թիֆլիսցիները երեք ամսվայ ընթացքում տալիս են միայն… 42 ր. 50 կ.։

Ոչ, դա հանաք չէ, դա ծաղր էլ չէ. դա միայն մեր բարոյական ոչնչութիւնը, բարոյական սնանկութիւնն է։

Զէյթունցիները ճարահատված են քաղցից։ Կիպրոսում փախստականները կրօնափոխ են լինում, հրաժարվում են մեր կրօնից, մեր ազգից, մեր անցեալից։ Երկրում նրանք ցաւ, արտասուք են միայն տեսել և երբէք չեն տեսել մեր կողմից մխիթարութիւն, կարեկցութիւն… Եւ որչափ անմիտ են այն ճճռան ազգասէրները, որ թափում են անէծք նրանց գլուխներին և վրդովվում են, որ զէյթունցին դառնում է կրօնափոխ…։ Կայ յուսահատութիւն, որ չափ ու սահման չունի, յուսահատութիւն, որ նետում է մեզ ջուրը, որը այնքան ուժեղ է, որ նրա առաջ ջուրը խոր չէ, կրակը չէ այրում և կեանքը կորցնում է իր բոլոր արժէքը։ Այդպիսի յուսահատութեան հասել են կարօտեալ հայերը։

Նրանք հացի են կարօտ, և մենք տալիս ենք նրանց քար. ոչ, սխալվում եմ, մեղայ և մեղայ, մենք քարից էլ վատ բան ենք տալիս։

Մենք խօսում ենք…

Բառեր, բառեր և բառեր։

Կա՞ն մեզանում անձնուրաց գործիչներ։ Ո՞ւր են։ Մի՞թէ միայն խօսել գիտենք. ուրեմն ինչո՞ւ զարմանում ենք, որ ազգը կրօնափոխ է լինում։ Ի՞նչ ենք մենք արել այդ ազգի համար։ Ոչինչ։

Այո, կայ յուսահատութիւն, որ չափ, սահման չունի…։ Եւ երբ երեք ամսվայ ընթացքում ամբողջ Թիֆլիսում «Հացի կտոր զէյթունցուն» ժողովածուից վաճառվում է միայն 42 ր. 50 կ., մարդու սիրտը պղտորվում է, և մենք կորցնում ենք մեր հաւատը…։ Մինչև ե՞րբ մենք պիտի խնդրենք, աղաչենք, մուրանք ազգի համար։

Այսօր մենք փոխադրեցինք Պոլսի պատրիարքարանը և 500 ր.։ Այդ գումարը գոյացած է «Հացի կտոր զէյթունցուն» ժողովածուի արդիւնքից։ Ուրեմն առաջվայ 1000 ր. հաշւելով մենք փոխադրել ենք 1500 ր.։

Այդ գումարը մենք մուրացել ենք Նոր-Նախիջևանում և Ռոստովում…։

ՕԳՆԵՑԷ՛Ք

Ռոստով, 4 դեկտ.

Այսօր մենք փոխադրեցինք Կ. Պօլսի պատրիարքարանը եւս 250 ր. (665 ֆ. 40 սանտ.)։ Այդ գումարը գոյացած է «Հացի կտոր դէյթունցուն» ժողովածուիս արդիւնքից։ Ուրեմն առաջվայ 1500 ր. հաշուելով՝ մենք փոխադրել ենք 1750 ռուբլի։

Շատ քաղաքներ, շատ հայրենակիցների մենք ուղարկել ենք այդ ժողովածուն։

Մինչ օրս մի կոպէկ ստացած չենք։

Պատրիարքարանից մեզ հասած լուրերը յուզիչ և ծանր են։ Աղէտը քանի գնում է՝ սաստկանում է։ Ցուրտը հասաւ։ Կարօտը մեծ է, անչափ, և օգնութիւնը կարծես մի կաթիլ ջուր չէ խոստանում։ Սովի ընկերները՝ հիւանդութիւնները շատանում են։ Ամեն օր մահվան դէպքերը, մանաւանդ թանչքից և մալարիայից, սաստկանում են։

Օգնեցէք։

Օգնեցէք, որովհետև կարիքը մեծ է, անհրաժեշտ, չէ սպասում և տանում է անչափ զոհեր։

Այն, ինչ որ դեռ կարող էք անել այսօր, վաղը ուշ կը լինի։

Վաղը ուշ կը լինի...

Ինչու միայն մենք վառնում ենք փողեր պսակների համար և երբէք չենք աշխատել թեթևացնել, մեղմացնել սպրողների վիճակը։

Տասնեակ հազար սովածներ, տասնեակ հազար որբեր...

Մի՞թէ բաւական չէ, որ շարժէ գութը և քարացած, չորացած, ցամաքած հայ սրտերի, որ կարծես երկինքն անիծել է։

Մի՞թէ դա բաւական չէ, որ մենք սթափվենք մեր խոր քնից, տանք իրար մեր ձեռքերը և իբր եղբայրներ՝ մի սիրտ, մի հոգի, մի կամք՝ շտապենք մահվան անողոք ճիրաններից փրկել, ազատել այսօր սոված մեր դէյթունցուն։

Ես հարցնում եմ այն պարոններից, որոնք վառված են

տիրացուական հոգով և տիրացուական զգացմունքներով. ես հարցնում եմ այն պարոններից, որ կոկորդիլոսի արտասուքներով պնդում են, թէ դաշնակցականներն են մեղաւոր, որ հայը փախչում է բարեգործութիւնից, որ հայը չէ օգնում դէյթունցուն. ես հարցնում եմ այդ պարոններից՝ արդեօք անամօթութիւնը չափ, սահման մեզանում ունի՞։

Օգնեցէք, աշխատեցէք օգնել, բոլորդ՝ հարուստ, աղքատ, ծեր, երեխայ, այր, կին, բոլորդ։

Ամօթ է չօգնելը, և, ի սէր Աստուծոյ, մի՛ գանգատվէք, թէ դաշնակցականները, թէ ուրիշներն են մեղաւոր։

Օգնեցէք, աղէտը մեծ է, սուր. կորուստը կը լինի անդառնալի։ Դեռ այսօր կարելի է օգնել, վաղը փող պէտք կը լինի... փոսի համար, և կարդարացվի Գամառ-Քաթիպայի մարգարէութիւնը հայ կեանքի վերաբերեալ՝ լաւ է երբէք քան անագան։

Եւ մինչդեռ «Մշակի» բաժանորդները հրճուանքով, սիրով կարդում են այն հարիւրաւոր գեղեցիկ հեռագիրները, ուղերձները և նամակները, որ ուղղված են մեր սիրելի, մեր յարգելի խմբագիր յօբելեարին, արտասուքները խեղդում են մեզ և մենք կարդալով այդ բոլոր գեղեցիկ խօսքերը՝ ուզում ենք աղաղակել, աղաղակել բարձրաձայն, ուժգին, այնպէս, որ բոլորը լսեն՝ բաւական է, լռեցէք, լռեցէք, սուտ էք ասում, սուտ էք գրում։ Գեղեցիկ ձեր խօսքերը թաքցնում են ձեր դատարկ, պարապ զգացմունքները և մտքերը։ Դուք սուտ էք ասում, դուք՝ բոլորդ, երբ պնդում էք, թէ սիրում էք, յարգում էք Ալէքսանդր Քալանթարին։ Ամեն օր, քանի տարիներ նրա սիրած լրագիրը յայտնում է ձեզ, որ թշուառութիւնը, սովը տիրել է խեղճ հայերին, տանում է զոհեր։

Ամեն օր «Մշակը» պնդում է, որ պէտք է օգնել Ադանայի կարօտեալներին։ Իսկ դո՞ւք։ Դուք կարդում էք, գիտէք և փախչում էք կոպէկանոց զոհերից և գրում էք մեծ հեռագիրներ, նամակներ, ուղերձներ, որ ձեզ լսեն, կարդան, իմանան, ձեզ և ոչ Քալանթարին։

Դուք սիրում էք Ալէքսանդր Քալանթարին և դուք ատում էք Ալէքսանդր Քալանթարի գաղափարները... Լռեցէք...

Հանգուցեալի տանը բարձր չեն խօսում։ Եւ եթէ դուք մտել էք այդ տունը և չունէք արտասուք լալու համար, կտրեցէք ձեր ձայները և թողէք ձեր ժպիտները... փողոցի համար...

Տասնեակ հազար որբեր և սովեալներ չեն շարժում ձեր սրտերը...

Չէ, դուք սրտեր չունէք, եթէ չէք զգում, որ պէտք է օգնել...

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐԻՆ

Ռոստով Դ./Վ., 6 մարտի

Այսօր մենք փոխադրեցինք Պոլսի պատրիարքարանին ևս 250 ր., ուրեմն մինչև այսօր մենք փոխադրել ենք 2000 ր., որ արդյունք է մեր հրատարակած «Մի կտոր հաց զէյթունցուն» ժողովածուի։ Այս 2000 ր. գումարի մէջ կայ նոյնպէս ուրիշ տեղերից ստացված փող ընդամենը 134 ր. (50 ր. «Մշակի» խմբագրութիւնից, 60 ր. Ալէքսանդրօպոլից և 24 ր. Խարկօվից)։ Զարմանալի և անհասկանալի է, որ մինչև այժմ այն բարեգութ և ազնիւ պարոնները, որոնք բարոյական պարտք առան իրանց վրա ցրել մեր ժողովածուն և ստացել են ժամանակին գրքերը, լռում են, կարծելով, երևի, թէ՝ ինչպէս ռուսները ասում են՝ «սովը գայլ չէ, անտառ չի փախչի»... Հէնց դրանումն էլ է մեր դժբաղդութիւնը, որ նա չի փախչի։ Նա մնում է և տանում է զոհեր ամեն օր։ Պոլսի հայ թերթերի՝ տեղերից ստացած թղթակցութիւնները թողնում են ծանր տպաւորութիւն։ Որբերը հազարներով կորցրած պէտք է համարել հայութեան համար, եթէ օգնութիւն ժամանակին չը շտապենք հասցնել։ Մեր հայ կանանց՝ քաղցից և մեր անտարբերութիւնից ճարահատեալ սպասում է... պոռնկութիւն... Օրինակներ արդէն կան, եղել են։

Կուշտը քաղցածին մանր կը բրդէ, բայց կը բրդէ...

Մե՞նք։ Մենք, օրինակի համար՝ Մոսկվայում և ուրիշ տեղերում, վատնում ենք տասնեակ հազարներ քէֆի համար ամեն օր և կարծես չենք տեսնում, որ կան հայ սովեալներ և կան հայ մեռնողներ սովից...

Խիղճը կորցրել ենք վաղուց, ամօթ կարծես երբէք ունեցած չենք։ Եւ քանի հայի անբաղդութիւնները շատանում են, սաստկանում, մայրաքաղաքի փողոցային թերթերը պերճախօս նկարագրում են հայերի խնջոյքները... Շորեր, զգեստներ, որ հազարներ կարժեն և ապշեցնում են ռուսներին...

Եւ այդ թանգանոց շորերը և զգեստները զարդարում են... «քալական մեռելներ»...

Մեռեալներ հոգով, սրտով, մաքով...

Ծաղրելի խօսքեր՝ խիղճ և ամօթ...

Միայն զուարճութիւն, միայն ուրախութիւն՝ ահա մեր հարուստների դատարկ կեանքի պահանջները...

«Սովը գայլ չէ և անտառ չի փախչի»...

Սովը տիրել է արդէն մեր երկրում շատ տեղեր։ Սովը տանում է զոհեր։ Մեր մանուկները թիւրքանում են։ Մեր կանայք կը դառնան կամ գուցէ դառնում են պոռնիկներ։ Ի՞նչ փոյթ։ Մենք զուարճանանք, ուրախանանք և շռայլութեան մէջ, աշխարհ զարմացնելով, խեղդենք խղճի և ամօթի դեռ մնացած փոքր, աննշան նշոյլները...

Մենք կարծում էինք, որ մեր խիղճը և ամօթը քնած են։ Մենք աշխատում էինք զարթեցնել։ Ունայն աշխատանք։

Երևի այդ քունը խիստ խոր է, գուցէ այդ քուն էլ չէ, այլ իսկական մահ։

Մեր մտաւոր մշակների վրա կայ մեծ պարտք՝ սթափեցնելու մեզ մեր քնից, ազատելու բարոյական մահից։ Մեզ պէտք են հին մարգարէներ, որոնց զօրեղ խօսքերը թափանցեն մեր մաքերը, այրեն մեր սրտերը և զարթեցնեն մեր հոգին, ծանրացած, յոգնած, կիսամեռ հոգին...

Հա՜յ մարգարէներ, ո՞ւր էք...

1910

ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑԻՆ

Լինում են բաղդաւոր մարդիկ, որոնց ամեն ինչ ժպտում է դեռ օրօրոցից: Նրանց ամենքը յարգում են, սիրում, ամենքն աշխատում են վայելել նրանց բարեկամութիւնն ու սէրը:

Աշխարհն այդ բաղդաւորների համար մի դիւթական պարտէզ է մաքուր օդով, կապուտագեղ, անամպ երկնքով, գոյնզգոյն գեղեցիկ ծաղիկներով և մշտադալար ծառերով և թփերով: Թռչուններն այնտեղ երգում են այնպէս հիասքանչ, իսկ անցորդները խոնարհում են իրանց գլուխները, ժպիտն երեսներին:

Բայց կան այլ մարդիկ, դժբաղդ մարդիկ, որոնց ողջ կեանքը մի դաժան, անվերջ, փշոտ ճանապարհ է դէպի Գողգոթա: Նրանց ատում են, հալածում: Ո՛չ սիրոյ, ո՛չ յարգանքի, ո՛չ էլ բարեկամութեան նրանք չեն հանդիպում այդ ծանր, անվերջ ճանապարհին և երբ, վերջապէս, կեանքի այդ խորթ զաւակները հասնում են իրանց Գողգոթայի բարձր գագաթին, նրանք անգթօրէն խաչվում են, խաչվում և իսկոյն մոռացվում...

Ազգերի պատմութիւնը անհատների պատմութեան է նմանում:

Կան մեծ, հզօր, բաղդաւոր ազգեր փառաւոր անցեալով, փայլուն ներկայով և գեղեցիկ ապագայով: Նրանց համար չը կան պատուէրներ, օրէնքներ. պատուէրները իրանք են թելադրում, օրէնքները իրանք են գրում: Սիրո՛ւմ են արդեօք նրանց. չեմ կարծում, չը գիտեմ, բայց նրանց սէրը բոլորն էլ աշխատում են վայելել...

Մենք, հայերս, դժբաղդ ազգերիցն ենք: Բանակով քիչ, տարագիր, ցրված՝ հրէաների նման, մենք կորցնում ենք մեր առաքինութիւնները, ինքնագիտակցութիւնը և, եթէ հեռու մայրենի հողից, օտարութեան մէջ, վայելում ենք յարգանք, սէր, հաւասարութիւն, մենք ձուլվում ենք օտարների հետ, այլասերվում, ոչնչանում: Իսկ այն վայրերում, ուր դեռ չենք

ձուլված, չենք ձուլվում,—ծանր խաչերը թոյլ ուսերիս՝ մենք բարձրանում ենք մեր Գողգոթան առաւօտից մինչև երեկոյ, տարէ-տարի, բարձրանում ենք անդադար, չը հասնելով գագաթին...

Մեր անցեա՜լը: Մի՞թէ կոտորած չէ: Մեր ներկա՜ն: Մի՞թէ կոտորած ու սով չէ: Ի՞նչ կը լինի ուրեմն մեր ապագան:

Ապագան կը լինի սովի և կոտորածի զաւակը՝ մեր ոչնչացումը, եթէ մենք մոռացութեան տանք մեր առաքինութիւնները, յատկութիւնները և արհամարհենք մեր լեզուն, կրօնը և լաւագոյն իդէալները:

Դառն է անբաղդի կեանքը: Նրա մխիթարութիւնն ու սփոփանքը երազն է: Բնի մէջ նա մոռանում է իր քաղցը, իր ծարաւը, իր վէրքերի մրմուռը և բաղդ է երազում...

Եւ ո՞րս համար Զէյթունն ու զէյթունցին չեն եղել այդպիսի մի գեղեցիկ երազ:

Յիշո՜ւմ էք, յոգնած, տանջված և զզված մեր անվերջ ցաւերից ու տառապանքից, երբ մենք զգում էինք, որ մեր դժբաղդութիւնն անսահման է՝ որպէս տիեզերքը և աւելի խոր քան ովկիանոսիահաւոր անդունդները, վհատութիւնը տիրում էր արդէն մեր սրտին, սառած սրտերին, երբ մենք կարծես այլևս չէինք տեսնում յոյսի նշոյլ անգամ և կեանքն անզարձ կորած էինք համարում. յիշո՜ւմ էք, ինչպէս յանկարծ լսվում էր մեր օրօրանքի երգը, այն տխո՛ւր, ծա՛նր, սիրտ մաշող, սիրտ այրող երգը, որ մեր սգաւոր մայրերը լացել են մեր մանկական գլուխներին... Արտասուքը դադարում է հոսել մեր աչքերից... վաղուց մոռացված, կարծես մեռած ժպիտը փայլում է մեր երեսին... Մենք բաղդաւոր ենք զգում մեզ... Մենք սփոփված ենք, մխիթարված...

Յիշո՜ւմ էք այդ երազը, բայց այնքան սիրուն, գեղեցիկ...

Օրօրանքի երգը Զէյթունն էր և զէյթունցին. այն Զէյթունը, ուր այժմ տիրում է Սով արքան և այն զէյթունցին, որ այսօր կարօտ է մի կտոր ցամաք հացի:

Զէյթունում սո՛վ է... սո՛վ, որի կոտորածը մարդկանց և գազանների գործած կոտորածից սոսկալի է. սո՛վ, որից կարելի չէ պահվել, փախչել: Նա ներս է մտնում պինդ փակված դռներից, անցնում է բարձր պատերից, հասնում է սարերի գագաթները, չը խնայելով ո՛չ այր, ո՛չ կին, ո՛չ երեխայ, ո՛չ ծեր...

Եւ ազատասէր ու քաջակորով զէյթունցին, որ մեր դժբաղդութեան ծանր օրերին եղել է մեր օրօրանքի հրապուրիչ երգը, եղել է մեզ համար մի հոգեսփոփ, գեղեցիկ երազ և տր-

ւել է մեզ եթէ ոչ բաղդ, գոնէ բաղդի ստուեր, այսօր սովահար՝ մեզ իր դողդոջուն ձեռքն է պարզում։

Նա մերկ է, նա կարօտ է մի կտոր չոր հացի։

Օգնեցէք նրան։

Սրբեցէք նրա արտասուքը։

Փրկեցէք նրան մահվան անողոք ճիրաններից...

Հայե՛ր, հացի կտո՛ր, գէթ չոր հացի մի կտոր աշխատաւոր, սովալլուկ զէյթունցուն...

ՄԵՆՔ ԴԻՄՈՒՄ ԵՆՔ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Մենք դիմում ենք մեր հայ մանուկներին...

Սովորութիւն կայ ամեն ազգերի մէջ, որ երբ աղէտը հասնում է, ճնշում, կամ տրորում այս-ինչ կամ այն-ինչ ժողովրդի, հասարակութեան խաւերը, լինի դա սով կամ հիւանդութիւն, հարուստ, բաղդաւոր մանուկները կորցնում են իրանց հանգստութիւնը։ Գրքերի մէջ նրանք յաճախ կարդացել են շատ անբաղդ մարդկանց ծանր վիճակի մասին և այնքա՜ն լաց են եղել թագուն հայրերից, մայրերից և որչա՜փ ցանկացել են օգնել այդ թշուառներին... Բայց օգնել անկարելի է. զրոյցի հերոսը տանջվել է և մեռել. մնում է միայն արտասվել։ Եւ յանկարծ հարուստ բաղդաւոր մանուկը, որ ապրում է ճոխութեան և փարթամութեան մէջ, շրջապատված սիրով, զուարճալի խաղալիքներով, որ ամեն օր տեսնում է բարի առաւօտը և բարի երեկոն, որի ողջ օրը անցնում է իբր մի շքեղ տօն, յանկարծ այդ մանուկը, որի սիրտը փափուկ է, ազնիւ և չէ ծածկված կեանքի ցեխով, լսում է, որ կայ մի ուրիշ աշխարհ, սովի, չը վարձատրված աշխատանքի, սուգի, լացի աշխարհ, և կան ուրիշ մանուկներ, անբաղդ, քաղցած, օգնութեան, կարեկցութեան կարօտ. Նա լսում է, որ աղէտը եկել է, հասել, ճնշել նրանց, որ հզօր Սով արքան, որի մասին նա այնքան կարդացել է սուտ զրոյցների մէջ, իսկապէս տիրել է խեղճերին, խեղդում է նրանց, կոտորում... Մանուկի անարատ սիրտը խօսում է։ Ուրիշների լացը և թշուառութիւնը այդ սրտի մէջ արձագանք են գտնում։ Նա շտապում է օգնել։ Նա վաճառում է իր խաղալիքները, որպէսզի աղքատ, կարօտ մանուկները ստանան մի պատառ հաց, որ կը փրկէ նրանց սովից...

Եւ ամեն անգամ, երբ արտասահմանում կամ Ռուսաստանում պատահում է մի աղէտ, մանուկները չեն մնում լուռ. նրանք գալիս են օգնութեան. նրանք տալիս են իրանց լումաները...

Իսկ հա՛յ մանուկները...

Ես դիմում եմ մեր հայ մանուկներին։ Ես ցանկանում եմ ցոյց տալ նրանց, թէ որպիսի աղէտ այժմ տիրել է հայ աշխարհը։ Տասը-հազար որբեր մնացել են Ադանայի կոտորածից յետոյ...

Տասը-հազար որբեր...

Դա զրոյց չէ, դա հէքեաթ չէ, դա տխուր, թշուառ իրողութիւն է...

Նրանք էլ ունեցել են հայրեր, մայրեր։ Ո՞ւր են նրանց հայրերը և մայրերը։ Նրանց սպանել են չարաչար։

Նրանք էլ եղել են բաղդաւոր, հարուստ։ Ո՞ւր է նրանց հարստութիւնը։ Այն, ինչ որ նրանց ծնողները խելքով, դաժան աշխատանքով ձեռք են բերել տասնեակ տարիների ընթացքում, նրանք կորցրին մի օրում, մի ժամում։

Նրանց բոլոր կայքը կողոպտել են, թալանել, տարել...

Ադանայի, Բաղչէի, Մամեստիայի, Համիդիէի, Բուլանըկի, Բէսապի և այլ գիւղերի մէջ կան այսօր 10,000 հայ որբեր...

Նրանք ձեր եղբայրներն են, ձեր քոյրերը։

Նրանց պէտք է կերակրել, հագցնել, ազատել նախ մահվան ճիրաններից, յետոյ ազխատութիւնից, տալով սնունդ, ուսում, լուսաւորութիւն...

Պէտք է շտապել օգնելու։ Պէտք է շտապել, որովհետև ամեն մի կորցրած բոպէն կորցրած կեանք է։

Գալիս է ձմեռը։ Բաղցի հետ նա էլ կը տանի շատ զոհեր։ Պէտք է շտապել։

Ես ցանկանում եմ ցոյց տալ մեր հայ մանուկներին մեր անսահման թշուառութիւնը։ Ես դիմում եմ մեր հայ մանուկներին։ Բայց կը կարդա՞ն նրանք արդեօք իմ կոչը։ Ո՞վ կը թարգմանէ նրանց ռուսերէն և վրացերէն մեր կոչը։

Ի սէր Աստուծոյ, հայրեր և մայրեր, մի՛ զլանաք, թարգմանեցէք այս տողերը ձեր սիրելի զաւակներին. դուք նրանց սիրում էք ձեր կեանքից աւելի։ Ասացէք նրանց, որ 10,000 հայ որբեր մնացել են անտէր, քաղցած, սնոտի, հագուստի, օրվան պատառ հացի կարօտ... Նրանց էլ երկինքը տուել էր հայրեր, մայրեր... Չը կան նրանց ծնողները, նրանց պաշտպանները, մեռան, նահատակվեցին։ Նրանք յանցանք չէին գործել, բայց ունէին մի մեծ սրտատ, մի մեծ մեղք, ձեր սրտատը, ձեր մեղքը. նրանք հայեր էին, հայ ապրեցին և հայ նահատակվեցին...

Հայրեր և մայրեր, թարգմանեցէք իմ կոչը ձեր սիրելի զաւակներին. նրանց սրտերը ազնիւ են, փափուկ. չեն սառել, չեն քարացել։ Ձեր զաւակները ձեզ խոկոյն կը հասկացնեն, որ այդ 10,000 որբերը այժմ ձեր զաւակներն են։ Նրանք ձեզ կասեն արտասուքով. «Սիրելի հայրեր, սիրելի մայրեր, ձեր սառնասրտութիւնը, ձեր անկարեկցութիւնը ոճրագործութիւն է. շտապեցէք օգնել մեր որբերին. նրանք մեր քոյրերը, մեր եղբայրներն են. շտապեցէք խկոյն, որովհետև ամեն մի կորցրած բոպէ կորցրած թանգագին մարդկային կեանք է...»։

Ես դիմում եմ մեր հայ մանուկներին։

Հայրեր, մայրեր, թարգմանեցէք նրանց իմ կոչը։

Նրանք ձեզ ցոյց կը տան ձեր պարտականութիւնը...

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

Բանից ես դիմել եմ իմ սիրելի ընթերցողներիս կոչով, և կոչս միշտ գտել է արձագանք նրանց ազնիւ և փափուկ սրտերում։

Նուիրական մի կոչ ունեմ անելու այսօր, և հաւատացած եմ, որ նա ես կը գտնէ արձագանք բոլոր հայ սրտերում...

Բոլոր հայ սրտերում, անխտիր...

Լեզուն է, որ պահպանում է ազգը կորստից։

Լեզուն պահպանողը՝ դպրոցն է։ Ոչ գիմնազիան և ոչ համալսարանը, ուր մտնում են միայն բաղդաւորները, հարուստները, անհատները և որտեղից գալիս են տուն՝ մոռացած մայրենի գեղեցիկ բարբառը։

Լեզուն պահպանողը մեր եկեղ.-ծխական դպրոցներն են, մեր ազգային եկ.-ծխական դպրոցները, որ միայուն, ամուր հիմք են մեր ազգի գոյութեան...

Լինե՞լ թէ՞ չը լինել։ Պահպանե՞լ լեզուն, ազգութիւնը, թէ՞ կորցնել, կործել...

Ահա մի ահարկու հարց դրված այսօր մեր առաջ։

Լինել, այո՛, լինել և պահպանել, պահպանել անխախտ, անսասան, անվեհեր...

Ուրիշ ի՞նչ պատասխան պիտի սպասէք մեզանից։

Լինել և պահպանել...

Մի՞թէ լեզուով, խօսքով և ոչ գործով։

Միա՛յն գործով, միա՛յն գործով, և այդ գործն է՝

Դպրոցական ֆոնդը, մի դրամագլուխ, որ պիտի պահէ, ապահովացնէ մեր եկ.-ծխական դպրոցները...

Ստացված է թոյլտւութիւն՝ հանգանակութիւն անելու։ Ուրեմն բոլոր բանը մեզանից է կախված։

Բայց այդ հանգանակութիւնը դառնալու չէ մի ծաղրալի աղքատի թաբախ։

Պէտք է միլիոն, միլիոններ, այո՛, միլիոններ. և եթէ մենք բոլորս ձեռք-ձեռքի տուած նուիրվենք այդ վսեմ, սուրբ և մեծ

գործին, մենք կը ժողովենք այդ միլիոնները։

Գործենք միասին, հաւատով, յոյսով, անձնուէր, մոռացած՝ բոլոր մեծ և փոքր մեր առօրեայ հաշիւները։

Հարուստները թող տան՝ ինչքան կարող են, ինչքան կարելի է շատ, հաստատ գիտենալով որ նրանց զոհողութիւնները փրկելու են մեր ազգը։

Բայց այս հանգանակութիւնը պիտի ունենայ ընդհանուր ազգային բնաւորութիւն։

Պիտի տան բոլոր հայերը, ամեն մի հայ՝ ով ինչքան կարող է, գուցէ 10 կոպէկ։

Տասն հազար թէ տասն կոպէկ, թող ամեն նուէր լինի մեզ համար ընդունելի։

Այդպէս միայն կարող ենք ժողովել միլիոն։

Աղնիւ, բանիմաց մարդիկ թող գլուխ կանգնեն այս մեծ գործին։

Անձնական պատիւ, վիրաւորանք, թող լռեն այդ սուրբ մտքերը։

Մեծ մանկան սուրբ որրանի առաջ սիրով, ակնածութեամբ միահամուռ, միացեալ գործենք, գործենք եռանդուն, յամառ, ժամանակ չը կորցնելով։

Այդ մեծ մանուկը՝ մեր ապագայ դպրոցական ֆոնդն է։

Նա պիտի պահէ մեր ազգութիւնը կորստից։

Մեծ դեր կարող է խաղալ այս գործում մեր հոգևորականութիւնը։ Պէտք է որ թեմ. առաջնորդները գլուխ կանգնեն գործին, շրջեն իրանց թեմերը, այցելեն ականաւոր և ունևոր հայերին և յորդորեն առատօրէն նուիրել։

Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի սրբազան առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի հետ այցելեցինք 20—25 տներ և ցուցակ անցրինք 20,000 րուբլի։

Նոր-Նախիջևանը թող լինի օրինակ Թիֆլիսին, Բագուին և ուրիշ քաղաքներին։

Նոր-Նախիջևանում կայ 10,000 հայ բնակիչ։

Թիֆլիսում 125,000 հայ բնակիչ։

Եթէ Նոր-Նախիջևանը տայ 40,000 ր., ինչո՞ւ Թիֆլիսը տալու չէ 3—400,000-ներ։

Դա դժուար չէ։ Դա իրագործելի է։ Միայն... միայն պէտք են գործիչներ, եռանդուն, անձնուէր գործիչներ, որ պտտեն ողջ քաղաքը՝ և հարուստի պալատը, և աղքատի խրճիթը։

Տասն հազար թէ տասն կոպէկ. ահա ինչ պիտի լինի մեր նշանաբանը։

Ամէն մէկից ստանալ ինչքան կարելի է շատ։

Թող դա լինի զոհ մեր բոլորի կողմից. մի՞թէ այդ մեծ մանուկը, որի որրանի առաջ մենք կանգնած ենք այսօր, չարժէ մեծ զոհերի...

Լեզուն պահպանում է ազգը։

Լեզուն պահպանողը՝ դպրոցն է։

Եկէք, բոլորս ձեռք-ձեռքի բռնած, աշխատենք այսօր միասին, սիրով, հաւատով իրագործել մեր երազած, մեր սիրած դպրոցական ֆօնդը...

Տասն հազար թէ տասն կօպէկ՝ թող լինեն հաւասար ընդունելի այս մեծ գործում։

Ա՜խ, ինչպէս կը ցանկայի այսօր տաքացնել մեր սառած, չորացած սրտերը և շարժել բոլորի մէջ գութ, գութ դէպի մեզ, դէպի մեր սերունդը, դէպի մեր ապագան, դէպի հայութիւնը, որ նուազում է, քչանում է և չքանում առանց դպրոցների...

1912

ՀԱՅԻ ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼՈՒ Է ՄԻ ՏԱՐԻ

ՀԻ՞ՆԳ ԹԷ ԵՐԿՈՒՍ

ՄԻԹԷ ԱՆԱՄՕԹ 1-Ը ԿԱՄ ԱՆՈՐՈՇ ՄԻՋԱԿ 3-Ը

Մեր հասունութեան քննութիւնը շարունակվելու է ամբողջ տարի՝ 13 հոկտեմբերի 1912-ից մինչև 12 հոկտեմբերի 1913-ը։

Տասնեհինգ դարեր անցել են հայ տառերի գիւտի օրից, չորս դարեր անցել են հայ տպագրութեան ծննդեան օրից։

Մեր լուսաւորութեան, մեր առաջադիմութեան երկու մեծ տօներ...

Ո՞վ մեզանից չէր ցանկանայ, որ եսկապէս դրանք ազգային տօներ լինէին...

Եթէ մենք բոլորս ցանկանանք, այդպէս էլ կը լինի։ Մենք կը հաստատեցինք, որ մենք ապրելու իրաւունք ունենք. ուրիշ զարգացած, առաջադէմ ազգերի կարգում, մենք կը հաստատենք, որ մենք հասունացել ենք։

Հի՞նգ թէ՞ երկու, կամ մէկ. ի՞նչ է խոստանում մեզ մեր հասունութեան քննութիւնը.շարունակվելու է ամբողջ տարի...

«Հինգ, հինգ»՝ ասում է սիրտս, բայց «երկու, մէկ»՝ պնդում է ուղեղս...

Հի՞նգ թէ՞ երկու կամ անամօթ մէ՞կը վերջապէս։

Միայն այն ազգը իրաւունք ունի ապրելու, որ կանգնած է լուսաւորութեան և առաջադիմութեան ճանապարհին։

Լուսաւորութեան և առաջադիմութեան համար պէտք են դպրոցներ։

Դպրոցների համար պէտք է փող, փող և դարձեալ փող։

Պետական գանձարան չունենք։

Ինչո՞վ բանանք նոր դպրոցներ, ինչո՞վ պահպանենք հիները։

Ինչո՞վ վարձատրենք մեր բազմաշխատ և բազմաչարչար ուսուցիչներին, որ ծերութեան, հիւանդութեան ժամանակ չունեն ոչ մի ապահովութիւն և աւելի աղքատ են, քան վերջին աղքատը...

Դպրոցական ֆոնդը պիտի ծառայէ այդ նպատակին՝ բանալ նոր դպրոցներ, ապահովել հները, բարւոքել հայ ուսուցիչների վիճակը։

Մեր հասունութեան քննութիւնը հէնց այդ դպրոցական ֆոնդն է։

Ի՞նչ պիտի տանք այդ ֆոնդին մենք, մենք՝ բարեգործական հաստատութիւններս, վաճառականներս, իրաւաբաններս, բժիշկներս, բոլոր համալսարանականներս, աշխատաւորներս, հոգևորականներս, մենք՝ մինչև վերջին բանւորս և մշակս. ի՞նչ պիտի տանք այդ ֆոնդին։ Կոպէկնե՞ր, ռուբլինե՞ր, հազարնե՞ր։ Ի՞նչ պիտի տանք, որ ստանանք հինգ և ոչ երկու կամ մէկ՝ մեր հասունութեան այս քննութեան։

Դպրոցական ֆոնդը առնուազն պէտք է լինի ոչ պակաս, քան կէս միլիոն ռուբլի, 500,000։ Դա կը նշանակէ՝ չորս. հինգը կը լինէր մէկ միլիոն։

Փոխարքան թոյլատրել է ժողովարարութիւն անել ամբողջ Կովկասում շարունակ մի տարի։

Այսօր Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգ. Ընկերութիւնը դիմում է Նորին Օծութեանը խնդրելով նրա միջնորդութիւնը ներքին գործոց մինիստրութեան առաջ և ուր հարկն է, որ թոյլ տրվի Ռուսաստանի հայ թեմերի մէջ անել հանգանակութիւն յօգուտ դպրոցական ֆոնդի և այդպիսով նրանց էլ հնարաւորութիւն տրվի այդ ազգօգուտ գործին իրանց լուման նետելու։

Ամեն մի հայ հաստատութիւն, ամեն մի հայ մարդ ոչ թէ խնայելու է իր լուման, այլ աջակցելու աշխատանքով ևս այդ գործին։

Թող կազմակերպվեն յանձնաժողովներ, բայց յոյսներս չը դնենք միայն յանձնաժողովների վրա։

Ամենս, ամենս աշխատենք, գործենք։

Նրանք, որ հաւատում են ինքնօգնութեան գաղափարին մեզանում, թող բարոզեն լայն խաւերի մէջ, աշխատեն ժողովել ռուբլիներ, կոպէկներ։

Նրանք, որ հաւատում են բարեգործութեան գաղափարին, թող չամաչեն՝ առնեն ձեռքները թարախներ ու շրջեն, մաշելով հարուստների, ունևորների դռները. իրանց համար չէ, իրանց զաւակների համար է, ազգի համար պէտք է խնդրեն և

մուրան։ Այո, չեմ վախենում այդ բառից և կրկնում եմ՝ և մուրան...

Նպատակը այնքան վսեմ է, այնքան սուրբ։ Տեղիք չը տանք վէճերի. գործնական միջոցներ պէտք են մեզ։

Ազգը առանց լուսաւորութեան մատնված է կորստեան։

Լուսաւորութիւնը տալիս են դպրոցները։

Դպրոցներ բանալու համար, եղած դպրոցները պահպանելու համար և մեր ուսուցիչների եղկելի դրութիւնը բարւոքելու համար՝ հարկաւոր է փող, դարձեալ փող և շատ փող, որպէսզի մենք թողնենք մուրալը և ազգի պատիւը. ստորացնելը, որպէսզի մեր դպրոցները ապահովենք առ միշտ։

Դպրոցական ֆոնդը մեր հասունութեան քննութիւնն է։

Քննութիւնը սկսվեց հոկտեմբերի 13-ին և շարունակվելու է ամբողջ տարին։

Հի՞նգ թէ երկո՞ւ։

Կամ գուցէ այդ անգոյն, այդ անորոշ, այդ միջակ երե՞քը, որ ցոյց կը տայ աշխարհին, թէ մենք ոչ լաւ ենք, ոչ էլ վատ...

Աւելի լաւ է երկու, կամ մէկ, անամօթ մէկը...

Քննութիւնը սկսվեց։ Դա ազգի հասունութեան քննութիւնն է։ Դա մեր բոլորի, իմ, ձեր, բոլորիս, բոլորիս հասունութեան քննութիւնն է։

Մի՞թէ ծաղրելի մուրացկանի թարախ պիտի դառնայ այդ ժողովարարութիւնը։

Պատարագ, թափոր, երգեր, ցոյցեր, մի տասնեակ հազար ռուբլի և դարձեալ երգեր, թափոր, պատարագ...

Մի՞այն...

Հի՞նգ թէ՞ երկու կամ մէկ, անամօթ մէկ, ի՞նչ է խոստանում այսօր մեր հասունութեան քննութիւնը, որ շարունակվելու է ամբողջ տարի։

—Հինգ, հինգ,—ասում է սիրտս...

—Երկու, երկու, մէկ,—պնդում է ուղեղս...

Որի՞ն հաւատամ։

Բայց այնքան զզուելի կը լինէր միջակ, անհամ երեքը։

Քննութիւնն արդէն սկսվեց. ամեն անցած օրը կորած օր է ժողովարարութեան համար։

Ոչ սպասելու, ոչ յետաձգելու ժամանակ չը կայ։

Պատրա՞ստ էք, սիրելի ընթերցող, մաքուր խղճով այդ քննութեան։

Մենք այդ կը տեսնենք միայն 1913 թ. հոկտեմբերի 12-ին։

Ցտեսութիւն։

Ո՞ՒՐ ԵՆ ՄԵՐ ԱՂԱՆԵՐԸ ԵՒ Ո՞Վ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՄԵՐ ԱՂԱՆԵՐԻ ԱՂԱՆ

Երբ դպրոցական ֆոնդի հարցը դրված է մեր առաջ և այդ ֆոնդի իրականացնելուց է կախված հայութեան գոյութիւնը, մենք իրաւունք ունենք դառնալ դէպի մեր հարուստները և հարցնել նրանցից, թէ ո՞ւր են մեր աղաները և ո՞վ ձեր մէջ պիտի լինի այսուհետև և համարվի հայ աղաների աղան։

Ո՞ւր են հայ աղաները։

Հարուստ լինել՝ դեռ չէ նշանակում աղա լինել. մեզանում այնքան շատ են հարուստ... խոզեր, լկտի, ապականված բարքերում մեռած ու միշտ մարդկութեան համար։ Սարսուռ և երկրպագու իրանց դեղնած ոսկուն, նրանք մոռացել են Աստուած, խիղճ, մարդկութիւն, նրանք հող չեն և ոչ էլ հող են դառնալու, այլ աղբ, միայն աղբ այդ հարուստ... խոզերը...

Իսկական աղայութիւնը... ազնուութիւն է...

Ո՞ւր են հայ աղաները, հայ ազնիւները...

Հարուստ լինել՝ դեռ չէ նշանակում աղա լինել։ Աղան նա է, ով հարուստ լինելով, անուշ ուտելով, անուշ խմելով և անուշ ապրելով՝ պահպանում է ազնուութիւնը, յիշում է կարօտեալին, աղքատին, անբաղդին և աշխատում է թեթևացնել ուրիշի դարդերը և ցաւերը։

Աղան նա է, ով յիշում է իր ազգը և չէ մոռանում նրան երբէք, երբ կեանքով լի է։

Ես երբէք չեմ մոռանայ մի դէպք. Լազարեան ճեմարանի աշակերտ էի այն ժամանակ։ Մի հայ, որ հարուստ էր և աղա չէր, բերել էր իր զաւակը թաղելու հայ գերեզմանոցում. այդ զաւակը հայ մկրտված չէր։ Քահանան, որին մղում էր հարուստի ոսկին, պատրաստվել էր ասել իր «Հայր մերը» մեռեալի վրա և թաղել մեր գերեզմանոցում. և յանկարծ ժողովուրդը բողոքեց. այդ հարուստը աղա չէր և զաւակը հայ չէր. նրանք ապրում էին ոչ մեր համար և մեր վրա չէին մտածում.

և ահա մահը եկաւ գողի պէս, չը սպասված, յանկարծ, և հայ ծերունին յիշում է իր հայ լինելը և բերում է իր զաւակը հայ գերեզմանոց։ Ինչո՞ւ։ Ի՞նչ իրաւունքով հայ գերեզմանոց...

Ուրախութեան, զւարճութեան և խնճոյքի օրերը կանցնեն անդարձ րոպէների պէս։ Յանկարծ տեսար ծերութիւնը եկաւ, մահը մօտեցաւ գողի պէս, չը սպասված, և նա, որ ապրած ժամանակ մոռացել էր իր հայութիւնը, այժմ դարձած դիակ՝ բերված է հայ գերեզմանոց։ Քահանան կը կարդայ իր «Հայր մերը», իսկ գերեզմանաքարի սուտ խօսքերը կասեն անցուդարձ անողներին մեռնողների ազնիւ յատկութիւնների մասին...

Թող հանգչեն գերեզմանոցում դիակները, բայց ինչո՞ւ առհասարակ հայ հարուստները ապրում են մեր համար օտար և մեռնում են հայ։

Ո՞ւր են հայ աղաներն այժմ, երբ դպրոցական ֆոնդի հարցը դրված է մեր առաջ, երբ նրա իրականացնելուց կախված է մեր սերնդի ապագան։ Ո՞ւր են հայ աղաները։ Մի՞թէ միայն հայ գերեզմանոցներում...

Մեր հարուստներից մէկը գնել է մի ձի և տուել է 75,000 ր., միւսը ասել է, թէ «այժմ դպրոց եմ ես ինքս շինում». երրորդը իր ահագին կարողութիւնից հանում է միայն 2000 ր., կարծես ծաղրելով։

Ճիշդ է, որ աղաներ չը կան։ Կան հարուստներ։ Աղաները թաղված են գերեզմանոցներում։

75,000 ր. մի ձիու համար շատ է, բայց ոչինչ. թող բարի վայելէ, ապա դպրոցական ֆոնդին այդ հարուստը ի՞նչ պիտի տայ։ Մի՞թէ 1000 ր. կամ 2000 րուբլի... Դպրոց շինողին շնորհակալ ենք, բայց մի՞թէ դա առիթ է դպրոցական ֆոնդին չը նպաստելու։ Ի՞նչ անուն տանք այն հարուստին, որ ունի միլիօններ, իսկ ֆոնդին տալիս է միայն 2000 րուբլի...

Ո՞ւր են հայ աղաները։

Հարուստ լինել՝ դեռ չէ նշանակում աղա լինել. և իրաւ որ մեզանում շատացել են հարուստ... խոզեր։

Նրանց հետ, ափսոս, մեզ կապում են միայն մեր հայ գերեզմանոցները...

Լինում են նրանք ուրիշ տեղեր, թաղվում են հայ գերեզմանոցներում...

Ապրում են օտար, բոլորովին օտար, մեռնում են միայն հայ...

Օ՜, որչափ հայ դիակներ, որչափ հայ դիակներ ոչ միայն

գերեզմանոցներում, այլ և մեր կեանքում, մեր մէջ այդ կենդանի մեռելները...

Հայ աղաներ, ո՞ւր էք, տուէք արձագանք իմ կոչին։ Օգնեցէք ֆօնդին, փրկեցէք մեր ազգը տգիտութիւնից, խաւարից կորուստից և մահից։ Ապացուցէք, որ մեզանում կան ոչ միայն հարուստներ, այլ և հայ աղաներ, ազնիւ հարուստներ և թող ձեր միջից մինը իր առատ նուիրատուութիւնով դառնայ հայ աղաների աղան, ազնիւների ազնիւը...

1913

ԿԱՐ-ՄԻՐՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ ԱՌԱՋ

I

Մեր կոչը հայ հասարակութեանը՝ դպրոցական ֆօնդի մասին՝ խոր և սիրալիր արձագանք գտաւ մեր ազգի բոլոր խաւերում և, ինչպէս պէտք էր ենթադրել առաջուց, գայրոյթ պատճառեց «Կովկասի Լրաբերին»։ Կար-Միրները արդէն տեսնում էին պանիրով հացը իրանց բերաններին այնքան մօտ, և յանկարծ պանիրն էլ չը կայ, հացն էլ...

Պ. Կար-Միրը շօշափում է մեր անձը և համարում է մեզ «անսկզբունք, անղեկ, անառագաստ միտք»։

Մենք չը գիտենք և չենք ճանաչում այն պարոնին, որ ստորագրվում է Կար-Միր ծածկանունով։ Մենք 30 տարիներ ստորագրել ենք մեր գրածները, և դժուար չէ մեզ հասկանալ թէ արդեօք մենք ունեցե՞լ ենք սկզբունքներ, գաղափարներ, թէ՞ մատնել ենք նրանց վատաբար և անփոյթ։

Բայց այսօրվայ Կար-Միրը գուցէ երէկվայ կանաչն էր և վաղվայ սևը կը լինի։

Իսկ մենք եղել ենք և կը մնանք միշտ Գրիգոր Ջալալեանն...

Ի՞նչումն է եղել մեր յանցանքը։

Մենք... ազգասէր ենք։ Ազգասէր, հասկանո՞ւմ էք. դա նշանակում է գող, մարդասպան՝ Կար-Միրների կարծիքով։

Եւ Կար-Միրը ծաղրում է մեզ, ծաղրում է ազգասիրութիւնը, ծաղրում է էջմիածինը, ծաղրում է և ծաղրում...

«Երբ մեզանում ազգային մի գործ է սկսվում, ամենից առաջ Նոր-Նախիջևանից ձայն է բարձրացնում Գր. Ջալալեանը»։

Դուք զարմանում էք, շուարված, կարծես պատիւ է բերում մեզ, եթէ առաջինը մենք ենք հրապարակ դուրս գալիս գործնական կերպով ազգային գործը կատարելու, պսակելու. բայց ոչ, մեր մեղքը մեծ է և անքաւելի. «նա չէ ճանաչում ո՛չ... ձէճ, ոչ... կախ, ոչ գաղափարների ու սկզբունքների խտրու-

թիւն և բաղխում, միայն թէ լինի... փողը»:

Ահա թէ բանը ինչումն է: Փոխանակ վիճելու, կռւելու և գաղափարների ու սկզբունքների խտրութիւն որոնելու՝ մենք համարձակվում ենք փող ժողովելու, որպէսզի ազգային գործը... սկսվի, գլուխ գայ, իրագործվի...

Արժէ՞ կանգ առնել և ապացուցանել այդ կարծիքի ողորմելի անհիմնութիւնը:

Հայը անուս է, ողորմելի վիճակի մէջ է:

Հայը այն ժամանակ բաղդաւոր կը լինի, երբ նա լինի լուսաւորված:

Վէճով և կռիւով կարելի չէ լուսաւորել:

Պէտք են դպրոցներ, դպրոցներ և դարձեալ դպրոցներ...

Դպրոց բանալու և պահպանելու համար պէտք է փող:

Ուրեմն մեր պարտականութիւնն էր՝ անձամբ տալ այնքան, ինչքան կարող ենք, դիմել սրան-նրան և մեծ ծանրութիւն ուսերիս դրած՝ հանգանակել մի խոշոր գումար, առնել ձեռք գրիչ և դիմել կոչով հայ հասարակութեան:

Այդ բոլորը մենք կատարեցինք, կատարում ենք և սրանով մի՞թէ մենք մեղանչեցինք...

Մի՞թէ մենք իրաւունք չունէինք պահանջելու, որ գոնէ Կար-Միրները մեզ չը խանգարեն իրանց անհամ, անվերջ վէճերով և սաէ-կօսէներով...

Չը գիտէք գործել, խուսափում էք, գոնէ լռեցէք:

Եթէ դպրոցներ մենք բանալու լինէինք քիւրդի, թիւրքի, պարսիկի համար, եթէ մենք գործէինք յանուն մարդկութեան, Կար-Միրը մեզ կը հասկանար: Բայց մենք գործել ենք և գործում մեր տառապեալ, խեղճ, թշուառ անհետացող ազգի համար, և Կար-Միրի բերանը փրփրում է բարկութիւնից՝ ազգասէրներ, ազգասիրութիւն. կարծես հայհոյում է՝ աւազակներ, աւազակութիւն...

II

Կար-Միրը ասում է, որ մենք դրամի երկրպագու ենք:

Երկրպագուն նա է, ով շահվում է դրամից: Դրանից շահ մենք երբէք ունեցած չենք: Երբէք մենք ծխած չենք և խնկած մեր հարուստներին, մտրակել ենք նրանց, թշնամիներ ենք շատերի հետ, բայց միշտ, երբ տեսել ենք հարուստի ձոխ գոհողութիւնը ազգին, մենք խրախուսել ենք և գովել, եղել է դա

Լազարեան, թէ Մանթաշեան, թէ Ժամհարեան,, ողջը մէկ է մեզ համար...

Բայց թարախով մենք շրջել ենք, այո, շրջել ենք և պիտի շրջենք...

Ի՞նչ անենք, մեր հայ իրականութիւնը ծանր է, ազգը՝ փոքր և թշուառ: Մեզանում բոլոր հաստատութիւնները՝ լրագրութիւն, թատրօն, դպրոց՝ կարօտ են աջակցութեան, իսկ ինքնօգնութեան գաղափարը մեզանում թոյլ է, նուազ...

Պէտք չէ ծաղրել. ո՞ւմ էք ծաղրում. ձեզ էք ծաղրում. ի՞նչ օգուտ անամօթաբար թքել այն որրանի վրա, որ սնել է ձեզ...

Վէճերով, կռիւով մինչև այսօր դուք ոչինչ արած չէք: Սխալվում եմ, արել էք, արել էք շատ բան. դուք քայքայում էք, քանդում էք ազգի տունը օրէ-ցօր, անմիտ, յամառ, չը տեսնելով անգամ որ կտրում, կտրում էք ծառի այն ճիւղը, որի վրա նստում էք, նստում և վատ թէ լաւ կերակրվում... Այդ ճիւղը կտրող առանց ձեզ էլ, ողորմելիներ, կը գտնվեն: Ուզում էք օր առաջ կտրել: Խղճացէք, գթացէք, եթէ միայն խիղճ և գութ կան ձեր մէջ...

Գամառ-Քաթիպան մեռնում էր, հիւանդ, սովից:

Պէտք էին մահարձաններ կանգնել նրա և Նալբանդեանի վրա:

Յետոյ սով, դա՛րձեալ սով, յետոյ կոտորածներ, այժմ դպրոցների հարց...

Մենք մեր պարտքը կատարում էինք, և դիմում էինք կոչով: Մեզ լսում էին, տալիս էին փող, լսում են և այժմ:

Իսկ դո՞ւք: Դուք ծաղրում էիք և ծաղրում էք այժմ: Բանից դուրս է գալիս, որ մենք սխալվել ենք և, փոխանակ վիճելու, ազգի վէրքը դարմանելու համար ժողովում ենք փող: Դուք ասում էք, որ պէտք չէր սպեղանի այդ վէրքի համար, և ձեր անհամ վէճերը կարծես լինեն աղ և պղպեղ անամօթ և անխիղճ կերպով ցանած այդ վէրքի վրա... Խղճացէք և գթացէք, եթէ միայն խիղճն ու գութը դեռ մնացել են ձեր մէջ...

III

Էջմիածինը փուշ է դառել ձեր աչքերում:

Ի՞նչ ունենք մենք հայերս Էջմիածնից ջոկ: Ոչինչ: Դուք այդ լաւ գիտէք, հասկանում էք և ցանկանում էք միայն մի բան՝ քարուքանդ անել Էջմիածինը, որին ազգը հաւատում է,

որը ազգի կենտրոնն է, որը ազգը ցոլում է։

Մենք ընդունում ենք Էջմիածին, Կաթողիկոս և միաբաններ։

Էջմիածինը և Կաթողիկոսը եղել են մեզ համար այն սուրբ կապերը, որոնք պահել են ազգը։ Այդպէս եղել է մեզ համար երեսուն տարի առաջ, այդպէս է և այժմ մնացել։

Մենք ընդունում ենք, որ Էջմիածնում բարքերը երբեմն եղել են վատ, ընդունում ենք, որ կարգերը այնտեղ մինչև օրս լաւ չեն։

Բայց նախ դուք ասում էք, թէ Էջմիածինը հարուստ է։ Նա ունի կալուածքներ, որոնք կարօտ են մեծ գումարների և մեծ խնամքների. և քանի որ այդ գումարները և այդ խնամքները պակասում են, կարելի չէ խօսել Էջմիածնի հարստութեան մասին։ Ուրեմն դպրոցական ֆօնդի կարևորութիւնը մեծ է և անհրաժեշտ։

Դուք լաւ գիտէք, որ հանգուցեալ Մատթէոս Իզմիրլեանի օրից և մանաւանդ այժմ ամեն մի կոպէկ մտնում է ժապաւինած մատեան սինօդի միջոցով, որ զեղծումներ կարող չեն տեղի ունենալ, որ հաւատալ կարելի է և պէտք է, և յանցանք է ձեր կողմից լրագրում յայտնել անվստահութիւն, որպէս զի վնասվի ֆօնդի սուրբ գործը։ Ձեր խելքով, եթէ գրական ֆօնդ լինելու չէ, թող կորչի դպրոցականը։ Ամօթ չէ՞ այդպէս մտածել անգամ...

Ազգասիրութիւնից յետոյ՝ ձեզ զայրացնում է Էջմիածինը իր խունկով, իր մոմով...

Հեռու Հայաստանում ձեր Կար-Միրների աշխատանքը արդէն պսակվել է։ Դուք լսեցիք ռուս հրապարակախօս Օլգենինի ասածը, թէ հայի հաւատը, որ պահպանում էր ազգը, նուազում է, փչանում է, հայը հեռանում է եկեղեցուց, մոռանում է լեզուն և անհետանում է, մինչդեռ ձեր՝ «գաղափարականներիդ» վէճերը, անմիութիւնը, թշնամական յարաբերութիւնները սաստկանում են և թուլացնում ազգը։ Այդ պնդողը Օլգենինն է, որը աւելի հայասէր է, քան թէ դուք բոլոր՝ այսպէս ասած «գաղափարականներդ»...

Մարում են հայի ճրագները և մարում են հայերի ձեռքով, Կար-Միրների ձեռքով...

Փչել-հանգցնել հեշտ է մեր ճրագները, որ, աւաղ, միշտ միայն պլպլացել են իրանց աղօտ լոյսով։ Պէտք էր խնամել, պահպանել, բայց դրա համար պէտք էր սիրել։ Դուք գիտցաք միայն վիճել և ատել...

Ձեզանից սէր կարելի չէր սպասել։ Էջմիածնի կենտրոնական ժողովին դուք Կար-Միրներդ ուզում էիք կաթողիկոսին վռնտել վանքից և այն տասնեակ հազար դեսեատին կալուածքները, որոնց մասին դուք խօսում էք այժմ, ցանկանում էիք տալ Թուրքին և քիւրդին, իսկ նոյեմբեր ամսում Թիֆլիսում, երբ մենք բոլորս զբաղված էինք հայ դատը պաշտպանելու հարցով, դուք Կար-Միրներդ ելաք և ասացիք, թէ Թիւրքը և քիւրդը միևնոյն մարդիկն են, ինչպէս և հայերը, պէտք է նրանց կերակրել, ուսում տալ, և դուք ցաւում էիք Թիւրքի և քիւրդի մասին և մոռանում էիք միայն հային...

Զորն ասեմ կամ զորն խոստովանեմ...

Ձեր Կար-Միրների քարոզներից միշտ փչել է մեռելների հոտ... մեր հայերիս երեսին...

Խունկ ու մոմը դուք պահել էք և պահում էք Թիւրքի, քիւրդի, համայն մարդկութեան համար և վախենում էք միայն մի բանից՝ չիցէ թէ ձեր խունկը բուրէ և մեզ, և ձեր մոմը մեր ազգը ևս լուսաւորէ...

IV

Դուք ասում էք, թէ ցանկանում էք կինտօների հետ ապրել։ Կը ցանկայինք, որ դուք կինտօների համար ապրէիք։

Արդեօք այն դպրոցները, որոնց համար կազմվում է դպրոցական ֆօնդը, կինտօների համար չէ՞։ Կարիք չը կայ կինտօների հետ ապրել և կինտօներին մոլորեցնել. պէտք է կինտօների համար ապրել, աշխատել, նրանց կարիքը հոգալ։ Դուցէ վախենում էք, որ կը լուսաւորվեն և կը հասկանան ձեզ՝ անկոչ վարդապետներիդ և կը վռնտեն ձեզ։ Անհամ, անվերջ վէճերով և խօսքերով այնքան դուք խաբեցիք ազգը։ Արդէն ձեզ հասկանում են։

Չէ, կինտօները ձեզ պատրուակ չեն լինի; քանի որ դուք խոստովանում էք, թէ գնում էք դպրոցի կողքին «նաև գրի տօնը, մէկը քեզ, միւսը ինձ, իսկ երկուսն էլ ազգին...»։

—«Միւսը ինձ»,—ահա ուր է թաղված շան գլուխը։

Դուք համաձայն էք, Կար-Միրներ, որ մենք աշխատենք, մուրանք և ժողովենք այդ անիծեալ փողը, միայն, միայն՝

—Միւսը ինձ...

Դուք էլ ուզում էք ստանալ այդ փողը, իբր գրական գոր-

ծիչ, և պահանջում էք, որ մենք կիսենք, կէսը տանք դպրոցին, կէսը ձեզ…

Ճաշակներդ լաւ է և ախորժակներդ մեծ, բայց քանի որ այժմ դպրոցական ֆոնդն է կարևորը, նա պիտի բռնէ առաջին տեղը։

Խնդրեմ ասացէք, այդ բոլորը՝ հայ մամուլը, գիրքը, հայ միտքը, բարեգործականը, հրատարակչականը, դրամատիկականը՝ դուք Կար-Միրնէրդ էք ստեղծել թէ միայն դուք վըճնասում էք, կործանում, տապալում այդ գեղեցիկ պարգևները, որ տուել են ձեզ տասնեակ տարիներ առաջ ուրիշ գործիչներ, որ գիտէին վիճել, բայց գիտէին և գործել։

Նոր-Նախիջևանը, որ տալիս է 150 հազարից աւելի, ընդունում է դպրոցական ֆոնդ և ճանաչում է միայն էջմիածինը։ Մենք հասկանում ենք լաւ, որ այստեղ ոչ մի սկզբունքի և գաղափարի հարց չը կայ։ Մենք տեսնում ենք ձեր կարկառած ձեռքերը՝

—Միսը ինձ։

Եւ մենք պատասխանում ենք․

—Վերցրէք ձեր երկար ձեռքերը և շարունակեցէք ձեր անմիտ, անվերջ, անհամ վէճերը…

Մենք հասկանում ենք և գրական ֆոնդի կարևորութիւնը ու ժամանակին կը նպաստենք և գրական ֆոնդի իրագործման, բայց նախ և առաջ դպրոցական, միայն դպրոցական ֆոնդը այժմ պիտի լինի մեր նպատակը։

—Միսը ինձ, միսը ինձ…

Կար-Միրը հէնց այդպէս էլ պէտք է սկսէր իր յօդուածը․ ինչ կարիք կար խօսել սկզբունքների մասին և ընդդէմ փողի, քանի որ փող է խնդրում և երազում պանիրով հաց, պանիրով հաց, որ այնքան մօտ էր նրա բերանին և որը ընկնում է բերանից…

Գնա հասկացիր Կար-Միրների լեզուն։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆ

(Նուէր բոլոր հայերին)

Հայ տառերի գիւտի և տպագրութեան կուլտուրական ազգային յոբելեան… փառահեղ տօնակատարութիւն… 250 ներկայացուցիչներ զանազան վայրերից եկած… 400 հեռագիրներ… շնորհաւորութիւններ ռուսներից, վրացիներից, յոյներից, թուրքերից, կաթոլիկ և բողոքական հիմնարկութիւններից…

Փառաւոր հոդեհանգիստ…

Փառաւոր քարոզներ, ճառեր, դասախօսութիւններ…

Փառաւոր ճաշկերոյթ…

Յետոյ…

Յետոյ «պատգամաւորները մեկնեցին էջմիածնից»։

«Յօգուտ դպրոցական ֆոնդի՝ ի յաւերժացումն համազգային յոբելեանի, ստացված տեղեկութիւնների համաձայն, կը հանգանակվի մօտ կէս միլիոն ռուբլի»։

—Մօտ կէս միլիոն ռուբլի… ի յաւերժացումն համազգային յոբելեանի…

Ես սխալ չը կարդացի։ Այդպէս էր գրված՝ մօտ… կէս միլիոն ռուբլի… ի յաւերժացումն համազգային յոբելեանի…

Երա՞զ է դա, մի ցնորք թէ՞ մեր իրականութիւնը։

Եւ… պատգամաւորները մեկնեցին էջմիածնից։

Արդեօք իրանց պարտքը կատարա՞ծ համարելով…

Եկան հեռաւոր տեղերից, տեսան իրար, խօսեցին, կարդացին, կերան, ստացան Վեհի օրհնութիւնը և… մեկնեցին, հանգստացնելով մեզ, թէ մօտ… կէս միլիոն ռուբլի կը հանգանակվի։

Իբր թէ այդ կէս միլիոնը կարող է յաւերժացնել մի համազգային յոբելեան։

Դա ինչ խղճուկ յոբելեան է։

Միթէ դա համազգային տօնակատարութիւն է։

Ո՞ւր է անմահ Գամառ-Քաթիպան իր երկաթագրիլը

Զարմանալի ազգ էք, հայեր, աւա՜ղ,
Ձեր յոբելեանն է մուրացիկ թաղա․․․

Կէս միլիոնը մի մուրացկի թարախ է այդպիսի մեծ գործում և կէս միլիոնը երբէք կարող չէ յաւերժացնել համազգային յօբելեանն։

Պատգամաւորները մեկնեցին Էջմիածնից և պատգամաւորների պարտականութիւնը սկսվեց նոյն օրը, մանաւանդ երբ նրանք եկան, հասան իրանց վայրերը։

Այդ պարտականութիւնն է ապահովել դպրոցական ֆոնդը, ինչ ճանապարհներով, միջոցներով կուզէ լինի։

Գրենք, խօսենք, ճառեր տանք, հեռագիրներ խփենք, ուտենք, խմենք, ստանանք բարի Վեհի օրհնութիւնը և մեկնենք գանք մեր վայրերը, բայց մի րոպէ, մի րոպէ չը մոռացած մեր պարտականութիւնը. ինչ ճանապարհներով ու միջոցներով կուզէ լինի՝ ապահովենք դպրոցական ֆոնդը…

Դա մեր ազգի լինել թէ չը լինելն է։

Դա մեզ համար ամենակարևորն է։

Այսուհետև ամեն մի պարտաճանաչ, ազնիւ և լաւ հայ իր առաջը պէտք է տեսնէ մի յայտնի նպատակ՝ դպրոցական ֆոնդ։

Առանց դպրոցի չը կայ հայ և հայութիւն։

Առանց դպրոցի մենք մատնված ենք այլասերման։

Առանց դպրոցի մենք ոչինչ ենք, ոչինչ…

Մօտ կէս միլիոնը՝ ծաղրելի աղքատի թաշախն է դպրոցական ֆոնդի։

Մեզ պէտք են միլիօններ…

Մենք պարտական ենք այդ միլիօնները որոնել, ստեղծել, գտնել, թէկուզ ծնել, այո, ծնել։

Չը կայ ուրիշ ճանապարհ հայի փրկութեան համար։

Դա ամենամեծ գործն է մեր իրականութեան մէջ և արժէ մտածել, աշխատել, ծառայել, անգամ ապրել դպրոցական ֆոնդի իրականացման համար։ Դպրոցական ֆոնդը միում է և ըսպասում իր անձնուրաց գործիչներն…

Համազգային յօբելեանը կատարվեց միայն… ձևականապէս։

Համազգային յօբելեանը դեռ սպասում է իր տօնակատարութեան օրին։

Այդ գեղեցիկ, պայծառ օրը կը գայ միայն այն ժամանակ, երբ մեր դպրոցները կապահովվեն, երբ մենք կունենանք դըպրոցական ֆոնդ։

Մինչև այդ գեղեցիկ և պայծառ օրը թող սև սուգը միայն տիրէ պարտաճանաչ հայերիս ազնիւ և զգայուն սրտերին…

ՄԵԾԱՄԻՏ ԹԻՖԼԻՍԻ ԱՆՀԱՄ ՎԷՃԵՐԸ

Մի՞թէ մեծամտութիւն չէր Թիֆլիսի կողմից պահանջել, որ հայ տպագրութեան 400-ամեակը կատարվի անպատճառ Թիֆլիսում։

Ե՞րբ և ո՞ր օրից հայի արևը ծագել է… Թիֆլիսից։

Կան Թիֆլիսում հայ լրագիրներ, շաբաթաթերթեր և ամսագիր, կան պաշտելի գրողներ, հրապարակախօսներ, ազգային գործիչներ, և այդ բոլորը պատիւ է բերում ոչ Թիֆլիսին, այլ մի տասնեակ անխոնջ գործիչներին, որ յանուն ազգութեան և գաղափարի գործում են, երբեմն կ[illegible]ոտ չոր հացի…

125,000 հայ տարրը չի տալիս մի տոկոս հայ կարդացող, և բազմաշատ, հայաբնակ Կովկասի մայրաքաղաքը կարծես մի անապատ է հայութեան համար և չէ կարող ապահովել ոչ հայ լրագիր, ոչ հայ գրող…

Շատ հայ և այնքան քիչ հայութիւն։

Ծիշդ էր, որ մեծամտութիւն էր պահանջել, որ մենք գայինք մեծ տօնի օրը Թիֆլիս երկրպագութեան համար։

Ջոկ բան է Էջմիածինը։ Այնտեղ կան գոնէ մեզ համար թանգ և նուիրական գերեզմաններ և մեր պատմական փառքի, պատուի և անուան յիշատակներ։ Այնտեղից երևում են և ժըպտում մեզ Մասիսի երկու գագաթները։

Շատ հայ և այնքան քիչ հայութիւն. և կարծես Թիֆլիսը ազգային զարգացման մէջ անշարժ կանգնած է դեռ կլնտօների զարաշրջանում…

Մեծամտութիւնից յետոյ անվերջ և անհամ վէճեր, բողոքներ։

Էջմիածին թէ՞ Թիֆլիս։ Թիֆլիս, Էջմիածին…

Դպրոցակա՞ն ֆոնդ թէ ուսուցչական, թէ՞ գրական։

Ապահով է դպրոցը, ապահով է ուսուցիչը և ապահով է գրականական գործիչը. կան հայ կարդացողներ։

Անապահով է դպրոցը. կարելի չէ ապահովել ուսուցիչներին և գրականական գործիչներին. հիմքը դպրոցն է միշտ։

Ծաք վէճեր, անվերջ վէճեր...

Կարծես վէճերը դադարեցին, երկինքը պարզվեց. Էջմիածինը ստաց իր վերջին, կտրուկ խօսքը, և ազգը լռեց։

Յանկարծ նոր վէճեր։ Ընտրողական պայքար։ Նոր ընտրութիւններ, հրաժարականներ...

Անվերջ, անհամ վէճեր։ Վիրաւորանք, հերքումներ և դարձեալ վէճեր...

Եւ մեծ Թիֆլիսում, ուր շատ կայ հայ և այնքան քիչ հայութիւն, չի լսվում մի ուժեղ խօսք՝ բաւական է, յանուն ազգի շահերի, բաւական է, թողնենք մեր ես-ը, մեր անձնականը և սկսենք գործել...

Վիճում են, վիճում են անվերջ, իսկ ժամանակը, անողոք ժամանակը, որ յետ չի դառնում, առաջ է գնում, անցնում է և անցնում, մեծ տօնի օրը քթներիս տակն է արդէն...

Սակայն դպրոցական ֆօնդի համար ի՞նչ է արել մինչև օրս մեծամիտ Թիֆլիսը իր զարգացման մէջ սառած կլինտօների դարաշրջանում։

Թող արդարը, Թող [illegible]լօքը, Թող ազնիւը առաջինը հնազանդէ, խոնարհվի։

Ազգային վէրքերը շատ են, խոր են, ցաւում են, և այդ շատ, խոր ու ցաւած վէրքերից ամենամեծը, ամենավտանգաւորը մեր տգիտութիւնն է։ Ազգը կոյր է, խուլ է, համր է՝ տգիտութիւնից։ Պէտք է նրան լուսաւորել, ուրիշ ազգերի կարգը դնել։

Անհրաժեշտ է մեզ համար դպրոցական ֆօնդը։

Իսկ ի՞նչ է ասում մինչև օրս Թիֆլիսը։

Խօսում է և վիճում։

Ոչ խօսք և ոչ վէճ. գործ է մեզ հարկաւոր, հէնց այսօր, գուցէ վաղը ուշ կը լինի։

Թող Թիֆլիսը ապացուցէ մեզ հայերիս, որ մենք սխալվում ենք, որ նա իսկական կենտրոնն է և օրրանը հայ մտքի, հայ զարգացման։ Թող նա գլուխ կանգնի հանգանակութեան գործին և աշխատէ դրանով փրկել մեզ տգիտութեան ճիրաններից։

Անվերջ, անհամ վէճերից դիակների հոտ է փչում։ Թող դիակները փտեն գերեզմաններում...

Բաւական է։ Մի վիճէք։

Ազգը գործ է պահանջում...

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութեան կողմից՝ նրա նախագահ Գր. Չալխուշեան հոկտ. 12-ին հետևեալ հեռագիրն է տուել Էջմիածին Վեհափառ Կաթողիկոսի անունով.

«Նորին Ս. Օծութիւն Գէորգ V Պատրիարքին և Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

«Այբուբենը և տպագրական մամուլը մեզ փրկում են տգիտութիւնից ու կեղծիքից, որոնց մէջ խարխափում են անգրագէտները։ Լայն բանալով մեր առաջ բոլոր գիտութիւնների դռները, նրանք գիտութիւնների լուսաւոր ուղիով տանում են մեզ դէպի մեծ ու սրբազան ճշմարտութիւնը, որպիսին միայն պէտք է լինի մեր կեանքի նպատակն ու ձգտումը։

«Ու մեր ժողովրդական տօնի մեծ օրը խոնարհելով մեր գլուխը մեծ սրբի աճիւնի առաջ, սրբի, որ տուեց մեզ այբուբեն, Հայոց Բարեգործական Ընկերութեան կողմից՝ ես ողջունում եմ Ձեզ, Ձերդ Վեհափառութիւն, և բոլոր ներկայ եղողներին և բովանդակ սրտով Ձեզ հետ միասին ես կը կամենայի բարձր աղաղակել, որպէսզի ինձ լսէին բոլոր հայերը. «Հայրենակիցներս, գիտութիւնից դուրս չը կայ խելացի կեանք. գիտութիւնները ապրում են այբուբենով ու տպագրական մամուլով. Թող ուրեմն այսուհետև իւրաքանչիւր գիտակից ու ազնիւ հայի նպատակը լինի՝ աշխատել դպրոցական ֆօնդի ուժեղացմանը, որպէսզի կարող լինենք ապահովել բոլոր հայերի ուսման գործը, որպէսզի չը լինի և ոչ մի անգրագէտ»։

«Այդ ուրախալի, բեղուն, լուսաւոր օրը դեռ շատ հեռու է, քանի մեր շուրջը տիրում են սոսկ խաւարը. և ես խորապէս հաւատում եմ, որ այդ օրը՝ մեր Մեսսիան՝ կը գայ։ Ապա ուրեմն աշխատենք և ապրենք յանուն այդ օրվայ իրականացման»։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

(Նուէր բոլոր հայերին)

Կարդացի սրտի բերկրութեամբ այն ամեն գեղեցիկ ուղերձները, ճառերը և քարոզները, որոնք ասվել են և կարդացվել մեծ-յոբելեանի առիթով։ Մանաւանդ խոր տպաւորութիւն է թողնում հայր Բենիկի քարոզի վերջին կտորը։

Բայց այդ գեղեցիկ ուղերձները, ճառերը և քարոզները մի մեծ պակասութիւն ունեն։

Ոչ ոք խօսողներից չասաց, թէ անգրագիտութիւնը մեր հայերիս մէջ ինչ տոկոս է կազմում, արդեօք մութ խաւարի գագաթին չե՞նք հասած, արդեօք կուլտուրական ազգ մեզ համարելով չե՞նք հաւատում մի առասպելի. արդեօք ճշմարիտ չէ՞ Շիրվանզադէի ծաղրը, թէ մենք «միայն մեծ ազգերին նմանվելու յաւակնութիւն ունենք»։ Ամեն մի խօսող պատմում էր սուրբ Մեսրոպի և ս. Սահակի կեանքը, նրանց գործերը, և ոչ ոք չասաց, թէ մեր արդի դրութիւնը առանց Մեսրոպների և Սահակների ի՞նչ է։ Միայն հայր Բենիկը ակնարկեց, և յանկարծ տեսանք, որ «ծալվեցին նրա թևերը» թռչնի թևերի նման, որ ընկնում է վայր երկնքից։ Իսկ երկինքը այնչափ կապոյտ է և երկիրը այնչափ մութ և խաւար... Վերջապէս կարծես բոլոր խօսողները ուխտել էին մի բան և իրանց ուխտին մնացին հաւատարիմ՝ լռել դպրոցական ֆոնդի մասին։ Եւ զարմանալի, անհաւատալի բան. մեծ յոբելեանի օրը մոռացվեց դպրոցական ֆոնդը... Ես երբէք չեմ հաւատայ, որ խօսողները մոռացել էին դպրոցական ֆոնդը. ոչ. նրանք միայն ուխտել էին լռել, որովհետև խօսել՝ կը նշանակէր դիմել և հանգանակութեան, փչացնել ժողովվածների լաւ տրամադրութիւնը. ահա ինչու նրանց թևերը իսկոյն ծալվում էին. և որպէսզի թռչունների նման վայր չը նետվեն, նրանք սաւառնում էին ս. Մեսրոպի և ս. Սահակի կապոյտ երկինքը, որ մեր անցեալն էր, և խուսափում էին ընկնել վայր մեր անմխիթար ներկան...

Ի՞նչ արած. երկինքը այնչափ կապոյտ է և երկիրը այնչափ մութ ու խաւար... Ֆրանսիական մի առած կայ, թէ կախվողի տանը չուանի մասին չեն խօսում։ Դպրոցական ֆոնդը մեծ յոբելեանին մի տեսակ չուան էր, և քաղաքավարի ճառախօսները պահում էին լռութիւն այդ չուանի մասին։ Երևում է, բարեկամներ, որ ձեր Կովկասում կան այնպիսիները, որոնք կը նախադասեն կախվել չուանից, քան թէ տալ իրան լուման որևէ ազգային հիմնարկութեան. ահա ինչու ծալվում էին քարոզիչների թևերը, և նրանք վախենում էին թռչունների նման նետվել վայր. և ո՞վ կը ցանկայ վայր նետվել. երկինքը այնչափ կապոյտ է, իսկ երկիրը մութ և խաւար...

Ամեն բան անցաւ չոր և ցամաք։ Տօնվում էին հայ տառերը և հայ տպարանը։ Իսկ Դպրո՞ցը։ Առանց դպրոցի ինչու են պէտք հայ տպարանը և հայ տառերը։ Տառերին կեանք տուողը դպրոցն է։ Բայց ինչո՞վ պահվեն և բացվեն դպրոցներ։ Պէտք է դպրոցական ֆոնդ։ Ուրեմն ինչու այդ հարցը լուրջ չը դրվեց մեծ յոբելեանին և ինչու մեծ յոբելեարին այդ օրը արին փոքր յոբելեար, փոքր, որովհետև առանց դպրոցի, արտաքոյ դպրոցի հայ տառերը և հայ տպարանը միայն շռայլութիւն են...

Սխալ է, հայր Բենիկ, ծալել թևեր և նմանվել թռչուններին ու վախենալ, որ չը նետվենք վայր։ Կեանքը կռիւ է, լուսաւորութիւնը՝ ճշմարտութիւն։ Քարոզենք դպրոցական ֆոնդի անխուսափելի կարևորութիւնը ամենքիս համար և ապա առնենք ս. Մեսրոպի տառերը և տանենք ժողովրդին, տանք նրան, որպէսզի նա էլ ունենայ մեզ պէս թևեր, ամուր թևեր, որ չը ծալվեն ոչ մի կողմից։ Իսկ եթէ մեզ չաջողվեց՝ կեանքը կռիւ է, մենք չը ծալենք մեր թևերը, թող մեր թշնամիները նրանց ծալեն, կտրեն, և ոչինչ՝ որ մենք կը նետվենք վայր, որովհետև մութ և խաւար երկրից առ միշտ կտրված և ծալված թևերով մենք պիտի շարունակենք նայել վեր, նայել կապոյտ երկնքին, լուսաւոր աստղերին և դրանով տալ հաւատ և ոյժ նոր սերունդին, նոր կռուողներին. կեանքը կռիւ է, լուսաւորութիւնը՝ ճշմարտութիւն։ Ոչինչ, եթէ մենք ես չը յաղթենք. հաւատանք այդ յաղթութեան և մօտեցնենք նրա գալստեան օրը։ Նա կը գայ միայն դպրոցից և դպրոցով։

Իսկ դպրոցները կը բացվեն և կը պահվեն դպրոցական ֆոնդով։

Դպրոցական ֆոնդով...

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԳՐ. ՉԱԼԽՈՒՇՅԱՆԻՆ

Ազնուամեծար բարեկամ.

Ձեր սիրուն մտքերը կարդացի «Մշակի» 247-դ համարում «Դպրոցական ֆոնդ» վերնագրով յօդուածի մէջ։ Այնքան ուղիղ են ձեր դիտողութիւնները, որչափ գեղեցիկ՝ ձեր մտքերը։

Լաւ էր, որ հայ վարժարանները մի պատկառելի գումար ունենային ի յիշատակ ս. Սահակի և ս. Մեսրոպի, քան առատ ճառեր, որոնցով տօնեցինք ազգային մեծ տօնը։

Ի միջի այլոց գրում էք, թէ նուաստս լռել եմ ֆոնդի մասին. իրաւունք ունէք. բայց ուզում եմ, որ իրազեկ լինէք, թէ ինչու եմ լռել։

Խօսքը իմ իրաւունքն է և բարոյական պարտքը. երբ կարծում եմ, թէ խօսքս մի ծառայութիւն է անում ազգին, հոգուցս հրաման եմ առնում խօսելու հրապարակով։

Բայց դրամ հանգանակելը իրաւական խնդիր է. այդպիսի իրաւունք ես չեմ ունեցել և իրաւատէր ոք իսկ այդպիսի պարտք և իրաւունք չէ տուել, հետևաբար ես գործի մէջ երևալու իրաւունք չունէի և չունեմ։

Ես չեմ հրաժարվել ոչ մի ազգային գործից, ծառայութիւնից, երբ ինձ գործի են կանչել, ում կողմից էլ որ հրաւէր եղած լինի, եթէ միայն այդ հրաւէրը հիմնաւորված է եղել և վայելուչ...

Տարօրինակութիւնը դուք կը հասկանաք։

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՍ ԱՄԱՉՈՒՄ ԵՄ, ՀԱՅՐ ԲԵՆԻԿ...

(Իմ նուէրը բոլոր հայերին)

Դպրոցական ֆոնդը պիտի լինի համազգային և մի։

Նա պիտի լինի համազգային և նրա եկամուտները, տոկոսները պէտք է գործադրել անխտիր թէ Ռուսաստանում, թէ Թիւրքիայում, թէ Պարսկաստանում՝ դպրոցների բացման և պահպանութեան վրա։ Հ. Սաաքելեանը մեր բոլորիս իղձը և կամքը յայտնել էր Վեհափառին՝ պնդելով դրա վրա։ Էջմիածնի կապերը Թիւրքիայի և Պարսկաստանի հայութեան հետ, իրաւ որ, մինչև այսօր թոյլ են եղել և արտայայտվում են նրանով, որ Էջմիածինը ձեռնադրում է եպիսկոպոսներ և ուղարկում է միւռոն։

Զօրեղ և բարոյական կապեր կը լինեն այն ժամանակ, երբ Էջմիածինը դառնայ ընդհանուր կենտրոն ազգային կրթութեան և լուսաւորութեան։

Դպրոցական ֆոնդը պիտի լինի համազգային, ուրեմն և ազգը պիտի ունենայ իր ձայնը այդ ֆոնդի գործադրութեան ժամանակ։ Պէտք է մի միայն մարմին՝ ֆոնդը կառավարելու համար, մարմին՝ բաղկացած թէ Էջմիածնի ներկայացուցիչներից, թէ աշխարհական անձերից։

Այդպիսի մի մարմին մեր վստահութիւնը կը վայելէ միշտ։

Դպրոցական ֆոնդը մի պէտք է լինի և միայ։ Բայց այդ ֆոնդը կարող է ունենալ գումարներ, գումարներ, որոնք հաշիւների մէջ առանձին-առանձին կը յիշվեն, կրելով այդ գումարները յատկացնողների և կամ կտակողների անունները։ Դպրոցները, որոնք կը բացվեն և կը պահվեն այդ գումարներով, կը կրեն բարեգործների անունները՝ Խռճեանի դպրոց, Լալայեանի դպրոց կամ մեր մտքի, գրչի և գործի հերոսների անունները՝

Քալանթարի դպրոց, Խատիսեանի դպրոց, Զաւարեանի դպրոց...

Դպրոցական ֆօնդը պիտի լինի մի և համազգային...

Պիտի լինի... պիտի լինի...

Բայց ո՞ւր է այդ ֆօնդը, կա՞յ, կը լինի՞...

Շքեղ, փարթամ մեր երեք ազիզների թաղումները մի՞թէ չը սթափեցրին մեզ մեր խոր քնից և չը յիշեցրին այն մեր չարքաշ ազգի տասնեակ հազար մանուկներին, որ անգրագէտ են և մութ խաւարի մէջ կորչում։

Ֆօ՞նդ. դա իրականութի՞ւն է թէ՞ ցնորք։

Իրականութիւն է,—ասում է իմ ուղեղը, զգում է իմ սիրտը, երգում է իմ հոգին...

Ցնո՜րք,—ասում է... Թիֆլիսը...

Այն Թիֆլիսը, որ վաճառականների աւագ Արշակ Միլեանի ձեռքով ներկայացրեց Վեհափառին 95 վաճառականներից ժողոված 5583 ր., այն Թիֆլիսը, որը «Մշակի» ասելով ընդամենը պիտի տայ 11,000 ր.։

Կարդում եմ «Մշակը» և ամաչում եմ, հայր Բենիկ...

Ի՞նչպէս։

Ողջ քաղաքը տայ տասնմէկ հազար րուբլի՞։ Ի՞նչ է, ձեր Թիֆլիսը Սոդոմ ու Գոմո՞ր է դարձել և ողջ քաղաքում չը կա՞ն երեք անձնուրաց գործիչներ, որ պտտեն, շրջեն, համոզեն և փրկեն իրանց քաղաքը, երեք արդարներ, որ կարողանային Սոդոմն ու Գոմորը փրկել...

Ախր, հայր Բենիկ, ես գիտեմ, որ դուք չունէք իրաւունք դրամ հանգանակել, բայց խօսել, համոզել, յորդորել, աղաչել ձեզ յատուկ խորքից ելած, սրտից բղխած, այրող խօսքերով ո՞վ իրաւունք ունէր և ո՞վ իրաւունք ունի խլել ձեզանից այդ մեծ, սուրբ, անզուգական իրաւունքը։ Ո՞վ։ Ոչ. խօսեցէք, հայր Բենիկ, խօսեցէք, համոզեցէք, յորդորեցէք, աղաչեցէք. ձեզ համար չէ, ազգի խաթրուն է։ Տեսէք, ձեր Թիֆլիսը այսօր հայկական Սոդոմ է դարձել, մոռանում է ազնւութիւն, խիղճ, արդարութիւն, ճշմարտութիւն, պարտաճանաչութիւն։ Ես ամաչում եմ, ես ամաչում եմ, հայր Բենիկ, այրում է թշերս ամօթը. ծածկում եմ երեսս ձեռքերով և փակում եմ աչքերս, որ չը տեսնեմ ձեր քաղքցուն, որ տուել է 75,000 րուբլի և գնել է մի ձի, մինչդեռ ողջ Թիֆլիսը ազգի խորանին զոհում է միայն 11,000 ր.։ Մի՞թէ մեր բոլոր հայ մանուկները, որ անգրագէտ են ու կորչում են մութ խաւարի մէջ, չարժեն թիֆլիսեցու աչքերին մի... ձիան... մի ձիան... Մի՞թէ այդպիսի մեծ յոբելեանի օրը ս. Սահակի և Մեսրոպի յիշատակը տօնելիս իրաւունք ունէր բազմաշատ, հարուստ քաղաքը ցաւեցնել

Վեհափառի սիրտը տալով 5583 ր... Ես ամաչում եմ, ես ամաչում եմ, հայր Բենիկ, այրում է թշերս ամօթը, ծածկում եմ երեսս ձեռքերով, որ օտարները չը տեսնեն ինձ, և չը հարցնեն. եթէ Թիֆլիսի մի հայը մի ձիան համար տալիս է 75,000 ր., ինչպէ՞ս բոլոր այդ քաղաքի հայերը միասին ազգային կրթութեան, լուսաւորութեան և վերածնութեան գործին տալիս են միայն 11,000 ր.։ Դա արդէն աղքատի թաքախ էլ չէ, այլ մի թուք խեղճ ազգի արդար ճակատին...

Խօսեցէք, հայր Բենիկ, խօսեցէք, համոզեցէք, յորդորեցէք, աղաչեցէք. դուք կը կակղացնէք ձեր թիֆլիսեցու քար սրտերը. նրանք կամաչեն ինձ պէս, եթէ դեռ կորցրած չեն բընաւ ամօթը, նամուսը։

Փորձեցէք, հայր Բենիկ, իսկ եթէ ձեր փորձը չաջողվի, դարձեալ մենք երախտապարտ կը լինենք ձեզ, որովհետև ֆօնդը ցնորք կը մնայ Թիֆլիսի և թիֆլիսեցիների համար, իսկ մեզ համար նա կը դառնայ իրականութիւն, այսօր թէ վաղը, թէկուզ տարիներից և տարիներից յետոյ, բայց կը դառնայ իրականութիւն։

Այսպէս է ասում իմ ուղեղը, այդպէս է զգում իմ սիրտը և այդպէս է երգում իմ հոգին...

ԹՈՂ ԽԵՂՃ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԸ ԼԻՆԵՆ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿ

(Նուէր բոլոր հայ քաղաքացիներին)

Մեր Նոր-Նախիջևանցիներիս հետ գաղթել են այստեղ և գիւղացիները։

Նոր-Նախիջևանի գիւղացիները խօսում են բոլորը հայերէն, բայց դժբաղդաբար լեզուն մաքուր չէ, այլ մի խառնուրդ հայոց և օտարազգի, մանաւանդ Թուրք բառերի։ Նրանք աշխատասէր են, բարքերը կոպիտ, զարթնում են արդէն կամաց-կամաց իրանց քնից։ Նրանց զաւակները ընդունակ են, մտնում են հոգևոր դպրոց։ Կան նրանց մէջ և համալսարանաւարտներ, թէև վերջինները տեղափոխվում են Նոր-Նախիջևան և Ռոստով, չը մոռանալով սակայն բոլորովին իրանց ծննդավայրը։

Նոր-Նախիջևանի գիւղացիները անտարբեր չը մնացին մեր առաջնորդ սրբազան Ներսէսի կոչին՝ ձեռնարկել հանգանակութեան յօգուտ դպրոցական ֆոնդի։ Այդ կոչը ջերմ արձագանք գտաւ նրանց սրտերում, և գիւղացիները բերին մեզ իրանց լուման։

Մեծ-Սալա գիւղը հանգանակել է 1380 րուբլի։

Նեսվիթայ գիւղը՝ 1051 րուբլի։

Թոփտի գիւղը՝ 1053 ր. 95 կոպէկ։

Չալթը գիւղը՝ 575 ր. 5 կոպէկ։

Կատարինաւան գիւղը դեռ շարունակում է հանգանակութիւնը։

Գիւղացիների մէջ աչքի են ընկնում Մահտեսեան Ղուկաս, որը նուիրել է 500 ր., և Տոմբայեան Ստեփան, որը նուիրել է 200 րուբլի։

Ահա մեզ բոլորիս համար կենդանի օրինակներ, և թող կովկասցիք մեր խեղճ գիւղացիներից օրինակ առնեն։

Խեղճ գիւղացիները՝ ձեռքերը կոշտացած ծանր աշխատանքից, միշտ իրանց կովերի, եզների հետ, միշտ մութ խաւարի մէջ, անուս, անգրագէտ, մոռացված մեզանից՝ վարում են մի գրաստի կեանք, հեռու մտաւոր աշխատանքից, գրքից, թատ-

րոնից։ Նրանք չեն լսել և չեն լսում գեղեցիկ խօսքեր, որը մենք լսել ենք և լսում ենք մեր մանկական զուարթ օրերից։ Կոշտացել են նրանց մարմինները, կոշտացել են սրտերը, և կարծես նրանց դժուար է զանազանել այն եզներից, որ նրանք քշում են գարնան և աշնան իրանց արտերը հերկելու։

Բայց ահա լսվեց սրբազանի կոչը։

Հայ արիւնը, որ վազում էր գիւղացիների երակների մէջ, հասաւ նրանց սրտերը, զարկեց նրանց, և նրանք հասկացան, որ հեռու, շատ հեռու նրանց գիւղերից կան հայեր և հայ մանուկներ, նրանց նման անուս, նրանց նման անգրագէտ. պէտք է դրամ՝ մի ֆոնդ կազմելու, որ այդ ֆոնդը փրկէ չար խաւարից և բանայ նրանց առաջ գիտութեան և ճշմարտութեան դռները։

Եւ տալիս են իրանց լումանները Նոր-Նախիջևանի թըշուառ, խեղճ գիւղացիները, տալիս են ով ինչքան կարող է, 500 րուբլի և մի րուբլի…

Արդեօք նրանք չե՞ն կարող լինել օրինակ մեզ համար, մեզ համար, որ ապրում ենք ճոխ, վայելելով կեանքի բոլոր բարիքները, մեզ՝ հարուստներիս, ունեւորներիս համար։

Փոխանակ ամեն օր, ամեն ժամ մտածելու իրագործել դպրոցական ֆոնդը, մենք խուսափում ենք հանգանակութիւնից և կամ տալիս ենք կոպէկներ։

Մենք մոռանում ենք մեր պարտքը, մեր պարտականութիւնը, մեր պատիւ և ազգը։

Մենք մոռանում ենք Աստուծուն։

Գուցէ Աստուած էլ մոռացել է արդէն մեզ, որ չէ զարթեցնում մեր խիղճը, չէ այրում մեր սրտերը, կոշտացած, քարացած սրտերը։

Եթէ միայն մենք օրինակ առնէինք Նոր-Նախիջևանի գիւղացիներից,

Արդէն մենք կունենայինք ֆոնդ։

Բայց մենք մոռացել ենք Աստուծուն։

Եւ գուցէ Աստուած էլ մոռացել է մեզ։

Ի՞ՆՉ Է ՄՏԱԾՈՒՄ ՄՈՍԿՎԱՆ

I

Ի՞նչ է մտածում հարուստ, կուշտ, հպարտ Մոսկվան այսօր, երբ դպրոցական ֆօնդի հարցը դրված է մեր առաջ և սպասում է իր լուծման, հարցնում էի ես ինձանից՝ մեկնելով երեք օրով մայրաքաղաք։

Լազարեան ճեմարանի աշակերտ, Մոսկվայի համալսարանի ուսանող, ես միշտ հիացած հպարտանում էի Մոսկվայի հայ գաղութով։

Լինէր դա կտորած, սով թէ մէկ ուրիշ թշուառութիւն, ամեն անգամ երբ լսվում էր կոչ օգնութեան, գաղութը պարտաճանաչ՝ տալիս էր իսկոյն արձագանք, պարզում էր ձեռքերը և համնում, միշտ համնում առատօրէն, ինքնաբերաբար։

Դառել էր մի գեղեցիկ աւանդութիւն, որ Մոսկվան առաջինը լինի և միայ բարեգործողների շարքում։

Այդ Մոսկվայի մէջ կային ազաներ, որոնցով գոռող էին Ղարաբաղը և Շուշին։

Դրանք եղբարք Ժամհարեանններն էին։

«Ժողովեցէք՝ ինչքան կարող էք, նոյնքանը դուք կը ստանաք մեզանից»։

Դրանք իսկապէս ազայական խօսքեր էին։

Մենք չէինք էլ հարցնում, թէ ինչքան կը տան եղբ. Ժամհարեանները։

Նրանք միշտ տալիս էին բոլոր ժողոված գումարի կէսը։

Ի՞նչ է մտածում հարուստ, կուշտ, հպարտ Մոսկվան, դարձեալ հարցրի ես ինձանից, երբ վերադարձայ տուն, երեք օր անց կացնելով մայրաքաղաքում։

Մէկ տեսակ անակնկալ հիասթափութիւն էր ինձ համար, երբ ինձ ասացին, թէ Մոսկվան դպրոցական ֆօնդի համար մինչև այսօր ժողովել է միայն 8000 րուբլի։

Ողջ են Ժամհարեանները։

Ողջ են և միւս հարուստ կրեսոսները։

Ինչ է ուրեմն անցել հայ գաղութի գլխին։

Արդեօք բոլոր փողերը վատնել են բօրսայում և սնանկացե՞լ։ Արդեօք բոլոր հայերը գնել են բրեվ-բօյի նման ձիե՞ր։ Թէ՞ պատահել է առանձին աներաղդութիւն։

Ոչ։ Հանգստացէք։ Ամեն բան իր տեղն է։ Գաղութի հարստութիւնը մեծացել է, շատացել է։ Հոյակապ պալատներ, տներ, թանգագին ձիեր, կառքեր, աւտօմօբիլներ, ծոխ, շքեղ, փարթամ կեանք՝ անվերջ գարուն և ամառ դարձած, առանց աշնան ու ձմրան…

Ապրում են Մոսկվայի հայերը կարծես արքայութեան մէջ, վախենալով աչքերի ծայրերով նայել իրանց ազգի վրա, որի կեանքը խաւար է, մութ է, դժբաղդ է, մի կատարեալ դժոխք…

Ինչո՞ւ թունաւորել ուրախութիւնը, հրճուանք՝ անբաղդների թշուառութիւնը և կարօտը յիշելով…

Կուրացած՝ էլեկտրական լուսաւորութիւնից, Մոսկվայի հարուստները մոռացել են մտածել մեր ազգի մտաւոր սերնդի լուսաւորութեան մասին, այն մտաւոր սերնդի, որ պիտի գայ մեր տեղը, որից կախված է մեր բոլոր յոյսերը, բոլոր ապագան։

Ի՞նչ է մտածում ուրեմն հարուստ, կուշտ, հպարտ Մոսկվան։

II

Ժողովարարութեան գլուխ կանգնած է Ալէքսանդր Աֆանասիչ Թորոսեանը, որի մասին ես շատ եմ գրել։ Մենակ նա կարող էր տալ 20,000 րուբլի առնուազը։ Պատմում են, որ չորս եղբարք Թորոսեաններ միասին տուել են 4000 ր., պայմանաւորվելով որ նրանց առևտրական տունը Արմաւիրում և Եկատերինօդարում ոչինչ չը տայ…

Հարկաւ եթէ ինքը պ. Թորոսեանը, որ գլուխ է կանգնած գործին, տուել է մի 1000 րուբլի, ի՞նչ կարող է խնդրել ուրիշներից… Բուցէ գոհ է, որ տալիս են քիչ, որպէսզի իր հազարը մեծ գումար երևայ, ինչպէս բրինձի հատիկը աւազի մէջ…

Բրինձի հատի՞կը. ապա ի՞նչ անուանեմ պ. Թորոսեանի այդ 1000 րուբլին…

Աղայութիւնը հէնց նրա մէջ էր, որ պ. Թորոսեանը պէտք է տար մեծ գումար, աչքի ընկնող, որպէսզի բարի օրինակ դառնար միւսներին։ Նա կարող էր տալ չորս եղբայրներից

20,000 և Մոսկվան կը տար 100,000... Տուեց 1000, Մոսկվան կը տայ 10,000...

Սրբազան առաջնորդը դրա համար դիմեց պ. Թորոսեանին և ցանկութիւն յայտնեց նրա հետ այցելել հարուստներին...

Պարզ է այժմ, թէ ինչու պ. Թորոսեանը չը ցանկացաւ ժողովարարութիւն անել սրբազանի հետ...

Պր. Թորոսեանի չորացած և դեղնած դափնիները փախցրին քունը եղբ. Ժամհարեանների...

Ափսոս։

Մոռացվեց գեղեցիկ աւանդութիւնը, ազնիւ աղայութիւնը...

Եղբ. Ժամհարեանները տալիս են 2000 ր.։

Իբր թէ ծախսել են արդէն դպրոցի համար, թէև հասարակական դպրոց էլ չէ դա։

Ի՞նչ առնչութիւն ունի գիւղատնտեսական դպրոցը, որ գլխաւորապէս կտակված գումարով է հիմնվում, դպրոցական ֆոնդի հետ, որ զուտ հայկական դպրոցներ պիտի բանայ, պահէ և ապահովէ...

Կան Մոսկվայում ուրիշ հայ միլիոնատէրեր և շատ հարուստներ...

Բայց եթէ գլուխ կանգնողն ինքը խնայում է իր լուման, տալիս է կոպէկներ, գործը տարված է արդէն առաջին օրից...

Այո, դպրոցական ֆոնդի գործը տարված է Մոսկվայում, քանի որ նա պէտք է մնայ պ. Թորոսեանի ձեռքը։

Որոնեցէք, գտէք մի աղա մարդ Մոսկվայում, աղա՝ ոչ այն մտքով, ինչ մտքով հասկանում էին Գաբրիէլ Սունդուկեանը և Ռաֆայէլ Պատկանեանը, մի մեծահոգի, ազնիւ մարդ. թող ինքը զոհէ մի աչքի ընկնող գումար և թող ուրիշներից պարզ երեսով ժողովէ ոչ թէ կոպէկներ, այլ հազարներ...

Ի՞նչ է մտածում Մոսկվան, ես չը գիտեմ, բայց ես տեսնում եմ, որ նա շեղվել է բարի ճանապարհից, մոռացել է ազնիւ աւանդութիւնները, խլացել է և չէ լսում մեր անուս մանուկների լացը և կուրացել է ու չէ տեսնում հայ անմխիթար իրականութիւնը։

Ափսոս, ափսոս...

1914

ԼՈՒՌ Է ԲԱԳՈՒՆ

Լուռ է Բագուն։

Դպրոցական ֆոնդի առաջ նա կանգնած է փակած աչքերով, խցած ականջներով, ձիգ սեղմելով ատամները՝ կոյր, խուլ և համր...

Նա չէ տեսնում, որ մեր ազգի իննսուն տոկոսը անգրագէտ է. նա չէ լսում, որ մեր ազգը խաւարի մէջ կորչում է, այլասերվում. նա չէ բանում անգամ բերանը և չէ խօսում, չէ աղաղակում, թէ ժամ է խորհելու, մտածելու՝ ինչպէս կորստից ազատել մի ամբողջ ազգ, թէ ժամ է դպրոցական ֆոնդը իրականացնելու, որովհետև միայն դպրոցական ֆոնդը կարող է պահպանել մեզ այժմ անխուսափելի կորստից...

Լուռ է Բագուն։

Հարուստ և մեծ քաղաքը, որը ունի այնքան հարուստ հայեր, նիրհում է իր անուշ քնի մէջ և տեսնում է գեղեցիկ երազներ, յաւակնութիւն ունի կարծելու, որ ազգի մտաւոր կենտրոններից մինն է, որ տարածում է մեր մէջ կուլտուրա, լուսաւորութիւն, և այլ ցնորքներ, ցնորքներ...

Ես զուրկ եմ պատուական հէքեաթներ պատմելու տաղանդից Բագուի աղաներին հաճոյանալու համար, բայց ես վախենում եմ, որ մեր իրական կեանքի ճշմարիտ դէպքերը կարող են հէքեաթ երևալ և փախցնել նրանց քունը, եթէ դեռ մնացել է նրանց երակների մէջ հայկական արիւն...

Թիւրքահայոց նորընտիր պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսը մատնանիշ է արել «Մշակի» թղթակցին, որ Սղերդում, Դիարբէքիրի մօտ, Մարդին քաղաքում և ուրիշ տեղեր հայերը խօսում են միայն թիւրքերէն կամ արաբերէն. դպրոցներ չը կան օտար դպրոցները միսիոնէրների ձեռքերին են։ Նրանք դիտումաւոր չորացնում են հայ մանուկների արտերում ազգային գիտակցութեան ոգին։ Հայերը ժխտում են իրանց հայ լինելը։

Եթէ դառնանք Պարսկաստանին, մենք կը տեսնենք միեւնոյն պատկերը։ Մի բարեկրօն հովիւ գրում է ինձ Ուրմիայից․ «Այստեղ Ուրմիում օտար ազգերը որչափ մեծամեծ զոհողութիւններ են անում նիւթական տեսակէտից ժողովուրդներ որսալու համար՝ դպրոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ և այլ տեսակի բարեգործական հաստատութիւններ պահելով»։ Բանից երեւում է, որ Ուրմիայի շրջանում կայ 31 հայ գիւղ։ Բանի տարիներ առաջ Տ. Աֆրիկեանի հաշուով մի քանի գիւղերում կային դպրոցներ։ Այժմ պ. Աֆրիկեանը ընդհատել է իր նպաստը և… «ամբողջ գիւղերում մի դպրոց միայն գոյութիւն ունի, այն էլ… Թուրք աղայի ծախքով»։

«Այն էլ Թուրք աղայի ծախքով…» Մի՞թէ դա պառաւական հէքեաթի նման չէ, հարուստ բագուցիներ…

Գիւղացիք այլասերվում են, շատերը կրօնափոխութեան դիմած են, «որը՝ իրանց շահերի պահպանութեան և ապահովութեան տեսակէտից, որը ապագայ սերնդի ուսման, կրթութեան և դաստիարակութեան օգուտն աչքի առաջ ունենալով, և, որ աւելին է, կոյր տգիտութեան պատճառով՝ յոյն, ասորի, բողոքական, անգլիկան եկեղեցիների ծոցն են մտնում։ Եթէ այսպէս շարունակվի, այս կողմի հայերը բոլորովին կորած են։ Միակ միջոցը՝ պէտք է գիւղերում բացվեն դպրոցներ, հայ սերունդը հայ ոգով կրթվի…»։

Դուք կասէք ինձ՝ ահա Էջմիածնի անփոյթ հոգացողութիւնը…

Ես յօժար եմ ձեզ հետ. ես չեմ պաշտպանի Էջմիածինը. նա մեղաւոր է. բայց հայ հասարակութիւնը, մենք՝ մենք բոլորս, ես, դուք, մենք արդեօք աւելի մեղաւոր չե՞նք մեր սառն սառոյցի նման անտարբերութիւնով։

Ի՞նչ օգուտ Էմիածինը, Էջմիածինը բամբասել և միայն գանգատել, միայն մտրակել նրան և միայն նայել, ողբալ և մատը մատին չը զարնել մեծ աղէտը գլորելու, `տապալելու համար։

Այո, մենք բոլորս մեղաւոր ենք։

Այն ինչ որ նկատվում է Թիւրքիայում և Պարսկաստանում, նկատվում է և այստեղ։ Տգիտութիւնը և այլասերումը սողում են մեր մէջ թունաւոր օձերի նման…

Լրագիրները բաժանորդներ չունեն, գրքերը՝ կարդացողներ, թատրօնը՝ այցելողներ, հայ տաղանդը՝ գնահատողներ։ Ինչո՞ւ։ Որովհետեւ մենք անգրագէտ ենք, որովհետեւ մենք չը գիտենք հայերէն գրել, կարդալ, մտածել, գործել… ամեն անգամ մո-

ռանում ենք, մոռացել ենք և կորչում ենք անտէր, անտերունչ, անհետ, անփառք և անպատիւ…

Միայն մի ճանապարհ կայ փրկութեան։ Դա լուսաւորութիւնն է և գրագիտութիւնը։

Անպայման միայն դպրոցն է խարիսխ մեր գոյութեան. ուստի և ճանաչենք, հասկանանք, որ առանց դպրոցական ֆոնդի չը կայ դպրոց, ուրեմն չը կայ և գոյութիւն, այլ կան մեռելութիւն և մահ…

Եթէ դպրոցական ֆոնդը ստանայ ոսկր և մարմին, գոյութիւն և ոյժ, դառնայ սքանչելի, անոյշ երազից գեղեցիկ և հոյակապ իրականութիւն, մենք կունենանք դպրոցներ, կունենանք թատրօններ, լրագիրներ, գրքեր և տաղանդներ, տաղանդներ, ասում եմ, որովհետեւ մեր ցուրտ, խոնաւ, անշուք հայ իրականութեան մէջ հայ տաղանդը չէ մեծանում և զօրանում, այլ մրսում է, դողում է, փոքրանում, մանրանում, չքանում և ընկնում, ինչպէս դեռաբոյս ծառ առանց նեցուկի…

Եւ մեզ պէտք չեն այն ժամանակ մուրացկի թարախներ շրջել տնէ-տուն, դռնէ-դուռ, բարեգործներ որոնելու, գտնելու և երկրպագելու համար։

Ազգը կը լինի հաւաքական ոյժ, որը ինքը կը խնայէ, կը կերակրէ բոլոր հայ հաստատութիւնները։

Այլեւս պէտք չի լինի մուրալ, խնդրել, աղաչել և ստորանալ՝ ազգի պատիւը ոտնակոխ անելով։

Ա՜խ, երբ կը բացվի այդ օրվայ լուսադէմը։ Թէ՞ նա կը մնայ միշտ ամպերի մէջ և մեր հայ իրականութիւնը առ միշտ կը հանդիսանայ մի անվերջ մթնշաղախ գիշեր։ Բագուից ըսպասում ենք այսօր պատասխան։

Բայց Բագուն լուռ է։

Դպրոցական ֆոնդի առաջ նա կանգնած է փակած աչքերով, խցած ականջներով, ձիգ սեղմելով ատամները՝ կոյր, խուլ և համր։

Եւ ես ասում եմ Բագուին, որ դեռ յաւակնութիւն ունի մեր մտաւոր կենտրոններից մէկը լինել. սթափվիր, քնից զարթիր, մոռացիր պառաւական հէքեաթները, թէ մենք կուլտուրական ազգ ենք։ Բաց քո աչքերը, նայիր, ինչպէ՜ս մենք փոքր ենք, աղքատ և չնչին, ինչպէ՜ս այլասերվում ենք Թիւրքիա, Պարսկաստան և այստեղ. նայիր մեզ և գթա, գթա, խօսիր, խօսիր այնպէս՝ ինչպէս արժան է խօսելու ազնիւ, շիտակ, պարտաճանաչ մարդուն։ Քո ճիգը կարող է մօտեցնել լուսադէմի բացումը, քշել մեր երկնքից մութ ամպերը, և գուցէ մեր մթըն-

շաղախ գիշերը դարձնել մի լուսաւոր, պայծառ, գեղեցիկ օր... Խօսիր, աշխատիր, տուր արձագանք...

Բայց Բագուն լուռ է և նա չէ բանում բերանը խօսելու։ Դպրոցական ֆօնդը նրա համար դարձել է ձայն բարբառոյ յանապատի...

Նա նիրհում է և երազում, պառաւական հէքիաթներ... ազգի մտաւոր կենտրոն... կուլտուրա... ցնորքներ... ցնորքներ...

Ուրմիայի բարեկրօն հովիւը այսօր իմ բերանով պատմում է մի ուրիշ հէքեաթ, սարսափելի հէքեաթ, բագուեցիներ, լսեցէք, օրօր նանի, օրօր նանի...

Ոչ այնքան հեռու ձեզանից, Պարսկաստանի խուլ անկիւնում ընկած են հայեր, 31 գիւղ. բագուեցիներ, օրօր նանի, օրօր նանի...

Աղքատ են նրանք և տգէտ, տգէտ և աղքատ։ Եւ ահա մի հարուստ մեծատուն՝ պ. Աֆրիկեան գթաց և տուեց նրանց դպրոցներ. բագուեցիներ, օրօր նանի, օրօր նանի...

Այսօր պ. Աֆրիկեանը ընդհատել է իր նպաստը, դպրոցները փակվել են և տղաներ, աղջիկներ վռնտվել են դպրոցներից դուրս՝ նորից տգիտութեան ճիրանների մէջ չարչարվելու համար. բագուեցիներ, օրօրօր նանի, օրօրօր նանի...

Լալիս են, բագուեցիներ, հայ տղաները և հայ աղջիկները, լալիս են գոցված դպրոցների շեմքերին կանգնած. և ահա մի Թուրք աղա մօտենում է, սրբում մեր երեխաների արտասուքները և բանում հայ դպրոց. օրօր նանի, օրօր...

Երեսուն և մի գիւղ և մի դպրոց, այն էլ Թուրք աղայի ձեռքով բացված. Թող չը խանգարէ ձեր անուշ քունը, սիրելի և մեծամիտ բագուեցիներ, օրօր նանի, օրօր նանի... օրօր նանի...

ՈՒՐՄԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՈՒԻ ՆԱՄԱԿԸ

Ինչպէս երևում է, Ուրմիոյ մասին ձեր գրած բանաստեղծականը մեր վաճառականներին աւելի շուտ ազդած է, քան Բագուի և Էջմիածնի կրեսոսներին, որոնք նման այն ճարպիկ օձերին, որպէս զի թովիչների ձեռք չընկնեն, իրանց պոչերը ականջի ծակերի մէջ մտցնում են «զի մի լուիցեն զձայն թովչի ճարտարի...»։

Սա մեր հայ իրականութեան ամենավատ կողմն է և նոր չէ, հին հիւանդութիւն է. իսկ առօրեայ շուայտ կենցաղի համար մի ժամի (համար) թէկուզ 1000-ներ չէ խնայում։ Վիճակիս Բարանդուզի շրջանը, որը բաղկանում է տասնմէկ գիւղերից, բոլորն էլ Թուրքախօս են։ Պատարագին քահանան խաչակնքելիս միայն հասկանում են, որ պէտք է երկրպագութիւն անեն։ Մինչ 1400 տարի առաջ, երբ գիր չունէինք, յունաց և ասորոց լեզուներով էինք աղօթում...

Եմ ընդ միշտ աղօթարար ձեր թանգագին կենաց՝

Խ. վ. ԼԱԶԱՐԵԱՆ

Ուրմի, 10 յունվարի 1914 թ.

ԳԷՈՐԳ ՔԱՆԱՆԵԱՆԻ ԵՒ ԻԶՄԻՐԵԱՆԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Գալիս եմ Ղզլարից՝ Գէորգ Քանանեանի և Իզմիրեանի հայրենիքից...

Մնացի մի օր։

Մի՞թէ միայն մի օր. ապա ինչու ինձ երևաց մի շաբաթ, մի ամիս, մի տարի։ Ինչու ես այնչափ ձանձրացայ և այնքան ուրախացայ, երբ թողի Ղզլարը...

Ես տեսայ մի ընդարձակ ճահիճ, որի մէջ շինված են տներ, անգամ գեղեցիկ, տնկված են ծառեր։ Ցեխ, անմաքրութիւն, նեղ փողոցներ, լայն հրապարակներ, այստեղ-այնտեղ փոքր լճակներ, ուր ջուրը կանաչում է, հոտում։ Գարշահոտութիւն և խոնաւութիւն, ջերմախտի կատարեալ բոյնը, ծակը։

Ես տեսայ 11,000 դեսեատին անտառ՝ երբեմն Գալստեանների կալուածքը, եօթ-ութը հազար դեսեատին հող՝ երբեմն Մամաճանեանների պատկանած. տեսայ հոյակապ, այժմ հնացած, խարխուլ պալատներ։ Պարզ էր, թէ որչափ երբեմն հարուստ է եղել Ղզլարը։

Գալստեանները, Մամաճանեանները և շատ շատերը այժմ աղքատացել են, սնանկացել։

Չը կայ բարեգործ Իզմիրեանը։ Չը կայ Լազարեան ճեմարանի գեղեցկակազմ, փայլուն, եռանդոտ տեսուչը և վերատեսուչը՝ Գէորգ Քանանեանը։ Կան սակայն և այժմ շատ հարուստներ և համալսարանաւարտներ, բայց ղզլարցիք փոքրացել են, մանրացել։ Նիհար, կարծես չորացած, երեսները դեղնած, գունատ և թօշնած, նրանք քայլում են դանդաղ, չը շտապելով, նայում են պաղ։ Երևում է, որ ջերմախտը պինդ նստել է նրանց մէջ, սառեցնում է արիւնը և քամում։ Մի բան միայն հետաքրքրում է ղզլարցուն՝ բամբասանք, անվերջ բամբասանք։

Ինձ ի հարկէ հետաքրքրեց, թէ ինչ է արել, ինչ է անում և ինչ պիտի անէ Ղզլարը դպրոցական ֆօնդի համար։

Ղզլարը ֆօնդի համար մինչև այսօր համարեա ոչինչ արած չէ։

Նա այժմ ոչինչ չէ անում։

Բայց ինչ նա կանէ, այդ կախված է ղզլարցիների բարեխղճութիւնից...

Բարեխղճութիւն—մի պտուղ, որ չէ ծաղկում, չէ բուսնում հայկական պարտիզում, մանաւանդ Ղզլարի պէս տեղում, ուր այնքան խոնաւ է և այնքան գարշահոտութիւն է փչում...

Երբ սրբազան առաջնորդ Մխիթարի գրութիւնը ֆօնդի մասին հասել է Ղզլար, ժողով է կազմվել, որը և ընտրել է մի յանձնաժողով 11 հոգուց բաղկացած։

Երևի ջերմախտը ազդել է յանձնաժողովի անդամների ուղեղներին, և նրանք մէկիկ-մէկիկ փախել են։ Մնացել է մի մարդ՝ պ. Գորգինեանը։

Ինչու ջերմախտից վախենայ պ. Գորգինեանը. չէ՞ որ ինքն էլ բժիշկ է։

Բայց բժիշկը համբերատարութեան գաղափարին երկրպագու է։ Ինչու մնայ մենակ։ Ինչու գրանով անպատւէ մնացեալ տասը անդամներին։ Դա ամօթ է։

Կեցցէ համբերատարութիւն. և... բժ. Գորգինեանը փախել է նոյնպէս տասը ընկերների ետևից...

Աշխատանքը մնացել է քահանայ Վահան Թաւաքբէգեանին։ Երևի նա էլ քիչ է աշխատել, և այն ասենք, թէ երբ մեր ժողովուրդը քաշվել է իր քահանայից, նրան տուել պատիւ և դրել բանի տեղ...

Եւ 5000 հայ ղզլարցիները միասին տուել են միայն 208 ր. 10 կոպէկ...

Մի ծաղրելի, չնչին գումար, որը միայն յանձնաժողովի 11 անդամները կարող էին իրար մէջ հեշտ ժողովել և տալ...

Միայն մէկը գտնվել է, որ տուել է 25 ր.։

Հինգ հազար հայ և 200 րուբլի. ինչ անուն կարելի է տալ այդպիսի լրբութեան և անհամութեան։

Ասում են, որ մի հարուստ՝ պ. Ս.՝ տուել է 1 րուբլի։

11 անդամները, որ դեռ փախած չէին, եկել են, սկսել են ամօթել և ազդել են...

Պարոնը անմիջապէս հանել է քսակը և...

Ապա երևակայեցէք ինչ է տուել...

Հազա՛ր րուբլի։ Մի՞թէ միայն հարիւր։ Չէ, կարելի չէ, որ տուած լինի տասը րուբլի...

Չը գտա՛ք։

Պ. Ս. տուել է երեք... երեք... երեք ռուբլի...

11 անդամները, դեռ չը փախած, մխիթարել են իրար. «խրաղը» (եղեամ) իջել է և փչացրել այգիները, վնասը մեծ է և զոհը պիտի լինի... փոքր...

Արդեօք «խրաղը» իջած չէ՞ ղզլարցիների գլուխներին։

Փոքր... զոհ...

Դա ի՞նչ զոհ է, ղզլարցի պարոնայք Սաֆարեաններ, Բայանթարեաններ, Կաճկաճեաններ, Փիթանեաններ, Խախալօվներ, Յունցուլօվներ. դա ի՞նչ զոհ է. դա յանդուգն անամօթութիւն է դէպի ազգը համայն, դէպի հայ դպրոցը, դէպի Վեհափառը, որ դիմել է ձեզ իբրև կարօտեալ հայր՝ հարուստ զաւակներին, և դուք, մոռացած խիղճ ու արդարութիւն, փոխանակ հացի տալիս էք քար, ոչ, քարեր, որովհետև ձեր 208 ռուբլին հայ դպրոցների համար 208 քարեր են թշուառ ազգի դժբաղդ գըլխին, քարեր, 208 ծանր, սուր քարեր...

Ղզլարը մի զարմանալի յատկութիւն ունի. նա ծովի մակերևոյթից ցածր է, ջերմախտը դրել է այնտեղ իր բոյնը։

Նա մտել է երևի ղզլարցիների և ուղեղների ու սրտերի մէջ, և այսօր Գէորգ Քանանեանի և Իզմիրեանի հայրենիքում ազգային հարց, ազգային կարիք, դպրոց—դրանք չնչին, աւելորդ բառեր են...

Ջերմախտը գլխում և սրտում, բամբասանքը բերանը—ահա իսկական ղզլարցին...

5000 ժողովուրդ և 200 աղքատ, անամօթ լումայ...

Ամեն մի ղզլարցի տալիս է հայ դպրոցին... չորս, չորս կոպէկ, ինչպէս աղքատին... և այդ տալիս է ազգին... իր ազգին...

Դա զզուելի է և անբարոյական...

Ով տալիս է հայ դպրոցին չորս կոպէկ, նա ինքն էլ չարժէ... չորս կոպէկ...

Լաւ իմացէք։ Չարժէ չորս կոպէկ։

Ղզլարը կանգնած է ծովի մակերևոյթից ցածր։

Ղզլարցին էլ ցածր է կանգնած այժմ բարոյական տեսակէտից և ցած է նայում. նա չէ տեսնում երկինք, փառք, մոռանում է Քանանեանին, Իզմիրեանին, պինդ բռնած բռնցքում չորս կոպէկ. նա համարում է այդ մի զոհ... ազգի համար...

Ազգին չորս կոպէկն էլ կը բաւէ։

Ազգը չորս կոպէկով էլ կը կշտանայ։

Ազգին պէտք չէ աւելի. չէ՞ որ «խրաղ» է իջել այգիներին

և... ղզլարցիների գլուխներին, և աւելի գլուխներին, քան այգիներին...

Ահա ինչու Գէորգ Քանանեանի և Իզմիրեանի հայրենիքում իմ անցրած մի օրս ինձ երևաց մի շաբաթ, մի ամիս, մի տարի։ Ահա ինչու ես այնտեղ այնչափ ձանձրացայ և այնքան ուրախացայ՝ երբ հեռացայ այդ ճահիճից։ Եւ որչափ կառքը հեռացնում էր ինձ այդ քաղաքից, այնքան ես ուրախանում էի...

Ճանապարհը դժուար էր, երկար և ծանր։

—Ի՞նչ է նշանակում Ղզլար,—հարցրի բարեկամիս։

—Օրիորդներ,— պատասխանեց նա ինձ։

Օրիորդնե՜ր...

Ի՞նչ կարող է սիրուն օրիորդից սիրուն բան լինել աշխարհում։ Ոչինչ։ Սիրուն օրիորդը երկնքի կապոյտն է, լուսնի և աստղերի շողը, արեգակի ճառագայթը, իսկ սիրուն օրիորդներ, նրանք օրհնէնքն են երկնքի, Աստուծոյ բարի ժպիտը մեզ համար։

Ղզլար և օրիորդներ... օրիորդներ և Ղզլար...

Անկարելի էր հաւատալ։

Եթէ Ղզլարը նշանակէր ճահիճներ կամ գորտեր կամ պառաւներ, ծերուկ, տգեղ վհուկ պառաւներ, ճիպռոտ աչքերով, սևացած ատամներով, ես կը հաւատայի. բայց...

Օրիորդնե՜ր, սիրուն էակնե՜ր և Ղզլար... Ղզլար...

Ոչ, կարելի չէր հաւատալ. և ես կրկնեցի հարցս. բարեկամս իր սիգարի ծխի քուլաներին նայելով սառնօրէն և զարմացած պատասխանեց.

—Օրիորդներ, ասում եմ. օրիորդներ։

Հասկանում եմ, այժմ հասկանում եմ. երբ Ղզլարը տալիս էր մեզ Քանանեաններ և Իզմիրեաններ, նա կարող էր նշանակել և օրիորդներ. իսկ այժմ, երբ նրանց տեղը բռնած են պարոններ, որոնք չորս-չորս կոպէկներ են տալիս ազգի փրկութեան և վերածնութեան համար, երբ նրանք չեն ճանաչում ոչ իրանց պատիւը և ոչ մերը, Ղզլարը այլ ևս չէ կարող նշանակել օրիորդներ, այլ ճահիճներ, այլ գորտեր և կամ պառաւներ, ծերուկ, տգեղ, վհուկ պառաւներ, ճիպռոտ աչքերով, սևացած ատամներով, կեղտոտ բռունցքներում ամուր բռնած ջուխտ պղնձէ երկու կոպէկանոցներ... ազգի խորանի վրա քարերի տեղ ձգելու և շպրտելու համար...

Չը կայ սրբութիւն ղզլարցիների համար... Չը կայ...

1913

ՉՈՐՍԸ ՄԻ ԿՈՊԷԿ… ՉՈՐՍԸ ՄԻ ԿՈՊԷԿ

(Մանրանկար)

Նեղ տեղն եմ ընկել և չը գիտեմ՝ ինչպէս գլուխս ազատեմ։

Ես գրել էի, որ Ղզլարը մի անիծեալ անկիւն է և մի ղզլարցին չորս կոպէկ չարժէ, որովհետև իւրաքանչիւր ղզլարցի բարեհաճել է տալ ազգային դպրոցական ֆոնդին միայն չորս-չորս կոպէկ։

Այժմ Ախալցխայի իմ թղթակիցը պաշտպանում է ղզլարցիներին և գրում է, որ ախալցխացիները համախոսական են արել շնորհաւորելու ղզլարցիներին նրանց ազգասիրական ըզգացմունքների և բարի գործերի համար և դնել մի յուշարձան Ախալցխայի հրապարակներից մինում ի պատիւ և ի փառս Ղզլարի, անգամ սկսել է հանգանակութիւն և արդէն 38 կոպէկ ժողովել է մի ժամում…

Ախալցխայի բարեկամս գրում է, որ ես ի զուր եմ զարմանում, որ ղզլարցին տալիս է չորս կոպէկ։

Չորս ախալցխացիներ, գրում է նա, տալիս են միասին… մի կոպէկ…

Չորս ախալցխացիներ… մի կոպէկ…

Ո՞րտեղից իմանայի, որ Ախալցխայում կան այդպիսի… փահլեվաններ, հսկայական դիւցազներ…

Խնճոյքներում, կեր ու խումի ժամանակ, բաժակները ձեռքերին, ախալցխացիները տաքանում են, կրակվում հնոցների, վառարանների նման։ Մօտենալ դժուար է՝ կայրվես նրանց… ազգասիրական կրակից… Լաճ նրանց. ինչ հայեր են, զօշաղ, ազնիւ, բանիմաց… Վերջին շունչը նրանք պատրաստել են հայութեան համար… վերջին կոպէկը չեն խնայի ազգի համար…

Բայց գնա սպասէ նրանց… վերջին շունչին և… վերջին կոպէկին…

Երբ դիմում ես ախալցխացուն՝

—Եղբայր, օգնիր, տեսնում ես՝ խեղճ ենք, կարօտ ենք, ընկճված ենք, մեռնում ենք սովից, արտաներից, խաւարից…

—Դեռ սպասիր, եղբայր, ինչ ես շտապում,—պատասխանում է նա.—չը գիտե՞ս որ ես խոստացել եմ վերջին շունչս և վերջին կոպէկս, դեռ առողջութիւնը վրաս է, գրպաններս լիքը. ժամանակը չի եկել…

Իրաւ որ ժամանակը չի եկել։ Աստուած տուել է ախալցխացուն լաւ, առողջ կազմ, բարիք, հարստութիւն… Ապրում են, ապրում են երկար, անվերջ՝ ախալցխացիները, դեռ նրանց վերջին շունչը շատ հեռու է, իսկ որ գալիս է, չեն էլ իմանում. մէկ էլ տեսար՝ առօք փառօք տարան գերեզմանոց ու քելեխը կերան բարեկամները և դրացիները։

Վերջին կոպէ՞կ։

Գնա դու իմացիր, թէ ո՞ր կոպէկն է իրանը, ո՞րը ուրիշինը, ո՞րը առաջինը, ո՞րը վերջինը…

Վերջապէս կարծում էք ախալցխացիները չունե՞ն ամօթ, խիղճ, զգացմունքներ…

Վեհափառ Կաթողիկոս, սրբազան առաջնորդ, քահանաներ, քարոզներ, լրագիրներ, տեղիս «գործիչներ», բոլորը միասին նրանց համոզել են…

Եւ ախալցխացին դիմել է ինքնօգնութեան վեհ գաղափարին։ Խելօք մարդիկ են ախալցխացիները…

Միացել են։ Չորսը միասին, չորսը միասին։

Եւ իւրաքանչիւր չորս ախալցխացիներ ձեռք-ձեռքի բռնած մօտենում են և տալիս են… մի կոպէկ…

Ափսոս Ղզլարը… ափսոս ղզլարցիներ… ի զուր բամբասեցի նրանց…. Այժմ նեղ տեղն եմ ընկել և չը գիտեմ, ինչպէս գլուխս ազատեմ…

Չորսը մի կոպէկ…

Ես յիշում եմ աշնան վերջին օրերը և մի աղաղակ բարձր անվերջ՝ չորսը մի կոպէկ, չորսը մի կոպէկ… Աղաղակողը գիւղացին է. նա բերել է իր ագարակից վարունգներ, դեղնած, խոշոր, հաստափոր, անհամ, մեծ սերմերով և առաջարկում է չորսը մի կոպէկ…

Եւ ինձ թւում է, որ Ախալցխան պարպվել է, մարդ չէ մնացել և մարդկանց տեղ ման են գալիս խոշոր, հաստափոր, դեղնած, մեծ սերմերով, անհամ վարունգներ, որ ոչ թէ չորսը, տասն էլ միասին չարժեն մի կոպէկ…

Ա՜յ, ախալցխացիներ…

Վա՜յ ձեզ, ախալցխացիներ…

1914

Ի՞ՆՉ Է ՆԱՅՈՒՄ, Ի՞ՆՉ Է ՄՏԱԾՈՒՄ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻՆ

Նոր-Նախիջևանի շրջակայքում կան վեց հայ գիւղեր. համեմատաբար մեր գիւղացիները նիւթական կողմից ապահովված են, լաւ միջոցներ ունեն, կարելի է ասել հարուստ են, բայց բարոյական տեսակէտից ակներև այլասերվում են։ Եղեռնագործութիւնները սաստկանում են, և մանաւանդ արուագիտութիւնը խորը արմատներ է գցել և հասարակ երևոյթ է դարձել։ Սրանից երկու շաբաթ առաջ երկու պատանիներ, Մագոյեան 20 տարեկան և Խաչքինայեան 18 տարեկան, սպանում են նենգութեամբ իրանց ընկերոջը՝ Խոշաֆեանին, սպանում են ցերեկը դաշտի մէջ, այլանդակելով խեղճին։ Պատճառը դարձեալ արուագիտութեան ախտն է։ Մի մոռանաք, որ սիֆիլիսը իր բոյնը դրել է այդ գիւղերում, անցնում է տնէ-տուն և վարակում է, չը խնայելով ոչ մատաղ, ոչ ծեր հասակը։ Մեր գիւղերում չը կայ ոչ մի բժիշկ, չը կայ դեղատուն, չը կայ անգամ բաղանիք։ Տարին մէկ երկու անգամ, հաղորդվելուց առաջ, կոնքի մէջ կատուի նման լուացվում է գիւղացին, ընտելացած մանկական օրերից կեղտին և ցեխին։ Կեղտի և ցեխի մէջ են կորած բոլոր մեր գիւղերը. կեղտի և ցեխի մէջ են անց կացնում օրեր, ամիսներ, տարիներ մեր գիւղացիները։

Ի՞նչ է նայում, ի՞նչ է մտածում Նոր-Նախիջևանցին։ Նոր-Նախիջևանցին արհամարհանքով, ծաղրով է վերաբերվում դէպի գիւղացին. նա նրան չէ սիրում և չէ էլ ուզում հանել նրան նրա պապինական կեղտից և ցեխից։

Հարիւր քսան տարվայ միջոցին մենք չունեցանք մի անձնաւոր մարդ, թէ հարուստ վաճառականներից, թէ ինտելիգենտ դասակարգից, որ մտածէր գիւղացու մասին և դարմանէր նրա ցաւերը և վէրքերը։ Հարիւր քսան տարվայ միջոցին և ո՛չ մի անձնուրաց մարդ. կարծես՝ խեղճ գիւղացին մեր եղբայրը չէր, մեր ոսկրը, մեր արիւնը չէր, կարծես նա մեզ բոլորովին օտար լինէր...

Ի՞նչ է նայում, ի՞նչ է ապա մտածում Նոր-Նախիջևանցին...

Մի՞թէ նա սպասում է, որ մեր խեղճ գիւղացիները բոլորովին այլասերվեն։

Այո՛, խ ե ղ ճ գիւղացիները...

Վաղ առաւօտից մինչև երեկոյ, խոնարհելով գլուխները և ճկելով յոգնած կռնակները, ծանր աշխատում են նրանք, արտասուքով, քրտինքով, արիւնով պարարտացնելով չոր և ապերախտ հողը։ Վաղ առաւօտից մինչև երեկոյ նրանք իրանց եզների, կովերի, ձիերի հետ են։ Անուշ, քաղցր, խելօք խօսք նրանք լսած չեն, և ինչո՞ւ զարմանալ, որ նրանք կոշտացել են, յիմարացել են...

Խաւարի սուր ճանկերը ամուր բռնել են մեր գիւղացուն և խեղդում են նրան։ Սրտերը քարանում են, կոշտանում, չարանում. խելք չը կայ, հոգիները թմրած են, քնած, կարծես բոլորովին մեռած...

Մի՞թէ մենք կուրացել ենք և չենք տեսնում, որ մեր գիւղացին մերձ ի մահ է։

Մի՞թէ մենք չենք տեսնում, որ պէտք է օգնել և որչափ կարելի է՝ շուտ։

Լոյս, լոյս է պէտք նրանց, լոյսի են նրանք կարօտ։

Այն օրը, երբ լոյս կը ծագի մեր գիւղացիների համար, խաւարի ճանկերը կը թուլանան։

Գիւղացին չի լինի այլ ևս անասուն, նա կը դառնայ իսկական մարդ, բարի և առաքինի։

Մինչև ե՞րբ անտարբեր դառն արհամարհանքով պիտի նայէ, սպասէ Նոր-Նախիջևանցին։

Ժամանակ է գործել, ժամանակ է վառել այդ լոյսը. վառենք գոնէ մի փոքր լապտեր, գոնէ մի ճրագ, մի մոմ. բայց չը թողնենք մեր փոքր եղբօրը ցեխի, կեղտի մէջ։

Ճանաչենք մեր պարտականութիւնը, որ մենք յիշած չենք հարիւր քսան տարիներ։

Փոխանակ ատելութեան, ծաղրի և արհամարհանքի, ցոյց տանք մեր գիւղացիներին սէր և համակրութիւն, սէր, որ կակղացնում է քարացած, կոշտացած սրտեր, և համակրութիւն դէպի ուրիշի վիշտը և ցաւը, որ բարձրացնում է մեզ անչափ և երբեմն տանում հեռու, հեռո՜ւ ամեն տեսակ կրքերից...

Ի՞նչ է նայում, ի՞նչ է մտածում Նոր-Նախիջևանցին...

1901

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԳՈՐԾ ԵՒ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ

I

Մեզանում շատ են համակրելի գործեր, բայց դժբաղդաբար աւելի շատ զարմանալի գործիչներ։

Զարմանալի գործիչները մօտենում են համակրելի գործին, և յանկարծ տեսար, որ համակրելի գործը մի անհամ բան դարձաւ։

Հաւատում եմ և միևնոյն ժամանակ մխիթարվում, որ այդ պարոնները գործում են անգիտակցաբար։

Ցանկանում էք փաստեր։

Ապրիլի 17-ին Նոր-Նախիջևանի Հայուհեաց Խնամատար Ընկերութեան ընդհանուր ժողովն էր։

Ընկերութիւնը հաստատել է 1882-ին Գէորգ կաթողիկոսը. նպատակն էր՝ խնամել և բանալ աղջկանց համար ծխական հոգևոր դպրոցներ։

Ընկերութեան գործունէութիւնը պէտք էր դադարեցնել։

Ընկերութիւնը ունէր գումար՝ 27 հազար։

Մենք ձեռք բերինք մի նոր կանոնադրութիւն և առաջարկեցինք Վեհափառ Կաթողիկոսի համաձայնութեամբ այդ գումարը յատկացնել նոր ընկերութեան։

Որպէս զի կարդացողը հասկանայ մեր առաջարկութեան իմաստը, մենք կանոնադրութիւնից բերում ենք մի քանի կտորներ։ Նոր-Նախիջևանի Հայուհեաց նոր ընկերութեան նպատակն է «նպաստել լուսաւորչական դաւանութեան չքաւոր կանանց նիւթական և բարոյական վիճակի բարւոքմանը»։ Ընկերութիւնը իրաւունք ունի օգնել ամեն տեսակ աղքատի, պահել սաներ դպրոցներում, դաստիարակել որբերին, տարածել ժողովրդի մէջ բարոյական բովանդակութիւն ունեցող գրքեր և այլն։ Հարկաւոր դէպքերում նա բանում է հիւանդանոցներ, բուժարաններ, հասարակական ճաշարաններ և այլն։

Մի համակրելի գործ, այնպէս չէ՞։

Բայց ահա մօտենում են զարմանալի գործիչներ, որոնց

պարագլուխներ կանգնած էին ապրիլի 17-ին, ժողովի առաջ աւագ քահանայ Զարիֆեան, բժ. Ի. Ալաճալեան և տ. Ի. Բեչիկեան։ Պէտք է ասել, որ այդպիսի մի ընկերութիւն կայ Աստրախանում։ Համեմատելով երկու կանոնադրութիւնները՝ և՛ կոյրը կարող է տեսնել և հասկանալ, որ Նոր-Նախիջևանինը գերազանց է։

Աստրախանի ընկերութեան նպատակն է նպաստել միայն Աստրախանի չքաւոր հայերին։

Նոր-Նախիջևանինը պիտի նպաստէ ամեն մի լուսաւորչական հայի։

Աստրախանի ընկերութեան գումարները, եթէ ընկերութիւնը դադարեցնէ իր գործունէութիւնը, գործադրվում են Աստրախանի հայերի համար գոյութիւն ունեցող գործի վրա։

Նոր-Նախիջևանի ընկերութեան գումարների գործադրելը կախված է ընդհանուր ժողովից։

Այսինքն ամեն կողմից, գործին անաչառ նայելով, Նոր-Նախիջևանի ընկերութիւնը աւելի մեծ իրաւունքներ ունի։

Տեսէք, այժմ ինչ են ասում զարմանալի գործիչները։

Նրանք պահանջում են, որ հին ընկերութեան գումարը յատկացվի ս. Լուսաւորիչ եկեղեցուն։

Բժ. Ի. Ալաճալեանը ժողովից առաջ հաւատացնում է մեզ, որ եթէ գումարը տրվի նոր ընկերութեան, նա... դատ պիտի սկսէ ընդդէմ նոր ընկերութեան։

Տ. Ի. Բեչիկեանը, հին ընկերութեան վարչութեան անդամը, նոր կանոնադրութիւնը համակրելի գործ չէ ճանաչում և պահանջում է, որ փողերը տրվեն ս. Լուսաւորիչ եկեղեցուն։

Իսկ աւագ քահանայ Զարիֆեան՝ ձեռքը սրտի վրա դրած վկայում է ժողովին, որ մեզանում կան ծխական դպրոցներ, մենք պիտի հոգանք ծխական դպրոցների ծախսը, և պահանջում է, որ գումարը տրվի եկեղեցուն, որը կը հոգայ ծխական դպրոցների մասին...

Վիճելը աւելորդ էր։ Ո՞ւմ հետ, ինչ օգուտ վիճել։

Հին ընկերութիւնը դադարեցրեց իր գործունէութիւնը, և գումարը յատկացվեց ս. Լուսաւորիչ եկեղեցուն։

II

Գումարը յատկացվեց ս. Լուսաւորիչ եկեղեցուն։

Գեղեցիկ հրապարակի վրա, գեղեցիկ պարիսպով պատած,

գեղեցիկ պարտէզների մէջ, հոյակապ բարձրանում է ս. Լուսաւորիչ եկեղեցին հարիւր տարուց աւելի։ Վեց հայ գիւղերի գիւղացիները, մօտենալով Նախիջեւանին, հեռուից տեսնում են ս. Լուսաւորիչ եկեղեցու գեղեցիկ գմբէթը և երկիւղածութեամբ խաչակնքում են երեսները։

Վեց հայ գիւղերի աղքատ գիւղացիները տեսնում են հոյակապ եկեղեցին և հարուստ քաղաքացիներին և սառած սրտերով վերադառնում են իրանց գիւղերը։ Արատի, կեղտի մէջ են թաղված խեղճերը։ Չունեն ոչ բժիշկ, ոչ հիւանդանոց, ոչ մանկաբարձուհի, ոչ դեղարան։ Սիֆիլիսը խոր արմատներ է դրել։ Օգնութիւն ոչ մի կողմից։ Մեր զարմանալի գործիչները այդ տեսնում են, գիտեն, հասկանում են և սակայն գումարները յատկացնում են դարձեալ եկեղեցուն։

Մինչդեռ այժմ, երբ հին ընկերութեան մոխրի վրա ծընում է մի աւելի զօրեղ ընկերութիւն, որի գլխաւոր նպատակներից մինը պիտի լինի նպաստել ոչ թէ միայն կուշտ Նախիջեւանցուն, այլ և քաղցած, գլխաւորը՝ թմրած գիւղացուն, հին ընկերութեան գումարը կարող էր մեծ օգուտ տալ, մանաւանդ գործունէութեան առաջին քայլերում։ Բայց ինչ արած։

Զարմանալի գործիչները կարծում են, որ եկեղեցուց դուրս չը կայ հոգու փրկութիւն և փոխանակ գործ անելու՝ հոգիներ են փրկում։

Եւ սուրբ Լուսաւորիչ եկեղեցու արտաքին փայլը ցոյց է տալիս մեր սրտերի ներքին աղքատութիւնը…

Սակայն թող չը վհատեն նոր ընկերութեան վարչութեան տասը անդամները։

Ճշմարտութիւնը միշտ պիտի տանէ յաղթանակը…

Ի սրտէ ցանկանք շատ և շատ այդպիսի համակրելի գործեր և սակաւ, սակաւ, այդպիսի… զարմանալի գործիչներ…

1900

ՊՈՌՆԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ

Ո՛հ, մի վախենաք. ես պիտի խօսեմ այն պոռնկութեան մասին, որին բոլորս այնքան սովոր ենք, ընտելացած ենք, որ մի հասարակ բան ենք համարում։

Նոր-Նախիջեւանում ձայնաւորների ընտրութիւն է։ Ակումբանոցի դահլիճը լիքն է։ Ներկայ են երկու հարիւր Նոր-Նախիջեւանցիներ, երկու հարիւր էլ թեկնածուներ, երկու հարիւրն էլ իրանց արժանաւոր են համարում նախ ընտրվել ձայնաւոր և ապա, ի հարկէ, քաղաքագլուխ։

Երբ մտնում էք դահլիճը, հեռուից, շատ հեռուից ձեզ տեսնում են, նկատում, ճանաչում, վազում են ձեր առաջ, սեղմում ձեր ձեռքերը, բարեւում, անհանգստանում ձեր առողջութեան մասին։ Սակայն ի՞նչ է պատահել այսօր։ Ինչո՞ւ այդ պարոնները դեռ երէկ ձեզ չէին տեսնում, ճանաչում, բարեւում, իսկ այժմ խոնարհ, հլու ծառաներ են դարձել։

Ի՞նչ է պատահել այսօր։

Այսօր ընտրութիւն է, և պոռնիկ, այո՛, պոռնիկ ու երկչոտ աչքերի մէջ դուք կարդում էք մի հարց՝

—Այնպէս չէ՞, դու կը տաս ինձ քո քուէդ։

Ես կը տայի ոչ թէ մի, այլ հարիւր քուէներ, հազար քուէներ, որպէս զի չը տեսնէի այդ պոռնիկ աչքերը։

Երէկ նա գոռոզ աղա էր. այսօր՝ դարձել է հլու ծառայ։

Աղային մենք չենք սիրում, բայց հլու ծառան ինչ զարշելի բան է…

Եւ ես երբէք ոչ մի տեղ տեսած չէի այնչափ ստոր և կեղտոտ պոռնկութիւն, որչափ տեսայ ապրիլի 20-ին և 21-ին Նոր-Նախիջեւանի ակումբանոցում, ձայնաւորների ընտրութեան ժամանակ։

Սկզբից ես մտածում էի՝ ինչո՞ւ չորս տարին մի անգամ է լինում ընտրութիւնը, լաւ չէ՞ր լինի արդեօք, եթէ տարին չորս անգամ ընտրէինք, գոնէ չորս անգամ ցոյց կը տայինք իրար սէր, յարգանք։ Բայց յետոյ, երբ տեսայ թեկնածուներին,

խեղճ, երկչոտ, խոնարհ Թեկնածուներին, ես ափսոսացի, որ տասնչորս տարին մի անգամ չէ կայանում ընտրութիւնը։

Սուտ սէր, սուտ յարգանք իրար ցոյց տալու մէջ աշխարհի ասպարէզում մենք՝ Նոր-Նախիջևանցիներս միշտ կարող ենք հպարտութեամբ պահանջել և ստանալ առաջին մրցանակը։

Եւ միթէ միայն աղաներն են այդպէս։

Միթէ ինտելիգենտ դասակարգը ևս չէ հետևում աղաների օրինակին։

Մեր երեսներից միշտ քաղցր ժպիտն անպակաս է, ինչպէս վարդը գարնանը, և սակայն սրտերիս խորքերում մենք պահում ենք նենգ նախանձը, ինչպէս Թունաւոր օձը պահվում է կանաչ արօտի մէջ։

Մի ուրախանաք, եթէ կը տեսնէք ժպիտը մեր երեսներին. այդ Յուդայի ժպիտ է. օձը քնած է, բայց նա կենդանի է, նա կը խածնէ ձեզ վաղ թէ ուշ…

Մեր ակմբանոցում ապրիլի 20-ին և 21-ին կարծես սիրահարներ էին ժողովվել։ Նա, ով չը գիտէր մեզ և չէր ճանաչում մեզ, կարող էր նախանձել մեր համերաշխութեան, միութեան, սիրուն… բայց իմացողի համար երկու հարիւր ամբոխից կային միայն քանի մարդիկ, շատ շատ երեսուն, մնացածները պոռնիկներ էին, կեղտոտ պոռնիկներ…

Ո՞վ էր մտածում քաղաքի մասին, հասարակութեան շահերի մասին։

Տուփին մօտեցողը մտածում էր, թէ թեկնածուն ո՞ւմ կը տայ իր քուէն, ո՞ւմ կընտրէ քաղաքագլուխ։

Ահա մի խոշոր յիմարութիւն։ Իրաւասուն չէ ուզում ընտրել ձայնաւոր, նա ուղղակի ուզում է ընտրել քաղաքագլուխ…

1894

ՊԱՏԻՒ Է ԲԵՐՈՒՄ…

Պատիւ է բերում Նոր-Նախիջևանցուն…

Հոգևոր դպրոցը, որը ծառայում է ամբողջ Բեսարաբիայի թեմին, իսկապէս պահվում է Նոր-Նախիջևանցու փողով…

Այս տարի, չը գիտենք ինչու, հարուստ Պետերբուրգը հրաժարվեց օգնելու…

Մեր դպրոցը պէտք է Պետերբուրգին, Մօսկվային, Ղրիմի թերակղզուն…

Ստանում ենք կոպէկներ, և ողջ բիւջէն—30,000 ր.—ծանրանում է մեր վրա…

—Թող Ն.-Նախիջևանը ինքը կառավարէ…

Կարծես Նոր-Նախիջևանը ուրիշ գործեր չունի անելու…

—Ն.-Նախիջևանը հարուստ է,—լսում ենք ամեն կողմից, —թող նա ինքը կառավարէ…

Մօտիկ ապագայում մենք կը նկարագրենք «Մշակի» էջերում մեր տեղիս բարեգործական հիմնարկութիւնների գործունէութիւնը, և դուք կը համոզվէք, որ Նոր-Նախիջևանը հարուստ է… բարեգործութիւնով։

Երնէկ, եթէ մեր Կովկասի քաղաքները նոյն եռանդով, նոյն չափով գործէին…

Նոյեմբեր ամսում Նոր-Նախիջևանի փոխադարձ վարկի ընկերութեան 40-ամեայ յոբելեանն է։ Նոր-Նախիջևանից այդ ընկերութիւնը տեղափոխվել է Րօստով և, շնորհիւ ազնիւ և բանիմաց գործիչների, աջող է գործում։

Պէտք էր յաւերժացնել այսպէս թէ այնպէս այդ յոբելեանը։

Կար առաջարկութիւն Նոր-Նախիջևանի քաղաքային հիւանդանոցը բարւոքելու… Գեղեցիկ նպատակ։ Բայց ինչո՞ւ հայ փողով շինել կամ բարւոքել մի հիւանդանոց, որի մասին իսկապէս քաղաքը պարտական է հոգալ։ Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Ք. Պօպօվ այդպիսի մի սխալ էր արել։ Արել են և անում են այդպիսի սխալներ և շատերը։

Հարուստ մի հայր, հարուստ մի մայր, որ կորում են,

առնում հացի կտոր զաւակի բերանից... դրացուն տալու համար... Դրացին չունի՞ հայր, մայր... Անգամ եթէ չունենար... մի՞թէ իմ պարտականութիւնը չէ հոգալ իմ զաւակիս համար նախ և առաջ։ Դա բնական օրէնք է։

Եւ մենք ի բոլոր սրտէ ողջունում ենք Գ. Զուբարին, որ պահանջեց այն 25 հազարը, որ պիտի տրվէր քաղաքային հիւանդանոցին, յատկացնել թեմական դպրանոցին։

Բայց ինչու՞ 25,000. մի՞թէ նոյեմբերին Նոր-Նախիջևանի փոխադարձ վարկի ընկերութիւնը տօնելու է 25-ամեակը։ Ապա ինչու՞ մեզ ասացին 40-ամեայ յոբելեան։

Բարի, ազնիւ, զգացված հայ (ընկերութեան մեծամասնութիւնը հայերն են կազմում) անդամները պահանջում են՝ 40,000.

Եւ ընդհանուր ժողովը որոշում է տալ Նոր-Նախիջևանի դպրոցին 40,000 ր.։ 40-ամեայ յոբելեան և 40,000 ր. հայի օգտին...

Պատիւ է բերում նոր-նախիջևանցուն...

40-ամեայ յոբելեան և 40,000՝ հայի օգտին։

Շուտով մենք պիտի տօնենք մեր տպագրութեան 400-ամեայ յոբելեանը։

Մի՞թէ ցնորք կը լինէր սպասել, որ ամբողջ հայութիւնը Ռուսաստանում 400 հազարանոց ֆօնդ կազմէր մեր աղքատիկ գրականութեան բազմավաստակ դժբաղդ մշակներին ապահովելու համար։

Մի՞թէ ցնորք կը լինէր սպասել...

1912

ՄՏՔԻ ԽԱԿՈՒԹԻՒՆ, ԹԷ ԽԵԼՔԻ ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

Մեր թեմի կառավարիչ Յուսիկ վարդապետը եկաւ Նոր-Նախիջևան և անխտիր այցելեց բոլոր յայտնի քաղաքացիներին թէ այստեղ, թէ Ռօստօվ և ամենքի վրա լաւ տպաւորութիւն թողեց։ Վաղուց է արդէն նոր-նախիջևանցին չէ սիրում, չէ յարգում հայ-հոգևորականներին, որովհետև նա վատ «նմուշներ» է տեսել, որովհետև այն վարդապետները, որոնք եկել են այստեղ, և այն քահանաները, որ ապրում են մեզանում, վաճառականներից չեն տարբերվում. միևնոյն դարդով և հոգսով զբաղված, նրանք գործում են «ի փառս մարդկան», ծախելով գլուխները հարուստի և ուժեղի առաջ, գոռոզանալով փոքրի և չքաւորի առաջ. ձեռք բերել հարստութիւն, աշխարհի «քէֆը» անել, լաւ ուտել ու խմել, ահա ինչն է այդ փոքր անձերի փոքր իդէալը։ Մխիթար վարդապետը, որ յաջորդ է այստեղ, գուցէ առաջինը եղաւ մեզանում, որ ապացուցեց, թէ կան մեր հոգևորականների մէջ և բոլորովին անշահասէր անձինք։ Դա այնպիսի մի յատկութիւն է, որ պէտք է գնահատել։ Իբրև նախագահ հոգևոր կառավարութեան, նա սովորեցրեց մեզ սիրել այդ կառավարութիւնը, և իբրև նախագահ հոգևոր դպրոցի՝ նա ցոյց է տալիս բարի եռանդ։ Նրա պակասութիւնը՝ նրա զգուշութիւնն է. եթէ նա լինէր աւելի համարձակ՝ չարը յանդիմանելիս և բարին նկատած ժամանակ, աւելի լաւ կը լինէր։ Չը սիրելով հոգևորականներին, մենք աշխատել ենք միշտ բոլոր գործերից նրանց պահել հեռու, մինչև անգամ եկեղեցական գործերից։ Այդ այդպէս չէր լինի, եթէ առաջ ևս այստեղ լինէին Մխիթար վարդապետներ և եթէ Մխիթար վարդապետները յարգելով ժողովրդի իրաւունքները՝ համարձակ պահանջէին այն, ինչ որ պատկանում է իրանց։ Հասարակութիւնը դրանից միայն կօգտվէր։

Խօսքս եկեղեցական հոգաբարձութեան մասին է։ 1889 թուականի հոկտեմբերի 27-ին հաստատվեց Նոր-Նախիջևանի «Եկեղեցական հոգաբարձութիւն հայ ազգի աղքատաց»։ Այժմ

հոգաբարձութիւնը այն վիճակին է հասել, որը կարելի է նկարագրել երկու բառերով՝ Տ ա ռ ն ա կ ե ց ա ն հ ե թ ա ն ո ս ք։ Եւ թէպէտ մենք՝ Նոր-Նախիջևանցիներս՝ քառասուն լեզուով չենք խօսում, բայց իրար հասկանալ չենք կարող և չենք էլ ուզում։ Նախկին հոգաբարձութիւնը, պնդում են մի քանի պարոններ, որոնք փոխանակ հայոց մամուլին դիմելու՝ չը գիտեմ ինչ բարի նպատակով կամ նախանձով վառված՝ դիմում են ռուսաց լրագիրներին, մսխել է անկանոն՝ անձեռնմխելի գումարներ՝ «աղքատաց» հոյակապ տունը կանգնեցնելով և անխիղճ վատնել է աղքատների փողերը, խուրացնելով և հարստանալով աղքատների քրտինքով։ Կայ մի յանձնաժողով, ընտրված նոր հոգաբարձութեան անդամներից, որ քննում է այդ խնդիրը։ Ի հարկէ, հարցը ժամանակին կը պարզվի, և մենք կիմանանք թէ ո՛րտեղ է ճշմարտութիւնը և ո՛րտեղ սուտը։ Բայց արի տես, որ կրքերը բորբոքված են, ջղերը լարված և փոխանակ սպասելու յանձնաժողովի եզրակացութեան՝ քանի մի «գործիչներ» դիմում են շրջանի կառավարչին և անհանգիստ են անում նոյն իսկ մինիստրին։ Հոգաբարձական ժողովները այնքան աղմկալի են, որ նախագահը՝ բժիշկ Իսահակ Ալաճալեան, ազնիւ և բարեխիղճ մի անձ, ցանկանում է նոյն իսկ հրաժարվել պաշտօնից։ Ահա այս «հեթանոսների խառնակութեան» ժամանակ գալիս է Յուսիկ վարդապետը, որը մի փափուկ յանձնարարութիւն է հետը բերել՝ մկրտել հեթանոսներին, որպէս զի չը խառնակեն։ Յուսիկ վարդապետը պիտի լինի մեր հաշտարար դատաւորը. միակ օրէնքը, որի հիման վրա նա պիտի կայացնի իր վճիռները, մարդկային անկատար օրէնքը չէ, դա խղճի օրէնք է, ոսկի տառերով գրված սուրբ գրքի մէջ՝ «սիրեցէք զմիմեանս»։

Այո՛, սիրեցէք միմեանց։ Սիրել միմեանց՝ չէ նշանակում ուրանալ գաղափարը, իդէալը, որին պէտք է ծառայել միշտ, և ոչ թէ վհատած՝ շեղվել ուղիղ ճանապարհից ի սէր մարդկան։ Ոչ. սիրեցէք միմեանց՝ չէ նշանակում խղճի սակարկութիւն, չէ նշանակում կ օ մ պ ր օ մ ի ս խղճի, խելքի և հոգու, որը միակ նշանաբանն է փոքրոգի և երկչոտ անձերի։ Սիրեցէք միմեանց՝ կը նշանակի սիրեցէք անձը, ջոկելով գործը, սիրեցէք գործը իբրև գործ և անձը իբրև անձ։ Եթէ մենք կոյր կրքերից առաջ՝ չեմ ասում սիրէինք, այլ գոնէ չատէինք իրար, ո՞հ, ինչ զարմանքով պիտի տեսնէինք վերջապէս, որ մենք հալածել ենք ի զուր և ի զուր, որ հալածել ենք ոչ գաղափարի համար, այլ վրէժի համար, և ատելով անձը՝ թշնամացել ենք բոլոր նրա քայլերին, գործերին և գաղափարներին։ Մնալով խաւար, մենք

հայերս դեռ այն ողորմելի զարգացման մէջ ենք, որ մեզանում առօրեայ երևոյթ է,—երկու բարեկամ ձեռք ձեռքի տուած տասնեակ տարիներ հասարակական ասպարէզում, բոլոր հարցերի մէջ, մաքառում են միասին՝ նախանձելի սիրով, մտերմաբար և յանկարծ իրար հետ խռովելով՝ մի ընտանեկան կամ անձնական պատճառով՝ հակառակորդ և անհաշտ թշնամի են դառնում բոլոր հարցերի մէջ նոյն իսկ հասարակական ասպարէզում։ Սէրը դարձաւ ատելութիւն, բարեկամութիւնը դարձաւ թշնամութիւն, բայց ինչո՞վ է մեղաւոր հասարակութիւնը։ Գաղափարին պէտք է ծառայել, գաղափարի առաջ պէտք է խոնարհվել, բայց գաղափարը միջոց չէ մեր ձեռքում։ Այդ դեռ մենք չենք հասկանում։ Արդեօք դա մեր մտքի խակութիւնի՞ց է, թէ՞ դա մեր խելքի սնանկութեան նշանն է։

1896

ՎԵՐՋԱՊԷՍ

Վերջապէս…

Զոր եղանակ էր. քամին փչում էր անընդհատ և փոշին աւելում, տանում էր փողոցից փողոց։ Կանաչը դեռ չը փթթած՝ կորցնում էր իր գոյնը, տեսքը, գեղեցկութիւնը. կարծես աշուն էր, աշնան վերջին օրերը։ Ցուրտ և չոր օդը զգուելի էր շքեղ գարնան հէնց առաջին օրերը…

Վերջապէս տեղաց անձրևը և ժպտաց ողջ բնութիւնը, կարծես նոր զարթնեց քնից և շքեղ, կանաչ դալարի վրա անձրևի կաթիլները ցոլում են գեղեցիկ և քնքոյշ օրիորդի սիրոյ առաջին արտասուքների նման…

Վերջապէս…

Վերջապէս տեղաց անձրև և տեղիս աղքատների հոգաբարձութեան համար…

Մեծապատիւ հոգաբարձուները, մայիսի մէկի առաւօտը զարթնելով խորը քնից, տեղեկացան, որ յունվարի երկուսին առաջին փոխառութեան տոմսակը տարել է ութը հազար րուբլի։

Վերջապէս…

Մինչև երբ հոգաբարձութիւնը միայն պիտի տուժէր և վնասվէր։

Հոգաբարձութիւնը տանում է ութը հազար րուբլի։

Պէտք է յուսալ, որ հոգաբարձութեան համար ծանր աշնան օրերը կը վերջանան և նորից կը գայ շքեղ գարունը։

Սպասենք, յուսանք…

Վերջապէս…

Բացվում է սենեակի դուռը… մտնում է մի ծերունի… դա Կարապետ Զուգայեանն է… նա չէ խօսում. ծանր-ծանր հանում է գրպանից մի թաշկինակ, որի ծայրը կապած է փոքր խողի կանջի նման… պ. Զուգայեան բռնում է այդ խողի ականջից, արձակում է ծայրը, հանում մի թուղթ. դա հարիւր րուբլի է… նա ցանկանում է լինել Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութեան մշտնջենաւոր անդամ…

«Վերջապէ՜ս»—թռչում է ակամայ իմ բերանից, և ես յիշում եմ Արմաւիրի և Եկատերինօդարի սնապարծ հարուստներին, որ մերժեցին մեր խնդիրքը և չը տուին իրանց լուման ազգային գործի համար…

Վերջապէս,—մտածում եմ ես,—մենք սկսում ենք լինել պարտաճանաչ և չը սպասելով հրաւէրի՝ մենք մեր ձեռքով սկսում ենք բարեգործել…

Վերջապէս…

Նոր-Նախիջևանի գործիչները ձեռք ձեռքի տուած, սիրով, համերաշխութեամբ սկսում են գործել… Ինտրիգներ չը կան… Պիղատոսի դատարանը դադարեցրեց իր գոյութիւնը… Ոչ ոք չէ բամբասում… Անձնական եսը մոռացած, բոլորը գործին են ծառայում և…

Բայց ես զարթնեցի…

Ափսոս, այդ վերջին **վ ե ր ջ ա պ է ս ը** լոկ երազ էր։

Օ՜, երբ կիրագործվի իմ երազը…

1901

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԻՑ ՓԱԽՉՈՂՆԵՐ

«Կտոր կտոր ամպ էր գալիս բարձրը սարիցը.
Մէկ փեչատած գիր առացայ ես իմ եարիցը»:

Կտոր կտոր ամպ էր գալիս...

Սարիցը չէր, որ կը գար ամպը, եարիցս չէր և գիրը...

Գիրը Եկատերինօդարիցն էր:

Նոր-Նախիջևանում կայ մի համակրելի հիմնարկութիւն՝ Բարեգործական հիմնարկութիւն, որը ունի գեղեցիկ կանոնադրութիւն:

Նոր-Նախիջևանում կայ և մի ուրիշ համակրելի հիմնարկութիւն՝ Թեմական դպրանոց:

Հայ տղայքը ծարաւ են ուսման և շատ են ցանկացողներ մտնել դպրանոց, բայց, ափսոս, դպրանոցի շէնքը ողորմելի է:

Եւ Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութիւնը ըշտապում է օգնել, բայց նրա միջոցները ևս սուղ են:

Ի՞նչ անենք:

Մենք դիմում ենք անխտիր բոլոր հարուստներին, աղաչելով օգնել այդ վսեմ գործին:

Դիմեցինք Արմաւիր երկու հարուստների. մինը, Մ. Ա. Թորոսեան, շնորհակալ ենք, ընդունեց մեր հրաւէրը և ուղարկեց մեզ իր լուման, իսկ միւսը... միւսը... լսենք այժմ միւսի մասին:

Մենք դիմեցինք և Եկատերինօդար:

Եւ ահա՝

Կտոր կտոր ամպ է գալիս, կայծակն էլ հետը, և ո՞վ էր սպասում, կարծում... Եկատերինօդարիցը... Փոխանակ մերժելու մեր առաջարկութիւնը, մեզ կշտամբում են: Պարոնները ցանկանում են, որ ողջ մեր ընկերութիւնը գիտենայ իրանց կարծիքը մեր մասին: Երևի այդ երկու պարոնների ցանկութիւնները մենք կատարած կը լինենք լիովին, եթէ տպենք նրանց նամակը: Թող բոլոր մեր հասարակութիւնը իմանայ և

դատէ: Մենք ուրախութեամբ խոնարհվում ենք մեր հասարակական կարծիքի առաջ:

«Մենք շատ քաջ գիտենք,—ասում են երկու պարոնները,—թէ ինչ նշանակութիւն ունեն ներկայումս Թեմական դպրոցները, և բարեգործութիւնից փախչողները չենք. բայց երբ մի բարեգործութիւն առաջարկում են առանց մեր համաձայնութիւնը հարցնելու, մանաւանդ երբ առաջարկողներից ոմանք լրագիրների մէջ պասկվիլներ են գրում իրանց առաջարկութիւնը մերժողների դէմ, մենք, կամենալով պահպանել մեր իրաւունքը ինքնուրոյն և ոչ ուրիշի ցոյց տալով բարեգործել, մանաւանդ պասկվիլներից չերկնչածներս հաստատելու համար՝ պարտաւորված եղանք այդպէս վարվել»:

«Լրագիրները»՝ «Մշակն» է:

Ոմանք՝ ես, ձեր խոնարհ ծառան:

Հասկացա՞ք: Ո՞չ:

Յիշո՞ւմ էք մեր յօդուածը՝ «Շռայլութեամբ և մասամբ նորին»: Նկարագրված էր մի շռայլ հարսանիք: Հազարներ վատնված էին էլէքտրական լոյսի, հարիւրներ՝ վարունգների համար, և այդ իսկ մեծ խնջոյքին հարուստ աղան մերժեց հարիւր ռուբլի յօգուտ Նոր-Նախիջևանի Հայուհեաց Ուսումնատար Ընկերութեան: Մենք ասում էինք, որ չոր և դառն է այն հացը, որ երբեմն հարուստ մեծատունը շպրտում է խեղճի առաջ, մենք ասում էինք, որ այդ հացով կարելի է աւելի հեշտ խեղդել, քան թէ կերակրել...

Ճի՞շդ էինք մենք ասում, թէ ոչ:

Եւ եթէ ճիշդ, մենք ոչինչ չունենք, որ ձմեռվայ ցրտին դուք անուշ անէք ձեր թանգ վարունգը, բայց մի՛ յանդգնէք դուք ասելու և գրելու, որ մենք պասկվիլ ենք գրում, որովհետև եթէ դուք կրկնէք, պնդէք այդ, դուք խոստովանած կը լինէք, որ ձեր խնջոյքը մեր կեանքի պասկվիլն է, քանի որ մեր գրածը զուտ ճշմարտութիւն է:

Մենք ձեր ընտանեկան կեանքի հետ գործ չունենք, մենք ձեր ընտանեկան կեանքը շօշափած չենք, նկարագրած չենք: Բայց մերժել Բարեգործական Ընկերութեան առաջարկութիւնը օգնելու Թշուառին, լքեալին, կարօտեալին, մի՞թէ դա ձեր ընտանեկան գործն է. մի՞թէ դա հասարակական հարց և խնդիր չէ:

Այժմ դուք, պարոններ, մերժում էք մեզ, որովհետև մենք պասկվիլ ենք գրել:

Լաւ, ընդունենք:

Ապա առաջ ինչու դուք մերժեցիք Հայուհեաց Ընկերութեան:

Որովհետև ձեր համաձայնութիւնը հարցրած չէի՞ն Նոր-Նախիջևանի կանայք: Որովհետև դուք կամենում էիք «պահպանել ձեր իրաւունքը ինքնուրոյն և ոչ ուրիշի ցոյց տալով բարեգործել»: Այո՞:

Ուրեմն ներելի՞ է արդեօք անհանգիստ անել ձեզ, արմաւիրցի և եկատերինօդարցի աղաներ,—եթէ դուք իրաւ որ «բարեգործութիւնից փախչողներիցը չէք»—և հարցնել. ո՞ր օրվայ և մինչև ե՞րբ դուք պիտի պահպանէք «ձեր իրաւունքը ինքնուրոյն և ոչ ուրիշի ցոյց տալով բարեգործել»: Ներելի՞ է արդեօք խոնարհաբար խնդրել և աղաչել ձեզ, որ վերջապէս ցած իջնէք բարձր ամպերից, մտնէք մեր խեղճ ժողովրդի խաւերի մէջ, շօշափէք նրա վէրքերը, ցաւերը և դարմանէք:

Մի՞թէ դուք չը գիտէք ինչ սոսկալի աղէտ է պատահել Կովկասում, հեռու Ախալքալաքում, մեր արենակից եղբայրների գլխին: Միջատներից ճխավել են խեղճերը: Կարիքը, սուր կերպարանք ստացած, ճկում է, տորորում, խեղդում գիւղացուն: Քաղցից, ծարաւից մեռնում են նրանք այնտեղ և թոյլ, տկար ձեռքերը պարզում են մեզ և, աղի արտասուքը անզօր աչքերին, սպասում են, սպասում են միշտ մեր օգնութեան:

Օգնեցէք, օգնեցէք, ի սէր Աստուծոյ, չը սպասելով որ ձեզանից խնդրեն, ձեզ առաջարկեն, ցանկան իմանալ ձեր համաձայնութիւնը: Օգնեցէք. նրանք գրած չեն պասկվիլներ, նրանք չը գիտեն գրել, ողորմելիները, նրանք միայն գիտեն մեռնել, մեռնել՝ ինչպէս մի օր պիտի մեռնենք բոլորս, անխտիր թէ հարուստներս, թէ աղքատներս, մեռնենք և գանք կանգնենք մեր Արարչի առաջ մերկ, տկլոր և բոբիկ, առանց մեր սովորական սարուկների, ծառաների և անձնավաճառ պընակալէզների և առանց այն գարշելի ոսկուն, որ ստորացնում է, ցածացնում է ամեն բան, որի հետ կպչում է, շփվում է, և որը սակայն այնչափ հեշտ և այնչափ լայն բացում է մեր առաջ կեանքի ունայնութեան, զուարճութեան և ուրախութեան բոլոր դռները...

Եւ եթէ դուք, արմաւիրցի և եկատերինօդարցի աղաներ, օգնէք այդ խեղճերին, օգնէք այնչափ, ինչքան դուք պարտական էք և կարող էք, հաւատացէք, ես առաջինը կը խոնար-

հեմ իմ գլուխը ձեր առաջ և հրապարակով կասեմ ձեզ՝

—Մեղայ, մեղայ և մեղայ...

Բայց քանի որ դուք խուլ էք դէպի Ախալքալաքի լացը և պաղատանքը, քանի որ դուք միայն «պահպանում էք ձեր իրաւունքը ինքնուրոյն և ոչ ուրիշի ցոյց տալով բարեգործել», քանի որ մենք չը գիտենք, թէ երբ կը գայ ձեր քէֆը ձեր իրաւունքը իրագործել, թոյլ տուէք մեզ կարծելու, որ դուք այո, որ դուք իսկ և իսկ բարեգործութիւնից փախչողներիցն էք և էք...

ՀԵՐԹԸ ՁԵՐՆ Է, ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՖԱՆԱՍԻՉ

Հերթը ձերն է, Ալէքսանդր Աֆանասիչ…

Մենք սպասում ենք, սպասում ենք և հաւատում…

Տեսէք…

Ինչպէս թանգ է այժմ մեզ համար եղբարք Ժամհարեանների անունը: Մէկ միլիօնի կարողութիւն նրանք նուիրում են մեր ազգի լուսաւորութեան համար: Եւ աւելորդ շտապում են Թիֆլիսի «հայրենասէրները» այդ միլիօնը յատկացնել ապագայ համալսարանին և կամ մի ուսումնարանի, որ կից լինի համալսարանին, որ նրա մի բաժանումը, մասը դառնայ…

Փառք Աստուծոյ, Ռուսաստանի գանձարանը հարուստ է և կարօտութիւն չունի, որ մեր լումաներով համալսարան բացվի: Նամանաւանդ կարիք չունի այդ գանձատունը հիմնել համալսարան այն փողերով, որոնցով պիտի բացվեն, պահվեն ազգային դպրոցներ: Երբ քաղաքական հանգամանքները փոխվեն, լաւանան, Թիֆլիսը կունենայ իր համալսարանը: Փողը չէ, որ պակասում է նրա իրագործման համար, այլ բարի կամքը…

Մի՞թէ Սարատովը աւելի իրաւունք ունէր և կամ աւելի զոհեր արեց համալսարան բանալու համար:

Եւ եղբարք Ժամհարեանների անունը և մեր խմբագրապետի անունը առհաւատչեայ են մեզ համար, որ այդ միլիօնով կը բացվի և կը պահվի մի հայկական դպրոց *), հայկական, որովհետև հայերս աւելի կարիք ունենք և աւելի ծարաւ ենք լուսաւորութեան…

Քանի գնում է՝ կեանքի մրցման գործը դառնում է դըժուար:

Թոյլերը պիտի յաղթվեն:

Օր առաջ զինվենք և զինվենք գլխից մինչև մեր ոտները:

Եւ ո՞ր զէնքը աւելի զօրեղ է, քան լուսաւորութիւնը…

Կեցցեն եղբարք Ժամհարեանները, որ մտածում են այսպէս:

*) Տես «Ֆրիդրիխ Հերաուս»:

Նրանց մեր սէրը, մեր յարգանքը, մեր երախտագիտութեան բուռն զգացմունքները…

Ինչ ուրախութիւն, որ եղբարք Ժամհարեանները մենակ չեն:

Ահա Մանթաշեանները, որ շինում են Ներսիսեան դըպրոցի շէնքը, վեհարան, եկեղեցի: Ահա Ղուկասեանները, որ տալիս են միլիօն՝ Թիւրքիայում համալսարան հիմնելու:

Ահա Սարգիս Ջանումեանը, որը որոշում է 200 հազար կտակել մեր կրթական ֆօնդին…

Գեղեցիկ ցուցակ գեղեցիկ անունների…

Կեցցեն այդ բարերարները: Մեր մութ երկնքի կամարում նրանց անունները պլպլում են և լուսաւորում իբրև աստղեր…

Թող հայ մանուկները «Հայր-մերից» յետոյ սովորեն և յիշողութեան մէջ միշտ վառ, միշտ սուրբ պահեն մեր բարերարների անունները…

Մեր թուլութեան, մեր վհատման և մեր յուսահատութեան ամենածանր րոպէներին յիշենք այդ անունները, ինչպէս ձմրան դաժան ցուրտ օրերին մենք մտածում ենք գարնան գեղեցիկ եղանակի մասին, մտածում ենք և յուսով տարանում… Չէ՞ որ քամին կը դադարի, ցուրտը կանցնի, կը ժպտայ արեգակը, ջերմ համբոյր կը տայ երկրին և երկիրը ուրախութիւնից կը կանաչի:

Ի՞նչ փոյթ, որ չարը տիրում է մեր շուրջը, որ անամօթութիւնը բարձրացնում է իր գլուխը: Չարը կը խափանվի, ամօթը կը յաղթէ:

Ազգը, որ տալիս է Լազարեաններ, Մանթաշեաններ, Ժամհարեաններ, Ղուկասեաններ, Գոգոյեաններ և ուրիշ շատ բարերարներ, ապրելու իրաւունք ունի, պիտի յաղթէ, ապրէ…

Այժմ հերթը ձերն է, Ալէքսանդր Աֆանասիչ:

Մենք սպասում ենք, սպասում և հաւատում:

Յիշեցէք. Աստուած տուել է ձեզ, Թորոսեաններից, մի մեծ կարողութիւն, իսկ դուք, Ալէքսանդր Աֆանասիչ, Թորոսեանների մէջ ամենաընդունվածն էք: Ձեզ շատ է տրված և շատ ենք սպասում…

Մեռաւ Նիկօլայը, ձեր եղբօրորդին, Մօսկվայում:

Երեք քոյրեր ստացան մի-մի միլիօն, իսկ ազգը՝ զրօ, զրօ…

Մեռաւ միլիօնատէր ձեր եղբայրը, Գաբրիէլ Աֆանասիչը, յունվարին, նոյնպէս Մօսկվայում:

Զաւակները սոտացան միլիօններ, իսկ ազգը՝ զրօ, զրօ և միայն զրօ...

Ինչո՞ւ։

Նիկօլայը անուն չը թողեց, չը թողեց անուն Գաբրիէլը, չէ թողել անուն ոչ մի Թորոսեան։

Երբ, սրտով ցաւած, ես, իբր բարեկամ, «Մշակում» բողոքեցի սրանից քանի տարի առաջ ձեր բոլորիդ ուշադրութիւնը դարձնելով մեր անթիւ, անհամար աղէտների վրա, իմ խօսքերը դուք համարեցիք անտեղի...

Ափսոս։ Մի՞թէ պէտք է յիշել այս քանի տարիները։ Ձեր Թորոսեանների հարստութիւնը կրկնապատկվեց, բայց ոչ մի ազգային հիմնարկութեան մէջ ես չը տեսայ, չը ճանաչեցի, չիմացայ ոչ մի Թորոսեան։

Մեր հայերիս կարօտը շատ է, մեր կեանքը դառն է։ Օգնութիւն չը կայ ոչ մի կողմից։ Միայն մենք, միայն մենք կարող ենք իրար օգնել...

Ձեր սիրելիների թարմ գերեզմանների առաջ ես դիմում եմ այժմ ձեզ, իբրև ձեր բարեկամը...

Հերթը ձերն է, Ալէքսանդր Աֆանասիչ։

Խօսեցէք, խօսեցէք բարձր, որ մենք լսենք, որ մենք ձեր անունը դնենք ժամհարեանների և ուրիշների կողքին, անմահացնենք մեր սրտերի մէջ, յիշենք յարգանքով, սիրով...

Խօսեցէք, որ մեր մութ երկնքի վրա դուք ևս մի աստղ դառնաք, որ «Հայր-մերից» յետոյ ձեր անունն ևս կարդան, սերտեն, յիշեն մեր հայ մանուկները...

Մենք սպասում ենք։

Մենք հաւատում ենք։

Հերթը ձերն է, Ալէքսանդր Աֆանասիչ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՖԱՆԱՍԻՉԻ ՏԵՂԸ ԽՕՍԵՑ Պ. ԿՈՒՍԻԿԵԱՆՑԸ

(Ոսկու պաշտամունք թէ՞ ոսկու պաշտպանութիւն)

Կարդացի Կարապետ Կուսիկեանցի՝ «Հօրիզօնի» № 46-ում տպված յօդուածը՝ «Ոսկու պաշտամունք»․ կարդացի և մտածեցի, մտածեցի ակամայ՝ պ. Կուսիկեանցը Արմաւիրից է, պ. պ. Թորոսեանները՝ արմաւիրցիներ... հարցը ուրեմն ոսկու պաշտամունքի մէջը չէ, այլ ոսկու... պաշտպանութեան մէջ...

Կարդացի նորից և արդէն համոզվեցի, որ այդ յօդուածը մի անհամ և կեղծաւոր պաշտպանութիւն է, քօղարկված՝ իբր յանուն գաղափարի, որ մենք ստնակոխ ենք արել...

Յօդուածի ոճը տատասպելի ոճ է․ «Ոչ մի երկրում, ոչ մի ազգի մէջ այնպէս չեն աղաւաղում հասկացողութիւնները, այնպէս չեն այլանդակում գաղափարները, ինչպէս մեզանում»։ Այսպէս սկսում է յօդուածը պ. Կուսիկեանցը։ Ամբողջ աշխարհը և բոլոր ազգերը «հասարակական կողմից» և «սօցիալական-տնտեսական պայմաններում» ուսումնասիրող մեր յօդուածագիրը մեզ անուանում է սկզբից «յայտնի հրապարակախօս», յետոյ... «միայն սորուկ ժողովրդի զաւակ», «մուբացիկ հասարակութեան քաղաքացի»...

Պ. Կուսիկեանցի յօդուածը պատասխան է մեր յօդուածին որ կրում էր «Հերթը ձերն է, Ալէքսանդր Աֆանասիչ» վերնագիրը։

Այժմ թարգմանօրէն մեր յօդուածը տրտատպվում է ռուս լրագիրներում։ Պ. պ. Թորոսեաններին մնում է կամ նոյն ճանապարհով երթալ՝ «աշխարհս դմակ է, մարդս դանակ․ կարէ ու կտրէ», կամ թէ յիշել հայէն, յիշել ազգը և ընտրել մի նոր ազնիւ, փայլուն շաւիղ...

Փոխանակ մեզ պատասխանելու իրանց «այո»-ն և «ոչ»-ը, Թորոսեանները դիմում են պ. Կուսիկեանցի պաշտպանութեան։

Պր. Կուսիկեանցի պաշտպանութիւնը արջի երախտիք է, և չը կարծեմ, որ աղա Թորոսեանները գոհ մնան իրանց պաշտպանից։

Պարոնի յօդուածի մէջ կայ փոքր ինչ փիլիսոփայութիւն. մի քանի մաշված ճշմարտութիւններ և ուռուցիկ խօսքեր, մըտքեր…

Պակասում է մի բան…

Բարեխղճութիւն…

Միթէ բարեխղճութիւն է պնդել, թէ ես ազգի լուսատու աստղեր եմ համարում «այն անձերին», որ «հանում են ազգակիցներին իրանց նիւթական բարիքի մի փոքր մասը»։ Գիտակցաբար աղաւաղել իմ յօդուածը՝ թէև ի պաշտպանութիւն միլիօնատէր պ. Թորոսեանի և նրա… միլիօնի՝ կարիք չը կար։ Ես տուել եմ անուններ՝ Լազարեաններ, Ղուկասեան, Ժամհարեաններ, Մանթաշեան, Գոգոյեան։ Ո՞րը դրանցից տուել է «մի փոքր մասը իրանց նիւթական բարիքի»։ Ամեն մէկը դրանցից տուել է մի-մի միլիօն… ազգի կրթութեան, լուսաւորութեան գործին… Եւ արմաւիրցի պ. Կուսիկեանցը արմաւիրցի Թորոսեաններին պաշտպանելու համար աշխատում է հաւատացնել, որ այդ մեծ բարերարները առանձին բան չեն արել, կատարել են իրանց պարտքը. և որպէսզի ապացուցվի նրանց ոչնչութիւնը, նա գրում է յանուն գաղափարի, յիշում է Մեսրոպներին, Մխիթար Սեբաստացիներին, Պատկանեաններին, Րաֆֆիներին և այլոց, ասելով որ նրանք են «մեր փառքի տաճարի զարդը»։ Կարդացողը կարող է ենթադրել, որ ես մեր բարերարներին համեմատել եմ գաղափարի և մտքի մշակների հետ, դրել եմ դրանցից վեր և ասել եմ. չէ, մեր բարերարներն են մեր փառքի տաճարի զարդը։ Դա միթէ բարեխղճութիւն է, պ. Կուսիկեանց։ Ասացէք խնդրեմ, ո՞ւր էիք դուք, երբ մենք Նոր-Նախիջևանի դումայում և «Մշակի» էջերում ապահովացնում էինք Գամառ-Քաթիպայի նիւթական դրութիւնը և Գրիգոր Արծրունու հետ միասին թեթևացնում էինք նրա վերջին րոպէները։ Ո՞ւր էիք դուք, պ. Կուսիկեանց, երբ մենք դնում էինք արձաններ Գամառ-Քաթիպայի և Միքայէլ Նալբանդեանի գերեզմանների վրա։ Ո՞ւր էիք դուք, վերջապէս, երբ մենք լոյս էինք ընծայում և տարածում այդ երկու մեր բանաստեղծների երկերը։ Ոչ ճռճռան, փքուն, ուռուցիկ խօսքերով, այլ գործով, կենդանի գործով մենք ապացուցել ենք, որ գիտենք գնահատել մեր մտքի, գաղափարի մշակներին, և այդ կողմից ձեր վկայութեանը կարօտ չենք բնաւ… Եւ երբ դուք հարցնում էք ինձանից, թէ «արդեօք նրանք անմահութեան մասն ունեն, թէ՞ անարժէք մեծութիւններ են», մեր գաղափարի և մտքի մշակները, ես ձեզ չեմ հաւատում, պ. Կու-

սիկեանց. դա հռետորական աւելորդ և անտեղի հարց է, քանի որ ես այդ մշակների վրա խօսած էլ չէի և քանի որ դուք պիտի գիտենայիք իմ սէրը և յարգանքը դէպի այդ մշակները… Դուք գիտէք, որ աստղեր կան փոքր և մեծ, զանազան փայլով, կան լուսին, արեգակ։ Բայց ես հասկանում եմ, որ ձեզ պէտք է հանգստացնել բոլոր Թորոսեանների խիղճը.—մի՛ վրդովվէք, պարոններ եթէ դուք բոլոր կարողութիւններդ էլ տաք հայ հաստատութիւններին, առանձին բան արած չէք լինի. դա ձեր պարտականութիւնն էր… Թողէք ուրեմն գաղափարը, մեր հայերիս ծայրայեղ պակասութիւնները, և խօսեցէք պարզ, որ մենք ձեզ հասկանանք. և եթէ համարձակութիւն կունենաք հրապարակով ջատագով լինել Թորոսեանների բռնած ընթացքին, մենք ձեզ կը պատասխանենք… Ոչ թէ ինձ, այլ ձեզ պէտք է ձեր «ռեցեպտը» փոխել. ձերը հիւանդին չէ օգնում…

Պ. Կուսիկեանցը կարծում է, որ «մեր մութ երկնակամարում» միայն մտքի և գաղափարի մշակները կարող են «լուսատու աստղեր լինել». դա սխալ է։ Եթէ այդ մշակներն են տանում «դէպի լոյս և կուլտուրա», միթէ այն Լազարեանները և Գոգոյեանները, որոնք շինել են լոյսի և կուլտուրայի ճեմարաններ, ապահովեցրել են նրանց գոյութիւնը, իրանք չեն անմահացել և դարձել մեր աստղերը… Հարուստների պարտականութիւնն է բարեգործել,—ասում է յօդուածագիրը,—բայց միթէ գաղափարի մշակների պարտականութիւնը չէ տանել մեզ դէպի լոյս և կուլտուրա։ Լազարեան ճեմարանում ինձ և պ. Կուսիկեանցին սովորեցնում էին աղօթել թշնամիների համար. և երբ այժմ ես առաջարկում եմ, որ «Հայր-մեր»-ից յետոյ՝ մեր մանուկները սերտեն, յիշեն մեր բարերարների անունները, Կուսիկեանցը բացագանչում է՝ «նոր պատգամ է», «հաւատոյ նոր հանգանակ», «բարոյական հասկացողութիւնների նոր կօդէքս»։

Ի՞նչ կասէք…

Պ. Կուսիկեանցը միայն «մեծապէս շնորհակալ է» մեր բարերարներից, բայց համաձայն չէ, որ նրանք անմահացրած լինեն իրանց անունները… Մենք էլ շնորհակալ ենք Կուսիկեանից, որովհետև յիշում ենք լաւ այն ուսանողին, որ Բարեգործական Ընկերութեան առաջ միջոցներից ստանալով օժանդակութիւն՝ գրում էր միևնոյն ժամանակ այն բուրժուական բարեգործական հիմնարկութեան մասին, որը ի միջի այլոց իրան էլ սովից ազատում էր…

Ես զարմանում եմ միայն, որ յօդուածագիրը չէ հասկացել Գամառ-Քաթիպայի երկտողի իմաստը։ 1886 թւին բանա-

ստեղծի 35-ամեայ յոբելեանն էր։ Մինաս Չերազը ինձ ուղարկում է հինգ անգլիական ոսկի, որ յոբելեանի առիթով նուիրել էր Լօնդօնի մի հարուստ վաճառական։ Յանձնեցի։ Ռափայէլ Պատկանեանը հեգնօրէն ծիծաղեց և տեղնուտեղը գրեց իր երկտողը.

Ծաղրելի ազգ էք, հայեր, դուք, աւա՜ղ,
Ձեր յոբելեանն է մուրացիկի թաբախ։

Հինգ անգլիական ոսկի 35-ամեայ յոբելեանի առիթով. մի՞թէ դա մուրացիկի թաբախ չէր...

Եթէ Կուսիկեանցը կարծում է, որ այն միլիօնները, որ զոհել են ազգիս խորանին Լազարեանները և ուրիշները, մուրացիկի թաբախ է, երևի նա Րօկֆելլէրի կարողութեան տէրն է։ Ուրիշ տեսակ բացատրել կարող չեմ։ Բայց եթէ նա կարծում է, որ մենք այդ թաբախով դիմում ենք պ. պ. Թորոսեաններին, նա չարաչար սխալվում է։

Ազգը մուրացկան չէ և շատ Թորոսեաններ է տեսել...

Մեր պարտականութիւնն էր հրապարակով նրանց ուշադրութիւնը դարձնել մեր ազգի աղէտների, ցաւերի և կարիքների վրա և հասկացնել նրանց պարտականութիւնը դէպի այն ազգը, որի զաւակներն են նրանք, որին նրանք մոռացել են, որից հեռացել են։

Պ. Կուսիկեանցը աւելի մեծ ծառայութիւն ցոյց կը տար հայրենակիցներին, եթէ նրանց՝ իր կողմից հասկացնէր, որ մինչև այժմ նրանք կանգնած են սխալ ճանապարհի վրա...

Ցաւ չէ, որ ես «սորուկ ժողովրդի զաւակ» եմ և «մուրացիկ հասարակութեան քաղաքացի», որովհետև և՛ այդ սորուկ ժողովուրդը, և՛ այդ մուրացիկ հասարակութիւնը՝ իմն են։ Ամօթ է հրաժարվելը նրանցից։ Պէտք է աշխատել, որ ժողովուրդը լինի ազատ, իսկ հասարակութիւնը՝ ունևոր։ Ուրիշ ազգերն ունեն գանձատներ։ Նրանց հաստատութիւնները ապահովված են։ Ի՞նչ ճրճռան խօսքեր՝ «միահամուռ գործակցութիւն», «հասարակական ինքնօգնութիւն», «գիտակցութիւն»...

Ո՞ւմ կողմից։ Սորուկ ժողովրդի՞ց։ Մուրացիկ հասարակութինի՞ց։

Կրթեցէք մեր սորուկ ժողովուրդը։

Հիմնեցէք լուսաւորութեան ճեմարաններ։

Չունե՞ք գանձատուն։ Դիմեցէք ազնիւ բարերարների օգնութեանը։

Դուք չէ՞ք ուզում։ Դուք խօսում էք «հասարակական ինքնօգնութեա՜ն» մասին։

Ինչո՞ւ մինչև այժմ ոչի՛նչ դուք չէք արել «գիտակցօրէն», առանց բարերարների միջնորդութեան, «հասարակական ինքնօգնութեամբ»։

Սկսեցէք։ Փորձեցէք ձեր բարի ցանկութիւններն ի կատար ածելու։

Բայց դուք տարիներ խօսում էք և միայն խօսում և հին, մաշված, ճշմարտութիւնները նորից և նորից կրկնում։

Ազգը սպասում է և սպասելով անվերջ՝ բոլորովին սորկանում է, իսկ հասարակութիւնը աղքատութիւնից մնանկանում...

Դուք տեսնում էք այդ բոլորը, դուք գիտէք, որ մենք սորուկ ենք և աղքատ, և մեր երեսներին՝ անխիղճ և անամօթ՝ մեզ սորուկներ և մուրացկաններ էք անուանում և ուռուցիկ խօսքեր, լոկ խօսքեր արտասանում։

Ձեր խօսքերը հեռու են մեր մտքերից, մեր սրտերից, որովհետև հեռու են հայ իրականութիւնից։ Կենդանի խօսքեր չեն ձեր խօսքերը։ Կարծես գիրք էք կարդում մեր գլխին և խրատներ, փոխանակ տալու դարման։

Ձեր առաջարկածը հաց չէ, այլ քար, և երբ մենք դիմում ենք հայ մեծատուններին և յիշեցնում ենք նրանց պարտքը, շարժում ենք նրանց սառած ոգիները և սրտերը, դուք կեղծում էք, պնդելով որ մենք կը փրկվենք «հասարակական ինքնօգնութեամբ»...

Հասարակական ինքնօգնութեամբ չունենք հաստատած դպրոցներ, ճեմարաններ...

Մի՛ ամաչէք, որ և դուք սորուկ ազգի զաւակ էք, աշխատեցէք, որ այդ սորկութեանը վերջ տրվի...

Մուրացկի թաբախով մենք շատերս ուսում ենք առացել, մարդ ենք դառել...

Մի՛ թքէք այդ մուրացկի թաբախի վրա...

Եւ եթէ չէք ուզում ձեր լուման դնելու այդ թաբախի վրա, անցէք և հեռացէք չը բամբասելով, չը ծաղրելով և չը կերակրելով մեզ ունայն, դատարկ խօսքերով...

ՓՈՔՐ ԻՆՉ ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ, ՊԱՐՈՆՆԵՐ

I

Կարդացի «Մշակի» խմբագրութեան պատասխանը ուսանող Վահան Մամիկոնեանի հարցին՝ թէ ինչո՞ւ պ. Կուսիկեանի յօդուածը չէ տպվել «Մշակում», աւելորդ հարցին, քանի որ յօդուածագիրը իր յօդուածը չէր անգամ բարեհաճել ուղարկել խմբագրութեան։ Կարդացի և ձեռքս առի գրիչս պատասխանելու, որպէս զի առիթ տամ պ. Կուսիկեանին «Մշակի» էջերում լուսաբանել իր կարծիքները, բայց գրիչը ընկաւ ձեռիցս։ Կարիք չը կար միևնոյն հարցի մասին գրել երկու անգամ։ Բանակռիւը ինքնասիրութեան հետ կապ ունենալու չէ. և ծաղրելի է, և դատապարտելի, և մանր այն հրապարակախօսը, որը ցանկանում է, որ վերջին խօսքը անպատճառ իրանը լինի...

Մէկ էլ տեսնես՝ այդ բանակռւի առիթով գրում է յօդուած Առ-Ջէնը, և ես ակամայ ստիպված եմ պատասխանելու։

Պ. յօդուածագիրը ոգևորված և տաք խօսում է պ. Կուսիկեանի մասին, գովում է նրա ազնւութիւնը, նրա առանձնայատկութիւնները...

Տէր ողորմեա. մի՞թէ ես պ. Կուսիկեանի անձի մասին բան եմ գրել։ Սիրում եմ և յարգում եմ ուսուցիչներին, և պ. Կուսիկեանին՝ նրանց թւում. գիտեմ, ծանր է նրանց աշխատանքը, մեծ, և վատ է վարձատրվում։

Բայց մեր բանակռիւը ուսուցիչների մասին չէր և ոչ պ. Կուսիկեանի անձի համար։

Վերջինս ինձ մեղադրում էր, որ իբր թէ ես երկրպագում եմ ոսկուն. ես պատասխանեցի, որ նա պաշտպանում է իր միլիոնատէր բարեկամին և հետևաբար պաշտպան է նրա ոսկուն...

Ասացէք խնդրեմ, ո՞րն է վատ՝ երկրպագել ոսկուն, թէ՞ պաշտպանել ոսկին։

Ի հարկէ՝ երկրպագելը...

Եւ ահա Առ-Ջէնը վրդովվում է, վիրաւորվում է, որ ես մեղադրել եմ Կուսիկեանին, որ նա միլիոնատիրոջ է պաշտպա-

նում, և չէ վրդովվում, չէ վիրաւորվում, երբ ինձ Կուսիկեանը մեղադրում է աւելի մեծ յանցանքի և մեղքի մէջ՝ ոսկու պաշտամունքի մէջ։ «Մեր կարծիքն այդ հրապարակախօսի մասին միշտ բարձր է եղել և է»—վերջացնում է իր խօսքը իմ մասին Առ-Ջէնը։ Շնորհակալ եմ, բայց ահա ես ինչ չեմ հասկանում։ Եթէ իր այդ կարծիքը անկեղծ է, Առ-Ջէնը հաւատալու չէր, որ ես կարող եմ երկրպագել ոսկուն. իսկ եթէ նա հաւատում է մի րօպէ, ի՞նչպէս նա կարող է բարձր կարծիք ունենալ իմ մասին։ Սպիտակ... ագռաւներ չեն լինում։ Սպիտակը սպիտակ է, իսկ ագռաւը՝ ագռաւ, սև, միշտ սև... Թողնենք սակայն պարոնի կարծիքները թէ իմ, թէ Կուսիկեանի մասին։ Դրանում չէ հարցը։ Պարոնը համարում է «տարօրինակ ծայրայեղութիւն» իմ կարծիքը, թէ մեր մանուկները «Հայր մերից» յետոյ պիտի սերտեն ազգային բարերարների անունները։

«Ծայրայեղութի՛ւն»։ Այն էլ «տարօրինակ»։ Ինչո՞ւ։

II

Ահա ինչ էի ես գրել. «Թող հայ մանուկները «Հայր մերից» յետոյ սովորեն և յիշողութեան մէջ միշտ վառ, միշտ սուրբ պահեն մեր բարերարների անունները»...

Կարդացէք տաս անգամ և դուք չէք կարող կարծել, ինչպէս գրում է Առ-Ջէնը, որ ես պահանջած լինեմ, որ մեր բարերարների անունները աղօթքի նիւթ դառնան։

Ես ցանկանում եմ և ցանկանում եմ ջերմ բոլոր սրտէս, որ մեր մանուկները սովորեն, յիշեն, սուրբ պահեն անունները։

Միայն, երբ պ. Կուսիկեանը խօսեց աղօթքի մասին, ես հանգստացրի նրան, ասելով՝ մի՛ վրդովվէք, մենք աղօթում ենք անգամ մեր թշնամիների համար։

Գիտէ՞ք ինչ է մեզ պատասխանում այժմ պ. Առ-Ջէնը։ «Դա (թշնամիների համար աղօթելը) բարձրացնում է մարդուն մինչ այն վեհութեան, որ նա յօժարակամ ձեռք է մեկնում իր թշնամուն... Դա չէ իջեցնում մարդուն և ստրուկ դարձնում»...

Չէ իջեցնում մարդուն և ստրուկ դարձնում...

Փայլուն մեկնութիւն, այնպէս չէ՞։

Եթէ դուք աղօթում էք ձեր թշնամու համար՝ դուք «վեհ» էք, իսկ եթէ ձեր բարերարների համար՝ դուք իջեցնում էք ձեզ և ստրուկ դառնում...

Ահա ինչ է ասում և ահա ինչ երևի չէր ուզում ասել պ. Առ-Ջէնը...

Արդէն տարրական ճշմարտութիւն է, որ ամենալաւ, ամենագեղեցիկ գիրքը, որ պէտք է միշտ կարդալ, սեղանի վրա, աչքի առաջ պահել, որ կրթիչ և դաստիարակիչ նշանակութիւն ունի—դա երևելի մարդկանց կենսագրութիւնը և պատմութիւնն է։ Մենք կարդում ենք և հիանում, աշխատում ենք հետևել, նմանել...

Երևելի մարդիկ...

Դրանք են մեր յայտնի գրողները, հրապարակախօսները, բանաստեղծները, մտածողները, ուսուցիչները, նկարիչները։

Այդ երևելի մարդկանց թւում պէտք է դնել, այո, պէտք է դնել, ինչպէս անում են եւրօպացիք,—մեր մեծ բարեգործներին, մեր մեծ բարերարներին...

Նա, որ ինքը ձայն չունի երգելու, գրիչ՝ գրելու, լեզու՝ համոզելու, ձեռք՝ գործելու, զարմացնելու աշխարհ, անմահացնելու և կենդանացնելու, բայց սիրով, յարգանքով, յօժարակամ մօտենում է ընկած, թուլացած, դեռ չը պարզած թևերը տաղանդին և գուցէ զսպելով իր անձնական հազար ու մէկ ցանկութիւնները, կրքերը՝ զոհում է իր ոսկին և տալիս է աշխարհին երգիչներ, դերասաններ, գրողներ, հրապարակախօսներ, բանաստեղծներ, նկարիչներ...

Նա, որ իր ազգի աղքատ զաւակներին նայում է իբրև իր հարազատ զաւակների վրա, նա, որ իր ազգի քանդած օջախը վերաշինում է, աւերակը և անապատը դարձնում է քաղաք, տալիս է կեանք մեռնողին, տառապողին և տալիս է ոյժ, զէնք, կարողութիւն հայ քանքարին,—մի՞թէ նա փայլուն, գեղեցիկ անուն չունի. մի՞թէ նա իրաւունք չունի ապրելու իր գործերով և իր գործերի մէջ. մի՞թէ նրա կեանքի պատմութիւնը դաստիարակութեան ամենազօրեղ նիւթը չէ. մի՞թէ իրաւացի չէ մեր պահանջը, որ մեր մանուկները «Հայր մերից» յետոյ սերտեն, սովորեն, իմանան, սրտերում վառ պահեն այդպիսի բարերարի անունը...

Քանքարը տրվում է ի վերուստ։ Շատ անգամ քանքարը չը գիտէ իր ոյժը, ինչպէս սոխակը չը գիտէ իր երգի հրապոյրը...

Մեծ բարեգործ լինելը աւելի դժուար է։

Սակաւ, շատ սակաւ է այդ մեծ բարեգործների թիւը, հինգ-վեց, գուցէ տասը։

Եւ տեսէք, ինչեր ենք մենք ասում, ինչպէս մեծ-մեծ խօսում. «Նրանց պարտքն էր»... «Անհատը ունի իր պարտականութիւնը դէպի ազգը»... «Դա խրախուսանքի արժանի միայն երևոյթ է»...

Համեստութիւն, փոքր ինչ համեստութիւն, պարոններ...

Դուրս է գալիս, որ Լազարեաններին «մենք երկինք ենք բարձրացրել», եթէ հաւատանք Առ-Զէնին—շնորհիւ XIX դարի «խաւարի», «ստրկութեան» և այլն։

Երբ Լազարեանների մասին այդպէս խօսում են, ինձ թւում է, որ մանուկը հազիւ հազ այբբենը սերտած, քիթը քորելով, քննադատում է ուսուցչին...

Ահա մենք նորերս թաղեցինք Մանթաշեանին։ Տեսէք, ինչ սիրով, անկեղծութեամբ ազգը տալիս էր և տալիս է նրա անունը։

Գրո՞ղ էր նա, բանաստե՞ղծ, նկարի՞չ։ Ոչ։ Կարծո՞ւմ էք արդեօք, որ նրա անունը ազգի համար պակաս է գրողի, բանաստեղծի, նկարչի անունից։ Ոչ։

Հարուստներ մեզանում կան հազարներ։ Բայց նրանք ժլատ են, նրանց սրտերը սառած են, քարացած են։ Չունեն նրանք մեզ համար ոչ կարեկցութիւն, ոչ համակրանք, ոչ արտասուք։ Իրանց զաւակներից, իրանց հաճոյքներից ջոկ նրանք ոչինչ չեն ընդունում, ճանաչում, սիրում։

Կան Լազարեաններ, Մանթաշեաններ, Սանասարեաններ, հազիւ հինգ-վեց ազգային մեծ բարերարներ, որ անբաժանելի են, մեր ազգի հետ մի մարմին, մի ոսկր դարձած, որ ապրել են ազգի համար, լացել են մեր արտասուքներով, և չունենալով տաղանդ՝ նրանք տուել են մեզ իրանց հարստութիւնը ազգը խաւարից փրկելու համար, տուել են մեզ իրանց սրտերը...

Սերտենք ուրեմն նրանց անունները և վառ պահենք մեր սրտերում, և յանուն համեստութեան, յանուն հասարակ համեստութեան մեծ-մեծ չը խօսենք՝ թէ նրանց պարտքն էր, անհատը ունի իր պարտականութիւնը դէպի ազգը... դա խրախուսանքի արժանի միայն երևոյթ է...

Համեստութիւն, փոքր ինչ համեստութիւն, պարոններ։

III

Ասել, թէ «անհատն ևս ունի իր պարտաւորութիւնը դէպի ազգը», այդ կը նշանակէ ոչինչ չասել։

Անհատն ունի իր պարտաւորութիւնը...

Բայց ցոյց տուէք ինձ վերջապէս այդ անհատներին մեզանում, մեր մէջ...

Ինչո՞ւ համեմատում էք մեր փոքր, խաւար, տգէտ, աղքատ, քաղցած, ճնշված, թշուառ ազգը եւրոպացիների հետ: Եւրոպան որտե՞ղ, մենք ո՞րտեղ...

Ինչո՞ւ մոռանում էք հայ իրականութիւնը, այն հողը, որի վրա մենք կանգնած ենք, գործում ենք, ապրում ենք...

Հայկական իրականութիւն...

Մի՞թէ մի տեսակ ծաղր չէ հայկական իրականութեան տեսակէտից, երբ Ա.-Չէնը, դառնալով դատաւոր իմ և Կուսիկեանի բանակուին, խօսում է... վարչական իրաւունքի մասին: «Թէ պետութիւնից և թէ տեղական ինքնավար մարմիններից պահանջվում է հասարակական ծառայութիւն—հիմնել միջնորդող գրասենեակներ, աշխատանքի տներ, գիշերային ապաստարաններ, հիւանդանոցներ, ամբուլատորիաներ և այլն»...

Պետութիւն, տեղական ինքնավար մարմիններ և... հայկական իրականութիւն... Մի՞թէ դա ծաղր չէ:

Ո՞ր պետութիւնը և ո՞ր տեղական ինքնավար մարմինները մեզ՝ հայերիս համար հիմնելու են այդ օգտաւէտ, գեղեցիկ, անհրաժեշտ հիմնարկութիւնները...

Սակայն այդ բոլոր հիմնարկութիւնները, և թատրոնը, և դպրոցները, մանաւանդ դպրոցները մեզ պէտք են:

Ո՞ւմ ապաւինենք: Ո՞ւմ դիմենք: Ո՞վ պիտի շինէ հայի տունը և եղածը փրկէ, ազատէ աւերակից և կործանումից:

Այդ հարցին պատասխան տուեց Կուսիկեանը՝ ինքնօգնութիւն: Դիմել բարեգործներին նա համարում է մուրալ:

IV

Ինքնօգնութեան գաղափարը մեծ է և վեհ: Յուսալ, ապաւինել միայն բարեգործներին՝ յանցանք է: Պէտք է աշխատել ինքնօգնութեան գաղափարը արծարծել, կազմել ընկերութիւններ, գործել միասին, հասկանալ և հասկացնել, որ հասարակական գործը ընդհանուրի, բոլորի գործն է: Ոչ ոք իրաւունք չունի հեռանալ, փախչել հասարակական գործերից, ամեն մէկը պիտի տայ իր ոյժը, իր լուման մեր դպրոցներին, մեր թատրոնին, մեր ուրիշ հիմնարկութիւններին: Ա՜խ, ե՞րբ կը գայ այդ օրը, ե՞րբ բոլորս ձեռք-ձեռքի բռնած, մի հոգի, մի կամք դար-

ձած կարող կը լինենք ծառայելու ազգին և դարմանելու նրա ցաւերը, դարդերը: Կը գա՞յ այդ ոսկէ դարը մեր համար... Աշխատենք, որ գայ: Ամրացնենք ազգի մէջ ինքնօգնութեան գաղափարը, հաւատը, բայց չը մոռանանք հայկական իրականութիւնը երբեք: Ինչքան էլ մեծ լինի ինքնօգնութեան գաղափարը անգամ լուսաւոր Եւրոպայում, հեռու Ամերիկայում մեծ բարեգործները խաղում են յայտնի դեր, թէև կան այնտեղ և պետութիւններ և տեղական ինքնավար մարմիններ: Մենք հօ ոչինչ չունենք: Աղքատ ենք: Չը լինենք գոնէ աղքատ հպարտ: Չը կրկնենք եւրոպացիների գեղեցիկ վարդապետութիւնների գեղեցիկ ճշմարտութիւնները, որ մեզ համար առ այժմ դատարկ բառեր են... Հաւատանք, ջերմ հաւատանք, որ կը գայ այն գեղեցիկ օրը, երբ կը բացվի հայի արևը, մեր հասարակութեան բոլոր խաւերը գիտակցաբար և ինքնօգնութեամբ կը գրաւեն, ձեռք կառնեն և կամրացնեն ազգի բաղդը... Բայց այժմ առաջներիս է հայկական իրականութիւնը՝ ցաւ, աղէտ, խաւար, տգիտութիւն և կարիք, անվերջ կարիք հացի, լոյսի, գիտակցական կեանքի: Մենք բարեգործներին այժմ կարօտ ենք, նրանց օգնութիւնը մեզ անհրաժեշտ է: Եւ երբ բարեգործները հանդէս են գալիս, երբ նրանց գրպանները, որ մինչև այժմ համարեա փակ էին, բացվում են ազգի ցաւերը, դարդերը թեթևացնելու համար, մի՛ ապաւինէք. միայն ինքնօգնութիւն է պէտք, դիմելը բարեգործներին մուրացկանութիւն է. դրանով դուք կապացուցանէք, որ մենք հպարտ... աղքատներ ենք... հպարտ աղքատներ... Եւ յետոյ՝ համեստութիւն, փոքր ինչ համեստութիւն, որովհետև մինչև այսօր մենք իսկապէս ոչինչ արած չենք ինքնօգնութեան գաղափարը մեր մէջ արծարծելու, ամրացնելու համար: Խօսելը գործել չէ: Ինքնօգնութեան գաղափարը անկարելի է գեղեցիկ խօսքերով արծարծել: Նա, որ գոռզաբար ասում է՝ ես այդ գաղափարի պաշտպանն եմ, ստում է, կեղծում. և գործով, միայն կենդանի գործով կարելի է քարոզել այդ գաղափարը: Մտէք ժողովրդի խաւերի մէջ: Հիմնեցէք ընկերութիւններ: Ծառայեցէք անձամբ և գործով այդ գաղափարին, այն ժամանակ ես ձեզ կը հաւատամ և կը խոնարհեմ իմ գլուխը ձեր առաջ, գնահատելով ձեր աշխատանքը, տեսնելով նրա արդիւնքները...

Ասացէք, կը գա՞յ այդ օրը:

Հաւատանք, որ կը գայ...

V

Հարստութիւնը մեծ ույժ է և ազգը իրաւունք ունի պահանջելու, որ հարուստներն իրանց փողերը չը խնայեն ազգային հիմնարկութիւնների համար։ Վերջին տարիները մենք տեսնում ենք խոշոր նուիրատուներ, պարտաճանաչ ազգային բարեգործներ։ Դա անչափ ուրախալի երևոյթ է, և մեր պարտականութիւնն է խրախուսել և ոչ թէ պաղեցնել։ Մովսիսական օրէնքը պահանջում է, որ հունձի տասներորդ մասը միայ դաշտում, միայ աղքատների, կարօտեալների համար։ Եթէ մեզանում հարուստները իրանց կայքից տասներորդ մասը տային ազգի լուսաւորութեան գործին, մենք ապահովված կը լինէինք... Պարտաճանաչ մարդիկ հազուագիւտ են։ Ուրեմն աւելի ես գընահատենք նրանց, որ հասկանում են իրանց պարտքը։ Եւ յանուն ազգի շահերին ես չեմ ամաչում հանել գդակս, ցածր խոնարհել գլուխս այն մեծ բարեգործների առաջ, որ թէև շատ քիչ են մեզանում, բայց բարեբաղդաբար կան։ Թող անպակաս լինեն։ Յանուն ազգի շահերին սիրենք, պատւենք, յարգենք նրանց. դրանով մենք սիրած, պատուած և յարգած կը լինենք մեր ազգը։

Այն պարոններին, որ միայն պահանջում են, որ միայն գիտեն զոռոզաբար խօսել, որ կրկնում են անդադար հին ճըշմարտութիւններ, մեր իրականութիւնը չը գիտեցած կամ մոռացած, ես կասեմ՝ համեստութիւն, փոքր ինչ համեստութիւն, պարոններ...

Իսկ եթէ իմ հրաւէրը՝ «Թող հայ մանուկները «Հայր մերից» յետոյ սովորեն և յիշողութեան մէջ միշտ վառ, միշտ սուրբ պահեն մեր բարերարների անունները» համարում են ոմանք իբր ոսկու պաշտամունք, միւսները՝ տարօրինակ ծայրայեղութիւն, դա սխալ է...

Այդ ոսկին ես խնդրում եմ ազգի համար, ինձ պէտք չէ...

Բարերարների անունները ինքը ազգը երբէք չի մոռանայ և առանց իմ հրաւէրիս նա կը պահէ վառ և սուրբ...

ԿՈՒՍԻԿԵԱՆՆԵՐԸ ՔԱՐՈԶՈՒՄ ԵՆ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Նորից խօսում է Կուսիկեանը «Հորիզոնում», խօսում է խրոխտ, հպարտ, մեծամտութեամբ, ամպերից, կարծես յունաց չաստուածը բարկացած... Նա վկայում է միամտաբար, որ ինքը եւրօպացի է, իսկ ես ասիացի, և պնդում է, որ ես մոռնում եմ Մ. Նալբանդեանին, Գր. Արծրունուն, Ռ. Պատկանեանին...

Դժուար է պարոնի հետ վիճել, կարիք էլ չը կայ, որովհետև ընթերցողի համար ամեն ինչ պարզված է, որովհետև նա, որ հետևել է մեր վէճին, կարող է տեսնել, որ Կուսիկեանը մեր ոչ մի հարցին պատասխան չը տուեց...

Եթէ մենք նորից ձեռք ենք վերցնում մեր գրիչը, դա Կուսիկեանին պատասխանելու համար չէ, այլ Կուսիկեաններին...

Կուսիկեանները շատացել են մեզանում...

Նրանք միշտ մեծամտաբար քարոզում են և միշտ խօսում են ամպերից...

Խրոխտ, հպարտ...

Նրանք գաղափարը դարձնում են աղանդ և, փոխանակ գաղափարների տէրեր լինելու, դառնում են գաղափարների ծառաներ, ստրուկներ...

Դա է պատճառը, որ մեզանում ծրագիրը գերադասվում է գործունէութեան, և դա է պատճառը, որ մեզանում փոքր գործի շուրջը սուտկերի պէս են շատանում, աճում ընկերութիւններ, կուսակցութիւններ, որ իրար ուտում են և խեղդում դեռ գործ չը սկսած...

Ամեն մի ազնիւ գործողի իղձը, ցանկութիւնը, աշխատանքը պէտք է լինի մի բան և միայն մի բան՝ շտապեցնել, մօտեցնել օր, ժամ, րոպէ առաջ վսեմ և գեղեցիկ գաղափարների իրականացումը։

Ո՞ր գաղափարը գերադասելի է մեզ համար ներկայ հանգամանքներում...

Տեսնել հայերին լուսաւորված։

Լուսաւորութիւնը պիտի լինի մեր բոլոր մտքերի առարկան։

Լուսաւորութեան գաղափարին պիտի ծառայենք բոլորս։

Ինքնօգնութեան գաղափարը՝ վսեմ է, բայց չքանում է լուսաւորութեան ձգտումի գաղափարի առաջ. ահա ինչը չեն հասկանում աղանդաւորները...

Մի՞թէ աղանդաւորներ չեն նրանք, որ սառել են իրանց գիտութեան մէջ, իրանց գրքերում և, մոռացած՝ հայ իրականութիւնը, գործելու մեծ կարիքը, խօսում են միայն յանուն մեծ գաղափարի, կարծես գաղափարը կուռք լինի երկրպագելու համար և ոչ թէ այն լոյսը, որին պէտք է վազել, մօտենալ...

Եթէ փայլուն գաղափարներից մեզ բաժանում են տասնեակ հազար քայլեր, եթէ մենք կարող ենք անելու հարիւր քայլ, տասը, մինը, ես կասեմ՝ անենք այդ մի քայլը, մենք փոքր-ինչ կը մօտենանք այդ գաղափարներին և այն պարոններին, որոնք կանգնել են և հպարտ, խրոխտ կանչում՝ կամ տասնեակ հազար քայլեր կամ ոչ մի քայլ. ես կասեմ՝ դուք աղանդաւորներ էք, դուք գաղափարը դարձրել էք աղանդ, որին երկրպագում էք՝ փոխանակ ծառայելու...

Բանը խօսելու, ծրագիրներ գրելու մէջը չէ։

Խօսքի և ծրագիրների ժամանակը անցաւ։

Պէտք է գործել, գործել և գործել...

Գր. Արծրունին այս-ինչ բանն է քարոզել, Միքայէլ Նալբանդեանը՝ այն-ինչը... Ճիշդ է։ Պահեցէք ամուր ձեր սրտերի խորքերում այդ ճշմարտութիւնները և մի մոռանաք, որ խօսելու ժամանակը չէ, այլ գործելու։ Աշխատեցէք մօտեցնել մեզ բոլորիս այդ ճշմարտութիւններին...

Բայց դուք կանգնած էք, շուարած, դուք կարդացել էք և վատ էք մարսել այն ճշմարտութիւնը, թէ մեզ անհրաժեշտ է ինքնօգնութիւն, և պնդում էք՝ ինքնօգնութիւն, ինքնօգնութիւն, և գեղեցիկ վարդապետութիւններից դուք արել էք աղանդ և դարձել էք աղանդաւորներ...

Ազգը ձեզ հետ չի գնայ, որովհետև ազգը կը գերադասէ փոքր գործը ձեր մեծ խօսքերից...

Աղա Լազարեանների, Սանասարեանների, Գօգօյեանների, Մանթաշեանների և շատ այլ վաճառականների անունները կը մնան, երբ մանր և միջակ մեր գրականութեան աստղերի անունները կը մոռացվեն...

Լազարեանը վաճառական էր, այո, բայց ոչ մի հայ բանաստեղծ, ոչ մի հայ հրապարակախօս այնքան օգուտ տուած

չէ մեզ, որչափ այդ վաճառականը։ Թող չը մոռանան այդ ճշմարտութիւնը Կուսիկեանները և մանաւանդ թող յիշեն այդ՝ մեր հարուստ վաճառականները։

Ոսկով ծառայելը գաղափարներին գերադասելի է, քան թէ խօսքով կամ գրչով... Խօսքով և գրչով մենք բոլորս հայրենասէրներ ենք։

Ոսկով ծառայողը ապացուցանում է, որ նա հայրենասէր է...

Եւ եթէ Կուսիկեանները անպատճառ պատգամներ են որոնում մեր գրուածքներում և ծաղրում, ահա միակ մեր պատգամը. լինել գաղափարների տէր և ոչ թէ ստրուկ, չը դարձնել գաղափարը աղանդ և՝ որ գլխաւորն է՝ որոնել, գտնել գործնական միջոցներ և ճանապարհ՝ անվերջ անհամ խօսքերից գործի դառնալ՝ մեզ գաղափարներին մօտեցնելու համար, անխտիր ամբողջ ազգի աջակցութեամբ՝ չարհամարհելով և վաճառականներին և սուրբ պահելով աղա Լազարեանների նման գործիչների յիշատակը։

Իսկ ձեր կուրօպատկեան պատգամը՝ համբերութիւն, համբերութիւն և համբերութիւն, ձեր կարծիքը, թէ բաւական է ամուր ամուր խօսել գաղափարների մասին, որ այդ գաղափարները իրականանան, ծաղրելի է միանգամայն...

ՖՐԻԴՐԻԽ ՀԵՐԱՈՒՍ...

I

Տասը սպաներ, գեղեցիկ, հարուստ, փայլուն քէֆ են անում մի յայտնի պանդոկում։

Գինին առատ հոսում է գետի նման։

Զուարճալի երգեր, ծիծաղ, ուրախութիւն, սիգարների ծուխի քուլաներ...

Սպաներից ամենափոքրը վեր է կենում, իր Ֆրիդրիխ ընկերոջ կենացն առաջարկում։

—Կեցցէ Ֆրիդրիխը։

—Կեցցէ Ֆրիդրիխը,—պատասխանում են նրան, և տասը գեղեցիկ, հարուստ, փայլուն սպաները բարձրացնում են իրանց բաժակները և դատարկում մի րոպէում...

Խնճոյքը շարունակվում է։ Սպաների գլուխները տաքանում։ Սկսվում են անախորժ վէճեր, և յանկարծ բանից դուրս է գալիս, որ Ֆրիդրիխը բնաւ արժանի չէր կենաց բաժակին։

Սպաները նայում են մի րոպէ իրար երեսի։ Նրանցից մէկը տանում է իր ձեռքը բերանին, քորում կոկորդը, դուրս թափում խմածը, բարձրաձայն աղաղակելով.

—Ֆրիդրիխ հերաուս...

Նրա ընկերները հետևում են օրինակին և տասը գեղեցիկ, հարուստ, փայլուն սպաները աղաղակում են.

—Ֆրիդրիխ հերաուս...

—Ֆրիդրիխ, դուրս արի...

II

Տարիներ շարունակ մենք հոլովում էինք՝

—Գիւղատնտեսական, գիւղատնտեսականի, գիւղատնտեսականով...

Տարիներ շարունակ մենք աղաղակում էին—՝

—Կեցցեն եղբարք Ժամհարեանները։

Անհամբեր սպասում էինք, որ նրանց գիւղատնտեսական

դպրոցը վերջապէս կը բացուի, և մեր թշուառ գիւղացիութեան համար վերածնութեան մի ոսկէ դար կը սկսուի...

Ահա և կանոնադրութիւնը հաստատված։

Դպրոցը կարող է բացվել։

Բացվել և անմահացնել եղբ. Ժամհարեանների անունները...

Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան ընդհանուր ժողովը ծանօթանում է կանոնադրութեան հետ և մեզ էլ է ծանօթացնում։

Ի՞նչ թիւրիմացութիւն...

Դպրոցում ոչ մի հայկական բան չը կայ։

Դպրոցը հայերի համար չէ։

Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնը ժխտում է նրա հարկաւորութիւնը մեզ համար և բացատրում է մասնակցելու այդպիսի դպրոցին...

III

Հայերը գիտեն միայն հայերէն։

Հայերը չեն կարող յաճախել այնպիսի դպրոց, որը կաւանդի առարկաները ոչ հայերէն։

Եղբ. Ժամհարեանները ընդունելով դասատուութիւնը ոչ հայերէն՝ փակում են մեր առաջ իրանց դպրոցի դռները, փակում են ամուր, առ միշտ...

Գիւղացիութեան մէջ էլ կայ մրցութիւն և մրցութեան օրէնքներ...

Եղբ. Ժամհարեանների դպրոցը պիտի տայ ուրեմն հարկաւոր գիտելիքներ օտարներին, և այդ գիտելիքներից զուրկ պիտի մնանք մենք, մնանք անզէն, անպաշտպան՝ կեանքի ծանր կռւում։

Լաւ հողերը հայերինը չեն։

Ազատ հողերը հայերին չեն տալիս։

Այժմ շնորհիւ աղա Ժամհարեանների՝ գիտութիւնն էլ պիտի դառնայ օտարների արտօնութիւն։

Եղբարց Ժամհարեանների դպրոցը հայերիս համար վնաս է։

Վնաս է անշուշտ։

Միթէ պէտք են և ապացոյցներ։

Երկու անգամ երկուսը չորս է, ո՛չ երեք, ո՛չ հինգ և ո՛չ վեց...

IV

Առարկում են, թէ ժամանակը յարմար չէր։

Ժամանակը դարձել է այն ողորմելի էշը, որի վրա դնում են այժմ ամեն տեսակ բեռ՝ պէտք-անպէտք։

Ժամանակը յարմար չէր...

Մենք խնդրում էինք, որ եղբ. Ժամհարեանները շինէին մեզ համար մի եկեղեցի...

Ժամանակը յարմար չէր, և նրանք...

Շինեցին մի բանտ։

Մի մեծ, փայլուն... բանտ... մեզ համար։

Որովհետև աղիւսները պատրաստ արդէն ունէին...

Եթէ ժամանակը յարմար չէր, սպասէիք յարմար ժամանակի, տայիք ձեր գումարը դպրոցական ֆոնդին։ Զը կարողացաք շինել եկեղեցի, գէթ մեզ փրկէիք մի նոր փորձանքից, ձեր բանտից։

Որ մեզ պէտք չէ։

Որ մեզ կը վնասէ։

V

Առարկում են, թէ դպրոցը չէր տայ իրաւունքներ, եթէ դասատուութիւնը լինէր հայերէն։

Այդ իրաւունքների համար Նոր-Նախիջևանի քանի մի խելօքներ Գօգօյեան դպրոցը տակն ու վրա արեցին։

Իրաւունքներ...

Ի՞նչն է լաւ, ի՞նչն է պէտք. գիտութի՞ւն, թէ իրաւունքնե՞ր...

Ինչի՞ս է պէտք իրաւունք՝ առանց գիտութեան։

Գիւղացուն պէտք են գիտելիքներ և ոչ վկայականներ...

Վերջապէս ո՞վ է այժմ ստանալու ձեր վկայականները։

Յամենայն դէպս ոչ հայերը։

Այդ իրաւունքները ստանալու համար պէտք է նախ մտնել դպրոց։

Օտար լեզուն հայի համար փակած դուռ է։

Փակած դռներ...

Ես առաջինն էի, որ «կեցցե՜ն եղբ. Ժամհարեանները» գրեցի, գրեցի շարունակ...

Քանիցս ինձ հէնց դրա համար գամեցին անարգական անուններ։

«Հարուստների համար աղօթքներ գրող»—ասացին։

Այո, ես առաջինը եղայ՝

«Կեցցե՜ն Ժամհարեանները»—ասողն և գրողը։

Բայց եթէ եղբ. Ժամհարեանները ուղղելու չեն իրանց սխալը, չեն փոփոխելու իրանց դպրոցի ծրագիրը, եթէ նրանք սահմանելու չեն դասաւանդութիւնը հայերէն լեզուով և պիտի բանան դպրոցը այսօրվայ ծրագրով, փակելով դրանով նրա դռները իրանց ազգի առաջ, ես լայն կը բանամ բերանս, հինգ մատներս, տասը մատներս միասին կը խրեմ խորը կոկորդս և կաղաղակեմ՝

Եղբարք Ժամհարեաններ...

Դուրս եկէք...

Մենք սխալվել ենք։

Դուք արժանի չէիք մեր կեցցէներին...

Հերասւս... հերասւս...

ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. ԳՐ. ՉԱԼԽՈՒՇԵԱՆԻՆ

Թիֆլիս, 3 մարտի

«Լոյս» շաբաթաթերթի մէջ կարդալով ձեր յօդուածը Ժամհարեան գիւղատնտեսական դպրոցի մասին, որ բացվելու է Գանձակի նահանգում եղբ. Ժամհարեանների նո իրատուութեամբ, ես մնացի ապշած: Դուք միակ մարդն էիք, որ ամենից աւելի գնահատում էիք հարուստների բարեգործութիւնը. ինչո՞ւ այժմ հիասթափվեցիք և եղբ. Ժամհարեաններին հերատուս էք անում: Թէև ես չեմ կարդացել հաստատված կանոնադրութիւնը, բայց ինչ տեսակ կանոնադրութիւն որ լինի, երբ բացվում է մի երկրում դպրոց ժողովրդի համար, պէտք է ընդունել նրա օգտակարութիւնը:

Անկասկած՝ լեզուի կողմից կարելի եղածի չափ նրանք ուշադրութիւն դարձրած կը լինեն, որ հայերէնը եթէ տիրապետող չը լինի, այնու ամենայնիւ աւանդվի աւելի լաւ, քան մի այլ տեղ:

Գալով աշակերտների թւին՝ կասկած չը կայ, որ հայերը շատ կը լինեն: Ենթադրենք մի վայրկեան, որ նոյն դպրոցում օգտվում են և մեր հարեան ուրիշ ազգի զաւակները. մի՞թէ մենք պէտք է արգելք լինենք և այդ խոշոր նուէրը համարենք անօգուտ և չընդունենք. Ի՞նչ միտք ունի դաստիարակել, սովորեցնել մէկ ազգի զաւակները, երբ նրան շրջապատող ուրիշ ազգերի զաւակները վայրենի դրութեան մէջ մնալով արգելք պիտի լինեն միասին խաղաղ ապրելու և աշխատելու: Ունի՞ արդեօք բարոյական իրաւունք որևէ մի անձն յանդիմանելու պ. պ. Ժամհարեաններին կամ մի այլ բարեգործի, թէ ինչո՞ւ նրանք իրանց գումարները չը նուիրեցին այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում: Թողէք նուիրողը իր կամքը կատարէ և բանայ այնպիսի հիմնարկութիւն, ինչպէս ինքն է ցանկանում. օգտվողը թող լինեն և հայեր և ուրիշ ազգի զաւակներ, որ կողք կողքի տուած ապրում են և չունեն ոչ միջոց, ոչ պատրաստութիւն, որ նոյնը անեն՝ ինչ որ հայը: Երկրի ժողովուրդը միասին գիւղատնտեսական գիտութիւն ձեռք բերելով և համերաշխ ապրելով՝ մեզ համար աւելի օգտակար է, քան թէ միայնակ հայ ժողովուրդը, որ հազիւ թէ օգտվի իր սովորածից, քանի որ վայրենի հարեանը նախանձոտ աչքով պիտի նայէ, պիտի սպանէ նրա կովը, ձին, այրէ մարագը, արտերը: Երբ 1906 թւին թուրքերը այրեցին Զանգեզուրում իմ հարուստ պղնձագործարանը, որ հինգ տարվայ ընթացքում հազիւ կարողացել էի մեքենաներ ուղարկել և շինել, այդ միջոցին թանգութի՜ւն էր, սով էր. ես ուղարկեցի մի քանի վագոն հաց և գրեցի, որ անխտիր բաժանեն հացը կարօտեալներին, լինեն հայեր թէ թուրքեր. Թուրքերը զարմանքով և երախտագիտութեամբ էին ընդունում այդ բարիքը, դրանից յետոյ անձնուէր ծառայութիւն էին անում գործարանին. Թողէք այս անգամ համարենք, որ եղբ. Ժամհարեանները բարեգործութիւն են անում ոչ միայն հայերին, այլ երկրի ժողովրդին. իմ կարծիքով՝ այդ աւելի մեծ բարեգործութիւն է, քան թէ միայն հայերին: Պ. Չալխուշեան, ուղղեցէք ձեր սխալ հայեացքը և գնահատեցէք բարեգործին՝ չը քննադատելով նրա կամքը և զգացմունքը:

ԱԼ. ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱԶՆԻՒ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆԻՆ

Ռոստով Դ./վ., 8 մարտի

Հետաքրքրութիւնով կարդացի ձեր նամակը և ցաւում եմ անբաւ, որ կարողանալու չեմ ձեզ պատասխանել լիովին: Եթէ դուք դիմեցիք ինձ լրագրի միջոցով, ուրեմն ցանկացաք տալ հասարակական նշանակութիւն ձեր նամակին: Բայց դժբաղդաբար «Մշակը» հրաժարվեց տպագրել իմ յօդուածը: «Մշակի» ընթերցողները չը գիտեն, թէ ինչումն է հարցը, քանի որ իմ յօդուածը տպվել է Նոր-Նախիջևանի «Լոյս» շաբաթաթերթում: Ահա ինչու ես պիտի կարճեմ իմ պատասխանը. միայն ձեր երկու հարցերին ես կը տամ պատասխան:

«Ես մնացի ապշած,—գրում էք դուք,—դուք միակ մարդն էիք, որ ամենից աւելի գնահատում էիք հարուստների բարեգործութիւնը»:

Շնորհակալ եմ ձեր բարի խօսքերին, բայց եթէ դուք հետևում էք իմ գրածներին, դուք պիտի խոստովանէք, որ երէկ, ինչպէս այսօր, ես կրկնել եմ մի բան. իմ քարոզը եղել է՝ «ըսկըզբից զարմանեցէք մեր վէրքերը, յետոյ օտարինը»: Ինչո՞ւ դուք տքնում էք Քրիստոսից աւելի քրիստոնեայ լինել: Իսրայէլի տունը՝ դա մեր տունն է և այդ տունը մեր առաջն է առանց կտուրի, առանց յատակների, խարխուլ պատերով, որ շարժվում են քամուց, թրջվում անձրևներից: Այդ աւերակ տան մէջ չը կայ հաց ուտելու...

Շինեցէք այդ տունը, յետոյ վազեցէք շինելու օտարների տները...

Եւ երբ եղբարք Ժամհարեանները վեր կացան իրանց ճոխ սեղանից և ցանկացան կերակրել ուսումնածարաւ իրանց ազգին, յուզվեց սիրտս և ես հրապարակով բարձր գնահատեցի նրանց բարեգործութիւնը...

Այն րոպէին, երբ ես հասկացայ, որ դասաւանդութիւնը հայերէն չէ և արուեստական ճանապարհով մեզ համար դպրոցի դռները փակ են, ես պիտի զգայի և գրէի այն, ինչ որ գրեցի...

Կարող չէի մի րոպէ անգամ դաւաճանել իմ գաղափարներին...

Մոռանում էք դուք և այն, որ դպրոցական ֆոնդին եղբ. Ժամհարեանները տուել են, եթէ չեմ սխալվում, միայն 2000 ր., առարկելով թէ նրանք տալիս են գիւղատնտեսական դպրոցին։ Կովկասում մօդա է եղած առանց խտրութեան բարեգործելը...

Եւ դուք, ազնիւ պարոն, խառնում էք երկու բաներ՝ բարեգործութիւն և ողորմութիւն։ Դուք բաժանել էք հաց, դուք տուել էք կարօտեալներին, աղքատներին անխտիր, և լաւ էք արել այդ անգամ, քանի որ նայել էք հանգամանքներին...

Հիմնել դպրոց, դա բարեգործութիւն է, ոչ ողորմութիւն...

Դպրոցներ մենք չունենք, մենք կարօտ ենք դպրոցների...

Դա մեր ազգի վերածնութեան հարցն է...

Եւ այդպիսի մեծ հարցում մենք բոլորս ունենք ձայն...

Հարուստը երբէք մոռանալու չէ իր ազգը։

Մենք չունենք գանձարան, ազատ հողեր, պաշտպաններ...

Եթէ մեր հարուստներն էլ հետևեն նոր քաղաքականութեան՝ չը ջոկելով հային օտարից, մինչդեռ ոչ մի օտար մեզ չէ ընդունում, չէ բարեգործում, չէ հովանաւորում, մեզ մնում է մի բան, բոլորովին յոյս չը դնել մեր հարուստների վրա...

Ես միշտ բարձր գնահատում եմ մեր բարեգործներին։ Առանց նրանց օգնութեան մեր ազգի վերածնութեան գործը կը կաղայ, կը թուլանայ...

Բայց ես երբէք չեմ հասկանայ այն բարեգործներին, որ ծագումով հայեր են, իսկ զգացումներով օտարներ, որ քաջ տեղեակ լինելով մեր աղքատութեան, սակայն բարեգործում են առանց խտրութեան...

Հարկ չը կայ Քրիստոսից աւելի քրիստոնեայ լինել։

Իսկ Քրիստոսը յիշեց Իսրայէլի տունը...

Չը մոռանանք և մենք, ազնիւ պարոն Մելիք-Ազարեան...

—

Ցարգելի պարոն. անբացատրելի յուզումով կարդացի ձեր նամակը առ պր. Մելիք-Ազարեանը։ Այո, ըստ ամենայնի համամիտ եմ ձեզ, որ հայ բարեգործները պարտին նախ հային մտածել. միթէ յոյները, հրէաները և նոյն իսկ ամենէն աւելի քաղաքակրթուած անգլիացիք, գաղղիացիք և ամերիկացիք մեզ չափ աշխարհաքաղաքացի են կամ Քրիստոսէ աւելի այլասէր։ Այսօր, երբ հայկական բարենորոգումներու ծրագրովը—լինի այն յոյժ թերի

և անբաւարար—Հայաստանի վերածնութեան հարցը մէջտեղ կը դրուի, ինչ ըլլին կամ ինչ կընեն մեր հարուստները ի Կովկաս և ի Պոլիս։ Անխտիր բարեգործութիւնները կը ծառայեն միայն անձնական ռէկլամի յաչս օտարներու և յաճախ ուղղակի իրենց անհատական այլ և այլ շահերը ապահովելու և աւելի ընդարձակելու. մինչ թէ Ռուսական, թէ Թիւրքական Հայաստանի մէջ՝ յայսկոյս և յայնկոյս Արարատի՝ կան անմիջական դարմանի կարօտ։ Օտար միսիօնարութիւններ հարտարօրէն կը շահագործեն զմեզ ձրի կրթութեամբ. և արդիւնքը ինչ է, գիտէ՞ք. հեռացում ազգային եկեղեցիէ և հայրենի աւանդութիւններէ, տոհմային նկարագրի անկումը, այլասերում և վերջապէս գաղթականութիւն դէպի կլանող մեծ կեդրոններ և մանաւանդ Ամերիկա։ Հայաստանը կը պարպուի, կը պարպուի նաև աղքատութեան, տուրքերու ծանրութեան և զինուորական հարցի երեսէն, մինչ քանի մը բանքաներու հաստատութիւնը կրնար անհագին կարիքներ դարմանել։ Մանաւանդ այսուհետև միսիօնարական մրցումին վրայ պիտի գան աւելնան եւրոպական դրամագլխի և ձեռնարկներու ահեղ մրցակցութիւններ. իսկ Թիւրքական Հայաստանի հայը ինչով պիտի պահպանէ իր տնտեսական անկախութիւնը և նոյն իսկ գոյութիւնը։ Մինչև ցարդ փաստերն անհերքելիօրէն ապացուցած են, որ արտասահմանի մէջ բարձր կրթութիւն ստացած հայաստանցի երիտասարդը չի վերադառնար իր հայրենի օջախը կամ եթէ վերադառնայ իսկ, միջավայրը այնքան գռեհիկ և անհիւրընկալ կը թուի իրեն, որ շուտով կը թողու կը հեռանայ։ Ի՞նչ ընելու է ուրեմն՝ մնացած ամէն մը հայ ժողովուրդը հայրենի հողին փարած և կապուած պահելու և հայ հայրենիքը վերականգնելու համար։ Պէտք է բանքաներ հիմնել հայ երկրագործին և առևտրականին օգնելու համար, և պէտք է մանաւանդ ցարդ եղածներէն աւելի բարձր հայ վարժարաններ հիմնել կամ եղածներու մակարդակը բարձրացնել՝ երիտասարդութիւնը հայրենիքի մէջ կրթելու և տոհմային նկարագիրը և անհատական նախաձեռնութեան ոգին մշակելով տոկուն ոյժեր պատրաստել սպառնացող ազգակործան վտանգին դիմադրաւելու համար...

Հիմնադիր-տնօրէն Վանայ Երամեան վարժարանի
Հ. ԵՐԱՄԵԱՆ

—

ՄԻ ՓՈՒՆՋ ԱՐԷԼԵԱՆ-ԱՐՄԷՆԵԱՆ ԽՄԲԻՆ

Նոր-Նախիջևանի քաղաքային թատրօնը լիքն է ծայրէ ի ծայր... Ուրախ, զուարթ երեսներ... ոգևորութիւն... բուռն ծափահարութիւններ և ջաւական, անվերջ բաւական դէմքեր...

Երազ չէ՞ դա, մի ցնո՞րք, մի հրա՞շք...

Երա՞զ։ Ոչ։ Հրա՞շք՝ այո...

Եւ հրաշքը կատարել է Արէլեան-Արմէնեան խումբը...

Հեռու հայրենիքից նա բերել է իր հետը կարծես մի չընչին բան, մի կտոր, մի բուռն հող, բերել է և աննկատելի կերպով ցրել է բեմի վրա դէս ու դէն... Կարօտ այդ հողին, մենք չենք տեսնում և չենք տեսնի նրան, բայց նա այստեղ է, նա զարդարում է բեմը, մենք զգում ենք նրան և հոտոտում նրա անուշ բուրումը...

Մայրենի բարբառն է դա։ Նա քաղցր է հնչում ականջներիս և զօրեղ լարում սրտներիս բոլոր թելերը։ Ինչպէ՜ս գեղեցիկ, ինչպէ՜ս հմայիչ է այդ բարբառը։

Յիշում եմ մանկութիւնդ, հայրական տունդ, մօրդ գգուանքը, համբոյրը, արտասուքը...

Լիքը թատրօնը ոգևորում է խումբը։ Ոգևորութիւնը անցնում է հասարակութեան, որ այսօր ցնցվել է թմրութիւնից, քնից, անտարբերութիւնից։

Նայում եմ չորս կողմերս և չեմ հաւատում։ Ի՞նչ գեղեցիկ, արթուն, խելօք դէմքեր... Մի՞թէ դրանք իմ առօրեայ բարեկամները, ծանօթներն են... Այո, բայց նրանք երազում են այն երազը, որ այնպէս գեղեցիկ պատմում է քանքարաւոր մեր Շիրվանզադէն Արմենուհու բերնով։ Արմենուհի՝ մի կատարեալ պօէմա, լի բանաստեղծական գոհարներով... նրանք երազում են այն երազը, որը գերմանացի Փուլդը պատմել է «Յիմարի» մէջ... Գրողների գաղափարները և մեր արտիստների քանքարը ժպտում են և ցոլում իմ բարեկամներիս երեսներին և գեղեցկացնում նրանց։ Վաղը նրանք կը դառնան իրանց առօրեայ աշխատանքին և առօրեայ կեանքին, կը լինեն նոյն Նոր-Նախիջևանցիներ, անտարբեր, սառնասիրտ, բայց այսօր նրանք զգում են, յուզվում, ապրում...

Յուզողը Արէլեան-Արմէնեան խումբն է, մի խումբ, որ պատիւ է բերում մեզ՝ հայերիս...

Մենք լաւկան գանգատվողներ ենք և կարծում ենք ի զուր, որ Ադամեանի մահից յետոյ մենք ունենք միայն մի տաղանդ՝ Սիրանոյշ։

Ադամեանը և Սիրանոյշը եզական երևոյթներ են և մեծ տաղանդներ։

Բայց ո՞ւր է այն կոյրը և ո՞ւր է այն խուլը, որ չը ճանաչէր տ. Դուրեան-Արմէնեանին և պ. պ. Արէլեանին և Արմէնեանին։ Այդ երեքը վաղուան աստղերն են մեր հայ բեմի, և կասեմ հպարտութեամբ, որ նրանք կը լինէին զարդ և ռուսաց բեմին և եւրօպացիների բեմերին... Նրանք իսկական տաղանդներ են, արժանի՝ մեր յարգանքի, սիրոյ և գնահատութեան։ Եւ իմ խորին զգացմանց այդ յարգանքի, սիրոյ և գնահատութեան քանի մի տողերս նուիրում եմ Արէլեան-Արմէնեան խմբին, իբրև մի փունջ, բոլոր խմբին, որովհետև և միւս արտիստները՝ Զաբէլ, Անահիտ, Ժասմին, Գուլազեան, Ալիխանեան, Աւետեան, Ղազարեան, Միրզօյեան և Թիացեանները՝ շնորհքով աջակցում են լիակատար անսամբլին և կազմում են խումբ գեղեցիկ և քանքարաւոր։ Իսկ պ. Շահխաթունին մօտենում է Արէլեանին և Արմէնեանին և շուտով նրանց հաւասար կը լինի։

Ծաղիկները, որքան էլ գեղեցիկ լինեն և անուշահոտ, թառամում են, փչանում, չորանում։

Իմ փունջը գեղեցիկ չէ և ոչ անուշահոտ, բայց նա չի թառամի, չի փչանայ, չի չորանայ։ Թող ուրեմն այս փունջը ներշնչէ Արէլեան-Արմէնեան խմբին ամուր հաւատ, որ մենք գիտենք ճանաչել, գնահատել նրա աշխատանքը, ծառայութիւնը հայ բեմին մատուցած, և թող այդ խումբը միշտ բերէ իր հետ այդ դիւթական, կարծես մի չնչին բանը, մի կտոր, մի բուռ հայ հող, և ցանէ բեմի վրա, որ մենք երազենք գեղեցիկ երազներ և փոքր առ փոքր սթափվենք մեր թմրութիւնից, քնից և անտարբերութիւնից...

Ինչպէ՜ս գեղեցիկ, ինչպէ՜ս հմայիչ է մայրենի բարբառը...

ԽԵՂՃ ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐ, ՀԱՅ ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐ...

Մի ծիծեռնակը գարուն չի բերում։

Բայց միայնակ չէ թռել, եկել ծիծեռնակը։

Տասնեակ ծիծեռնակներ թռել, եկել են և հետները բերել դարուն, նախշուն թևերով գարուն։

Ինչո՞ւ ես յիշեցի ծիծեռնակներին և գարունը, մինչդեռ սև-սև ամպերը առաւօտից այսօր ծածկել են երկինքը, ցուրտ քամին ուժգին փչում է գազանի նման, իսկ անձրևը թափվում է, թափվում անվերջ...

Ծիծեռնակները՝ մեր հայ դերասաններն են. և հայ բեմից այնպէս զօրեղ ու հմայիչ փչում է սիրուն գարնան քաղցր զեփիւռը մեր սրտերին...

Հոգս չէ. Թող փչէ ցուրտ քամին, թող գայ անձրև և խոնաւը պատէ չորս կողմը. հայկական բեմը մեզ տաքացնում է։ Մենք տեսնում ենք մեր սիրուն դերասաններին և մոռանում ենք և ցուրտը, և խոնաւութիւնը։ Գարունը, միայն սիրուն գարունը ժպտում է մեզ...

Ծիծեռնակներ...

Մի՞թէ մեր արտիստները ծիծեռնակներ չեն։

Նրանք թռչում են այստեղից այնտեղ։ Այսօր՝ Բագու, վաղը՝ Թիֆլիս, յետոյ՝ Մօսկվա, Նոր-Նախիջևան...

Եւ ամեն տեղ նրանք բերում են հետները հայի ցաւը, հայի դարդը, հայի ուրախութիւնը, հայի ժպիտը։

Բերում են հետները հայի գարուն։

Գարունը բոլորիս համար սիրուն է։ Գարնանը ամեն բան կենդանանում է և գեղեցկանում։ Գարնանը և խայթող եղինձը գեղեցիկ է և հրապուրիչ։

Այդպիսի գարուն աւետում են մեզ մեր ծիծեռնակները, մեր բազմավաստակ, բազմաչարչար, մեր տաղանդաւոր արտիստները, որոնց մասին մենք այնքան քիչ ենք մտածել ու մտածում։ Տեսէք առաջին կարգը, տեսէք երկրորդ և երրորդ կարգերը։ Դատարկ են։ Ինչո՞ւ։ Ո՞րտեղ են մեր հայ ազնուները։

Օպերայում, փարսում, թէ՞ կեղտոտ պանդոկների առանձին սենեակներում։

Աստուած գիտէ, Աստուած դատէ և Աստուած մի օր նըրանց փրկէ ու ազատէ... հազար ու մէկ յիմարութիւններից։ Եւ գուցէ ամենամեծը այդ յիմարութիւններից նրանց մեծամտութիւնն է և արհամարհանքը դէպի հայկական գեղարուեստը և բեմը։

Ի՞նչ արած։ Ազնուները ամեն տեղ ազնուներ են, սև, տգեղ, կղզոցներով...

Սիրանոյշ, Մայսուրեան, Գուլազեան, Յասմիկ, Արուսեակ, Մարգարիտ, Աբէլեան, Ալիխանեան, Շահխաթունի, Աւետեան, Յարութիւնեան, Մանուէլեան, Ղազարեան, Խաժակ և Ահարոնեան—ահա մեր ծիծեռնակները, որ երգում են... սոխակներից լաւ...

Կարիք չը կայ խօսելու ամեն մէկի մասին առանձին, ովովհետև ամեն մէկը աշխատում է բարձր կանգնել և համապատասխան լինել իր կոչման։

Սիրանոյշի յաղթանակը մայրաքաղաքներում պատիւ բերեց հայ բեմին. Նրա մասին հիացմունքով խօսում էին ռուս թերթերը։ Մեր տաղանդաւոր Աբէլեանը իր ընկերներով նպաստեց այդ աջողութեան։ Մայսուրեանն ունի այնպիսի երկրպագուներ, որ գնահատում են նրան՝ համահաւասար Սիրանոյշին։

Կարծում էք ես մոռացա՞յ մի անուն։ Ոչ, ես դիտմամբ չը յիշեցի տիկ. Զաբէլի անունը...

Խմբով են թռչում ծիծեռնակները աշխարհէ-աշխարհ։ Յանկարծ տեսար մէկը փչացրեց թևը և կանգ առաւ։ Նա պիտի մնայ խմբից, մնայ միայնակ։ Գարունը չէ սպասում, գարունը պահանջում է, կոչում ծիծեռնակներին...

Տիկ. Զաբէլի թևը կոտրվել է։ Նիհար, լղար, նա հազում է և կոկորդը արդէն հրաժարվում է ծառայելու... Պէտք է հանգստութիւն։ Պէտք է դարմանել։ Գուցէ հրաժարվել բեմից, մնալ միայնակ... Ի՞նչպէս այդ ծանր է նրա համար։

Խեղճ ծիծեռնակ, հայ ծիծեռնակ։

Երկար, ձիգ տարիներ դու անխոնջ աշխատել ես մեր բեմի վրա, մեր բեմի համար և այժմ կորցրել քո առողջութիւնը։ Իրաւունք ունէիր սպասելու մեր կարեկցութեան և օգնութեան։ Սակայն մի՛ յուսար և ի զուր մի սպասիր։ Մենք քեզ չենք օգնի, մենք ոչ ոքին օգնած չենք։ Բայց և մի՛ գանգատվիր՝ աշխարհ է, լսող չը կայ։ Հասունացած չենք, չենք հասկանում։

Գուցէ մի օր, մի գեղեցիկ օր, հաւատանք, որ նա կը գայ, մենք հասկանանք, գուցէ մենք այն ժամանակ և օգնենք քո... թոռներին։ Իսկ քեզ ոչինչ չենք տայ, կամ կը տանք կոպէկներ, միայն վիրաւորիչ կոպէկներ... քո արդար, քո հալալ աշխատանքի համար։ Քանի դու առողջ էիր, դու պէտք էիր մեզ, իսկ երբ թեզ կոտրվեց, դու մեզ պէտք չես։ Մնա միայնակ, հեռու խմբից, բեմից, մեզանից...

Անձրևը շարունակում է գալ անվերջ, անդադար. նա վերջանալու չէ այսօր. կարծես ջրհեղեղ լինի. բայց ես չեմ մրսում. հայ բեմից սիրուն գարնան անուշ զեփիւռը փչում է և տաքացնում սիրտս, և միայն տ. Զաբէլի կոտրած թեւը պղտորում է, յուզում և թուլացնում հոգիս և յիշեցնում մեր բեմի յուսահատական անցեալը, անմխիթար ներկան և անորոշ ապագան և այդ բեմի բոլոր փոքր և մեծ, կենդանի և արդէն մեռած Զաբէլներին...

Ո՜, որչափ մեղաւոր ենք մենք բոլորս ձեր առաջ...

Խեղճ ծիծեռնակներ, հայ ծիծեռնակներ...

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Գիտուն, թող գիրքը, ժամ չէ կարդալու։

Գամառ-Քաթիպա

Վիէննայի Մխիթարեանների ուխտին այսօր Նոր-Նախիջևանից ուղարկվեցին շնորհաւորական հեռագիրներ։ Քաղաքագլուխը շնորհաւորելով անուանում է Մխիթարեաններին՝ հայոց լեզուի պահպանիչներ արտասահմանում։ Բարեգործական Ընկերութիւնը խոնարհելով գլուխը Մխիթարեանների առաջ՝ ցանկանում է բարգաւաճում՝ «խեղճ հայ ազգի դատը պաշտպանելու համար...»․ խեղճ հայ ազգի դատը պաշտպանելու համար՝ մի վսեմ, բարձր, ազնիւ նպատակ, որից մինչև այժմ ուխտը գուցէ խուսափել է,՝ ի զուր... Եւ այսօր, յոբելեանի օրը, երբ երախտագէտ ազգը մի առ մի կը յիշէ մեզ մատուցած բոլոր Մխիթարեանների ծառայութիւնները, թող ներելի լինի ինձ կրկնելու մի բան՝ «գիտուն, թող գիրքը, ժամ չէ կարդալու...»։

Հնութեան փոշին թափելով, մոռացութիւնից փրկելով անուններ, գործեր, Մխիթարեանները իրաւամբ վաստակել են յայտնի և մեծ անուն։ Բայց ում շատ է տրված, շատ էլ կը պահանջվի։ Իսկ Մխիթարեաններին տրված է շատ, և ազգը, թշուառ ազգը իրաւունք ունի նրանցից պահանջելու շատ... Նրանց բոլոր գործերը դարձել են պատմութիւն և այդ պատմութեան երկար էջերը չեն լուսաւորում այժմ հայ մտքեր և չեն տաքացնում հայ սրտեր... Ինչքան էլ գեղեցիկ լինի պատմութիւնը, նրանով մենք չենք ապրում և չենք փրկվի։ Ունենք առօրեայ և ծանր հոգսեր, դարդեր։ Մենք կասենք՝ արժանապատիւ, ազնիւ հայրեր, դուք օժտված էք տաղանդով, գիտութիւնով. ճար արէք մեր դարդերին. մենք կասենք՝ «գիտուն, թող գիրքը, ժամ չէ կարդալու»...

Մխիթարեաններին վիճակված էր մեծ դեր խաղալ մեր հայկական կեանքում։ Արիւնկզակ կարմիր սուլթանի դառն օրերին՝ մեր կոտորածների ժամանակ և ամեն մի հայ ճգնաժա-

մին Մխիթարեանները կարող են իրանց զօրեղ ձայնը բարձրացնել հայ դատը պաշտպանելու համար։ Բաշ գիտենալով Եւրոպայի լեզուները, նրանք հեշտ կարող էին պատրաստել Եւրոպայի հասարակական կարծիքը, գրաւել, ցնցել եւրոպացիների համակրութիւնը դէպի հայը, լուսաբանել, պարզել հայկական հարցը Թիւրքիայում, Պարսկաստանում, Ռուսաստանում։ Մխիթարեանները այդ կողմից սառնասիրտ վկաներ մնացին մեր ցաւերին, մեր հալածանքներին, մեր կոտորածներին... հրատարակելով այդ կոտորածներից յետոյ մի որևիցէ «Գեղունի»՝ կարօտեալների օգտին... Այսօր՝ յոբելեանի օրը խունկի, զմուռսի հոտ միայն պիտի բուրէ Վիէննայում, պիտի լսվեն անվերջ գովասանքներ, ովսաննաներ... «Կեցցեն Մխիթարեանները» ասենք և մենք, բայց յուսանք, որ «գիտուն, թող գիրքը, ժամ չէ կարդալու» Գամառ-Քաթիպայի մեծ պատգամի իմաստը կը լսվի, կը հասկացվի նրանց կողմից։ Յուսանք, որ ազգը, որ կարող չէ ոչ ապրել և ոչ փրկվել պատմութիւնով, չի խաբվի այս անգամ և նրա ցանկութիւնը, որ այսուհետև Մխիթարեանները պաշտպանեն հայ դատը Եւրոպայի առաջ, կը լսվի, չի մոռացվի, կը կատարվի...

ՎԱՍԻԼԻՅ ՆԵՄԻՐՕՎԻՉ-ԴԱՆՉԵՆԿՕ ԵՒ ՊԻԷՐ ԼՕՏԻ

I

Վասիլիյ Նեմիրօվիչ-Դանչենկօ և... Պիէր Լօտի։

Առաջինը յայտնի ռուս գրող և հրապարակախօս, երկրորդը նոյնքան յայտնի ֆրանսիացի գրող և հրապարակախօս։

Երկուսի երեսներն էլ դարձած են այսօր մեզ՝ հայերիս։

Վասիլիյ Նեմիրօվիչ-Դանչենկօյի երեսը ժպտում է։ Բարի, ընկերական ժպտի մէջ մենք տեսնում ենք անկեղծ յարգանք, սէր, համակրութիւն և կարեկցութիւն։

Պիէր Լօտին նայում է մեզ խիստ, կոպիտ, թշնամաբար, չարը սրտում, կեղծը աչքերում։

Պիէր Լօտին, Ֆրանսիայի, գեղեցիկ Ֆրանսիայի տաղանդաւոր զաւակը...

Մենք գիտէինք, որ վաղուց Ֆրանսիայում մամուլը կաշառվում է։ Մենք աղքատ ենք, չունենք ոսկի կաշառելու, և ֆրանսիական մամուլը մեր դատը չը պաշտպանեց, չի պաշտպանի։

Մենք գիտէինք, որ Ֆրանսիան մի մեծ դրամանոց է դարձել, միշտ մտախոհ միայն իր միլիարդների համար։

Մենք գիտէինք, որ վաղուց Ֆրանսիան թողել է իր հին պատմական աւանդը՝ հովանաւորել Արևելքում խաչին և քրիստոնեաներին, և գիտէինք, որ նա երբէք մեզ չի օգնի...

Բայց և այնպէս մանկական օրերից մեր սրտերում խորը մտել է և բուն դրել մի առանձին սէր դէպի Ֆրանսիան և ֆրանսիացիները։

Որչափ մենք ցաւեցինք, երբ Ֆրանսիան պարտվեց 1870 թւին. որչափ ուրախանում էինք միշտ նրա բոլոր աջողութիւններով, յաղթութիւններով...

Այսօր այդ Ֆրանսիայի տաղանդաւոր զաւակներից մէկը՝ Պիէր Լօտին կանգնած է մեր առաջ։

Երկու անգամ նա խօսեց մեզ վրա և երկու անգամ ստեց։

Պաշտպանելով «Gil Blas»-ում Թիւրքիայի դատը, Լօտին

թիւրքիայի պարտութիւնների պատճառը տեսաւ հայ զինւորների վատութեան մէջ, թէև թիւրքերն իրանք ճանաչել են հայ զինւորների առաւելութիւնները։

Բայց ոճրագործները՝ թիւրքերն էին, զոհերը՝ հայերը, և Լօտին թիւրքերին պաշտպանելու համար չը քաշւեց յարձակողական դիրքը ընդունել հայերիս նկատմամբ։

Երկրորդ անգամ Պիէր Լօտին ասեց «Dail Tel.»-ի օգոստոսի 25-ի համարում։ Իբր թէ Ադրիանուպօլսում բօլգարական իշխանութիւնը վճռած է եղել, որ բօլգարները կոտորեն թիւրքերին, իսկ հայերը՝ յոյներին, և դրա համար բօլգարները զէնք էլ արդէն բաժանել են հայերին։

Մենք եղբայրակից բօլգարներին սիրել ենք և սիրում ենք և ուրախութեամբ նրանց հետ կը կռւենք թիւրքերի դէմ, բայց բօլգարները աւազակներ չեն և կոտորել խաղաղ թիւրքերին մտածած չեն։

Իսկ եթէ բօլգարները ցանկանային անգամ կոտորել թիւրքերին, մենք չէինք հետևի նրանց օրինակին, մանաւանդ որ յոյների թշնամիները մենք երբէք եղած չենք, սիրում ենք, յարգում ենք նրանց և միշտ ուրախանում նրանց յաղթութիւններով…

Ես կասէի՝ Աւետարանը մեզ այդ չէ սովորեցրել. Աւետարանի քարոզութիւնից հազար տարիներ առաջ, հեթանոսութեան և կռապաշտութեան դեռ գրկում, մենք խաղաղասէր տարր էինք միշտ, գողութիւններից, կողոպուտներից, աւազակութիւններից, սպանութիւններից հեռու, շատ հեռու իրան պահող։

Պատմութիւնը գեղեցիկ կերպով այդ է վկայում իր էջերում։

II

Ի՞նչ է ստացել թիւրքերից Պիէր Լօտին…

Յուդան երեսուն արծաթով վաճառեց իր Տիրոջ. խեղճ և փոքր Յուդան, որ զղջաց, յետ ձգեց երեսուն արծաթը, առաւ չուան և կախւեց, Յուդան, որի գերեզմանը անյայտ է մինչև այսօր…

Այնտեղ ինքը Տէրը, որ խաչ ելաւ, այստեղ մի ազգ, ամբողջ ազգ, թշուառ, անբախտ, անհետացող՝ շնորհիւ սիստեմատիկ ջարդերի, չարչարւող, մաշւող, ամեն մի օր կաթիլ-կաթիլ

արիւն վաթող և ամեն օր իր Գողգոթայի գլխին խաչ ելնող…

Ի՞նչ պէտք է ստանալ, որ ուրանալ այդ բոլոր ոճիրները և սխրագործութիւնները։

Ի՞նչ պիտի ստանար Պիէր Լօտին, որ իր աստուածային տաղանդը, հանճարը ծառայեցնէր թիւրքերի և քիւրդերի անվերջ ոճիրները արդարացնելու, մաքրելու ծանր և կեղտոտ գործին։

III

Եւ մինչդեռ Պիէր Լօտին անամօթ թքում է մեր յոգնած, քրտնած ճակատին և անխիղճ խփում մեր անվերջ արտասուքներից թրջւած թշերին, յանկարծ խօսում է Նեմիրօվիչ-Դանչենկօն «Рус. Сл.»-ի 263-դ համարում «Клевета на смарку» ուշագրաւ յօդուածում։

Նա չէ խօսում, նա երգում է մի գեղեցիկ, մի սիրուն, մի սփոփիչ երգ, որ հանգստացնում է մեր սրտերի ցաւերը, դարդերը և տալիս է առատ յոյս շնչելու, ապրելու, աշխատելու։

Եւ ինչ սիրուն լեզու։

Մենք գիտենք այդ լեզուն, ընտելացած ենք, սիրում ենք։

Պուշկին, Գօգօլ, Տօլստօյ, Տուրգենէվ, Դօստօեվսկիյ, Չեխօվ, Գերցեն, Գրանօվսկիյ, Նեմիրօվիչ-Դանչենկօ և այլն, յայտնի ռուս գրողներ, հրապարակախօսներ, որ մենք իւրացրել ենք, սիրել ենք և չենք մոռացել և չենք ուրացել և կամ դաւաճանել անգամ ցուրտ, դաժան Վելիչկօյի և Սուվօրինի օրերին, երբ ցեխ չէր մնում, որ չը քցեն մեր երեսներին, այնպէս՝ ինչպէս անում է այժմ ակադեմիկոս Պիէր Լօտին…

Մենք յափշտակւած լսում ենք Նեմիրօվիչ-Դանչենկօյի անաչառ, սուրբ խօսքերը, որոնք ասպեղանի են մեր վէրքերի համար. այրում են այդ խօսքերը մեր յոգնած, մաշւած սրտերը և մեծ սարեր գլորում, այն մեծ սարերը, որոնք բաժանում են ազգեր, ցանում են նրանց մէջ փոխադարձ ատելութիւն, քէն և ոխ։ Նրա երգի մէջ լսւում է մի հրաշալի մեղեդի՝ որ ազգերը եղբայրներ են, այն մեղեդին, որ մենք հպարտութեամբ մերն ենք անւանում, որովհետև վաղուց հայ մամուլը, հայ գրողը, հայ հրապարակախօսը գրչով և գործով քարոզել է բոլոր հարևան ազգերի համերաշխութիւն, փոխադարձ սէր, համա-

կրանք և միաբան աշխատանք մի հայրենիքի օգտի համար, ուր ապրում ենք դարեր և վայելում վստահութիւն և հովանաւորութիւն։

IV

Ի՞նչ է ստացել Թիւրքերից Պիէր Լոտին։

Յուդան երեսուն արծաթով վաճառեց իր Տիրոջը․ խեղճ և փոքր Յուդան, որ զղջաց, յետ ձգեց երեսուն արծաթը, առաւ չուան և կախվեց․ Յուդան, որի գերեզմանը անյայտ է մինչև այսօր…

Այժմ հրապարակ են դուրս գալիս մեծ Յուդաներ և վաճառում են փոքր ազգերին․ այդ արեց գեղեցիկ Ֆրանսիայի տաղանդաւոր զաւակներից մէկը՝ ակադեմիայի անդամ Պիէր Լոտին…

Երեսուն արծաթ չէ, որ ստանում են մեծ Յուդաները, նրանք չեն զղջայ և կառնեն չուաններ մեզ պէս անպաշտպան, առանց տէր և տիրականի ազգերին Թիւրքերի ու քիւրդերի հաճոյքներին կախելու համար, և երբ նրանք կը մեռնեն, նրանց գերեզմանները կը զարդարվեն հարուստ յուշարձաններով, և այդ յուշարձանների սուտ խօսքերը կը պատմեն յետնորդներին այն սուտ գործերը, որ հանգուցեալ մեծ Յուդաները արել են՝ գեղեցիկ Ֆրանսիայի պատիւը պահպանելու համար, Ֆրանսիայի պատիւը…

Նրա վրա ես կը թափէի միայն մի կաթիլ հայ արիւն, որ Պիէր Լոտիները և նրանց գեղեցիկ Ֆրանսիան իմանային վերջապէս, որ մեր հայերիս արիւնն էլ կարմիր է…

Այդ կարմիր արիւնը թափվում է կաթիլ կաթիլ դարեր, ամեն օր, ամեն ժամ՝ գող-աւազակ Թիւրքերի և քիւրդերի ձեռքերով, և մի խաղաղասէր և տաղանդաւոր ազգ, որ չորրորդ դարում դեռ ընդունել է քրիստոնէութիւն, այսօր չքանում է, մեռնում է, անհետանում է քաղաքակիրթ Եւրոպայի աչքերի տակ՝ ի փառս, ի պատիւ և յուրախութիւն Պիէր Լոտիների…

Թափվում է դարեր այդ սուրբ արիւնը, իսկ զանազան տաղանդաւոր և առանց տաղանդի Պիէր Լոտիները իրանց կաշառված գրիչներով ստում են, բամբասում են, զրպարտում են մեզ և ողջ աշխարհի առաջ աշխատում են սևացնել մեր կարմիր արիւնը…

Մեծ Յուդաները…

V

Վասիլիյ Նեմիրովիչ-Դանչենկո և… Պիէր Լոտի։

Երկու յայտնի գրողներ և հրապարակախօսներ, երկու տաղանդաւոր ազգերի տաղանդաւոր զաւակներ դարձրել են իրանց երեսները մեր վրա։

Նեմիրովիչ-Դանչենկոն մեզ ժպտում է բարի, ընկերական ժպտով, որի մէջ մենք տեսնում ենք անկեղծ յարգանք, սէր, համակրութիւն և կարեկցութիւն։

Նա չէ խօսում, նա երգում է, և մենք մոռացած մեր դարաւոր դարդերը, ցաւերը՝ խոնարհում ենք մեր գլուխները նրա առաջ։

Նա մեր ուսուցիչն է, նա մեզ սիրում է և սիրով հրաւիրում է ապրել, աշխատել, մտնել զարգացած ազգերի շարքը…

Պիէր Լոտին չէ խօսում․ նա մեզ հայհոյում, նա մեզ մատնում է, վաճառում է, ինչպէս Յուդան իր Տիրոջը…

Մեր խոր արհամարհանքը Պիէր Լոտիներին, որ փորում են ազգերի միջև անդունդներ, որ պիղծ ոճիրները սրբութիւն են քարոզում, իսկ սրբութիւնը ցեխը գլորում, տրորում և աշխատում ապացուցանել քաղաքակիրթ եւրոպացիներին, թէ հայի արիւնը կարմիր չէ, այլ սև է, սև է, ինչպէս Լոտիների խիղճը և հոգին…

Մեծ Յուդաներ… Մեծ Յուդաներ…

ՎԱՍԻԼԻՅ ՆԵՄԻՐՕՎԻՉ-ԴԱՆՉԵՆԿՕՅԻ ՆԱ-ՄԱԿԸ՝ Գ. ԶԱԼԽՈՒՇԵԱՆԻՆ

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, «Մշակի» անցեալ համարներից մէկում տպել էինք Գր. Զալխուշեանի մի յօդուածը Պիեր Լօտիի և Վ. Նեմիրօվիչ-Դանչենկօյի բռնած դիրքերի մասին հայկական հարցի վերաբերեալ։

Նեմիրօվիչ-Դանչենկօ վերջերս ուղղել է մի նամակ Գ. Զալխուշեանին՝ սրա վերոյիշեալ յօդուածի առիթով։

Բերում ենք այդ հետաքրքրական նամակից մի քանի կէտեր.

«Թանգագին և մեծարգոյ ընկեր. ես շատ շնորհակալ եմ՝ այն քանի մի սիրուն տողերի համար, որ տպել եք «Մշակում»... Իմ հայ ազգի նկատմամբ տածած համակրութիւնը միայն մի հարկ է ճշմարտութեան։ Առանձնապէս մօտ է իմ սրտին այդ ազգը, որովհետև ես ինքս էլ կէս-հայ եմ։ Իմ մայրը հօ - հայուհի—Եղուբեանն է»։

ՄԻ ՀԱՄԲՈՅՐ, ՄԻԱՅՆ ՄԻ ՋԵՐՄ ՀԱՄԲՈՅՐ

Վերջին, տասը տարիները հեռու Պարիզից մեզ գալիս էր անդադար և ականջներիս ախորժ և սիրալիր հնչում մի զանգակի ղօղանջիւն։

Հասարակ ղօղանջիւն չէր այդ. նրա մէջ կար մի գերբնական ոյժ, որ զարթեցնում էր մեր քնած խիղճը, այրում մեր ուղեղը և յիշեցնում մեր պարտքը։

Պարտքը դէպի ընկածները, տառապեալները, դաժան մըթնոլորտում խեղդվողները և մեռնողները, դէպի զոհերը, դէպի բոլոր ազգերի զոհերը...

Ժամկոչը Պրէսանսէն էր, մի հրապարակախօս, որ գիտէր շարժել խիղճ ու գութ և պաշտպանել մարդկութիւնը գազանութիւններից և վայրենութիւնից։

Եթէ աշխարհի մի անկիւնում կատարվում էր չարութիւն, եթէ աշխարհի մի անկիւնում մոռացվում էր մարդկութիւն, եթէ աշխարհի մի անկիւնում մարդկային իրաւունքները ոտնակոխ էին լինում և բռնաբարվում, Պրէսանսէն, արի ժամկոչը, բարձրանում էր իր զանգակատունը, և լսվում էր նրա զանգակի ղօղանջիւնը, լսվում էր ուժեղ, համարձակ, անվախ...

Մարդկային իրաւունք, մարդկային իրաւունքներ. ահա ինչ էր նա զանգահարում։

Եւ այդ քաղցրահնչիւն ղօղանջիւնը ոյժ էր տալիս փոքրերին, տկարներին և քունը փախցնում բռնակալների և ուժեղների։ Նա հովանաւորում էր զոհերին և շանթեր էր արձակում հարստահարիչների գլուխներին։

Առաջին անգամ, երբ Սատանայի կղզում անարդար բանտարկված էր Դրէյֆուսը, ողջ աշխարհը Զօլայի կողքին տեսաւ Պրէսանսէին։

Դրէյֆուսը արդարացաւ, վերադարձաւ Սատանայի կղզուց և վայելեց ազատ Ֆրանսիայի ազատ զաւակի բոլոր իրաւունքները։

Յանկարծ ողջ Թիւրքիան մի սատանայի աշխարհ դարձաւ հայութեան համար, և երկու միլիոն հայերը՝ երկու միլիոն Դրէյֆուսներ անարդար բանտարկված...

Զարմացած Պրէսանսէն տեսաւ, որ ողջ հայ ազգը ծով քրտինք է, ծով արտասուք և ծով արիւն, որ հայը խեղդվում է, և չէ լսվում նրա ճիչը անգամ՝ շնորհիւ կաշառված և չը կաշառված մեծ և փոքր Պիէր Լօտիների…

Ամաչեց Պրէսանսէն Ֆրանսիայի պատուի համար։

Պղտորվեց նրա հոգին տեսնելով մարդ-գազանների բռնաբարումները։

Նա բարձրացաւ իր զանգակատունը և զանգահարեց…

Երբէք նրա զանգակը այդպէս սիրալիր, ախորժ և անուշ չէր հնչած, երբէք նրա ղօղանջիւնը այնքան ուժեղ և համարձակ եղած չէր…

Ղօղանջիւնը զարթեցնում էր եւրօպացիների քնած խիղճը, շարժում նրանց գութը դէպի մեզ և հետաքրքրութիւն էր յարուցանում հայկական հարցի շուրջը։

Մարդկային իրաւունքներ, հայկական հարց. ահա ինչ էր զանգահարում ազնիւ, անխոնջ, արի ու կորիճ ժամկոչը։

Այսօր նա իջնում է իր զանգակատնից։

Լռեց նրա զանգակը։

Այլևս չի լսվի նրա կոչը՝ մարդկային իրաւունքներ, հայկական հարց…

Հայկական հարց…

Դրէյֆուսը արդարացաւ, վերադարձաւ Սատանայի կղզուց և վայելեց ազատ Ֆրանսիայի ազատ զաւակի բոլոր իրաւունքները։

Իսկ մե՞նք…

Հայկական հարց…

Ողջ Թիւրքիան մի սատանայի աշխարհ մեզ համար դարձած, երկու միլիօն ազգը մի միլիօն դարձած, այն էլ՝ միլիօն Դրէյֆուսներ բանտարկված։

Իսկ ժամկո՞չը…

Նա իջնում է իր զանգակատնից, որ երբէք չը բարձրանայ։ Նրա զանգակի ղօղանջիւնը դադարում է առ միշտ…

Խեղճ աչքերը յաւիտեան փակած, լայն ճակատը դեղնած, սառացած… ծաղիկներ, պսակներ, ճառեր… և արդար զոհերի արդար արտասուքներ…

Ի՞նչ ասեմ։ Ի՞նչ տամ։

Մի համբոյր, միայն մի ջերմ համբոյր քո լայն, քրտնաջան, ախոռ, արդէն դեղնած, սառած ճակատիդ, արի ժամկոչ, կորիճ Պրէսանսէ…

1913

ՀԱՒԱՏՈՒՄ ԵՆՔ, ԳԱԲՐԻԷԼ-ՋԱՆ, ՀԱՒԱՏՈՒՄ ԵՆՔ…

Մեծ մարդու դագաղի առաջ տեղ չը կայ արտասուքի։

Արտասուքը նշանակում է թուլութիւն, յուսահատութիւն ցաւ և կսկիծ։

Գաբրիէլ Սունդուկեանը չէր ընդունում ոչ թուլութիւն ոչ յուսահատութիւն և վաղուց մեզ համար դառած էր մի կենդանի ոյժ, մի կենդանի յոյս։ Մենք հաւատում էինք, որովհետև Գաբրիէլ-Ջանը միշտ ուրախ, միշտ ժպիտը երեսին, գլուխը բարձրացրած, մեզ հետ էր։

Մենք հաւատում էինք…

Ես յիշում եմ 1886 թիւը։ Գամառ-Քաթիպան ծանօթացրեց ինձ հանգուցեալ դրամատուրգի հետ։ Նա ինձ հիւրասիրեց իր մօտ և ցոյց տուեց սէր, և ես իսկոյն հասկացայ, որ իմ առաջը կանգնած է մեծ մարդ ասէր։ Համեստութեամբ խօսելով իր գրուածքների մասին, նա գովում էր Գամառ-Քաթիպային, որին սիրահար էր։ Խօսում էր համոզված, հաւատով, և նոյն համոզմունքը, նոյն հաւատը ես նկատեցի 20 տարուց յետոյ։ Կարծես թէ նա կաղնի էր մեր մէջ կանգնած. հողմը անցնում էր, փչում, իսկ նա կանգնած էր անվրդով, մինչև կեանքի վերջին րօպէն հաւատալով իր ազգին…

Սրտով, հոգով երիտասարդ, հասակով արդէն ծերունի, համարեա 90 տարեկան, նա մտածում էր, ցաւում էր մեզ համար, և իր կեանքով, իր օրինակով, նա հաստատեց այնպէս գեղեցիկ, որ հայը իրաւունք ունի ապրելու, գործելու և մեծ ազգերի կարգը մտնելու…

Մեծ մարդու դագաղի առաջ տեղ չը կայ արտասուքի։

Գաբրիէլ Սունդուկեանը մեր փառքերից մինն է։ Մենք կարող ենք նրանով պարծենալ…

Սունդուկեանը մերն է, մերը։

Փառք, պարծանք և… արտասուք, անտեղի արտասուք…

Բայց ինչո՞ւ Գաբրիէլ Սունդուկեանի կորուստը կարդալիս դառն ցաւ է զգում սիրտս, խեղդում է կոկորդս։ Ինչո՞ւ ես

յուզվում եմ, տողերը խառնվում են իրար, դժուար զանազանվում, և արտասուքս կաթիլ-կաթիլ ընկնում են ու թրջում «Մշակի» էջերը…

Որովհետև կարդալով Նրա կտակը, ես պարզ զգում եմ, որ մեծ մարդը «գնաց», «գնաց էն հանգի տեղ, փուրղանց, ինչ աշխարքը սուրդծվիլ է, ջեր օչով չէ յիդ էկի»։

«Ջեր օչով չէ յիդ էկի»…

Գաբրէլ-Ջանն էլ յիդ չի գայ, և մենք չենք տեսնի կաղնին մեր մէջ յուսահատութեան դառն րոպէներին…

Նա չէ ուզում «ամփոփան, ուրիշ ցերէմօնիէք»։ «Ութ համալ ու ութ կլնտօ միձրեցէք, հիրթով ծափ ալես կու թողնին ինձ»։ Գուցէ այդ ութը կլնտօների մէջ «զուրթ Պէպօ էլ ռաստ գայ»։

«… Էտ խիստ մինձ պատիւ կուլի իմ Պէպօի համա»…

Որպիսի՜ նուրբ զգացմունք, մեծ սիրտ և մեծ հոգի…

«Մնաք բարովի» ժամանակ, երբ աշխարհից «գնում է» Գաբրիէլ-Ջանը, նա մտածում է մի բան, որ «հաշա-ուտելը (ուրացութիւնը) մինձ ամութ բան է մարթու համա», և երազում է գուցէ ազգը հեռու ապագայում կը դնի արձան Պէպօյի վրա…

Եւ այդ «Մնաք բարովները»…

«Թանգագին Սօֆի ջան, զաւակնիր, բարեկամնիր» և… «Մնաք բարով, սիրելի մարթիք, ինչ ակլի, ցիղի ու հաւտի էլ ըլիք»…

Ահա մեծ մարդու մեծ գաղափարը, մեծ կտակը…

«Մնաս բարով, իմ սիրելի ու պաշտելի ազգ։ Աստուած վաթանիդ արժանի անէ»։ Վաթանիդ, աւազակներից ապականված, կողոպտված վաթանիդ, որը մի հեռաւոր գեղեցիկ աստղի նման միշտ պլպլում էր Գաբրիէլ-Ջանին։

Եւ այդ վերջին խօսքերը, որը կարդալուց առաջ քանիցս սրբում ես աչքերդ, որովհետև արտասուքը ինքը թափվում է աղբիւրի պէս՝

«Դիփունիդ սէրը սրտումս խուրը թաղած, տանում իմ հիտս»։

Այո, բոլորիս սէրը՝ խորը սրտումդ պահած, դու տանում ես հետդ, հեռանալով մեզանից։

Մենք հաւատում ենք, հաւատում ենք, Գաբրիէլ-Ջան։

ԻՄ ՊՍԱԿԸ ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

Հեռու հայրենիքից, կարօտ հայրենիքից, պանդուխտ, դեռ երիտասարդ հասակում մեռաւ Սիմէօն Զաւարեանը. մեռաւ և իր հետը տարաւ իր խոհերը, իր յոյզերը, որոնք մեր ազգի խոհերն էին և յոյզերը…

Վերջին 25 տարվայ ընթացքում նա ամենաաչքի ընկնող մեր գործիչներից մէկն էր։

Դեռ վաղ է թարմ գերեզմանի առաջ քննադատել Ս. Զաւարեանին, որովհետև նա պատմական անձ է. պատմութիւնը ժամանակով կանէ իր արդար վճիռը։

Մի բան միայն կարող ենք ասել այսօր համարձակ. Սիմէօն Զաւարեանի անկեղծութիւնը, ազնուութիւնը, չիտակութիւնը վեր են որևիցէ կասկածից։

Սիմէօն Զաւարեանը գաղափարական էր, գաղափարական էր ոչ միայն գրչով, խօսքով, քարոզով, այլ և գործով, ծանր, դաժան գործով, որին նա ծառայում էր հոգով, սրտով, իր անձը չը խնայելով…

Եւ նա գնաց զոհ իր գործին, հեռացաւ այն միջավայրից, ուր նրա ներկայութիւնը այնքան պէտք էր, հեռացաւ այն ժողովրդից, որը այնքան կարօտ էր նրա խօսքին, նրա գործին, և ահա պանդուխտ, հեռու հայրենիքից, ժողովրդից, հեռու ամեն բանից, որը այնքան սիրում էր, նա մեռաւ, մաշված սրտով…

Նրա գաղափարը վեհ էր՝ ժողովրդի համար և ժողովրդի հետ։

Ժողովրդի համար և ժողովրդի հետ ասելով, նա ճանաչում էր, սիրում էր, յարգում էր և ծառայում հայ ժողովրդին. նա չէր ամաչում հայ լինելուց, և մինչդեռ շատ շատերը ժողովուրդ ասելով մարդկութիւն են հասկանում և ամեն տեսակ ջանքեր անում, որպէսզի ծածկեն, թաքցնեն և ուրանան իրանց հայութիւնը, Սիմէօն Զաւարեանը հայ ծնվեց, հայ ապրեց, հայ գործեց և հայ մեռաւ, միշտ մտածելով հայերիս համար։

Սիմէօն Զաւարեանը գաղափարական էր և նրա գաղափարները վառված էին իբրև աստղեր կապոյտ երկնքում՝ նրա սրտի մէջ և տանում էին նրան առաջ, միշտ առաջ, դէպի կռիւ ժողովրդի հետ և ժողովրդի համար, հայ ժողովրդի հետ և հայ ժողովրդի համար։

Եւ այսօր մենք հայերս անխտիր, չը նայելով ոչ մի կուսակցութեան, կանգնած ենք գլուխներս բաց, տխուր՝ սիրելի գերեզմանի առաջ։

Վհատութիւն չէ, որ տիրում է մեր սրտերին…

Սիմէօն Զաւարեանները անպակաս են մեզանում։

Դա նշանակում է, որ մեր ազգը իրաւունք ունի ապրելու։

Թող անպակաս լինեն Զաւարեանները մեզանում, որ ազգը ապրի, մնայ և աճի…

Հեռու հայրենիքից, կարօտ հայրենիքից, պանդուխտ մեռաւ Սիմէօն Զաւարեանը։ Բայց այդ հայրենիքը միթէ կարօտ չէր ևս Սիմէօն Զաւարեանին։

Կարօտ էր, կարօտ…

Զաւարեան կարօտ էր մեզանից և մենք կարօտ էինք նրանից…

Այնպէս էլ չը տեսանք իրար…

Բայց վհատութիւնը հեռու մեզանից։ Քաջերի գերեզմանների առաջ արգելված է ողբալ և լալ։ Գաղափարական գործիչները կարժեն քաջերին և քաջերից էլ մեծ են և վեր։

Խոնարհեցէք գլուխներդ Սիմէօն Զաւարեանի գերեզմանի առաջ և ամուր պահեցէք նրա յիշատակը ձեր սրտերում։

Պահել գաղափարականի յիշատակը՝ նշանակում է հետևել նրան, նմանել նրան…

Հետևենք նրան, նմանենք նրան և վառ պահենք մեր սրտերում նրա պատգամը՝ ժողովրդի հետ և ժողովրդի համար, իմա հայ ժողովրդի հետ և հայ ժողովրդի համար…

1913

ՄԻ ՊՍԱԿ ԱՆԹԱՌԱՄ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՃԱԿԱՏԻՆ

Կարծես փայտով գլխիս խփեցին։ Կարդացի երկու տողերը, որ խմբագրութիւնը ինձ հեռագրել էր, և գունատ, յուզված, ես զգացի սրտի կսկիծ, կարծես մեռնողը իմ հայրս կամ եղբայրս լինէր։

Ալէքսանդր Քալանթարը չը կայ։ Կորուստը անփոխարինելի է։ Երէկ մեռաւ Զաւարեանը, այսօր Քալանթարը, երկու ազնիւ, շիտակ գործիչներ, և սև սուգը պատում է հայ սրտերին։

Հիները գնում են, անդարձ գնում, իսկ նորերը չեն գալիս. նորերը այլասերված են, ունեն ուրիշ հոգսեր, ցաւեր, դարդեր և ուրիշ գաղափարների են երկրպագում։

Չը կայ Քալանթարը։ Կարծես ես նրան տեսնում եմ իմ առաջ կանգնած, դէմքը կատարեալ բարութիւն, միշտ կորեկտ, միշտ ներողամիտ դէպի ուրիշի սխալը, յանցանքը, եռանդոտ, միշտ գործող, հրապարակախօս և գիտնական…

Ռուսաց յեղափոխութիւնը առանձնապէս ազդեց հայերիս վրան։ Գլուխներս կորցրինք։ Հին աստուածներին մոռացանք, ուրացանք։ Նոր աստուածներ, նոր ձգտումներ, նոր հրապարակութիւններ սունկերի նման աճող, և յանկարծ «Մշակը» դարձաւ «յետադէմ», «կղերական» և այլն։ Ինչու։ «Մշակը» մնացել էր նոյնը, ինչ որ էր Գր. Արծրունու օրով, լայն հայեացքներով, բայց հայ թերթ. և դա բաւական էր, որ «Մշակը» ճանաչվէր յետադէմ։

Ալէքսանդր Քալանթարը գլուխը չը կորցրեց, և հանդուցեալ Տէր-Մարկոսեանի և կենդանի Առաքելեանի հետ ձեռքձեռքի բռնած ամուր պահեց այն դրօշը, որ ստացել էր Արծրունու ձեռքից. նա հաւատարիմ մնաց Արծրունու գաղափարներին…

Ա՞յժմ։ Մենք բոլորս դառնում ենք մեր հին աստուածներին, մեր գեղեցիկ, անմահ գաղափարներին։

Եւ Ալէքսանդր Քալանթարը մահից առաջ բաղդաւորու-

Թ՞ւն ունեցաւ տեսնելու, որ այն հոսանքը, որը պիտի ոչընչացնէր, տանէր հայութիւնը, չքացաւ: Գլուխներ կորցնողները խելքի եկան: Բայց կոիւը մեծ էր, դժուար: Պատմութիւնը կը տայ հանգուցեալին նրա արժանի տեղը...

Հիները գնում են, անդարձ գնում:

Գնաց և պաշտելի Բալանթարը:

Հիները գնում են իրար ետևից, կարծես փայլուն աստղեր, որ ընկնում են հայ երկնքից:

Ապա ո՞ւր են Նորերը: Ո՞ւր են երիտասարդները: Ո՞վ պիտի փոխարինէ հայի կորուստը: Աղքատ ենք, քիչ ենք թւով, տաղանդով, գիտութեամբ: Մեր կորուստը անփոխարինելի է և զգալի ուրեմն բոլորիս համար:

Այո, հիները գնում են, գնում են իրար ետևից անդարձ. Սունդուկեան, Տէր-Մարկոսեան, Զաւարեան, Բալանթար՝ գրեթէ մի տարվայ միջոցում:

Տեղները մնում են պարապ, դատարկ:

Չը կան նորերը: Ո՞ւր են նորերը:

Այսօր թէ վաղը հերթը և մեզ կը գայ, եղբայր Համբարձում. արդէն վաղուց մենք հասել ենք մեր Գողգոթան և իջնում ենք ցած: Ահա արդէն կորցրինք շատ ազնիւ ընկերներ: Գնաց և պաշտելի, սիրելի, յարգելի Ալէքսանդրը: Կարծես ամայութիւն է մեր շուրջը, ցուրտ և խոնաւ, որոնք թափանցում են մինչև մեր ոսկորները: Մրսում ենք, մրսում, որովհետև նայում ենք մեր չորս կողմերը և տեսնում ենք մի անապատ. գնում են, գնում են մէկը միւսի ետևից անդարձ մեր բարեկամները, իսկ նորերը չեն գալիս, չը կան:

Ո՞ւր են նորերը:

Պիտի գա՞ն:

Ե՞րբ...

Արդեօք չե՞ն ուշանայ...

ՄՆԱՍ ԲԱՐԵԱՒ, ԲԱՐԵԿԱՄ

(Գրիգոր Խալաթեանի յիշատակին)

Մնաս բարեաւ, բարեկամ... Ուշացրի իմ պսակը քո դագաղի վրա... Վիշտս մեծ էր, կսկիծս խոր... Ամենագեղեցիկ և զգացված խօսքերը գերեզմանի առաջ՝ լոկ խօսքեր են, որ չեն թեթևացնում, չեն մխիթարում և սփոփում. Նրանք նման են այն չոր հողին, որ մեզ տալիս է քահանան՝ փոս ձգելու համար... Թէ հայ, թէ ռուս լրագիրներում շատ գրվեց քո մասին: Ողբում են քեզ՝ ուսուցչապետից: Գրում են քո աշխատանքների մասին, քննադատում, գովում քո 30-ամեայ անդուլ և օգտակար գործունէութիւնը: Ես կարդում եմ այդ գովասանքները և շտապում եմ իմ պսակը ես դնել քո դագաղի վրա: Լաւ է անագան, քան ոչ երբէք: Լաւ է անագան... որովհետև ինձ համար դու չես եղել ուսուցչապետ և ոչ գիտնական: Դու եղել ես ինձ համար ընկեր, իսկ բոլորիս համար հայ, հայ՝ մտքով, խօսքով, գործով:

Դու միշտ երազում էիր այն գեղեցիկ երազը՝ տեսնել հայկին ապահով, երջանիկ, ազատ տառապանքներից և հալածանքներից, որ այնչափ թանգ է բոլորիս սրտերին... Բայց դու միայն չէիր երազում, դու աշխատում էիր իրականացնել այդ երազը: Դու հաւատում էիր մեր ապագային, մեր լաւ վիճակին և գիտէիր, որ մենք անմիաբան ենք, նախանձոտ: Քո նպատակը միշտ եղել է մեզ ժողովել, միացնել, ձուլել, դարձնել ույժ, որ միասին մտածենք, գործենք, միասին ուրախանանք, միասին լանք, թեթևացնելով հայի ծով-վիշտը: Կեանքը այնքան ծանր և դառն չէ, եթէ մենք միայնակ չենք, եթէ մենք ունենք նեցուկ, եթէ մեր կողքին կանգնած է մեր կարեկից, մտերիմ ընկերը:

—Ձեռք տանք իրար, միասին գործենք,—քարոզում էիր դու և ներշնչում էիր մեզ հաւատ գործելու, հաւատ տապալելու բոլոր արգելքները, հաւատ յաղթելու...

Դու կազմում էիր ընկերութիւններ...

Մնաս բարեաւ, բարեկամ...

Ես ճանաչեցի քեզ Լազարեան ճեմարանի երկրորդ դասարանից։ Դու հետաքրքրվում էիր մեզանով և՝ բարձր դասարանի աշակերտ՝ դու գալիս էիր, խօսում էիր մեզ հետ իբրև բարեկամ, ընկեր և պատմում էիր մեզ քո գեղեցիկ երազները…

Յետոյ դու դառար ուսանող. նոյն սէրը գործելու, նոյն ոյժը, նոյն եռանդը մենք տեսնում էինք քո մէջ։

Ահա դառանք և մենք ուսանողներ…

Դու հրաւիրում էիր մեզ քո մօտ, դու մեզ ժողովում էիր, միացնում։ Մենք ընտրում էինք քեզ նախագահ, և դու խօսում էիր, խօսում անվերջ… Նոր բաներ չէին քո խօսքերը. բայց ինչո՞ւ այդ խօսքերը դեռ լսվում են իմ ականջին, ինձ սիրելի են և անմոռանալի… Ինչո՞ւ… Համարեա 30 տարուց յետոյ ես նորից կարծես այսօր տեսնում եմ քո երիտասարդ, գեղեցիկ, ազնիւ դէմքդ, վառվռուն աչքերդ, լսում եմ քո կրակոտ, համոզիչ, ուժեղ կոչդ, որ այնպէս այրում էր մեր սրտերը…

Հարուստ չէինք։ Ամեն մէկս տալիս էր ամիսը 35 կոպէկ։ Կազմվում էր մի գումար։ Օգնում էինք մեր աղքատ ընկերներին, որ չոր, ցամաք հաց ուտելով չէին յուսահատվում և ինքնասպանութեամբ կեանքի կռուից փախչում, ինչպէս դժբաղդաբար այժմ, երբ կարծես երիտասարդը կեանքի ասպարէզ չը մտած՝ բեզարած է կեանքից…

Յետոյ մտար կեանքի ասպարէզը գործելու, և քո կեանքը դառաւ աշխատանք։ Եթէ Մոսկվայի հայ կեանքը եռում էր մի անկիւնում, դու այնտեղ էիր քո սիրով, քո եռանդով…

Դու ազնիւ գործիչ էիր և հայ, այո, հայ և այն ժամանակ, երբ շատերը մեզանից կոպէկանոց բրօշիւրներ կարդալուց յետոյ՝ ամաչում էին հայ լինել և ուրանում էին հայութիւնը և յանուն ընդհանուրի իբր շահերին փոքրոգի վաճառում, դաւաճանում և թքում իրանց օրօրոցները…

Մնաս բարեաւ, բարի և ազնիւ ընկեր, հանգիստ ոսկորներիդ. վաղ դու մեռար և ունէիր դեռ շատ բան անելու, բայց և այնպէս դու լիովին և սուրբ կատարեցիր քո պարտքը դէպի քո խեղճ ազգը։ Թող այդ մեր համոզմունքը լինի և մնայ մի անթառամ պսակ քո անմոռաց և բարի յիշատակին…

Քո ազնիւ կոչը կը մնայ կենդանի մեր սրտերում…

Մենք՝ քո ընկերներդ, կաշխատենք հատուցանել մեր ազգին մեր պարտքը…

Լսո՞ւմ էք, իմ սիրելի ընկերներ, ո՞ւր էք, ո՞ր անկիւններում…

Մնաս բարեաւ, սիրելի և ազնիւ բարեկամ…

ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԻՐՈՅ ԵՐԳԸ

Նոր-Նախիջևանի քաղաքային թատրօնում, սև շորեր հագած, վեղար գլուխը, բեմի վրա կանգնած դասախօսում է Գարեգին վարդապետը։

Հայր-սուրբը շարունակ երեք ժամեր խօսում է հայ գեղարուեստի բնաւորութեան, նրա նշանակութեան և պատմութեան մասին, առաջ է բերում որոշ պրօբլեմներ հայ գեղարուեստի զանազան հարցերը լուծելու համար։

Սկզբից կարծես ամաչելով բեմից, քաշվելով ժողովրդի խուռն բազմութիւնից, կամաց, հանդարտ, բառեր որոնելով, յետոյ արդէն համարձակ, պերճախօս, ձայնը բարձրացնելով և վերջը ոգևորված, կրակոտ, հայր-սուրբը տանում է մեզ մի մոռացված, գեղեցիկ հայ ստեղծագործութեան աշխարհ. տանում է և ինքն իրան մոռանում…

Ես լսում եմ Գարեգին վարդապետին, բայց զարմանալի բան. մինչդեռ մոգական լապտերը ցոյց է տալիս գունաւոր պատկերներ, իսկ հայր-սուրբը փչելով փոշին հնութիւններից՝ լուսաբանում է նկարները, պատմում է մեր փառաւոր անցեալի մասին, ես տեսնում եմ յանկարծ սիրոյ ժպիտ, զգում եմ սիրոյ համբոյրներ և լսում եմ սիրոյ երգեր…

Հայր-սուրբը խօսել չը գիտէ, նա… երգում է…

Միայն սիրահարվածը կարող է այդպէս զգալ, խօսել, վերլուծել և… երգել…

Անշուշտ հայր-սուրբը սիրահարված է, և այն կինը, որին նա նուիրել է իրան ամբողջ մարմնով, մտքով, սրտով, հոգով, երբեք չի թառամի, չի ծերանայ, որովհետև նա չունի ծերութիւն, երբեք չի կորցնի իր հրապոյրը, տեսքը, գեղը, որովհետև նրա գեղեցկութիւնը գերբնական է…

Այդ կնոջ անունը՝ գիտութիւն է։

Գիտութիւն… Ոչ այն չոր, ցամաք գիտութիւնը, որ միայն վիճակված է ընտրեալներին, որ այնչափ դժուար մենք մար-

սում ենք, որից միշտ փախչում ենք՝ իբր ծանրութիւնից, բեռնից…

Գիտութիւն սիրահարի… մի գիտութիւն, որի լուրջ նիւթերը գեղեցիկ երգեր են դարձված բանաստեղծ-գիտնականի բերնում…

Եւ մեր հնութեան սիրահար Գարեգին վարդապետը այնքան սիրով, քնքուշ, նուրբ սիրով մատնանիշ է անում այս և այն կտորին, նկարին… Ամէն րոպէ նա հիանում է և զմայլում. ինչ հոյակապ նկար, որպիսի նուրբ ճաշակ… ազնիւ պատկեր… գեղեցիկ արտայայտութիւն գեղարուեստի…

Ոգևորութիւնը սկսում է կամաց-կամաց ազդել և մեզ վրա: Նկարները վաղուց ազատվել են հնութեան փոշուց և մէկը միւսի ետևից կենդանանում մեր առաջ. նկարները արդէն իրանք են խօսում և պատմում մեր անցած, գնացած, մոռացված և վատնված փառքի մասին…

Ահա և մենք ոգևորված և սիրահարված:

Սուրբ սէր:

Եթէ այդպիսի ժամերը շարունակվէին: Ինչո՞ւ այդպիսի ժամերը վերջանում են…

Հայ վարդապետի սիրոյ երգը շարունակվում է:

Ծառը արմատով է կանգնած, տունը՝ հիմքով: Հիմքը անցեալն է: Չը կայ ազգ և իրաւունք չունի ազգը ապրելու առանց անցեալի գիտակցութեան: Մեր անցեալը, մեր գեղարուեստի անցեալը հմայիչ է, գեղեցիկ, փառաւոր: Պէտք է ուսումնասիրել: Այդ ուսումնասիրութիւնը կը հաստատէ, թէ որչափ ստեղծագործ ազգ ենք մենք եղել, և միևնոյն ժամանակ ցոյց կը տայ մեր այժմեան գեղարուեստի նոր ուղիները: Բայց հայի գեղարուեստի հարուստ աշխարհը ոչնչանում է: Անձրևից, խոնաւութիւնից և մեր անփութութիւնից կորչում են մեր փառաւոր անցեալի գեղեցիկ հետքերը…

Սիրոյ երգը դադարում է: Բուռն ծափահարութիւններ:

Հայր-սուրբը՝ նիհար, յոգնած, կարծես ամաչելով բեմից, ժողովրդից, լուռ կանգնած է և ցածր խոնարհում է իր գլուխը: Նրա աչքերը այլևս չեն վառվում:

Ամբոխը ցրվում է… Ես սեղմում եմ ամուր հայր Գարեգինի ձեռքը և մտածում եմ, թէ արդեօք այն կրակը, որ այդպէս անշէջ վառված է նրա սրտում, չի՞ պիտի կրակէ և մեր սառած, քարացած սրտերը…

ՄԻ ԱՍՏՂ ԷԼ ՄԱՐԵՑ

Մի աստղ էլ մարեց հայի մութ երկնքից: Նա փայլում էր վաղուց՝ անդադրում իր առատ շողերով լուսաւորելով մեր խաւարը, կարծես լուսին էր և ոչ աստղ: Եւ ահա ընկաւ այդ աստղը միւսների ետևից, մարեց… Այդ աստղը Կոստանդին Խատիսեանն էր…

Կոստանդին Խատիսեան՝ մի աշխարհ, մի ամբողջ աշխարհ մեր հայ ինտելիգենտների, իր յոյսերով, իր յոյզերով, իր տենչերով և իր գործերով: Եւ այդ աշխարհը պահված է, թաղված այժմ մեր աչքերից և մի փոքր մարմարեայ քարի տակ թաղվում է և ծածկվում մի աշխարհ, մի ամբողջ աշխարհ…

Այդպէս էր, այդպէս է և այդպէս պիտի լինի…

Մի դաժան, ծանր օրէնք:

Բայց կայ մի ուրիշ օրէնք, արդար և գեղեցիկ, շիտակ և բարի. դա մեր անմահութիւնն է, մեր, այսինքն ոչ մեր մարմինների, որ դիակ դարձած պիտի փտեն գերեզմաններում, այլ մեր յոյզերի և մեր յոյսերի, մեր տենչերի և մեր գործերի…

Կոստանդին Խատիսեանի տենչերը և գործերը կան, մնում են, կանցնեն մեր յետնորդներին, մեր ապագայ սերնդին, և նրա անունը ազնիւ, զգայուն սրտերում կը վառէ փափագ և ծարաւ՝ հերկել հայ խոպան երկիրը, ծառայել բոլորից մոռացված դժբաղդ և թշուառ ազգին, ծառայել խօսքով, ծառայել գրչով և ծառայել գործով, ոչինչ չը խնայելով նրա համար, այնպէս, ինչպէս ծառայում էր Խատիսեանը…

Կոստանդին Խատիսեանը մի ապտակ էր այժմեան մեր ուսանողների համար, այժմեան մեր ինտելիգենտների համար, որոնք մոռացած մայրենի լեզուն՝ մոռանում են և մայրենի աշխարհ և ծառայում են օտարներին,—չէ՞ որ ով մոռանում է Աստուծուն, նա ծառայում է օտարներին…

Մայրենի լեզու, մայրենի աշխարհ՝ դա մի Աստուած էր Խատիսեանի համար, և նա իր կրակոտ սրտով վառված կանգնած էր ազգի խորանի առաջ իբրև մի մոմ, մի կանթեղ անշէջ:

Նա վառվում էր և վառում մեզ…

Մենք գիտէինք, որ Բագւում կայ Կոստանդին Խատիսեանը։ Դա մի սփոփանք էր մեզ համար։ Անձամբ չը գիտէինք, տեսած էլ չէինք, բայց հաւատում էինք, որ Բագւում կայ հայութիւն, որովհետև կան Խատիսեաններ, որովհետև մեր տենչերի մարմնացումն էր Կ. Խատիսեանը։

Բալանթարները Թիֆլիսում, Զաւարեանները Կ. Պօլսում, Խատիսեանները Բագւում՝ ահա ինչ՞ էր և ինչ է մեզ համար հայութիւնը…

Բալանթարներ, Զաւարեաններ, Խատիսեաններ—դրանք հայեր են և հայութիւն…

Ծանր է ապրել պանդուխտ, օտար երկրում, օտարների հետ և օտարների մէջ, բայց աւելի ծանր է, դժուար է այն հայերի հետ, որոնք չեն պատկանում հայութեան, որոնք օտարացած են սրտերով…

Կ. Խատիսեանը մի ծանր ապտակ էր այդպիսի հայերի համար…

Այսօր նա էլ չը կայ։ Նրան էլ թաղեցինք սև հողի տակ և թաղեցինք նրա հետ այնքան շատ յոյսեր, այնքան շատ տենչեր։ Չը կարողացանք թաղել նրա գործերը։ Այդ գործերը կը մնան և մեր սրտերի մէջ կը վառեն փափագ ու ծարաւ՝ հերկելու հայ խոպան երկիրը, հայ խոպան իրականութիւնը…

Է՜հ, մի աստղ էլ մարեց հայի մութ երկնքից, բայց նրա փայլը մնացել է և խորը թափանցում է և մնում մեր որբացած սրտերի մէջ…

ՄԻ ԿՈՐՈՒՍՏ ԷԼ

Թաղում են։

Հարուստ մեծատուն չէ մեռնողը․ միլիոններ չէ թողել և գագաղի ետևից ժառանգների սրտերը շահելու համար սուտ լացով չէ գնում խուռն բազմութիւն, և կառքեր, լցված գեղեցիկ, թանգ պսակներով չեն ապշեցնում մեզ։

Հարուստ չէ մեռնողը միայն կայքով, բայց նա հարուստ էր ոգով և այդ կորուստը Նոր-Նախիջևանի համար ծանր է, զգալի և անդառնալի։

Մեր հոգևոր թեմական դպրոցի տեսչի օգնականը և Բարեգործական Ընկերութեան փոխ-նախագահ՝ Վահան Բիրլեանը մեռաւ։

Վահան Բիրլեան…

Եթէ դուք կը ցանկայիք մի բարեգործական նպատակով երեկոյթ սարքել, օգնել ուսանողներին կամ կարօտեալներին, դուք յիշում էիք Վահան Բիրլեանին, և նա կօգնէր ձեզ, կը մասնակցէր իբր սիրող։ Եթէ դուք կը ցանկայիք բանալ մի դպրոց կամ բարեփոխել մի դպրոցի վիճակ, դուք դարձեալ կը դիմէիք Վահան Բիրլեանին և նա բոլոր սրտով, բոլոր ոգով կը ծառայէր այդ սուրբ, վսեմ գործին, մոռանալով իր շահերը, մոռանալով իր անձը, միշտ անձնանուէր…

Հռիփսիմեան դպրոցին, որ այժմ բաւականին եղկելի վիճակի մէջ է, նա իր տեսչութեան ժամանակ տալիս էր ոգի, կեանք և սակայն… սակայն համարեա տասը տարիներ այդ ծանր պաշտօնը վարում էր ձրի…

Վահան Բիրլեանը գաղափարական անձերից էր։ Նրա սիրտը շուտ էր վառվում, լցվում կրակով, որովհետև այդ սրտի մէջ կար կապոյտ երկնքի մի կտոր, որ ժպտում էր նրան միշտ և ոյժ էր տալիս մաքառել կեանքի զրկանքների դէմ։

Եւ նա գնում էր, գնում էր միշտ առաջ իր ծանր, փշոտ ճանապարհով, գնում էր դէպի իր Գողգոթան առանց երկիւղի, առանց գանգատի, սիրով և համեստ…

Յիշո՞ւմ էք Համլէտի անէծքը՝ եղիր սպիտակ իբր ձիւն և յստակ իբր սառոյց, զրպարտութիւնը չի խնայի քեզ…

Զրպարտութիւնը չը խնայեց և Բիրլեանին։

Մի քանի պարոններ Թիֆլիսի հայոց մի լրագրում շարունակ աշխատում էին արատաւորել Վահանի անբիծ անունը։

Ձիւնը սպիտակ մնաց և սառոյցը՝ յստակ, և միայն արատաւորողների անունները կեղտոտվեցին։

Որչափ նրանք պիտի ափսոսան և կարմրեն այժմ այս թարմ գերեզմանի առաջ։

Ես ճանաչում էի նրան դեռ Լազարեան ճեմարանում աշակերտ եղած ժամանակ։ Նա միևնոյնը մնաց և Մոսկվայի համալսարանում և միևնոյնն էր և Նոր-Նախիջևանում, ուր ծառայեց քսան տարիներ։ Մինչև մահվան վերջին շունչը նա նոյն Վահանն էր՝ հեզ, խոնարհ, բարի և ազնիւ, թէև, ինչպէս գեղեցիկ կերպով ասաց նրա աշակերտը, Վանեցեան, նա համարեա միակ ճրագն էր մեր Նոր-Նախիջևանի խաւարի մէջ…

Նրան յարգում էին ընկերները, նրան պաշտում էին աշակերտները, նրան սիրում էր ժողովուրդը, ժողովուրդը, որ երբեմն գիտէ այնպէս հասկանալ, գնահատել։

Հարուստ չէր մեռնողը և սակայն որպիսի հարստութիւն նա թողնում է մեզ՝ ժառանգներիս։

Ազնիւ մշակ, անխոնջ աշխատելով, նա կատարում էր իր սուրբ պարտքը, իբր ուսուցիչ, իբր մարդ և բոլորիս սրտերի մէջ նա ցանել է բարի սերմեր…

Բարի սերմեր…

Մի՞թէ կարծում էք, որ բարի սերմերը ընկնում են միայն ապառաժի վրա։ Պատահում է, որ ընկնում են բարի սերմերը պարարտ հողի վրա. կը գայ առատ անձրև, կը ժպտայ ժամանակին արեգակի փայլը, և սերմերը կը ծլեն, կը տան հունձ, որին միշտ մենք կարօտ ենք։

Եւ փոխանակ լալու, արտասվելու, վհատվելու Վահանի գերեզմանի առաջ, ես զգում էի մի ներքին բաւականութիւն, մի ներքին ուրախութիւն, մի առանձին ոգևորութիւն։ Ես մտածում էի՝ ոչ, մեր կեանքը այնքան էլ վատ չէ, անպակաս են մեզանում Վահան Բիրլեաններ, հեզ, խոնարհ, բարիք և ազնիւ, նրանք չեն նկատվում, որովհետև իրանց մասին չեն մտածում, չեն գրում և չեն աղաղակում հրապարակներում։ Բայց նրանք ճանաչում են իրանց պարտքը և կը կատարեն այդ պարտքը, թողնելով մեր սրտերում հետքեր…

Խոնարհվենք Վահան Բիրլեանի գերեզմանի առաջ և չը մոռանանք մեր մէջ ապրող, աշխատող համեստ Վահան Բիրլեաններին։

Նրանց ձեռքին է մեր ապագան։

1903

ՄԻ ՅՈԲԵԼԵԱՐ ԵՒՍ, ԵՒ ԳՈՒՑԷ ԱՄԵՆԱՀԱՄԱԿՐԵԼԻՆ

Մի յոբելեար ևս, և գուցէ ամենահամակրելին։

Դա Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնն է։

Մայիսի 29-ին ս. Խաչ վանքում կատարվելու է այդ Ընկերութեան 50-ամեայ յոբելեանը։

Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը մեր ամենահին ընկերութիւններից է։

Նրա կանոնադրութիւնը յօրինել է Ստեփանոս Նազարեանը։

Նրա 25-ամեակի պատմութիւնը գրել է Գամառ-Քաթիպան։

Երկու մեծ անուններ՝ երկու մեծ հայերի։

Եւ երկար ու ձիգ 50 տարիներ մեր Ընկերութիւնը վայելել է ժողովրդի յարգանքը և սէրը։

Բարեգործական նպատակով նա ծախսել է 200,000 ռուբլի։ Առաջին տարիները անդամները ծախսում էին քիչ, աշխատում էին աւելացնել մայր և պահեստի գումարները։ Վերջին 20 տարիները մենք ծախսում ենք աւելի, քան թէ ունենք եկամուտ. և սակայն մեր պահեստի դրամագլուխը հասնում է 65,000-ի, մայր գումարն է 4,000 ռուբլի։

Բարեգործական Ընկերութիւնը առանց խտրութեան օգնել է ամեն մի հայի, լինէր նա նախիջևանցի թէ կովկասցի, ողջ մէկ է, և արձագանք է տուել հայկական կեանքի բոլոր թէ փոքր, թէ մեծ երևոյթներին։

Նա կանգնել է տեղիս դպրոցի շէնքի երկրորդ յարկը, ծախսելով միանուագ 10,000 ռուբլի։

Նա լոյս է ընծայել Գամառ-Քաթիպայի անտիպ երկերը։

Նա լոյս է ընծայել մեծ երկհատորով Միքայէլ Նալբանդեանի բոլոր երկերը։

Նա տուել է և տալիս է ուսում հազարաւոր հայ մանուկներին։

50 տարվայ միջոցին շատ արտասուք է նա սրբել, շատ վէրքեր բուժել, շատ ցաւեր դարմանել և թեթևացրել։

Բայց գլխաւոր նպատակը, ամենամեծ նպատակը եղել է և կը մնայ տարածել լոյս, հալածել հայկական խաւարը։

Մայիսի 29-ին Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքում կատարվելու է Ընկերութեան յոբելեանը։

Յարգենք նրան, պատւենք սիրով, երախտագիտական բուռն զգացմունքով։

Հանենք գլխարկներս և ցածր-ցածր խոնարհենք մեր գլուխները յոբելեարի առաջ։

Նա հասել է մեզ մեր տրտմութեան և թշուառութեան ծանր օրերին։

Լինենք նրա հետ նրա ուրախութեան օրը։

Նա մեր ամենահամակրելի յոբելեարն է։

ՄԻ ՊՍԱԿ ԹԱՐՄ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

Մի պսակ թարմ գերեզմանի վրա...

Թող այդ գերեզմանը լինի մի վաճառականի, մի միլիոնատէրի, հոգ չէ։ Այդ վաճառականը Ալ. Մանթաշեանն է, իսկ Մանթաշեան անունը կը մնայ մեզ համար միշտ թանգ...

Նրան յարգում էր առանձնապէս և սիրում էր Գրիգոր Արծրունին։

Փետրվար ամիսն էր 1886 թւականի։ Բաղդը գցել էր ինձ Թիֆլիս։ Գամառ-Քաթիպայի նամակներով ես եկել էի և պտտում էի տեղական խմբագրատները, յայտնի գործիչների մօտ։

Մի օր Գրիգոր Երեմէիչը տարօրինակ կերպով ինձ ծանօթացրեց Ալ. Մանթաշեանի հետ։

—Ահա և Մանթաշեանը. յիշեցէք իմ խօսքը, պ. Գրիգոր. դուք դեռ երիտասարդ էք և կը տեսնէք, որ մի օր նա կը դառնայ միլիոնատէր։

Ես հետաքրքրվեցի, և Գրիգոր Երեմէիչը պատմեց ինձ, որ ամեն դժուար նիւթական պարագաներում նրան են դիմում, և նա ամենին նեղ տեղերից հանում է և փրկում։

Դարձեալ փետրվարն էր... ներկայ 1911 տարվայ...

Ինձ գրում էր Ալ. Մանթաշեանը ի միջի այլոց. «Այսօր կարդացի «Մշակի» № 28-ում ձեր պատուական յօդուածը «Երկու խօսք պ. Յովհ. Թումանեանին» և մեծ հաճոյք զգացի, տեսնելով որ դուք մեր հոգևոր դպրոցների նպատակի մասին ճիշդ նոյն գաղափարներն էք դաւանում, ինչ որ ես վաղուց փայփայել եմ, և շատ ուրախ եմ, որ հրապարակով ջատագով էք հանդիսանում»։

Այսպէս՝ նա հետաքրքրվում էր մեր ազգային գործերով։

Նա վաճառական էր, միլիոնատէր, բայց նա չէր նման այն հազարաւոր մեր թշուառ վաճառականներին և միլիոնատէ-

քերին, որոնք նստած են իրանց փողերի և ոսկու վրա՝ ինչպէս գիշատիչ ագռաւները դիակների վրա…

Նա գործում էր և բարեգործում:

Նրա սիրտը բաբախում էր հայի համար, և նա հայ էր ու հայ մնաց, և մեծ հարստութիւնը արտատ չը թողեց նրա վրա:

Ինձ հետաքրքրում է նրա կտակը:

Թէև նա իր ձեռքով շատ բան է արել մեզ համար, քաղցր էր ինձ յուսալ, հաւատալ, որ նա կտակով ազգին բան թողած մնի:

ԻՍԱՀԱԿ ԱԼԱՃԱԼԵԱՆ

Իսահակ Ալաճալեանը մեռաւ:

Ես ճանաչում էի նրան վաղուց:

Իբրև նոր սան Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութեան, ես պիտի ներկայանայի 1872-ին նախագահին:

Նախագահը Իսահակ Ալաճալեանն էր:

Լազարեան ճեմարանում առաջին նոր-նախիջևանցու անունը, որ կարդացի ոսկետառ գրած պատուաւոր տախտակի վրա, Իսահակ Ալաճալեանի անունն էր:

Յետոյ կեանքի մէջ շփվում էինք երկար ժամանակ:

Իսահակ Ալաճալեանը շատ բարի էր, շատ ազնիւ, բարեխիղճ, վեհանձն, բայց նրան պակասում էր մի բան:

Հաստատ կամք:

Ահա ինչու Իսահակ Ալաճալեանը չը դարձաւ հասարակական գործիչ և մնաց միայն իբրև հետաքրքրական հասարակական… երևոյթ, անհասկանալի շատերի համար:

Նա թժիշկ էր և չէր բժշկում:

Ընտրվում էր նախագահ ընկերութիւնների և յանձնաժողովների և շուտ հրաժարվում:

Իբրև քաղաքագլուխ՝ պաշտօնից հեռացաւ, տեսնելով իր դէմ լարված ինտրիգներ:

Նա նախագահ էր ընտրված եկեղեցական-հոգաբարձական յանձնաժողովի, որ պիտի ծախսէր 200—300 հազար ր. և պիտի շինէր Ռօստովում մի տուն: Տունը շինվեց, բայց նա շուտ էր հրաժարվել իր պաշտօնից. տունը շինվեց առանց պ. Ալաճալեանի: Սկսվեց խռովութիւն, երկպառակութիւն. քիչ էր մնում՝ հոգաբարձութիւնը քանդվէր: Բոլորը իր կարգին կերթար, ոչ մի խռովութիւն չէր լինի, եթէ նախագահ մնար պ. Ալաճալեանը:

Հասարակութիւնը միշտ հաւատում էր Իսահակ Ալաճալեանին։

Նա երբէք ի զուր չէր գործածում այդ հաւատը և սակայն երբէք էլ չէր արդարացնում։

Հանգուցեալը ինքն էլ սիրում էր ընտրվել, բայց գործելու հաստատ կամք չունէր և իբրև բարեխիղճ մարդ՝ շուտ էր հրաժարվում պաշտօնից։

Եւ երբ ես նայում էի այդ ինտելիգենտ, բարձրահասակ, ալեզարդ ծերունուն, որ գլուխը բարձր էր բռնում և տանում, ես մտածում էի՝ որչափ բարութիւն, որչափ ազնւութիւն, որչափ վեհանձնութիւն մեզ համար, ափսոս, առ միշտ, առ միշտ կորած...

Երևակայեցէք մի թանգագին, գեղեցիկ, ոսկեայ ժամացոյց, որը չէ բանում, կանգ է առել և չէ ցոյց տալիս ոչ ժամ, ոչ քօպէ. կորած է բանալին. իսկ ժամագործը իր հետ է տարել բանալի շինելու գաղտնիքը։ Նայում ենք, հիանում, բայց չենք գործածում այդ ժամացոյցը, չենք օգտվում. նա զարդ է դարձել միայն մեր առանձնասենեակի, մեր հիւրերին հետաքրքրելու համար...

Այդպիսի մի ժամացոյց էր և Իսահակ Ալաճալեանը։

Իսահակ Ալաճալեանները հետաքրքրական հասարական երևոյթներ են մեզանում։

Նրանց գոյութիւնը պատիւ է բերում մեզ, որովհետև բարին և ազնիւը մեծ արժէք ունեն ինքն ըստ ինքեան, որովհետև բարին և ազնիւը հազուագիւտ են մեզանում։

Բայց Ալաճալեաններից էական օգուտ հասարակութիւնը չունի և կարող չէ ունենալ։

Նայում ենք նրանց վրա, ուրախանում, զմայլում, հաւատում, շատ հաւատում։

Ի զուր յոյսեր...

Նրանց պակասում է հաստատ կամք գործելու, աշխատելու, մեզ առաջնորդելու։

Եւ փոխանակ դառնալու հասարակական գործիչներ, նրանք միայն մնում են հետաքրքրական հասարակական... երևոյթ։

Եկեղեցու մէջ լսելով երկու քահանաների ճառերը և հանգուցեալի կեանքի նկարագրութիւնը, ես ցաւում էի ոչ թէ նրա համար, որ մեռաւ Իսահակ Ալաճալեանը, թաղում ենք նրան. ոչ, ես խոր մտածմունքի մէջ ցաւում էի նրա համար, որ հանգուցեալը դեռ շատ վաղուց, հասարակական ասպարէզի առաջին քայլերից, իր կամքով թաղել էր իր բարութիւնը, իր

ազնւութիւնը, իր վեհանձնութիւնը, թաղել էր, հեռանալով էական գործունէութիւնից։

Մենք դիմում ենք Ալաճալեաններին, որ կեանքով լի են, ապրում են մեր ամեն անկիւններում, յիշեցնում ենք նրանց, որ բաւական չէ լուսաւորել, պէտք է տաքացնել։ Թող լոյսը լինի աղօտ, փոքր ինչ տաքութիւն, ի սէր Աստուծոյ, միայն փոքր ինչ տաքութիւն։ Ցուրտ է, խոնաւ է։

Մրսում ենք։

Չը սառենք բոլորովին։

1904

ՀԱՄԵՍՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Նոր-Նախիջևանի վաճառականների ակմբանոցը զարդարված է, լուսաւորված էլեքտրական լոյսով։ Խուռն բազմութիւն։ Տեղիս բոլոր խաւերի ներկայացուցիչներ։ Կատարվում է մի ընտանեկան տօնախմբութիւն։ Եւգինէ և Կարապետ Խօջայեանները տօնում են իրանց արծաթեայ պսակը։

Բայց յանկարծ ընտանեկան տօնախմբութիւնը դառնում է հասարակական երևոյթ։

Մէկը միւսի ետևից մօտենում են և կարդում են գեղեցիկ ուղերձներ։

Աղքատաց Հոգաբարձութիւնը, դպրանոցը, անկելանոցը, Բարեգործական Ընկերութիւնը, գիմնազիօնը, ուսանողները, բոլորը ունեն ներկայացուցիչներ։

Գ. Չուբար, Կ. Բօղդանեան և ուրիշներ գեղեցիկ, զգացված կարդում են այդ ուղերձները։

Յաջորդ հայր Մուշէն և ծխատէր հայր Պօղոս քահանան յուզված խօսում են, և բազմութիւնը տեսնում է և զգում է, որ ընտանեկան կամ բարեկամական զգացմունքներ չեն այդ խօսքերը։ Գնահատվում է մի համեստ հասարակական գործիչ, որ 25 ձիգ տարիներ տեղիս ամեն մի բարի ձեռնարկութեան և հաստատութեան մէջ պիտանի և արժանի մշակն է եղած։

Բաղաքապետը բաւական է, նոյնպէս զգացված, դառնում է մեզ և հարցնում է՝ «արդեօք շատ են պատահում այստեղ այսպիսի հանդէսներ»։

—Դժբաղդաբար սակաւ,—պատասխանեցի։

Դժբաղդաբար... Եթէ մենք միշտ գիտենայինք գնահատել մեր համեստ գործիչներին, քաջալերել նրանց ժամանակին, խմբվել նրանց շուրջը, ապա նրանց սէրը, եռանդը և ոյժը կը լինէին կրկնակի, մենք բոլորս մի մեծ գործ կատարած կը լինէինք և մենք չէինք մնայ այսչափ կարճահասակ...

Մատնանիշ մի անէք պատմական հայ նախանձի վրա...

Յունվարի 24-ին Կ. Խօջայեանի յօբելեանին ես այդ նախանձը չը տեսայ...

Մենք չենք նախանձում, մենք տգէտ ենք, չը գիտենք մեր օգուտը։ Փորձեցէք, սկսեցէք նկատել, ճանաչել, յարգել, սիրել և գնահատել այն փոքր ազգի մշակներին, որ կան ամեն մի քաղաքում, ամեն մի գիւղում և ամեն մի անկիւնում։ Խմբվեցէք նրանց շուրջը, տուէք նրանց ոյժ, և ազգը կուժեղանայ, կը զօրանայ, կը փրկվի...

Մի որոնէք Նապօլէօններ... Նապօլէօնները լաւ են, երբ դուք կարդում էք նրանց հերոսութիւնները։ Սակայն պատմութիւնը անում են և աշխարհը առաջ տանում իրանց ուսերի վրա միայն փոքր մշակները, չը ճանաչված և չը գնահատված մեզանից և միշտ մոռացված։ Կար. Խօջայեանի ընտանեկան տօնախմբութիւնը պիտի ստանար մեզ համար հասարակական նշանակութիւն, և ստացաւ։

Յուզված, Կ. Խօջայեանը կանգնած էր շուարած. «Ես ոչինչ չեմ արել, ես այժմ կաշխատեմ գործելու...»—կրկնում էր նա...

Լիայոյս ենք, որ նա այժմ աւելի կը գործէ։

Ծոյլերին և անառակներին՝ մտրակներ և շանթեր, մշակներին՝ ուշադրութիւն, յարգանք, սէր և քաջալերութիւն...

ԳԵՂԵՑԻԿ ՕՐԻՆԱԿ

Քանիցս մենք գրել ենք «Մշակում», որ պէտք է բարեգործել իր օրով, իր ձեռքով: Քանի մի ամիս սրանից առաջ մենք խօսեցինք Յովհաննէս Խաթրանեանի մասին:

Այժմ Խաթրանեանի կողքին կանգնեց և Մանուկ Պօպօվը:

Դեկտեմբերի 23 Պօպօվը տօնում էր իր արծաթեայ պսակը...

Ինչպէս ասած, 25 տարի լինել այր և կին—դա մեծ բան չէ, բայց մեզանից կախված է այդ համեստ ընտանեկան տօնախմբութեանը հասարակական նշանակութիւն տալ:

Եւ Պօպօվի արծաթեայ պսակը ստացաւ այդ բնաւորութիւնը և դարձաւ հասարակական երևոյթ...

Պօպօվի մեծ և գեղեցիկ տունը շքեղ զարդարված է: Էլեքտրական լուսաւորութիւնը գիշերը դարձրել է ցերեկ, իսկ անուշահոտ ծաղիկները՝ ձմեռը գարուն: Նուագում են երաժիշտները, պարում են երիտասարդները և օրիորդները՝ կարծես հարսեր և փեսաներ՝ կպած իրար... Ուրախութիւն բոլոր դէմքերին...

Այդպիսի րօպէներին ես ինձ լաւ չեմ զգում: Ինձ թւում է, թէ էլեքտրական լոյսը շլացնում է և կուրացնում մեր աչքերը, որ չը տեսնենք փողոցի թշուառութիւնը և կարօտը, և ծաղիկները բուրում են այնպէս անուշ, որ չը նկատենք ցաւերի, վէրքերի և աղէտների գարշահոտութիւնը: Ապա երաժիշտները. նրանք հէնց նրա համար այնպէս բարձր և գեղեցիկ նուագում են, որ մենք մոռանանք աշխարհի դարդը, վիշտը և արտասուքը և չը լսենք թշուառների աղաղակը և լացը...

Մի՞թէ աշխարհս դմակ է և մարդը դանակ, որ կտրէ ու կտրէ...

Այսօր Պօպօվը ուրախացնում է իր հիւրերին և ուրախացնում է մեզ, յիշելով հային, իր եղբօրը...

Բոլոր իր ազգականներին, բարեկամներին, ծանօթներին նա հաւաքել էր իր մօտ, բայց այդ մեծ և խորհրդաւոր օրը

նա ցանկացաւ, որ ազգն էլ գայ, մտնի նրա տունը և նստի իբրև հիւր նրա սեղանի շուրջը...

Պօպօվը նուիրեց 25,000 րուբլի Հռիփսիմեան դպրոցին և յանկարծ առաքինութեան լոյսի առաջ չքացաւ էլեքտրական լոյսը, ծաղիկները սկսեցին բուրել այնպէս գեղեցիկ անուշ ու երաժիշտների նուագածները խառնվեցին երկնքի օրհնութեան հետ: Եւ այն րօպէին, երբ ազգը եկաւ և նստեց նրա սեղանին, երկինքը օրհնեց Պօպօվին և նրա համեստ ընտանեկան տօնախմբութեանը՝ նրա արծաթեայ պսակին տուեց խորհրդաւոր նշանակութիւն. 25 տարի լինել այր և կին—դա մեծ բան չէ, բայց մեծ բան է արծաթեայ պսակին տալ հասարակական նշանակութիւն:

Մանուկ Պօպօվը մտածեց՝ չէ, աշխարհս դմակ չէ և ոչ մարդը դանակ, փոխանակ կտրել և կտրելու և միայն մտածելու զուարճութիւնների վրա և շրջապատվելու ազգականներով, բարեկամներով ու ծանօթներով, պէտք է մտածել, հոգալ և ազգի մասին:

Մանուկ Պօպօվ յիշեց ազգը և հրաւիրեց իր մօտ:

Եւ օրհնութիւնը անպակաս կը լինի նրանից:

ՀԱՅՐ Խ, ԶԱՐԻՖԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Կիրակի, յունվարի 22-ին, Նոր-Նախիջևանը փառաւոր կատարեց ս. Լուսաւորիչ մայր եկեղեցու աւագ քահանայ Խ. Զարիֆեանի յոբելեանը։

50-ամեայ յոբելեարի քահանայագործութեան, ուսուցչութեան և հասարակական գործունէութեան հանդէսին քաղաքային վարչութեան նոր շինված և ճոխ զարդարված դահլիճում եկել է ներկայ լինելու քաղաքի բոլոր խաւերից խուռն բազմութիւն։ Այստեղ կային բոլոր Նոր-Նախիջևանի և Ռոստովի հայկական հաստատութիւններից ներկայացուցիչներ, բոլոր տեղական գործիչները, քաղաքապետը, ոստիկանապետը, ռուս հոգևորականութեան ներկայացուցիչներ, բժիշկ, փաստաբան, ուսուցիչ, բոլորը եկել էին շնորհաւորելու յոբելեարին, որը արտասուախառն լսում էր բոլորին, յուզված և ուրախ։

Յիսուն տարի գործել, երբեմն դառն և դժուար պայմաններում, երբեմն չը հասկացված ոչ ոքից, երբեմն ատված շատերից, կորցնել հազար ու մի յոյսեր, երազներ, ցնորքներ, մօտ լինել յուսահատութեան և յանկարծ մի օր, մի գեղեցիկ, մի պայծառ օր տեսնել բոլոր քաղաքը իր առաջ, տեսնել ամեն կողմից անկեղծ սիրոյ և յարգանքի փաստեր, տեսնել, որ գործել ես ոչ անպտուղ, որ քեզ հասկացել են, հասկանում, գնահատում են։

Ի՜նչ գեղեցիկ, թանգագին արտասուքներ են, որ թափվում են տէր-հօր աչքերից։

Լաց, տէր-հայր, լաց. դա ուրախութեան, երջանկութեան, սիրոյ արտասուքներ են. եթէ այդպիսի արտասուքներով մենք երբեմն չը լայինք, չարժէր գործել, ապրել…

Եւ մինչդեռ հայր տէր-Խաչատուրը երեխայի նման լաց է լինում, մինչդեռ հանդիսականներից շատերը լալիս են նոյնպէս, պատգամաւորները մի-մի մօտենում են և կարդում են հայերէն և ռուսերէն զգացված ուղերձներ, գեղեցիկ խօսքեր, կարծես մարգարիտներ և գոհարներ։

Ես մտածում եմ. ինչու յոբելեանը կատարվում է, երբ յոբելեարը անցել է իր կեանքի ճանապարհը, մի ոտը դրել է գերեզման…

Ինչու այդպէս ուշ, ինչու այդպէս ուշ մենք ցոյց ենք տալիս նրան մեր սրտերը, մեր սրտերի խորքերը։

Եթէ նա առաջ այդ բոլորը լսէր, իմանար. եթէ տեսնէր, որ նա մենակ չէ եղած, որ մենք հետևել ենք նրա բոլոր քայլերին, ուրախացել ենք նրա ուրախութիւնով, տրտմել ենք նրա վշտերով, մէկ լացել ենք, մէկ խնդացել։ Եթէ նա իմանար այդ բոլորը, ապա որչափ սիրով, որչափ ուժով, որչափ եռանդով նա պիտի գործէր, տապալելով սարեր, ժայռեր…

Եթէ կարելի լինէր, որ ամեն մի հասարակական գործիչ, երբ առաջին անգամ իր դողդոջուն, թոյլ ոտքերը դնում է հասարակական գործունէութեան ասպարէզի շեմքին, տեսնէր, կարդար այդ բոլորը ուղերձները…

Ուղերձնե՜ր…

Արդեօք սուտ է այն, ինչ որ գրված է նրանց մէջ, արդեօք ճի՞շդ է…

Կան չափազանցութիւններ, բայց մէկ բան անվիճելի է ինձ համար. ուղերձները առհասարակ վկայում են ոչ այն, ինչ որ մենք արել ենք, այլ ինչ որ մենք պէտք է որ անէինք…

Եւ երբ կեանքը գնում է, անցնում է, ուղերձների գեղեցիկ թղթերից և երեսներից այդ կեանքը տխուր ժպտում է, շփոթելով ձեզ, ահա ինչ էր ձեր պարտականութիւնը և ահա ինչ պէտք է անէիք, և ահա ինչ դուք չարիք…

Ինչու մեր երիտասարդ գործիչները չեն կարդում զանազան հասարակական գործիչների 25-ամեակի և 50-ամեակի առիթով գրված ուղերձները…

Ես մտածում եմ տխուր, իսկ պատգամաւորները անցնում են մէկը միւսի ետևից…

Հայր Խաչատուրը լաց է լինում, իսկ չորս կողմը բարի, զգացված, գեղեցիկ դէմքեր…

Այո, արժէ աշխատել, գործել հայի համար. հայը գիտէ գնահատել իր գործիչներին։ Ահա և ընծաներ փոքր, և մեծ, և արժէքաւոր…

Լաց, տէր-հայր, դու արժանի ես, մշակ բեղմնաւոր, այդ ցոյցերին և այդ սուրբ արտասուքներին…

Իբրև եկեղեցու սպասաւոր՝ դու 50 տարի շարունակ ամեն օր սուրբ խորանի առաջ վառել ես, աղօթելով, մոմ և կանթեղ և միևնոյն ժամանակ 50 ձիգ տարիներ մի ուրիշ խորանի ա-

առաջ, նոյնքան մեզ համար նուիրական, նոյնքան սուրբ՝ ազգի խորանի առաջ, դու վառուել ես ինքդ, մարմնացել երբեմն իբրև կենդանի վառ մոմ, երբեմն իբրև կանթեղ պլպլացող, բայց և այնպէս ազգասիրական ոգին երբէք մարած չէ քո սրտում, նա մնացել է կենդանի։ Այժմ անցել ես քո Գողգոթան, տարել ես քո խաչը պատւով, շնորհքով, և մենք խոնարհում ենք մեր գլուխները սիրով և յարգանքով քո առաջ։ Մենք ցանկանում ենք քեզ երկար տարիներ, մենք ցանկանում ենք նոր եռանդ և հին, այո, հին հաւատ՝ գործելու։ Ոչինչ, որ սխալուել ես. չէ սխալւում ծոյլը և չաշխատողը։ Մենք տեսնում ենք քո մէջ կենդանի հաւատ և կենդանի գործ։ Հաւատ դէպի ազգը, գործ ազգի համար, մեր հայ, մեր թշուառ, խեղճ, բազմակարօտ, բազմաչարչար, կարծես վաղուց ի վեր մոռացված և թողնված երկնքից և Աստուծուց, ազգի համար։ Լաց, տէր-հայր...

Զարժէր ծնվել, ապրել, գործել, եթէ կեանքի մէջ գոնէ մէկ անգամ մենք չը լսէինք այդ գեղեցիկ, սուրբ երազած արտասուքներով... Նրանք մի-մի թանգագին մարգարիտներ են, որից շատ պակաս են հարուստ թագաւորների թագերի գոհարները...

1912

ՀԱՅՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԶԱՐԻՓԵԱՆ

Մեռաւ հայր Խաչատուր Զարիփեանը։

Անցեալ տարի Նոր-Նախիջևանում փառաւոր կատարվեց նրա 50-ամեայ յոբելեանը քահանայագործութեան, ուսուցչութեան և հասարակական գործունէութեան։

Այսօր մենք թաղում ենք նրան։

Դեռ մի շաբաթ առաջ ս. Լուսաւորիչ մայր եկեղեցում նա կանգնած էր հայր Գէորգ վարդապետի առաջ և տալիս էր նրան մեր ժողովրդի ողջոյնը և յայտնում էր մեր յոյսերը, որ սպասում ենք եկեղեցու երիտասարդ սպասաւորից։

Հայր Զարիփեան...

Դա մի աչքի ընկնող քահանայ էր հայերիս մէջ, խոշոր դէմք, որ մարմնացած պարտաճանաչութիւն էր։

Կարգ և կանոն—ահա ինչ էր նրա նշանաբանը, և բոլորից նա պահանջում էր այդ կարգը և այդ կանոնը և ինքը օրն ի բուն ծառայում նրան։

Լավում էր և տրտունջ. բայց ու՞ր չը կայ տրտունջ, երբ պահանջվում է կարգ և կանոն. և տէր-հայրը գիտէր պահանջել ուրիշներից պարտաճանաչութիւն։

Եկեղեցի, դպրոց, բարեգործական հաստատութիւններ—ահա ում էր ծառայում հայր Զարիփեանը անխոնջ, անդուլ յիսուն տարուց աւելի, մի դաժան, մի ծանր, հոգեմաշ աշխատանք, որ վերջապէս գնահատվեց յոբելեանի օրը, փոքր ինչ ուշ, երբ յոբելեարը ծերացած էր, տկար. երբ անցել էին գարուն, ամառվայ և անգամ նրա աշնան օրերը և մնացել էր միայն ձմեռը իր ձիւնով, իր ցուրտով և հողմերով։

Բայց ձիւնը յանկարծ հալվեց, ցուրտը կորաւ, հողմը գեփիւռ դարձաւ, երբ ժողովուրդը, նրա յարգած, սիրած, պաշտած ժողովուրդը համբուրեց նրա ձեռքը և լացեց նրա հետ յոբելեանի օրը, յուզված, ուրախ...

Հայր Զարիփեան...

Կենդանի պատմութիւն այնքան հետաքրքրական անցքերի, որոնց նա ականատես էր երբեմն խոնարհ, հլու, ճկուն, երբեմն

մարմնչող, բողոքող, միշտ ազգի հետ մի մարմին ու մի հոգի դարձած:

Բայց նա սիրահար էր Նոր-Նախիջևանի և ջոկում էր հայ և նոր-նախիջևանցի. դա նրա մեծ սխալն էր, մեծ յանցանքը...

Թուցէ միակ սխալը, որ պէտք է յիշել, որպէսզի ներվի նրա այդ մեղքը. ինչո՞ւ ստել թաղման օրը և չասել այդ: Ինչո՞ւ լռել, երբ դեռ կան մեզանում գործիչներ և հոգևորականներ, որ ջոկում են հային նոր-նախիջևանցուց և նոր-նախիջևանցուն համարում հայ, իսկական հայ, իսկ մնացեալ հայերին դուսեցիներ:

Այսօր, հայր Զարիֆեանի թաղման օրը, խոնարհելով մեր գլուխը նրա աճիւնի առաջ, հրապարակով ճանաչելով նրա բոլոր արած բարի գործերը թէ եկեղեցու, թէ դպրոցի, թէ ժողովրդի լայն խաւերի համար, ցանկանալով որ նա բարի օրինակ լինի միւս հոգևորականների համար, որ նրա անունը վառ մնայ մեր սրտերում, ես սիրում եմ հաւատալ, որ այլևս չեն լինի մեզանում հայ և դուսեցի. ընդունենք որ մենք բոլորս հայեր ենք, եղբայրներ ենք, մի ազգի զաւակներ և բոլորս դուսեցիներ, այո, բոլորս դուսեցիներ. թողած հեռու իր վաթանը, իր մայրենի հողը, մայրենի երկիրը և մայրենի աղբիւրը, որոնք մեզ սպասում են օր ու ցերեկ դարեր և որոնցից մենք հեռանում ենք ամեն օր, հեռու և հեռու. մենք բոլորս դուսեցիներ ենք, պանդուխտներ, հեռու քշված, հալածված անբաղդութիւնից, թափառականներ:

Չը կրկնենք հայր Զարիֆեանի սխալը, որ ներվի, մոռացվի նրա միակ մեղքը: Բաւենք նրան:

Չասենք դուսեցիներ:

Եւ չաւելացնենք առանց այն էլ մեր անբաղդութիւնը:

Չը ջոկենք նոր-նախիջևանցիներին միւս հայերից, մնանք հայ, հայեր, եղբայրներ...

1913

ՄԵՐ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ

Այսօր խօսքս Անդրէաս Տէր-Մարուքեանի մասին է:

Նա Պարիզումն է այժմ, դրութիւնը ծանր է, ինքը տկար, կարօտ ապրուստի, և միակ ցանկութիւնն է վերադառնալ հայրենիք:

Հայրենիք... որից, սրանից մի քանի տարի առաջ, նա փախաւ շտապով, հեռանալով բարեկամներից, ազգականներից, կտրելով նրա հետ բոլոր կապերը, փախաւ առ միշտ...

Անդրէաս Տէր-Մարուքեանը շնորհալի և տաղանդաւոր քանդակագործ է: Յիշենք նրա Գամառ-Քաթիպայի և Մ. Նալբանդեանի կիսարձանները, որ այժմ Նոր-Նախիջևանի ս. Խաչի վանքն են զարդարում:

Վաղուց արդէն ճշմարտութիւն է դարձած Գրիգոր Արծրունու այն վկայութիւնը, թէ մեր ինտելիգենտները գիւղերից փախչում են, գալիս են քաղաք, մոռանալով իրանց պարտքը: Ես կաւելացնեմ, որ տաղանդաւոր ինտելիգենտները շտապում են մայրաքաղաք: Միայն մայրաքաղաքը կարող է նրանց հասկանալ, գնահատել և բաւարարութիւն տալ:

Եւ մայրաքաղաքներում կան այնքան հայ տաղանդաւոր ինտելիգենտներ բոլորովին մոռացված, կարօտ անգամ ապրուստի, օրվան հացի:

Ա. Տէր-Մարուքեանը մեր փոքր ազգի մէջ կարող էր մեծ տաղանդ լինել: Անվերջ յոյսեր, երազներ... Նա շտապում է Պարիզ և մնում է մեծ քաղաքի մէջ մի փոքր տաղանդ, որ չունի առանձին արժէք: Պարիզում կան քանդակագործ հսկաներ...

Այսպէս՝ թիթեռնիկը այրում է իր թևերը, այրում է և դարձեալ շտապում կրակի լոյսին...

Արդեօք թիթեռնիկը ցանկանում է հանգցնե՞լ այդ կրակը, թէ՞ վառվել նոյն կրակով...

Ափսո՜ս...

Պարիզը չիրագործեց Անդրէասի յոյսերը և երազները: Նա հիւանդացաւ և այժմ նրա միակ ցանկութիւնն է վերադառնալ

այրենիք, այն հայրենիքը, որից նա փախել էր, կարծելով որ նա երբեք չի վերադառնայ, այն հայրենիքը, որ նա կարծել էր իր տաղանդի գերեզմանը, և սակայն, կաւ ելացնեմ, այն հայրենիքը, որը միայն կարող է այժմ փրկել նրան...

Թիթեռնիկը հասկացաւ իր սխալը...

Այդպէս թիթեռնիկներ էլ են լինում...

Մեր վրա պարտ կայ օգնել նրան։ Թող ցոյց Երևանի հասարակութիւնը կը յիշէ, որ Տէր-Մարուքեանը կարող է նրա պարծանքը լինել։ Նա ցանկանում է վերադառնալ Երևան. և մի՞թէ Երևանի մէջ չեն գտնվի զգացված, բարի, ազնիւ սրտեր՝ փրկելու մի տաղանդաւոր հայրենակից քաղաքացի։ Պէտք է շտապել հասցնել նրան օգնութիւն։ Նա վհատված է, թուլացած, կորցրած իր հաւատը և գեռ տկար։

Թող հայ հասարակութիւնը կատարէ իր պարտքը...

1906

ԳԵՂԵՑԻԿ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Միայն անզաւակ հայը, այն էլ մահից յետոյ, թողնում է ազգին իր հարստութիւնը։ Հրէաները, յոյները, ինչքան էլ զաւակներ ունենան, հանում են մի մասը իրանց հարստութիւնից ազգի համար։

Այժմ մենք ևս ուրախութեամբ արձանագրենք գեղեցիկ օրինակներ և մեզանում։

Հարուստ հայը, որ ունի զաւակներ, չէ մոռանում իր ազգը։ Հարուստ հայը իր օրով շինում է դպրոց, եկեղեցի, վեհարան. դրանք գեղեցիկ օրինակներ են, և ցանկալի էր, որ բոլոր մեր ազաները հետևէին այդ օրինակներին։ Ամեն բան կանցնի, կերթայ, կը մոռացվի, բայց բարի անունը, բարի յիշատակը կը մնայ։ Անհագին հարստութիւնը կը թալանեն, կը փչացնեն, կոչնչացնեն ժառանգները, որ չը գիտեն աշխատել և հմուտ են... վատնելու մէջ. իսկ բարի անունը, բարի յիշատակը վառված կը մնան իբրև գեղեցիկ և անշէջ լոյս մեր սրտերի մէջ։ Ո՞ւր են աղա Լազարեանների ժառանգները, ո՞ւր են նրանց հարստութիւնները։ Կը յիշէի՞նք Լազարեանների անունը, եթէ չը լինէր Մոսկվայի ճեմարանը։

Նոր-Նախիջևանում եղել են շատ հարուստներ։ Զաւակները վաղուց վատնել են նրանց դիզած, ժողոված, թողած մեծ գումարները, կալքերը։ Այդ հարուստների վրա անգամ քար դըրված չը կայ գերեզմանոցում։ Անունները վաղուց մոռացված, հարստութիւնները վաղուց թալանված, իսկ զաւակները դարձել են կարօտ աղքատի։ Բայց նոյն Նոր-Նախիջևանում եղել են հարուստներ, որ թողել են անուններ։ Այսօր նրանց գերեզմանները զարդարված են. նրանց վրա ամեն տարի գալիս են ազգի զաւակները, և նրանց գերեզմանները, նրանց անունները մեզ թանգ են, նրանց յիշատակը՝ քաղցր. չէ՞ որ նրանք մեր բարերարներն են։ Հանեցէք գդակներդ, ցածր խոնարհեցրէք նրանց շիրիմների առաջ ձեր գլուխները, պատւեցէք նրանց անունները սրբութեամբ, նրանք են մեր ազգի բարերարները...

Բայց երնէկ, հարուստը իր օրով, իր ձեռքով թողնէր յիշատակ, որ մենք կարողանայինք խոնարհել մեր գլուխները նրա առաջ և ոչ թէ նրա դագաղի առաջ…

Յովհաննէս Խաթրանեանը այդ կողմից Նոր-Նախիջևանում բացառիկ օրինակ է։ Յ. Խաթրանեանին մենք ճանաչում ենք։ Իբրև բարեխիղճ կտակակատար տիկին Ակիւլինէ Ալաճաջեանի՝ 1882-ին նա կանգնեց հայ գերեզմանոցում ս. Յովհաննու-Կարապետի եկեղեցին։ Դա միակ եկեղեցին է մեզանում զուտ հայկական ճարտարապետութեան ճաշակով շինված։ Այդ գերեզմանոցի բակում կայ որբանոց։ Գերեզմանոց և որբանոց… միասին։ Առաւօտից մինչև երեկոյ որբը պիտի տեսնէ միայն գերեզմաններ։ Շինութիւնը ինքն ըստ ինքեան անյարմար, քաղաքից հեռու էր և փոքր։

Յ. Խաթրանեանը 25,000 ր. գնում է Խալիբեանի շքեղ տունը և նուիրում է որբանոցին։ «Յոյս ունիմ,—գրում է Խաթրանեանը Աղքատաց Հոգաբարձութեան,—որ ժառանգներուս աչքն էլ քաղցր պիտի լինի դէպի Որբանոց և նրանք ևս պարտականութիւն պիտի ունենան մտածելու եւ աշխատելու նրա պայծառութեան համար»։

Սրտանց ցանկանալով, որ մեր բոլոր հարուստները հետևէին Յ. Խաթրանեանի բարի և գեղեցիկ օրինակին, մենք բաղդաւոր ենք արձանագրելու, որ Նոր-Նախիջևանում հասունացել է այն միտքը, թէ պէտք է իր օրով, իր ձեռքով բարեգործել։

Ազգը միշտ կարօտ է, ազգը չէ սպասում և սպասել կարող չէ Ջալալեանների միլիոններին, որ կը ստանայ 100 տարուց յետոյ, երբ գուցէ կարօտ էլ չը լինի, որովհետև կարօտեալ չի մնայ…

Այո հարուստներ, հետևեցէք այս գեղեցիկ օրինակին, հանեցէք մի մասը ձեր հարստութիւնից խեղճ, տառապեալ թշուառ մեր ազգի համար, հանեցէք ձեր ձեռքով, ձեր օրով. դուք դրանով միայն կը շինէք մեր ազգի տունը, և ձեր ժառանգների վրա էլ «պարտականութիւն» դրէք «մտածել և աշխատել» ձեր արած, յիշատակի «պայծառութեան համար»։ Մենք կը խոնարհենք մեր գլուխները ձեր առաջ, մենք սուրբ կը պահենք ձեր յիշատակը, որ կը մնայ կանգուն և այն ժամանակ, երբ ամեն բան կանցնի, կերթայ, կը մոռացվի…

ՍԱ՞Ր ԹԷ ՄՈՒԿ, ՄՈ՞ՒԿ ԹԷ ՍԱՐ…

(Նուէր էջմիածնի միաբանութեան)

I

Մեզ դիմում են ամեն կողմից և հարցնում՝ ինչու մենք լուռ ենք մնացել և չենք տալիս արձագանք Ղլտճեան հարցին։

Մի տաք թղթակից էլ գրում է Պարսկաստանից.

«Ձայն բարձրացրէք փրկելու մեր եկեղեցին անուանարկումից և աւազակներից…»։

Պատահում է, որ բարձր սարը ծնում է մի… մուկ…

Պատահում է և հակառակը։

Երբեմն մի փոքր մուկը դառնում է մի սար…

Ղլտճեանի դէպքը ինձ համար մի մուկ էր, որի մասին չարժէր էլ խօսել…

Բայց բանը բանից անցնում է. Ղլտճեանը մեծանում է, մեծանում, սկզբից դառնում ուղտ, յետոյ տուն, այժմ արդէն սար է դարձել, մի Ղազբէկ, Էլբօրուս…

«Ձայն բարձրացրէք փրկելու մեր եկեղեցին»…

Երևում է, որ մեր եկեղեցին վտանգի մէջ է…

Մեր եկեղեցին կը կորչի, եթէ Ղլտճեանը վարդապետ ձեռնադրվի…

Իսկապէս մուկը դարձել է սար և վախեցնում է մեզ…

II

Կարդում եմ բոլոր բողոքները և ոչինչ չեմ հասկանում…

Ոչ։ Ես Ղլտճեանի պաշտպանը չեմ. միայն բողոքողների հոգեբանութիւնը ինձ հասկանալի չէ…

Չեմ համարձակում եկեղեցու կրթեալ սպասաւորներին կարդալ և մեկնել Աւետարանը։ Թող ներվի ինձ միայն անհանգստացնել Բարաբբայի ստուերը…

Մի՞թէ Ղլտճեանը Բարաբբայից էլ աւելի մեղաւոր է։

Եւ մի՞թէ վարդապետի կոչումը արքայութիւնից էլ վեր է…

Եւ դուք եկեղեցու սպասաւորներ էք. եթէ եկեղեցու հիմքը Աւետարանն է, ինչու փոխանակ ուրախանալու և ցնծալու, որ մոլորեալը ապաշխարում է և դառնում իր մօր՝ եկեղեցու գիրկը, դուք բարձրացնում էք վայնասուն…

Ձեր քարոզներից փչում է կղերականութեան ոգին…

Հայ կղերականութեան, որ ոչինչ չէ սովորել, որ իբր թէ

կարգ և կանոն է պաշտպանում, մինչդեռ խախտում է և կարգ, և կանոն...

Բողոքի տողերի միջից կարելի է կարդալ շատ բան...

Բայց այդ բողոքը մեր հոգևորականութեան ոչ վարկը կը բարձրացնէ և ոչ էլ մեզ կը համոզէ, որ միաբանութիւնը ճանաչում է կարգապահութիւն...

Այդ բողոքը ապացուցանում է, աւաղ, և ուրիշ բան, որ մեր բարձր հոգևորականութիւնը դեռ չէ ըմբռնել քրիստոնէութեան վեհ գաղափարը...

III

Քրիստոնէութեան վեհ գաղափարը...

Լազարեան ճեմարանում աչքերիս առաջ անցել են շատ կրօնուսոյց քահանաներ... Ոսկեայ մեծ խաչերը և շքանշանները լանջերին նրանք իսկապէս մեզ բան չեն սովորեցրել...

Բոլոր դասարաններում կրօնը մի ծանր առարկայ էր դարձած, որից մենք խուսափում էինք, փախչում։

Սև տախտակի վրա ես յունարէն տառերով գրում էի բոլոր դասը։ Ընկերներս նայում էին տախտակին և պատասխանում։

Եւ մենք անհամբեր սպասում էինք զանգին։

Զանգը պիտի աւետէր մեզ մեր ազատութեան րոպէն... կրօնից...

Բայց կար մի դասատու, ուր կրօնի դասերը առաջին տեղն էին բռնում....

Դա նախակրթարանն էր...

Մենք վախենում էինք, որ զանգը կը խփէ և մեր դասը կը վերջանայ...

Մեր ուսուցչի կուրծքը զարդարված չէր շքանշաններով...

Նա չունէր անգամ խաչ ոչ կրծքին և ոչ անգամ վզին...

Դա մեր յայտնի բանաստեղծն էր...

Սմբատ Շահազիզը...

Նա մեկնում էր մեզ Աւետարանը... Պատմում էր Քրիստոսի կեանքը, նրա անմահ գաղափարները, պատմում էր այնքան սիրուն, վառվռուն, գրաւիչ լեզուով, որ մենք բոլորս և մեզ հետ մի հայախօս պարսիկ ընկեր լաց էինք լինում...

Եւ մինչդեռ մարգարիտ արտասուքները թրջում էին մեր մանկական թշերը, մեր սրտերում բացվում էին, ծաղկում և բուրում մանիշակներ, մեխակներ և վարդեր...

Քառասուն տարիներ են անցել, իսկ մենք միշտ մեր աչքերի առաջ կենդանի տեսնում ենք բանաստեղծ Շահազիզի պատկերը...

Քրիստոնէութեան գաղափարը մեզ ներշնչեց նա, մի աշխարհական, մի բանաստեղծ...

Իսկ մնացեալ դասարաններում մենք բան չը սովորեցինք...

Կրօնուսոյց քահանաները Աստուած էին ասում, բայց Աստուծոյ շնորհը և շունչը չը կար նրանց ասածների մէջ, ինչպէս չը կայ Ղլտճեանի վերաբերեալ բոլոր բողոքների մէջ...

IV

Այսպէս Ղլտճեան դէպքի մէջ մի մուկ դառնում է մի ուղտ, մի տուն, մի սար...

Բանը ուրեմն մկան մէջը չէ...

Հիւանդ է էջմիածինը։

Հիւանդ է մեր հոգևորականութիւնը...

Եւ որովհետև եկեղեցին մերն է, հարկաւոր է վերջապէս, որ մեր ժողովրդի ձայնը հասնի և լսվի էջմիածնում...

Ես ստանում եմ տրտունջներ և գանգատներ և՛ էջմիածնից, և՛ Թիֆլիսից։

Դառն տրտունջներ, ծանր գանգատներ...

Ճշմարիտ են. միթէ բոլոր լուրերը, որ լուրեր էլ չեն իսկապէս, այլ զոյժ և բոթ...

Իբր թէ Վեհափառը ջոկում է հոգևորականներին իրան ընտրողներ չընտրողների, առաջիններին իրան մօտեցնելով և պաշտօններ շնորհելով, երկրորդներին թողնելով գործերից հեռու, մեկուսացած, խորթ...

Չեմ հաւատում...

Ազգը, որ «կեցցէ Կաթողիկոս» կանչեց, իրաւունք ունի պահանջելու, որ Լուսաւորչի գահը բարձրացնելուց յետոյ՝ Վեհափառը մնայ մինչև մահը արդարադատ՝ հաւասար բոլորի համար, որովհետև նա Ամենայն Հայոց Կաթողիկոս է, այլ ոչ մի մասի կամ կուսակցութեան...

Իբր թէ մեր բարձր հոգևորականութեան մեծամասնութիւնը իրան պահում է իբր ապագայ կաթողիկոսացու, յարմարվելով հանգամանքներին, ժամանակին, վախենալով իր պարտքը կատարել այն չափով, ինչ չափով պահանջում են ազգի շահերը...

Իբր թէ էջմիածնի վանականների խուցերը ամեն տեսակ ինտրիգաների խոր և մութ բոյներ են...

Ահա ինչն է սոսկալի· ահա ինչի վրայ խօսեցէք, ցաւեցէք...

Եւ ես իսկապէս շատ եմ վախենում, որ մի փոքր մուկ սար դարձնելով ցանկանում են, որ ազգը սարի ետևից չը տեսնի այդ բոլոր կեղտերը։

կեղտերը, որ ժամանակ է մաքրել, որպէսզի ազգը չը խեղդվի...

Բայց ո՞վ է ազգի վրա մտածողը, ցաւողը...

Շատ աւելի հեշտ է հանել հարայ-հրոց՝ «կորչում ենք, փրկեցէք մեր եկեղեցին անկումից, Ղլտճեանն է գալիս»...

V

Ղլտճեանն է գալիս...

Թող գայ: Եթէ նա գալիս է իբր թշնամի, նա մեզ ահ չէ ներշնչում...

Ղլտճեաններ եկել են, գնացել, իսկ եկեղեցին կայ և կը մնայ...

Կը մնայ, կամրանայ և կը զօրանայ, եթէ միայն մեր հոգևորականութիւնը լինի լուսաւոր և կրթված...

Կրթված... Չէ՞ որ կրթութիւնը մեզ պակասում է միշտ, անգամ երբ կայ լուսաւորութիւն:

Ո՞ր աշխարհի, ո՞ր ազգի մէջ կարող է պատահել, որ մի վարդապետ թքի հրապարակով իր կոչման վրա, դարձնէ ծաղրի առարկայ...

Որ աշխարհի, ո՞ր ազգի մէջ ընդունված է, որ եկեղեցու ստորագրեալ սպասաւորները... բողոքներ արձակեն, իրանց հովւոր պետի դէմ... տպեն բողոքները լրագիրներում...

Այդ կարելի է անել անպատիժ միայն մեզանում... Չը կայ կրթութիւն...

VI

Սո՞ր թէ մուկ, մո՞ւկ թէ սար...

Մուկ, մուկ, միայն մուկ...

Թող մուկը համեստ մտնէ իր ծակը, իսկ սարը իր տեղը մնայ...

Բաւական է քողարկվել: Վերցրէք ձեր վարագոյրը: Մի խաբէք և մի խաբվէք: Խօսեցէք իբր իսկական քրիստոնեաներ, ինչպէս խօսում էր իմ ուսուցիչ բանաստեղծ Շահազիզը, որ մարգարիտ-արտասուքները թրջեն մեր թշերը, իսկ մեր սրտերում բացվեն, ծաղկեն և բուրեն մանուշակներ, մեխակներ և վարդեր...

Հիւանդ է էջմիածինը, հիւանդ է մեր հոգևորականութիւնը...

Եւ ահա ինչու մի Ղլտճեան, մի փոքր մուկ, մեծանում է, մեծանում է, սկզբից մի ուղտ, յետոյ տուն, վերջապէս մի սար դառնում...

Չը գիտես Ղալիբէգն է թէ էլբօրուսը...

Մինչդեռ մի մուկ, հասարակ մուկ...

ԱՀԱ ՊՏՈ՛ՒՂ... ԱՀԱ՛ ՊՏՈՒՂՆԵ՛Ր...

Պտո՞ւղ...

Խնձո՞ր:

Ոչ:

Ուրեմն տա՞նձ:

Ոչ:

Իմացայ: Դեղձ, անպատճառ դեղձ...

Ոչ և ոչ: Աստուա՛ծ պահպանէ ձեր պարտէզները: Ժամանակին թող գայ անձրևը, ժամանակին փչէ քամին, ժամանակին տաքացնէ արեգակը և երկինքը շնորհէ ձեզ առատութիւն: Ծառերը ցածր խոնարհեն իրանց գլուխները մրգերի շատութիւնից...

Իմ խօսքս երկոտանի պտուղի մասին է:

Պատիւ ունեմ ներկայացնել՝ Յովհաննիսեան: Ոչ Աբգար: Աբգարները վաղուց գնացել են, մեռել, մնացել են Ալէքսանդր Յովհաննիսեանները...

Իմ բարեկամ շնորհունակ սարկաւագ Չէօրեքչեանը բերեց նրան ինձ մօտ:

—Ո՞րտեղից էք եկել,—հարցրի ես:

—Հայերէն չեմ հասկանում,—պատասխանեց նա ինձ ռուսերէն: Պատասխանեց ժպտալով: Այդպէս ժպտում են խուլերը: Նրանք շատ բան չեն լսում, տեղն ու տեղը պատասխանել չեն կարող:

—Ժամը քանի՞սն է,—հարցնում էք դուք:

—Եղանակը խիստ վատ է,—պատասխանում է խուլը և ժպտում է: Ժպիտը ձեզ ասում է՝ «Ներողամիտ եղէք, մեղքը իմը չէ, չեմ լսում»: Պատասխանների ծուռերը շտկում է ժպիտը:

Ալէքսանդր Յովհաննիսեանը հրաւիրված էր մեր դպրոցը ուսուցիչ ռուսերէնի: Նա այցելեց մեր քաղաքապետին և սկըսեց պատմել մեզ զարմանալի բաներ: Քաղաքապետը զարմանում է:

—Դուք, պ. Յովհաննիսեան, այնպէս խելօք, այնպէս բարձր ուսում ստացած, գալիս էք ուսուցչութեան մի հայ դպրո՞ց:

—Այո՛,—ասում է Յովհաննիսեանը:

—Խորհուրդ չեմ տալիս, դուք մայրաքաղաքների էլ զարդ կը լինէք:

—Ոչ, ես ցանկանում եմ ազգիս ծառայել,—պնդում է Յովհաննիսեանը:

Երկար համոզում է քաղաքապետը: Ապարդիւն: Ա. Յովհաննիսեանը եզակի երեւոյթ է: Ի՞նչ մայրաքաղաք, ի՛նչ համալսարան, ի՛նչ գիմնազիա: Երբէք, նա կը մնայ մեր դպրոցում, հայ դպրոցում:

Մենք ցաւած սրտերով կարծում ենք, թէ քաղաքապետը չէ ցանկանում, որ մեր դպրոցներում լաւ ուսուցիչներ լինեն:

Քաղաքապետը գրում է դպրոցի տեսչին թուղթ: Նա յարմար չէ տեսնում, որ Յովհաննիսեանը մնայ դպրոցում:

Քաղաքապետը զրկում է մեզ մի լաւ ուսուցչից: Մենք գնում ենք նրա մօտ, խնդրում ենք թողնել մեզ պարոնին:

—Անկարելի է:

—Ինչո՞ւ:

—Պարոնը մի ինչ-որ յանցանքի համար մի տարի նստել է բերդ...

Մենք մնում ենք ապշած: Բերդ նստելը անպատւութիւն չէ. ի՛նչ կարիք կար ծածկել, ստել, խաբել մեզ՝ հոգաբարձուներիս...

Պա՜ւղ...

Անաջող ուսուցիչը դառաւ յանկարծ հրապարակախօս:

Սիրելի ընթերցող, եթէ ձեզ երբեմն պատահի յիմարութիւն անել, ասացէք ցածր ձայնով, կամաց՝ քչերը կը լսեն. եթէ ուզում էք անպատճառ յիմարութիւնը գրչով անմահացնել, գրեցէք մանր տառերով՝ քչերը կը նկատեն, քչերը կը կարդան:

Այդ առաքինութիւնը չը ճանաչեց Ալէքսանդր Յովհաննիսեանը:

Խոշոր ռուս տառերով տեղիս լրագրում նա գրեց մի մեծ յօդուած: Կարիք չը կայ յօդուածը կարդալ:

Կան յիմարութիւններ գեղեցիկ ասւած, ինչպէս կան յիմարներ գեղեցիկ հագնւած: Ա. Յովհաննիսեանի յիմարութիւնը տգեղ է, կոպիտ և անհամ: Պարոնը գրում է, որ հայ բեմը նուիրւած է սուտ ազգասիրութեան և հայ գրողները անսահման յիմարներ և տգէտներ են, հայ դերասանները բեմի վրա կամ լաց են լինում կամ գոռում, զզւելի են միանգամայն, իսկ հայ ազգը վերին աստիճան յետամնաց է և տգէտ...

Գրողը հայ է. ի՛նչպէս չը հաւատալ:

Մի առ մի մենք միենոյն լրագրում փաստերով ցոյց տուինք պարոնի սխալները և ցանկութիւն յայտնեցինք, որ պարոնը նախ սովորէ հայերէն, ուսումնասիրէ մեր գրականութիւնը, ապա գրէ և ուսուցանէ:

Պարոնը մեզ պատասխանեց:

Եւ ի՛նչ պատասխան:

Նա ինձ անւանում է հայրենասէր և նշանաբան է առնում Պուշկինի յայտնի տառնաւորները «Ռուսաստանի թշնամիներին» և անընդհատ զովաբանում ռուսներին, ռուս գրականութիւնը, կարծեցնելով որ մենք վատաբանել ենք՝ ինչ որ ռուսաց լեզուով է գրւած՝ և հայերէնը գերադասել ենք: Այդպիսի անազնիւ միջոցից յետոյ Յովհաննիսեանը արծարծում է այն միտքը, որ հայերէն գիտենալը նրա համար միենոյն արժէքն ունի, ինչ որ նրա վարտիկի գոյնը:

Պա՜ւղ: Զզ՞: Հայոց լեզու և վարտիկի գոյն՝ միենոյն համակցութիւններն են դպրոցի մի ուսուցչի համար, որը մի ժամանակ եղել է համալսարանում և լսել է այնտեղ գեղեցիկ, զգացւած խօսքեր իր պրօֆէսօրներից:

Խօսքերը մոռացւել են վաղուց, և տգէտ ասիացին մնացել է միենոյնը: Նա այժմ մոռացել է հայերէնը, գրում է ռուսերէն, և առաջին անգամ գրիչը ձեռք առնելիս՝ նա շտապում է թքել հայերի երեսներին...

Բօշային մի օր ընտրել են արքայ: Հէնց թագը գլխին դնելու միջոցին, նա անմիջապէս հրամայել է իր հարազատ հօրը կախաղան հանել: Դա եղել է նրա անդրանիկ գործը:

Բօշաների ժամանակը անցել է: Նրանց աւետեաց երկիրը վաղուց կորել է. Ա. Յովհաննիսեանին արքայ չեն ընտրի և նա թագը գլխին չի դնի երբէք: Դրա համար էլ փառք տանք Աստուծուն...

Հա, մոռացայ ասելու: Սրանից մի ամիս առաջ միենոյն լրագրում գրւած էր, թէ իբր «Մշակը» կղերական թերթ է և խմբագիրը՝ Քալանթաձէն է (լաւ բաց արէք աչքներդ...), իբր թէ քանի մի երիտասարդներ տուել են լրագրին այդ լուրը:

Քալանթաձէ...

Ո՞ր Յովհաննիսաձէներն են տուել այդ լուրը:

Յովհաննիսաձէներ...

Այ, պտուղնե՜ր...

Թո՛ղ անձրեւը թրջէ, արեգակը այրէ, քամին թափէ և որդերը ուտեն ձեզ...

1912

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄՈՒԹ ԳԻՇԵՐԸ ԵՒ ԼՈՅՍ ՑԵՐԵԿԸ

(Մանրանկար)

I

Սխալ թէ ուղիղ, սուտ թէ ճշմարիտ՝ մեր ուսանողութեան մասին ժողովուրդը կազմել է արդէն շատ աննպաստ կարծիք... Ուսանողութիւնը, որ մեր յոյսն է եղել միշտ, որ մենք յարգել ենք, սիրել և փայփայել, վերջին ժամանակներս վատացել է և ստորացել։

Այդպէս են մտածում, կարծում և ցաւում շատ շատերը։

Բայց այն, ինչ որ մենք լսում ենք Խարկովի ուսանող Յարութիւնեանի մասին, գերազանցում է ամեն բան, նոյն իսկ թւում է անհաւատալի, լկտի ստութիւն...

Ո՞վ է այդ պ. Յարութիւնեանը։ Իսկապէս նա մեղաւո՞ր է։

Չէինք ուզում հաւատալ...

Բայց այդ անունը կրկնվում է ամեն օր, բոլոր ռուս թերթերում, Պետական Դումայում, տխուր հռչակ ստանում, հաւասարվում ցեխի և մեզ կպչում, կեղտոտում, մրոտում...

Լաւ համբաւը ծոյլ նիրհում է՝ և քնում, իսկ վատ համբաւը շտապում, վազում, թռչում...

Թռչում և կանչում՝ «ուսանող Յարութիւնեան... ուսանող Յարութիւնեան...»։

Մենք լսում ենք և կարմրում...

Գուցէ մի օր պ. Յարութիւնեանը մի հարուստ փաստաբան, բժիշկ, ինժեներ դառնայ, մենք ոչ մի օգուտ նրանից չը ստանանք՝ ոչ նրա գիտութիւնից, ոչ նրա հարստութիւնից, ինչպէս մնացեալ ապականված հայ ինտելիգենտներից...

Բայց այսօր նրա երեսը մրոտվել է և ամօթից այրվում են և մեր թշերը...

II

Վատ է, որ պ. Յարութիւնեանը հայ է...

Բայց աւելի վատ է, որ նա ուսանող է...

Ուսանող, ուսանողութիւն...

Երիտասարդութիւնը կանաչ գարուն է...

Իսկ ուսանողութի՞ւնը...

Այդ զարգացած, այնքան գեղեցիկ խօսքեր կարդացած, լսած երիտասարդութի՞ւնը...

Գարունների գարուն... գարունների գարուն...

Ահա եկաւ ու անցաւ կարմիր Զատիկը...

«Քրիստոս յարեաւ», ասացինք իրար, ասացինք և համբուրվեցինք ջերմ... Մոռացանք մեր առօրեայ հաշիւները, բացինք մեր չորացած, եսամոլութեան փոշով ծածկված սրտերը և լցրինք սիրոյ կրակով...

Սիրոյ կրակով, ափսո՜ս, մի օրվայ համար...

Ուսանողութիւնը մեր կեանքի բարի և գեղեցիկ Զատիկն է...

III

Գուցէ մեր ամբողջ կեանքը լցված լինի թոյնով և դառնութեամբ. գուցէ այդ կեանքի ճանապարհը լինի փշոտ և տատասկոտ, առանց ուրախութեան, բերկրանքների և քաղցր ու քնքուշ ժպիտների. բայց ուսանողութիւնը և ուսանողութեան յիշողութիւնները իբրև գարունների գարուն, իբրև բարի և գեղեցիկ Զատիկ կը ժպտան մեզ և կը սփոփեն... Երկար անքուն գիշերներ... տաք, անվերջ վէճեր փոքր, ցուրտ, խոնաւ սենեակներում, ուր չը կայ օդ և ոչ իսկ հացի կտոր ուտելու... վեհ սուրբ գաղափարներ և ջերմ խոստումներ՝ գործել, ծառայել, ապրել հալածված, մոռացված, թշուառ ազգի համար... և այդպէս ամիսներ, տարիներ, ամեն օր, ամեն օր... Իսկ այժմ...

Ո՞վ է այդ Յարութիւնեանը։ Ո՞րտեղից, ինչպէս և ինչո՞ւ հրապարակ եկան այդ Յարութիւնեանները...

Ուսանողութիւն և... կեղտոտ, գարշահոտ փրփուր, որ ապականում է երիտասարդութիւնը և գեղեցիկ, սիրված, այնքան սպասված գարունը այլանդակում, խոնաւ աշուն, ցուրտ ձմեռ դարձնում...

Եւ բոլորիս վհատեցնում է, սարսափեցնում, թէ արդեօք մնացե՞լ է դեռ մի բան մեզ համար սուրբ, վեհ, ազնիւ...

Մի բան... որ մենք չապականէինք, չը տրորէինք ցեխի մէջ, թէկուզ անուն, պատիւ մեր ազգի...

IV

Ուսանողութիւն մեզանում նշանակում էր շիտակութիւն, ազնւութիւն, և հին ժամանակները Յարութիւննեաններ չը կային, կարող չէին լինել։ Նրանց մենք իսկոյն կը քարկոծէինք։ Բայց մեզանում երբէք ուսանողութիւնը առանձին

դէրք բռնած չէ, առանձին դեր խաղացած չէ, բարձր կանգնած չէ։ Եղել է՝ այսպէս ասած՝ անգոյն…

Տաք վէճերը, սուրբ խոստումները միշտ և շուտ են մոռացվել։

Երկար տարիներ ուսանողները ստացել են նպաստ իրանց ընկերներից փոխարինաբար՝ երբէք չը դարձնելու համար։ Աւարտելով իրանց ուսումը, նրանք մոռացել են իրանց ազգը, իրանց քաղցած ընկերներին և չեն վերադարձնում իրանց պարտքը։ Ասենք շիտակ՝ նրանք գողանում են…

Գողութիւն չէ, ապա ինչ է՝ պարտքը չը վերադարձնելը աղքատ ուսանողութեան դրամարկղը։

Հեռու Մոսկվայում, Պետերբուրգում, Խարկօվում ընկերներդ քաղցից մեռնեն, իսկ դու այստեղ լաւ ուտես, խմես, ապրես, քէֆ անես, փողեր դիզես, տներ շինես…

Գողութի՛ւն է, գողութի՛ւն…

V

Բայց կայ ուսանող և կան ուսանողներ, և բոլորին հաւասար նայել անկարելի է։ Գաղափարականները կան և այժմ։ Թէև նրանց թիւը փոքր է, համեստ, չնչին, բայց նրանք ապրում են, կան։ Նրանք կը շատանան և իրանց ձայնը կը բարձրացնեն ուժեղ…

Կեղտը և փրփուրը անցողակի և պատահական բաներ են. կանցնեն-կերթան, ինչպէս եկան անհամ հովերով…

Չէ՞ որ գարնան և խայթող եղինճը սիրուն է և գեղեցիկ… Իսկ ուսանողութիւնը գարունների գարունն է…

Եւ Յարութիւնեանները մեզ չեն յուսահատեցնում։ Նրանք մեր գիշերվայ մութն են։ Այն հովերը քշեցին և բերին նրանց մեզ և հովերը կանցնեն, կերթան, և Յարութիւնեաններն էլ նրանց հետ…

Կարծես գիշերը արդէն կարճանում է, քչանում և չքանում… Կը գայ առաւօտը, հայ ուսանողութեան պայծառ, գեղեցիկ, զով առաւօտը… Սկզբից այդ առաւօտը կը լինի ամպամած։ Ամպերն էլ կանցնեն… Կը բացվի կապոյտ երկինքը…

Կապոյտ երկինքը հայ ուսանողութեան…

Յարութիւնեաններն էլ պէտք են…

Եթէ չը լինէր խաւարը, ի՞նչպէս մենք հասկանայինք, թէ ի՞նչ է լոյսը։

Եթէ չը լինէր գիշերը, ցերեկը ի՞նչ հրապոյր կարող էր ունենալ։

VI

Ասենք շիտակ՝ մենք բոլորս փոքր Յարութիւնեաններ ենք եղած…

Փաստաբաններ, բժիշկներ, ինժեներներ և այլ մասնագէտներ՝ լաւ ուտում ենք, լաւ ապրում, փողեր դիզում, հարուստ օժիտների ետևից վազում և միայն հարստանալու վրա օր և ցերեկ մտածում… Գաղափարնե՞ր, հեռո՛ւ մեզանից. մենք նրանց շպրտել ենք՝ իբր մաշված, հին, կեղտոտ ձեռնոցներ. մոռացել ենք մեր խոստումները, մատնել ենք մեր գաղափարները՝ ինչպէս Յուդան Քրիստոսին՝ և մոռանում ենք մեր ազգը…

Ազգը, որ սպասում է մեզ և հաւատում…

Հաւատում, որ մենք կը գանք և նրան կը փրկենք տգիտութիւնից ու արատներից և հազար ու մէկ դարդերից ու ցաւերից…

Ինչ ա՜մօթ. մենք մոռանում ենք անգամ վերադարձնել մեր ուսանող ընկերին մեր պարտքը, որ սրբութիւն պիտի լինէր բոլորիս համար, և թոյլ ենք տալիս, որ ապագայ մեր սերունդը քաղցած-ծարաւ հեռաւոր մայրաքաղաքում օր անցնէ…

Սթափվել մեզ պէտք է բոլորիս և յիշել մեր պարտքը, մեր սուրբ պարտքը, մեր բոլոր խոստումները, մեր երդումը՝ ծառայել ազգի շահերին, այն ազգի, որին միշտ մատնել ենք և՛ ուրացել և՛ հին և նոր ուսանողներս…

Սթափվել մեզ պէտք է և յիշել մեր համալսարանը, բարի ուսուցիչներին, նրանց զգացված, գեղեցիկ խօսքերը, որ այնպէս մեզ յուզում էին, այրում, պատրաստում մեզանից կեանքի կռուի համար արի զինուորներ ընդդէմ ցած և չար կեղեքիչների, յանուն մարդկութեան փոքրերին, թոյլերին, ճնշվածներին պաշտպանելու համար…

Ամեն ինչ մոռացված, թողած կեանքի կռուի առաջին օրին…

Սթափվենք։ Ժամանակ է, որպէս զի անամօթ Յարութիւնեանները չը բարձրացնեն իրանց գլուխները։

Թող անմահ գաղափարները զարթնեն մեր սրտերում, զարթնեն ու խնդան և խնդացնեն մեզ։ Մեզ հետ կը խնդան մեր ուսուցիչները, մեր ազգը, մարդկութիւնը…

Սթափվենք ծանր հիւանդ քնից։

VII

Հայ ուսանողութիւնը լաւ էր մտածում, խօսում:
Եւ կեանք մտնելով՝ վատ գործում:

Այժմ ուսանողութիւնը ապականվում է արդէն համալսարանի շեմքում...

Նկատել էք, որ լուսադէմի ժպտալուց առաջ գիշերը այնպէս մթնում է, կարծես երբէք նա վերջանալու չէ...

Իսկ երբ լուսադէմը բացվում է և ժպտում, մոռանում ես խակոյն գիշերվայ խոնաւը և մութը:

Այժմ, ինչպէս առաջ, կան ուսանողութեան մէջ գաղափարականներ:

Եւ գիշերվայ խոնաւը և մութը նրանք կը յաղթեն:

Այստեղ և այնտեղ ես տեսնում եմ կապոյտ երկնքի կտորներ... Կտորները կը մեծանան, կը հալածեն, կը քշեն մութ ամպերը, որ իջել են մեր կոշտացած սրտերում և բոյն դրել, թունաւորելով խսկական բաղդ, խսկական ուրախութիւն, իսկական կեանք...

Այդ բաղդը, այդ ուրախութիւնը, վերջապէս այդ կեանքը...:

Միայն ազգի հետ, ազգի համար շնչել, ապրել, գործելն է...

Սրանից դուրս բոլոր ինչ ունայնութիւն է և սուտ... լոկ սուտ...

Երբ մենք՝ հին և նոր ուսանողներս՝ ձեռք ձեռքի բռնած, սթափվելով մեր սարկական անմիտ քնից, կը մոռանենք այն երդումները, խոստում-մուրհակները, որ մենք ստորագրել ենք մեր սուրբ արտասուքներով և մեր սրտերի բխբխող արիւնով, և կելլենք բոլորս հրապարակ մեր պարտքը վճարելու մեր ազգին, այդ գեղեցիկ օրը մի մութ ամպ չի մնայ հայ ուսանողութեան երկնքում: Երկինքը կը լինի ջինջ, մաքուր, կապոյտ, զուարթ և ցնծալից...

Հայ ուսանողութեան մութ գիշերը կանցնի այն ժամանակ իբրև մի վատ և ծանր երազ, իսկ նրա լոյս ցերեկը կը ժպտայ ազգին, որը կը մոռանայ բոլոր մեծ և փոքր Յարութիւնեաններին և ամեն բան մեզ կը ներէ... իբրև հայր...

1914

ՉՈՓԼՈՒԿԻՆ ԿՈՒԻՇԸ

Շինտոխ ես ալ կհասկընամ, որ Զոփլուկին Կուիշին երթալ պէտք չէր: Իմիս ցուցակիս մէջը, ախպար, նա չկար ալ: Չէ, ասին չորս քովէս, պէքի զուն կկրնաս մէկ բան անելու, մենք, փմաս, չինք կրնալ, նա մեզի փախ ալ կուտայ... էնճամը բարակ չըւանով ինձի վերուցին ու կախեցին, չէ, կախից Զոփլուկին Կուիշը, ինչպէ՞ս, աս ալ վերջը կիմանաք...

Ծարէն Տէր-Պօղոսը զարկեց թելեֆօն, տռւնն իք, կարող իք ընդունել Սրբազանին, ժամը երեք ու կէսին կուգայ:

Նէշուտօրնիյ ժամանակ է, կպատասխանէ Զոփլուկին Կուիշը, կերակուր ուտելու էնկ ժամանակն է: Շինտը թող գայ:

Աղէկ ասինք: Սրբազանին ձեռքը տուինք գաւազան, նըստանք կառք:

Տուները բացուեցան, մտանք ներս: Պատերը, փօլը, առէքը, աթոռները, սեղանները նիփ նոր, կցոլան աֆիցէրի կօճակներու պէս: Բիչմէն մտաւ ներս Զոփլուկին Կուիշը, չիրայով, վար նայելէն, սոլվէն, սաղ ձեռքով ճերմըկցած միրուքը շփելէն: Բարև, չասաց, նստէք ալ չասաց, ամմա աջը համբուրից:

Մենք նստանք: Պատմելուս պատմեցի: Ուսում պէտք է, վարժատուններ պէտք ին, հայերը լուսաւորութեան կարօտ ին:

Հծս, չէնէ Կավկազ, մէկէմէկ բռնկվեցաւ Զոփլուկին Կուիշը:

Կավկազ ասէինը, Կավկազի բան չիմ տալ պիտի ասէր, հոս ասէի, սուտ պիտի ասէի. հոս ալ Կավկազ ալ, պատասխանեցի և շարունակեցի պատմութիւնս:

Նստիլ է տիմացս, քովինայ կընայէ, չիլսիլ, չիհասկընալ:

Կոլկոռիյ Խրիստաֆորիչ, կանակ արած Սրբազանին, ինձի դարձաւ Զոփլուկին Կուիշը, երեսը մութ գիշերուայ զնդանի պէս, աչքերուս մէջ չնայած, սալթը ճերմկած միրուքը շփելէն,—ես քեզի մէկհատ բան պատմիմ: Ասկից մէկ քսան տարի առաջ Խրիմեան Հայրիկը եկել էր Նախջվան: Կուգան ինձի զա-

վօղ Քաթրանովլին Պօղոսը և Բախչիսարայցինն Կռիշը. Թուղթ կհանին, կրվէ, կասին: Ինչքան կուզենանը, կուտամ: Մէկալում օրը կլվացվիմ, թէմիզ շաբիկ կհագնիմ, նոր հալավ, կերթամ Քրասինիքին Եագոուին տունը Վեհափառին աջը համբուրելու: Դիմացս կելլէ մէկհատ չուպառ վարդապետ, քեզի, կասէ, չիլալ Վեհափառին տեսնելու: Ինչո՞ւ, կհարցունում: Չի պատասխանիլ: Ախբար, շատ կցաւիմ, ես ալ Վեհափառին աջը համբուրել կուզիմ ախըր, կերթամ Բախչիսարայցիին Կռիշին: Սիպէս, սիպէս բան է, կասիմ, կուզիմ կասիմ Կաթողիկոսին աջը համբուրել, չուպառ վարդապետը ապուլ չի տալ, ի՞նչ է պատճառը: Չիլալ շտէ, կասէ նայ ալ: Ախբար ինչո՞ւ, պէքի վո՞ղը գամ, ժամանակ նշանակեցէք կասիմ: Կխնտայ, չիլալ, կասէ: Անպէս ալ Վեհափառին աջը չհամբուրած կըմնամ:

Ատկից վերիէ ես ազգէն շատ ցաւած իմ ու այսուհետև ամեն բանի վրայ մէկ հատ մեծ խաչ քաշիլիմ, սաց ու սաղ ձեռքի մեծ մատով խաչի նշաններ արաւ: Չի՞ս հաւատալ, հարցուր Քաթրանովլին Պօղոսին: Շինտա մէկ քապիկ մէկ բանի չիմ տալ, կասէ ու շառթ շա՛ռթ կզարնէ սոոլին, կը հաւատաս, սանքիմ իմ և Սրբազանին գլխուն կզարնէ:

Ախբա՛ր, կհամօղիմ, հանգստացիր, քսան տարիներ անցիլ ին, գնացիլ ին քեզի Բախչիսարայցին անպատուիլ է նը, հայերը, հայ խեղճ տղաքը ինչով մեղաւոր ին:

Չէ, հէչ մոռնալու չիմ, վերջացաւ, վերջացաւ:

Ախբար, կասիմ, սաղ ազգը, մեծ և փոքր, հարուստ և աղքատ, մինչև վերջին արապաճին պիտի կըվլին փոնդին, ով ինչքան կընայ՝ մինչև տասը քապիկ, որ ամենուն լուման ըլլայ մէջը, մի՞թէ դուն պիտի մնաս մենակ:

—Չիմ տալ, մէկ քապիկ չիմ տալ, կզարնէ սոոլին շառթ շառթ, ձեռքը ցուցունելէն...

Անպէսէնը տուն հայերուս և ժամերուս հետ խռովիլիս տա:

—Ժամերուս հետ չէ, ես սուրբ Նիկողոսէն իմ, սուրբ Նիկողոս ինձի գիտին աղէկ, հարցուցէք, մէկ բանի չէ չիմ ասիլ, անքանոր արթխ բարեգործութիւններու բաներու խաչ քաշիլ իմ, довольно! ինձի Կաթողիկոսին աջը համբուրել չտուին:

Զարմացած, պուզ կտրած, մէմէզկի վրայ չնայելէն, ելանք տեղերէս: Էտուններէս չեկաւ, վարածի, փախ տըվածի ֆասոնով, կոնակ արաւ, գնաց և դուռը փակից: Մենակ էլլանք գալէն, մենակ վերարկուներս առինք: Նայեցայ էտեւ՝ դուռեր, պատուհաններ, աթոռներ, սեղաններ կցոլան աֆիցեռի կոճակներու պէս. մարդ չկայ ու գլուխներս կախած, վար նայելէն,

սանքիմ գողութիւնի մէջ բռնուած, սուս-փուս մտանք կառք:

—Ազգը ինչ մեղաւոր է, կասէ ինձի Սրբազանը, դա պատրուակ է բան չտալու, ես շատ վախենում եմ, որ մի անբաղդութիւն չպատահի այդ խեղճին կամ նրա գերդաստանին: Ազգին մերժեց, ազգին մերժեց, ազգը ի՞նչ մեղաւոր է, Գրիգոր, կհարցնէ Սրբազանը:

Չիմ պատասխանիլ, սուս կեցիլ իմ, պապանձված Զաքարիայի պէս և կամչնամ, կամչնամ, կէրին թուշերս ամօթէս, վար կնայիմ, աչքերս չիմ վերցունուլ:

—Ի՞նչ մեղաւոր է ազգը, Գրիգոր, կը հարցունէ Սրբազանը:

Ի՞նչ ասիմ Սրբազանին, ի՞նչ ասիմ ձեր տեղը, չոփլուկի և չոփլուկներու Կռիշներ: Տուներուդ պատերը, տուները, պատուհանները, փօլերը և առէքները, սեղանները և աթոռները կցոլան, իսկ սիրտերդ—մութ գիշերներ առանց լուսինի, առանց աստղերու:

Ի՞նչ ասիմ ձեր տեղը, չոփլուկի Կռիշներ և չոփլուկներու աղաներ, փոռսերդ մեծ է, ամա հոգիներդ պարապ տոպրակներ, պարապ, ծակած տոպրակներ...

1913

ՊԵՏՔ ՉԵՆ ԱՅԼ ԵՒՍ ԱՐՏԱՍՈՒՔՆԵՐ...

I

Հեռու հիւսիսում ընկել էի պանդուխտ։

Կանաչում էր սիրուն գարունը, յիշեցնելով ինձ իմ մայրենի քաղաքը։

Մերձակայ պարտէզներից հազարաւոր ծաղիկներ անուշահոտ բուրում էին, բուրում և ինձ արբեցնում։

Մի բաց պատուհանից լսվում էր դաշնամուրի ներդաշնակ ձայնը։ Ո՞վ էր նուագողը. օրիորդ, կին, տղամարդ, միթէ ողջը մին չէր. չէի անգամ ուզում իմանալ, նրան տեսնել։

Շոպէնի վալսն էր։ Մերթ մեղմ փաղաքշանք, գգուանք, աղաչանք, կարծես՝ աղօթք, մերթ յանդուգն համարձակութիւն և ամբարտաւան ծիծաղ։

Շոպէնը ինձ յուզում էր, թուլացնում սրտիս լարերը։

Ո՜րչափ խոհեր, ո՜րչափ տենչեր ծնվում էին իմ մէջ կարճ ժամանակում և տեղն ու տեղը մեռնում, անհետանալով ծխի պէս։

Եւ յանկարծ, չը գիտեմ ինչու, չը գիտեմ ինչպէս, արտասուքները յորդառատ անձրևի նման լցվեցին աչքերս և ես՝

Լացի, լացի...

Սիրուն գարունը կանաչում էր։

Ծաղիկները բուրում էին և արբեցնում։

Դաշնամուրը լալիս էր և լալիս։

Իսկ ես՝ չը գիտեմ ինչու, չը գիտեմ ինչպէս՝ անկարող էի զսպել արտասուքներս...

II

Փչում է դաժան քամին ամպերը երկնքում։ Ինչպէ՜ս շտապում են նրանք մէկը միւսի ետևից. ո՞ւր են գնում և ինչո՞ւ այդպէս արագ։ Հէնց այդպէս էլ ժամանակը քշում է մեզ, աւելացնելով տարիներս։ Չը գիտես երբ երևաց առաջին սպիտակ մազդ, երբ առաջին խորշոմը ակօս ձգեց արդէն խամրած ճակատիդ...

Անցան շատ տարիներ և մի օր ես պատահեցի Հռոմ...

Որչա՜փ յիշատակներ... Յիշում եմ ամեն ինչ, որ կարդացել եմ, սովորել, լսել... Հռոմ... Գարիբալդի... Բոլոր յիշատակներս մոռանում եմ։ Ի՞նչ կարիք թափ տալ փոշին հնութեան։ Վառ կանգնած է առաջս մի յիշատակ, մի պատկեր, մի բան... Գարիբալդի։ Մտախոհ մօտենում եմ մեծ հայրենասէրի արձանին։ Ցածր խոնարհում եմ գլուխս։ Բերել եմ հետս մի ազգի մեղքը, նրա դարաւոր երկչոտութիւնը, որը չը գիտէ մի անգամ մեռնել՝ երբեք չը մեռնելու համար, որը գիտցել է մի բան՝ հնազանդել օտարներին պատմութեան առաջին էջերից սկսած, որը ստրուկ է ծնվել, ստրուկ գործել, ապրել՝ ստրուկ մեռնելու համար...

Գարիբալդին իր բարձր ձիուց նայում է համարձակ վայր իր քաղաքի վրա։ Հոյակապ շէնքեր, պալատներ, արձաններ և հարստութիւններ առհաւատչեայ են, որ քաղաքը ազատ, երջանիկ ազգի մայրաքաղաք է։ Գարիբալդին միշտ նայում է վայր քաղաքի վրա իր բարձր ձիուց. այնքան քաջութիւն, այնքան համարձակութիւն կան նրա դէմքին. յաղթութիւն է գրված այդ գեղեցիկ տղամարդու գեղեցիկ աչքերի մէջ...

Յաղթութիւն... Քաջութիւն... Ազատութիւն...

Մեղաւոր ճանաչված յանցաւորի նման կանգնած եմ։ Իմ մեղքը մեծ մեղք է. մեր ազգի մեղքն է։

Պարտութիւն... Երկչոտութիւն... Ստրկութիւն...

Ցածր, աւելի ցածր խոնարհում եմ ծանրացած գլուխս։ Ինչու այդ խտալացիները ինձ շրջապատում են զարմացած և կարեկցաբար։ Ինչու ես անզօր եմ զսպել իմ արտասուքներս այն մարդու արձանի առաջ, որը չը գիտէր ողբալ և լալ...

Արդեօք դա այն ամօ՞թն է, որ երգել է Գամառ-Քաթիպան.

Եւ որքան որքան հայերս և դու
Գիտի կարմրինք միշտ առ ամօթու,
Որ վեց դար մէջ հայ կընոջ արգանդի
Դեռ չէ յղացել հայ Գարիբալդի...

Թէ՞ կատարվում էր Հայրիկի ասածը, որ մենք գիտենք միայն լալ...

Գարիբալդին շարունակ նայում էր իր բարձր ձիուց Հռոմի վրա, խտալացիները շրջապատում էին ինձ կէս-զարմա-

ցած, կէս-կարեկցաբար, իսկ ես մի խենթի նման մեծ հայրենասէրի արձանի պատուանդանին թեքված՝ լալիս էի, լալիս, կարծես կորցրել էի մի մեծ գանձ...

III

Շոպէն... Գարիբալդի...

Դրանք յոյզեր էին, լոկ յոյզեր...

Եւ իմ աչքերից թափվածը արտասուքներ չէին, այլ... ջուր...

Սիրուն գարունը դարձեալ կը գայ, նորից կը բացվեն անուշահոտ ծաղիկներ, կը բուրեն և մեզ կարբեցնեն... նորից կը լսվի և նորից կը լայ կախարդված դաշնամուրը...

Յոյզեր... Լացէք, սիրոյ քաղցր երգից խաբվածներ, լացէք, վառ երևակայութեան պատկերներով յուզվածներ...

Բայց դրանք արտասուքներ չեն, այլ ջուր...

Այժմ ես լաւ յիշում եմ, որ մենք ձեզ հետ լացել ենք մի անգամ... ոչ, կարծեմ երկու անգամ, գուցէ և աւելի... Լացել ենք այնպէս, որ մեր արտասուքների դառնութիւնը իջել է սրտներիս վրա, մնացել է այնտեղ... մինչև այսօր...

Յիշո՞ւմ էք պատմական մեր կոտորածները և կարմիր սուլթանին...

Յիշո՞ւմ էք անվերջ կեղեքումները, հարստահարութիւնները, հալածանքները, սովը և մեր մարտիրոսներին, որոնց դեռ չէ մտցրել մեր եկեղեցին մեր սուրբերի կարգը։

Արտասուքները խեղդում էին մեզ, կոկորդներս այրվում էին, և մեր ուղեղը կանգնեցրել էր իր աշխատանքը, ոչինչ չէր ըմբռնում և հասկանում...

Պինդ սեղմում էինք մեր բռունցքները և անզօր խփում սեղաններին...

Հայրիկ, ասա, ի՞նչ անէինք, ի՞նչ անէինք, Հայրիկ...

Մենք լալիս էինք, լալիս աղի արտասուքներով...

Առաջվայ արտասուքները ջուր էին նրանց առաջ։

IV

Ամեն բան վերջ ունի։

Վերջացան և մեր արտասուքները։

Պատճառներ լալու կան շատ, բայց արտասուք չէ մնա-

ցել, ցամաքել են աչքներս, կոշտացել են սրտներս։

Երկիրը կը պարպվի...

Կը պարպվի երկիրը...

Կը պարպվի,—գրում են ամեն կողմից։

Ձեռքերը ցուպեր առած, մի կամ երկու օրվան փոքր բեռ շալակած գաղթում է հայը՝ օտար երկրում բաղդ որոնելու համար, թողնում է իր հայրենիքը, իր վաթանը, իր աղբիւրը, իր եկեղեցին, իր օջախը և գերեզմանոցը, ուր թաղված են նրա բոլոր սիրելիները...

Ահա պատճառ լալու, բայց՝

Վերջացան արտասուքներս, որոնք մեզ սփոփում էին, թեթևացնում։

Կը պարպվի երկիրը...

Զարդ-կոտրած, սով-բռնութիւններ, ամեն ինչ մենք կարող էինք տանել-մարսել, յաղթել։

Բայց... ինքնասպանութիւն... այդ վերջին և ամենամեծ վտանգը, որ կարող է մեզ անհետացնել, ոչնչացնել, փոշի, մոխիր դարձնել և ցրել, քշել քամու հետ և քամու պէս...

Այլ չը կան արտասուքներ, ցամաքել են աչքներս...

Այլ բաւ են արտասուքներ...

Ի՞նչ և ո՞ւմ օգուտ լալ, ողբալ...

Բաւական են մեր պատմական՝

Պարտութիւնը, երկչոտութիւնը, ստրկութիւնը...

Ինքնասպանութեան հարց է դրված առաջներիս։ Պէտք է, անհրաժեշտ է փրկել ազգը։

Մենք մինչև այսօր գիտցել ենք լալ, որովհետև ազգը սիրել ենք մտքով, երևակայութիւնով։ Միայն մեր ցնորքներում, երազներում մենք բացել ենք նրա առաջ մեր սրտերը և հոգիները, ընդունելով իբրև ճշմարտութիւն դաժան կռւի փոխարէն, որը տալիս է յաղթութիւն և իրաւունք ապրելու,—անմիտ յոյզեր, դատարկ երազներ, փայլուն, բայց խաբուսիկ ցնորքներ։

Գաղթը ազգի ինքնասպանութիւնն է։

Եկէք բոլորս ձեռք տանք իրար և խլենք գաղթականների ձեռներից ցուպերը և նրանց շալակած բեռները. վերադարձնենք նրանց և բերենք նստացնենք իրանց հայրենի երկիրը, տանք նրանց կարողութիւն մշակելու իրանց սիրած վաթանը, վերադարձնենք նրանց իրանց աղբիւրներին, իրանց սարերին, իրանց անմշակ թողած արտերին և բաղերին...

Եւ Աստուծոյ օրհնութիւնը կիջնի նրանց վրա, մեր երկրի վրա, մեր վրա...

Այդ մեծ խնդրի առաջ մոռանանք մեր բոլոր հաշիւները, մեր փոքր եսերը, մեր ընդունած վարդապետութիւնների օրթոդօքսութիւնը։

Ազգը չի սպասում. նա մեռնում է, անհետանում է։

Երկիրը կը պարպվի...

Եւ այն ցուպը, որը ձեռքն է առնում գաղթականը հայրենիքից դուրս գալու համար, հայրենիքի գլուխն է ջարդում, սպանում...

Այլ չը կան արտասուքներ, ցամաքել են վաղուց մեր ցաւոտ աչքերը...

Այլ բաւ են արտասուքներ...

Գործենք։ Գտնենք միջոցներ գաղթի առաջը առնելու, որ հայ օջախները չը քանդվեն, վերադարձնենք գաղթականներին, որ արդէն քանդած օջախները վերաշինվեն, ամրանան, բարգաւաճեն...

Թող չը պարպվի հայ երկիրը, Թող չը պարպվի հայ երկիրը...

15365

2013